

ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ռաֆայել Հարությունի Վարդանյան

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման
հայեցակարգի պատմատեսական և իրավական վերլուծություն

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ. 00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,
իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման

Գիտական ղեկավար՝
իրավաբանական
գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Ա.Հ. Խաչատրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
--------------------------	----------

ԳԼՈՒԽ 1

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1.1 Իշխանությունների բաժանման հայեցակարգի ակունքները.....	12
1.2 Իշխանությունների բաժանման հայեցակարգի զարգացումը.....	34

ԳԼՈՒԽ 2

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

2.1 Իշխանությունների բաժանման տեսության բազմազանությունը.....	65
2.2 Իշխանությունների բաժանման արտասահմանյան փորձի իրավահամեմատական վերլուծություն.....	81
2.3 Իշխանությունների բաժանման սկզբունքը ժամանակակից իրավագիտությո- ւնում.....	92

ԳԼՈՒԽ 3

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1 Պետական միասնական իշխանությունը և իշխանությունների բաժանման սկզբունքը Հայաստանի Հանրապետությունում.....	112
3.2 Իշխանությունների բաժանման սկզբունքի կատարելագործման հիմնախնդիրները սահմանադրական բարեփոխումների համատեքստում.....	128
ԱՄՓՈՓՈՒՄ.....	144
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	151

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի հետազոտության արդիականությունը: Սույն ատենախոսական աշխատանքի հետազոտության արդիականությունը, ամենից առաջ, պայմանավորված է ազգային պետական շինարարության բնագավառում իշխանությունների բաժանման և հավասարակշռման կառուցակարգերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով գիտականորեն հիմնավորված հանձնարարականների և առաջարկությունների մշակման անհրաժեշտությամբ:

Ինչպես նշված է «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»-ում¹. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ հետևողականորեն իրացված չէր իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը»: Անցյալ երկու տասնամյակի ազգային պետական շինարարության փորձի ուսումնասիրությունից կարելի է հետևություն անել, որ պետական իշխանության համակարգում տեղ գտած բացերն ու թերացումները՝ ի թիվս այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների, պայմանավորված են նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կիրառման անկատարությամբ, մասնավորապես՝ հստակեցված չէ ՀՀ Նախագահի ինստիտուտի տեղն ու դերը պետական իշխանության համակարգում, պատասխանատվության շրջանակները երկրի կառավարման (գործադիր իշխանության) ոլորտում, ապահովված չեն իշխանությունների տարբեր ճյուղերի հավասարակշռումը և դրանց գործառությային ինքնուրույնությունն ու անկախությունը և այլն:

Մեր կարծիքով վերոնշյալը հավաստում է մեզանում ընթացող սահմանադրական բարեփոխումների օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչպես նաև ենթադրում է պետական շինարարության համակարգում հայտնաբերված թերացումները վերացնելու և պետական իշխանության գործառնության արդյունավետությունը բարձրացնելու համար, մասնավորապես՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը հետևողականորեն իրացնելու նպատակով անհրաժեշտ է նաև դրա համալիր գիտական հետազոտության իրականացումը՝ պատմատեսական և գործնական-կիրառական ասպեկտներով:

Գտնում ենք, որ հենց դրանով է պայմանավորված թեմայի ընտրությունը և

¹ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Երևան, 2014:

հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Ազգային իրավունքի տեսական և սահմանադրական միտքը որոշակիորեն անդրադարձել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ուսումնասիրությանը²:

Քննարկվող հիմնախնդիրն առավել խորությամբ ուսումնասիրվել է ռուսական իրավագիտության կողմից³:

Հավուր պատշաճի գնահատելով հայրենական և արտասահմանյան գիտնականների աշխատությունները, այդուհանդերձ, արձանագրենք, որ սույն ատենախոսական աշխատանքը վերոնշյալներից տարբերվում է նրանով, որ համալիր հետազոտության առարկա է հանդիսացել քննարկվող հիմնախնդրի պատմատեսական և իրավաբանական ասպեկտները, ինչպես նաև դրա լուծման հեղինակային մոտեցումները՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Հետազոտության տեսական հենքը: Սույն հետազոտության տեսական հենքն են կազմում իրավունքի տեսության և փիլիսոփայության, իրավունքի պատմության և քաղաքական մտքի, սահմանադրականության և սահմանադրական իրավունքի գծով

² Տե՛ս օրինակ՝ **Դանիելյան Գ.Բ., Այվազյան Վ.Ն., Մանասյան Ա.Ա.**, Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2015, **Վլադիմիր Նազարյան**, Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան: Երևան, 1992, **Խաչատրյան Հ.Մ** Իշխանությունների տարանջատում և պառլամենտարիզմ: Երևան, 1994, նույնի՝ Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը (պետա-իրավական վերլուծություն), դոկտորական ատենախոսություն գիտական զեկուցման ձևով: Երևան, 1998, **Այվազյան Ն.Ա., Այվազյան Ա.Ն.**, Սահմանադրության էությունը և բովանդակությունը, Երևան, 2005, **Գագիկ Հարությունյան**, Սահմանադրական մշակույթ, Երևան, 2005, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք, պատ. խմբ. **Ն.Ա. Այվազյան**, Երևան, 2012, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբ. **Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան**, Երևան, 2010, պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, գիտ. խմբ.՝ **Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան**, Երևան, 2014, **Գրիգորյան Սասուն, Գրիգորյան Գեղեցիկ**, իրավագիտություն, Երևան, 2014:

³ Տե՛ս **Ишаков К.А.** Реализация конституционного принципа разделения властей в субъектах Российской Федерации: дисс. ... канд. юрид. наук. М., 2010. **Путятин А.Г.** Разделение властей – конституционный принцип законотворческого процесса в Российской Федерации: дисс. ... канд. юрид. наук. Ростов н/Д, 2010. **Зюзина Т.Е.** Единство и разделение властей в западноевропейской полотно-правовой мысли: дисс. ... канд. юрид. наук. Ростов н/Д, 2010. **Лещёва Е.С.** Принцип разделения властей в системе органов государственной власти субъектов Российской Федерации: дисс. ... канд. юрид. наук. М. 2009. **Дорошенко Е.С.** Принцип разделения властей и его реализация в субъектах Российской Федерации: дисс. ... канд. юрид. наук. СПб, 2010. **Карелин А.В.** Конституционно-правовой механизм реализации принципа разделения властей в условиях российского федерализма: дисс. ... канд. юрид. наук. М., 2010. **Вороненков Д.Н.** Теоретические и нормативные основы судебного контроля в механизме разделения властей: дисс. ... канд. юрид. наук. СПб, 2009. **Ерёмина Н.В.** Место прокуратуры Российской Федерации в системе разделения властей: теоретико-правовое исследование: дисс. ... канд. юрид. наук. М., 2009. **Соколов В.М.** Принцип разделения властей: особенности и проблемы Российской государственно-правовой модели. дисс. ... канд. юрид. наук. М., 2011.

հայ և օտարազգի գիտնականների՝ Ա.Ն. Ապիյանի, Ն.Ա. Այվազյանի, Գ.Բ.Դանիելյանի, Գ.Գ. Հարությունյանի, Ա.Շ. Հարությունյանի, Հ.Մ. Խաչատրյանի, Վ.Ռ. Նազարյանի, Ա. Վաղարշյանի, Վ.Վ. Աբաշմաձեի, Ս.Ա. Ավագյանի, Դ.Ա. Ավդենի, Ա.Ս. Ավտոնոմովի, Վ.Ի. Անիշինի, Մ.Վ. Բագլայի, Ա.Մ. Բարնաշովի, Ա.Վ. Բորոդինի, Ա.Վ. Վասիլևի, Ն.Ն Վորոշիլովի, Ս.Ա. Դենիսովի, Ս.Ա. Եգորովի, Վ.Դ. Զորկինի, Վ.Վ. Իվանովի, Օ.Ե. Կուտաֆինի, Լ.Մ. Լազարևի, Վ.Օ. Լուչինի, Մ.Ն. Մարչենկոյի, Ս.Վ. Մելնիկովի, Ա.Ա. Միշինի, Վ.Ս. Ներսեսյանցի, Ն.Դ. Պողոսյանի, Մ.Դ. Սոմովի, Բ.Ա. Ստրաշունի, Վ.Ն. Սուվորովի, Բ.Ն. Տոպորինի, Ա.Ի. Չերկասովի, Վ.Ե. Չիրկինի,, Վ.Ս. Շևցովի, Գ.Ֆ. Շերշենիչի, Բ.Ս. Էմձևի, Լ.Մ. Էնտինի և այլոց աշխատությունները:

Տեսական և գործնական ասպեկտներում գնահատելով վերոնշյալ գիտնականների աշխատությունները, այնուամենայնիվ, հետազոտվող թեմայի արդիականությունը և պահանջվածությունը առկա է, քանի որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման կառուցակարգը միշտ էլ կատարելագործման և բարելավման կարիք ունի թե՛ տեսական և թե՛ գործնական առումով: Եթե ասվածին հավելենք, որ նշված գիտնականների տեսակետները հիմնախնդրի վերաբերյալ ոչ միայն չեն համընկնում, այլև շատ ասպեկտներով տարբեր են ու նույնիսկ հակադիր, ուստի սույն ատենախոսական աշխատանքը կոչված է ոչ միայն ի մի բերելու առկա տեսակետները և մոտեցումները, այլև դրանց քննական վերլուծության արդյունքների հիման վրա մշակել գիտականորեն հիմնավորված նոր առաջարկություններ ու լուծումներ, որոնք կարող են հարստացնել և ընդլայնել մեր գիտելիքները իշխանության, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի վերաբերյալ:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է պատմատեսական և իրավական վերլուծության ենթարկել իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի էությունը և բովանդակությունը, ինչպես նաև առաջարկել նոր լուծումներ՝ ազգային պետական շինարարության արդի փուլում կատարելագործելու այդ սկզբունքի գործադրման մեխանիզմը՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Ելնելով հետազոտության նպատակից՝ հեղինակն իր առջև դրել է հետևյալ **խնդիրները**.

✓ վերլուծել իշխանությունների բաժանման և հավասարակշռման հայեցակարգի

պատմական զարգացման հիմնական ուղենիշերը,

✓ բացահայտել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի էությունը, դրա իմաստն ու բովանդակությունը,

✓ պարզել այդ սկզբունքի խնդրահարույց կողմերը ազգային պետական իշխանության համակարգում և առաջարկել դրանց շտկմանն ուղղված հանձնարարականներ և համարժեք լուծումներ,

✓ բացահայտել իշխանությունների բաժանման և հավասարակշռման երկու հիմնական մոտեցումների («ճկուն» և «կոշտ») առանձնահատկությունները և դրանց օպտիմալ տարբերակի կիրառման հիմնախնդիրը ազգային պետական իշխանության ճյուղերի համակարգում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն է՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի էությունը և բովանդակությունն է: Հետազոտության առարկան՝ ազգային պետական շինարարության ոլորտում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կիրառման առանձնահատկություններն ու կատարելագործման հիմնախնդիրներն են՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Սույն ատենախոսական աշխատանքի ուսումնասիրության ընդհանուր մեթոդներն են՝ համընդհանուր դիալեկտիկայի օրենքները և գիտական ճանաչողության կատեգորիաները, ինչպես նաև հատուկ՝ պատմահամեմատական, իրավահամեմատական, համակարգային վերլուծության և իրավաբանական վերլուծության մեթոդները:

Հետազոտության նորմատիվ, աղբյուրագիտական և փորձաքարական հիմքն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը (2014թ.), Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունը՝ «ՀՀ Սահմանադրության բարեփոխումների հայեցակարգի նախագծի վերաբերյալ» (2014թ.), ՀՀ Սահմանադրության նախագիծը (2015թ.), ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

Հետազոտության գիտական նորույթը: Սույն ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակը՝ պատմատեսական և

իրավագիտական ուսմունքների, ինչպես նաև ազգային սահմանադրական մտքի ու պրակտիկայի համատեքստում համալիր վերլուծություն է իրականացրել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի էության, առանձնահատկությունների, ազգային պետական շինարարության ոլորտում այդ սկզբունքի գործադրման հետ կապված հարցերում տեղ գտած թերությունների և օրենսդրական անկատարությունների բացահայտման ուղղությամբ, ինչպես նաև մշակել է գիտականորեն հիմնավորված առաջարկություններ և հանձնարարականներ՝ սահմանադրական, տեսական և գործնական ասպեկտներով ազգային պետական իշխանության համակարգում այդ սկզբունքի գործադրումը կատարելագործելու ուղղությամբ: Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության դրվող դրույթներում և վերջնական եզրակացություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման հայեցակարգը (սկզբունքը) ծագելով որպես ավատական միահեծան կարգերի հակոտնյա, կոչված է ապահովելու հանրային իշխանությունը՝ բռնապետությունից, կոռուպցիայից և ավտորիտար կառավարումից:

2. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման հայեցակարգի (սկզբունքի) հիմքում ընկած է մարդու բնական ու անօտարելի իրավունքների և ազատությունների առավել արդյունավետ ու համարժեք ապահովման և գործադրման սոցիալական պահանջը:

3. Իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը սույն աշխատանքում դիտարկվում է որպես ազգային պետական շինարարության անկյունաքարային սկզբունք, որի շնորհիվ պետական միասնական-ամբողջական իշխանությունը հանդես է գալիս երեք ճյուղավորմամբ՝ օրենսդիր, գործադիր և դատական՝ փոխադարձ կապերով, զսպումներով և հակակշիռներով: Այս պայմաններում մարդը եռակի հնարավորություն է ստանում պաշտպանելու իր իրավունքներն ու ազատությունները: Եթե դա չի ապահովում օրենսդիրը, ապա հարցը լուծում է գործադիր (վարչական նախադեպ) կամ դատական (դատական նախադեպ) իշխանությունը:

Հետևաբար՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի էությունը և առաքելությունը մարդու և ժողովրդի (ազգի) բնական ու անօտարելի

իրավունքների ու ազատությունների իրականացման և երաշխավորված պաշտպանության ապահովումն է:

4. Օրենսդիր իշխանության իրավասությունը սահմանափակվում է մարդու բնական և անօտարելի իրավունքների պաշտոնական հոչակմամբ, իրավաբանական ամրագրմամբ, դրանք ապահովող կառուցակարգերի սահմանմամբ և դրա հիման վրա ու դրան լիովին համապատասխան երկրում ծավալվող սոցիալ-տնտեսական և քաղաքական-իրավական հարաբերությունների օրենսդրական-նորմատիվ կարգավորմամբ: Միայն օրենսդիր իշխանությունն է իրավասու ընդունել, փոփոխել և վերացնել օրենքներ: Եվ քանի որ իրավական պետության հիմքում ընկած են իրավունքի գերակայությունը և իրավունքով իշխանության սահմանափակումը, ուստի, այս առումով, օրենսդիր իշխանությունն առաջնային է, իսկ մյուս երկու իշխանության թերերը՝ գործադիրը և դատականը, ստորադաս են և կոչված են կիրառել այդ օրենքները՝ համապատասխանաբար կառավարման և արդարադատության ոլորտներում:

5. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ազգային պետական շինարարության համակարգում իրավական ամրագրում է ստացել անկախության հոչակման առաջին իրավական փաստաթղթերում, սակայն պաշտոնական և հասարակական իրավագիտակցության և իրավական մշակույթի մեջ դրա սոցիալ-իրավական արժեքն ու նշանակությունը լիարժեքորեն չի ընկալվել և չի իմաստավորվել:

6. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը (ինստիտուտը) քարացած կատեգորիա չէ, յուրաքանչյուր պետաիրավական համակարգում այն ունի իր դրսևորման ուրույն եղանակները և ձևերը: Հայեցակարգային առումով՝ իշխանությունների բաժանման սկզբունքի առաքելությունը պետական ողջ իշխանության արդյունավետ գործունեության՝ մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական արդարության ապահովման և ինստիտուցիոնալ համակարգի անխափան գործառնության երաշխավորումն է:

7. Մեզանում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ լիարժեք իմաստավորման ու իրացման հետևանքով, առավելապես թիրախային են դարձել դատական և օրենսդիր իշխանությունները: Դեռևս անկախ և ինքնավար դատական իշխանության մարմինների համակարգը կայացած չէ, իսկ օրենսդիր

իշխանությունը՝ հիմնականում «գրադված է» գործադիր իշխանության օրինագծերի փպատճենահանմամբ»:

Նույնիսկ անհիմն սահմանափակվում են նաև գործադիր իշխանության գործառնության լիազորությունները: Այսպես, գործող ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածով սահմանված են հարաբերություններ, որոնք կարող են կարգավորվել միայն օրենքով: Ընդ որում, այդ ցանկում ներառված են նաև այնպիսի հարաբերություններ, որոնք ընդհանուր ոչինչ չունեն օրենսդիր իշխանության հետ և ակնհայտ խոչընդոտում են գործադիր իշխանության բնականոն գործունեությանը: Հիմնախնդիրը նրանում է, որ նշված հոդվածի համաձայն անգամ իրավունքների իրականացման կարգը պետք է սահմանվի բացառապես օրենքով, ինչի արդյունքում գործադիր իշխանությունը, ըստ էության, հանդես է գալիս որպես սոսկ կատարող մարմին՝ զրկված լինելով ենթաօրենսդրական ակտերով կարգավորելու առաջնահերթության առումով օրենսդրական կարգավորում չպահանջող հրատապ հարցերի համարժեք լուծումներից:

8. Վերոնշված իրավիճակից դուրս գալու հնարավոր ելքը տեսնում ենք հետևյալում. գործադիր իշխանությանը սահմանադրական նորմի կարգավիճակով իրավասություն վերապահել, որպեսզի ենթաօրենսդրական ակտերով սահմանել իրավունքների իրականացման կարգ, պահանջով, որ ոչ մի դեպքում չխաթարվի իրավունքի էությունը:

9. Առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «Պետական իշխանության երեք ճյուղերի լիազորությունները սահմանափակված են իրավունքի գերակայությամբ, վավերացված միջազգային պայմանագրային նորմերով և միջազգային դատական նախադեպային իրավունքով»:

10. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 4-րդ հոդվածը առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Հանրային իշխանությունը իրականացվում է Սահմանադրությանը, վավերացված միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխան»:

Պետական միասնական իշխանությունը իրացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի համաձայն»:

11. Պետական իշխանության մարմինների լիազորությունների և գործառույթների խելամիտ տարանջատման խնդրի լուծումը պայմանավորված է ոչ այնքան կառուցակարգային լուծումներից, որքան առաջադրված խնդիրներից և դրանց համարժեք լուծումներից և ընթացակարգերից: Այս առումով առաջարկում ենք, որ սահմանադրականության մշտադիտարկման իրավունքը վերապահել Հանրապետության Նախագահին, ինչից բխում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ցանկացած իրավական ակտի նկատմամբ վերահսկողությունը, անհրաժեշտության դեպքում, դարձնել սահմանադրական արդարադատության քննարկման առարկա:

12. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում ՀՀ գործող Սահմանադրությամբ և Սահմանադրության փոփոխությունների նախագծով դեռևս բացակայում է լիարժեք ներդաշնակ համագործակցությունը: Մինչդեռ առանց դրա հնարավոր չէ ապահովել նաև գործառութային զսպող և հակակշռող լիազորությունների խելամիտ բաժանումը և հավասարակշռությունը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Սույն ատենախոսական աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ուսումնառության նպատակներով, օրինակ՝ «Պետության և իրավունքի տեսություն», «Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն», «Սահմանադրական իրավունք» դասընթացների, ինչպես նաև քննարկվող հիմնախնդրի հետագա ուսումնասիրությունների համար:

Գործնական նշանակության առումով՝ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել մեզանում ընթացող սահմանադրական բարեփոխումների, իրավաստեղծ և իրավակիրառ ոլորտներում:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը. Սույն ատենախոսական աշխատանքը իրականացվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ կազմակերպվել է նաև աշխատանքի քննարկումը և գրախոսությունը:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հոդվածներում:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է

հետազոտության նպատակով և խնդիրներով, օբյեկտով և առարկայով, ինչպես նաև շարադրման տրամաբանությամբ: Դրան համապատասխան՝ աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են յոթ ենթագլուխ, ինչպես նաև ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1.1 Իշխանությունների բաժանման հայեցակարգի ակունքները

Իշխանությունների բաժանման հայեցակարգի ձևավորման գործընթացը դիտարկելիս, կարելի է առանձնացնել երեք փուլ⁴: Առաջինն այն աշխարհայեցողության, միջավայրի ստեղծումն է, որում հնարավոր է դարձել իշխանությունների բաժանման հայեցակարգի ձևավորումը, դրա բաղկացուցիչ տարրերի ձևակերպումը: Երկրորդը՝ դա հենց հայեցակարգի ստեղծումն է, դրա առանձին տարրերի ձևակերպումն ու դրանց ներդաշնակ միավորումը: Երրորդը՝ դրանք առաջին ուղղումներն են, որոնք ներմուծվել են՝ հաշվի առնելով հայեցակարգը կյանքի կոչելու ընթացքում կուտակված փորձը և գործնական արդյունքները:

Այս ժամանակահատվածների տևողությունները տարբեր է: Առաջին փուլը 16-րդ դարից ձգվել է մինչև 17-րդ դարի երկրորդ կեսը: Երկրորդ փուլը սկսվել է 17-րդ դարի երկրորդ կեսից և ավարտվել 18-րդ դարի 80-ական թթ.-ին: Երրորդ փուլը տևել է մոտ կես դար՝ մինչև 19-րդ դարի 30-ական թվականները: Փիլիսոփայական հայեցակարգի սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից, դրանք շատ բաներում տարասեռ ժամանակահատվածներ էին: Սակայն, իշխանությունների բաժանման հայեցակարգի ձևավորման տեսանկյունից, բոլոր երեք ժամանակաշրջանները կարող են միավորվել համաշխարհային քաղաքակրթություններից մեկի շրջանակներում, իսկ ավելի ստույգ, այն քաղաքակրթության, որը գերիշխող դեր է զբաղեցրել Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայում, իսկ հետո տարածվել նաև Հյուսիսային Ամերիկայում: Քաղաքական մշակույթը, որի բաղկացուցիչ մասը դարձավ իշխանությունների բաժանման հայեցակարգը, հանդիսանում էր հենց այդ քաղաքակրթության արդյունքը:

Թերևս ճիշտ չէր լինի ասել, որ իշխանությունների բաժանման հայեցակարգի ձևավորման նախադրյալները Եվրոպայում սկսել են ձևավորվել միայն 16-րդ դարից սկսած: Անտիկ տեսաբանների ժառանգությունից բացի⁵, գոյություն ունեին նաև

⁴ Մանրամասն տե՛ս **Соколов В.М.** Принцип разделения властей: особенности и проблемы Российской государственной-правовой модели. Дисс. ... канд. юрид. наук. М., 2011, с. 12-13.

⁵ Մանրամասն տե՛ս **Нерсисянц В.С.** Политические учения Древней Греции. М., 1979.

եվրոպական ֆեոդալիզմի իրական փորձը, երբ մեկ հզոր սենյորի, ֆեոդալների մեկ խմբավորման գերիշխանությունը կարող էր այս կամ այն չափով հավասարակշռվել մեկ այլ, ոչ այնքան հզոր սենյորի, փոքր ֆեոդալների մեծ խմբի շուրջ միավորմամբ, որոնք ստեղծում են ուժերի առումով համադրելի խմբավորում: Որոշ հանգամանքների ներքո, այս պայքարի մեջ կարող են ընդգրկվել դատական ու դասային-ներկայացուցչական մարմինները: Սակայն խոսել իմաստավորված որևէ համակարգի մասին, որը գործում է ռացիոնալ ձևակերպված տեսության հիման վրա, բնականաբար հարկավոր չէ: Ավելին, եվրոպացիների մոտեցումն այս խնդրի նկատմամբ սահմանվել է այն շրջանակներով, որոնք հատուկ են ավանդական հասարակության աշխարհընկալմանը: Իշխանության աստվածային ծագման կոնցեպցիան հազիվ թե կարողանար համադրվել իշխանությունների բաժանման կոնցեպցիայի հետ: Այդ բխում էր հետևյալ պատվիրանից. «Քանի որ Աստված մեր դատավորն է, Աստված մեր օրենսդիրն է, Աստված մեր թագավորն է. նա կփրկի մեզ» (Եսայի, 33:22):

Հենց այս պատճառով էլ կարևորագույն փուլը, որը պատրաստել է բոլոր գաղափարական, տեսական ու հոգևոր նախադրյալները իշխանությունների բաժանման հայեցակարգի հետագա մշակման համար, դարձավ ռեֆորմացիան (բարեփոխումը): Ռեֆորմացիան, Վերածննդի ու Լուսավորության դարաշրջանի հետ մեկտեղ, դարձավ այն հիմքերից մեկը, որոնց վրա, գրեթե երեք հարյուրամյակ (նվազագույնը մինչև վերջին տասնամյակները) կանգնած էր արևմտաեվրոպական ու դրանից սերած ամերիկյան քաղաքական մշակույթը:

Առաջին քայլը կատարվել էր Մ. Լյութերի կողմից, ով կաթոլիկության հետ իր պայքարի ընթացքում, ժխտեց ոչ միայն եկեղեցու հայրերի իրավունքը, այլև հենց եկեղեցու իրավունքը՝ Աստվածաշնչից ու ավանդապատումից վերև կանգնելու համար: Անսահման մեծացնելով Սուրբ գրքի հեղինակությունը՝ նա ճանապարհ բացեց անհատին եկեղեցու և եկեղեցական դոգմայի գերիշխանությունից ազատելու համար: Առաջին պլան մղելով հենց Աստվածաշնչի ուսումնասիրությունը՝ ազնվության միջոցով աստվածային իմաստության ճանաչողությունը, բարեփոխիչները նպաստում էին աշխարհընկալման սկզբունքային նոր հիմքերի ստեղծմանը, Աստծու նկատմամբ նոր վերաբերմունքի ձևավորմանը: Սա միանգամայն, կարևոր է թվում նաև այն պատճառով, որ ի տարբերություն Վերածննդի դարաշրջանի, այս անգամ ներգործության առարկա էր

զանգվածային գիտակցությունը, որը նախկինի պես կրոնական էր մնում⁶:

Լյութերից շատ ավելի հեռուն գնաց Ժան Կալվինը, իր՝ մարդկանց մի մասին հարատև կործանման, իսկ մյուսներին՝ հարատև երջանկության նախասահմանելու մասին ուսմունքով: Չնայած, որ Կալվինն այդ մասին ուղակիորեն չէր խոսում, նրա ուսմունքի տրամաբանությունը հանգեցնում էր աշխարհի միանգամայն այլ պատկերի ձևավորմանը: Ամենակարող, ամենաուղղորդիչ Աստված, մինչև մարդկանց մի մասի կործանումն ու մյուսների փրկությունը նախասահմանող աշխարհի ստեղծելը, ինչպես նաև մարդկության պատմության ողջ ընթացքում, չի միջամտում իրերի դրությանը, այլ դրանք մշապես ուղղորդում է իր կամքով: Աշխարհի նման պատկերը ենթադրում է յուրօրինակ օրենք, մեխանիզմ: Եթե Աստված ամեն ինչ ուղղորդում ու նախասահմանում է նախապես, ապա ամբողջ աշխարհը կարող է դիտարկվել, որպես յուրօրինակ մեխանիզմ:

Նման հարցադրումը, երբ հավատքի միակ աղբյուրը հանդիսանում էր ազնվությունը, անհրաժեշտ նախադրյալներ էր ստեղծում գիտական ճանաչողություն ստեղծելու համար: Քանի որ կեցությունը, Աստված, ապացույցի կարիք չունեի, իրական հնարավորություն առաջացավ հավատքի, ազնվության և գիտական ճանաչողության խնդիրները բաժանելու համար, որոնք գնում էին փորձի ճանապարհով, և որը մարդկային թույլ բանականության միջոցով հասնում էր այն օրենքներին, որոնք նախապես շարադրված էին Արարչի կողմից: Գիտական ճանաչողության զարգացումն, իր հերթին, փոխում էր հասարակության ու պետության նկատմամբ մոտեցումը: Իրական հնարավորություն առաջացավ պետությանը մոտենալու դրա կառուցվածքի ու գործունեության օրինաչափությունների տեսանկյունից: Գիտակցության մեջ հեղաշրջման նշանակալի այն արդյունքներից մեկը, որը սկսվեց ռեֆորմացիայի կողմից, դարձավ նոր աշխարհընկալման, աշխարհի ու հասարակության նկատմամբ նոր կարծիքի ձևավորման սկիզբը: Վերլուծելով այս փոփոխությունների բնույթը, Մ. Վեբերը, մատնացույց է անում, որ «խիստ կարևոր բաղադրիչներին պետք է դասել իրավունքի ու կառավարման ռացիոնալ կառուցվածքը»⁷:

⁶ Տե՛ս Կозлихин И.Ю., Поляков А.В., Тимошина Е.В. История политических и правовых учений. СПб., с. 128-129. Нерсисянц В.С. История политических и правовых учений. М., 2014, с. 162-163.

⁷ Տե՛ս Вебер М. Избранные произведения: Пер. с нем./Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; Предисл. П. П. Гайденко.—М.: Прогресс, 1990, с. 54

Սկսվեց յուրօրինակ քաղաքական մշակույթի ձևավորումը, որն արդյունքում գերիշխող տեղ գրավեց Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում: Բացի այլ տարբերություններից, որոնք առանձնացրել են դրանք քաղաքական այլ մշակույթների ֆոնի վրա, հարկավոր է առանձնացնել այնպիսիները, որոնք հատկանշական են ավանդականի փոխարեն եկող գիտակցության համար: Պետությունը, որպես մեկընդմիջտ կայացած երևույթ, մեկնաբանելուց հրաժարվելու հանգամանքը անխուսափելիորեն շարունակում էր այլ մեկնաբանությունները: «Ընդհանրապես «պետությունը», որպես քաղաքական ինստիտուտ, որն ունի ռացիոնալ մշակված իրավունք և ուղղորդված է դեպի ռացիոնալ ձևակերպված կանոնները, «օրենքները», չինովնիկ մասնագետների կառավարումը, տվյալ նշանակալի կոմբինացիայում, հայտնի է միայն Արևմուտքին, չնայած, որ այդ ամենի սամերը եղել են նաև այլ մշակույթներում»⁸: Այսպիսով, ստեղծվեցին առաջին նախադրյալները, որոնք կենսական նշանակություն ունեն պետական կառուցվածքի մասին ուսմունքի զարգացման համար, որի բաղկացուցիչ մասը դարձավ իշխանությունների բաժանման ուսմունքը:

Սակայն, չի կարելի չնշել, որ Ռեֆորմացիայի ժառանգությունն ավելի մեծ տեղ գրավեց ժամանակակից պետական-իրավական հայեցակարգերի, մեթոդների ու սկզբունքների կայացման գործում, որոնց վրա հիմնված են այդ հայեցակարգերը: Այս ոլորտում սկզբունքային խնդիր դարձավ հենց մարդկային անհատականության, իր նմանների, պետության, դրա առանձին ինստիտուտների հետ նրա փոխհարաբերությունների մեկնաբանությունը: Պետության ընկալումը, որպես այնպիսի մեխանիզմ, որի գործունեության մեխանիզմները պետք է ընկալել ու օգտագործել այս մեխանիզմի համար, պատասխան էր պահանջում մարդու և պետության փոխհարաբերությունների բնույթի մասին հարցին: Հասարակություն- մեխանիզմը, պետություն-մեխանիզմը, որոնք հարկավոր է ճանաչել ու հետևաբար՝ բարելավել, կատարելագործել, արմատապես տարբերվում էին այն պետությունից և հասարակությունից, որոնք օրգանապես աճում էին ավանդույթների, սովորույթների հողի վրա, որոնք արմատներով գնում էին դեպի պատմության խորքերը ու սկզբունքորեն ժխտում էին արմատական փոփոխությունների փորձերը՝ հատկապես ռացիոնալիստական և արագ եզրահանգումների հիման վրա: Պետություն-մեխանիզմի

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 47

բնականոն գործունեության համար, պահանջվում էր անձի յուրօրինակ տեսակ: Ինքը՝ պետություն-մեխանիզմի գաղափարը, ժխտում էր անհատի պատկանելության հնարավորությունները խոշոր այնպիսի համայնքների, որոնք չէին ընդգրկվում այդ հասարակության համակարգում: Առաջին հերթին, պետություն-մեխանիզմ գաղափարը հակասության մեջ էր գտնվում նախկին, ավանդական գիտակցության հետ, որի շրջանակներում մարդն, իրեն նախ և առաջ ընկալում էր խոշոր որևէ խմբի, համայնքի (օրինակ դասի) անդամ: Երկրորդ հերթին, գիտակցության, ու դրան հետևող քաղաքական կառուցվածքների արդիականացումը, անցումը հասարակության ավանդական ձևերից, կոնկրետ դեպքերում ընդունեցին ֆեոդալական հասարակությունից բուրժուական հասարակության մեջ մարդու դիրքին անցնելու հիմնական ձևերը:

Գնահատելով Ռեֆորմացիայի դերը ժամանակակից պետական-իրավական հայեցակարգերի համար գաղափարական, իմաստային նախադրյալներ ստեղծելու գործում, այն կարելի է գնահատել որպես այդ ուղղությամբ արվող առաջին քայլը: Փոփոխվել է միայն մտավոր, տեսական զարգացման վեկտորը: Այս զարգացման իրական ուրվագծերը տեսանելի դարձան միայն հաջորդ փուլում՝ Լուսավորության դարաշրջանում:

Սակայն չպետք է մտածել, որ այս երկու փուլերի միջև անանցանելի պատ է կանգնած: Հակառակը, շատ բաներում դրանք բխում են միևնույն տեսական, աշխարհընկալողական նախադրյալներից:

Գաղափարական-տեսական զարգացման նոր փուլը կապված է այն դարաշրջանի հետ, որի կերպարանավորումը դարձան Ն. Կոպեռնիկոսը, Ի. Կեպլերը, Գ. Գալիլեյը և հատկապես՝ Ի. Նյուտոնը: Խոսքը գնում է բնական գիտությունների հիմնարար զարգացումների ու առաջընթացի մասին, որը հետք թողեց ոչ միայն գիտելիքների կոնկրետ ուղղությունների, այլ նաև ընդհանրապես ողջ աշխարհի նկատմամբ մոտեցման վրա: Ժամանակակից հետազոտողները կարծում են, որ հենց այս ժամանակաշրջանում է ձևավորվել բնական-գիտական, տնտեսական, արտադրական ու տեխնոլոգիական խնդիրների լուծման մոտեցումը, որը Եվրոպային թույլ տվեց 18-րդ դարի ընթացքում հասնել աշխարհի մյուս շրջանների տնտեսական զարգացման

մակարդակին⁹: Աշխարհի նկատմամբ նոր հայացքների հիմքերից մեկը դարձավ գիտական ճշմարտության միասնական չափանիշի սահմանումը, որն հիմնված է դիտողականության, ռացիոնալ ապացույցի, փորձի ու դրա վերարտադրության հնարավորության վրա¹⁰:

Նյուտոնյան դասական մեխանիկայի ստեղծումը դարձավ այս առաջընթացի արժանի ավարտը: Հարկավոր է նշել, որ հենց այս ավարտը, տեսական կանխադրությունների հստակ ձևակերպված շարադրանքը ընկավ աշխարհի նկատմամբ նոր հայացքների հիմքում: Նոր աշխարհընկալման համակարգի առանցքը դարձավ «... այն բանի ընդունումը, որ ֆիզիկական աշխարհը կարելի է ընկալել ու այն կարելի է կառավարել կայուն օրենքների համեմատաբար ոչ մեծ թվով, որոնց կարող է հասնել մարդը: Հենց այս պատճառով է, որ նյուտոնյան հայեցակարգերն իրենցից ներկայացնում են պատմության սահմաններից մեկը»¹¹: Հատկանշական է, որ նյուտոնյան հայեցակարգերի տեսական կանխադրությունները, որոնք օնթոլոգիական հիմք հանդիսացան նոր, իսկ մասամբ էլ նորագույն շրջանի հայացքների համար, նկարագրվում էին մաթեմատիկորեն կատարյալ ապարատի օգնությամբ, որոնք բոլոր այս դրույթներին հատուկ վստահություն են հաղորդում: Այս պատճառով էլ հայեցակարգերի մեծ մասը, ներառյալ նաև տնտեսական, հասարակական-քաղաքական, սկսած 18-րդ դարից, անխուսափելիորեն պետք է ընդունեին գիտական ու կեղծ գիտական կառույցների ձև, որոնք կապված են կամ ձգտում են կապվել բնական գիությունների նորագույն ձեռքբերումների հետ:

Չի կարելի չնշել նաև այն հանգամանքը, որ նյուտոնյան հեղափոխությունը ստեղծեց յուրօրինակ մտավոր էֆորեա, որը հատկանշական է 17-րդ դարի վերջին 18-րդ և մասամբ՝ 19-րդ դարաշրջաններին, որը հայտնի է որպես «Լուսավորության» դարաշրջան, «Բանականության դարաշրջան»: Շարադրանքի պարզությունը, հստակ մաթեմատիկական լեզուն, որոնցով սահմանվել են այն օրենքները, ըստ որոնց՝ համաձայն Նյուտոնի, գործում է տիեզերքը, ինչպես նաև այս օրենքների համադրելիությունը մարդկային գործունեության այլ ոլորտների հետ, ներառյալ փորձը,

⁹ Տե՛ս **Rosenberg N., Birdzell L., Jr.** Science, Technology and the Western Miracle //Scientific American. 1990. Vol. 263, N. 5. p. 42-43.

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 44:

¹¹ Տե՛ս **Rostow W.** Politics and the Stages of Growth. Cambridge, 1971, p. 26.

դրույթների բազմաթիվ հաստատումները, որոնք արտահայտվել են XVII դարի վերջին քառորդին, հանգեցրեցին մարդկային բանականության ամենակարողության մասին միանգամայն բացատրելի պատկերացումներին: Հասարակական-քաղաքական ոլորտում բնական եզրահանգում, մարդու ամենակարողության պատկերացումների մասին հետևանք դարձան բանական հասարակական կարգի, պետական կառուցվածքի ռացիոնալ գործունեության ստեղծման հնարավորության մասին գաղափարները:

Պետական կառուցվածքի ռացիոնալիստական մոդելի կառուցման ճանապարհին առաջին քայլն արվեց անգլիական Լուսավորության ներկայացուցիչների կողմից, ովքեր դրեցին պետաիրավական այն հայեցակարգի հիմքը, որի մի մասն է հանդիսանում նաև իշխանությունների բաժանման հայեցակարգն Անգլիայում: Նրանք պետք է շատ ծանր աշխատանք կատարեին, հարկավոր էր նաև նյուտոնյան դեռևս մինչև վերջ չձևակերպված սահմանումները կապակցել հասարակական զարգացման խնդիրների հետ:

Պետական-իրավական հայեցակարգերի բուռն զարգացումը Անգլիայում XVII դարում պատահական չէր: Հենց այս դարաշրջանը Անգլիային բերեց ոչ միայն երկու հեղափոխություն, այլև, շատ մասնագետների կարծիքով, նշանավորվեց ավանդական հասարակությունից հեռանալով, սոցիալ-տնտեսական և քաղաքական արդիականության ինտենսիվ շրջան մուտք գործելով: Յակով Ստյուարտի գահ բարձրանալու պահին, Անգլիայի պետական կառավարման ողջ կառուցվածքը, ըստ էության կրում էր միջնադարյան բնույթ, արմատներով գնում էր դեպի ավանդական հասարակություն¹²:

Թագավորն ու պառլամենտի երկու պալատները ներկայացնում էին երեք դաս: Թագավորն, ինքը՝ իր անձով, առանձին դաս էր ներկայացնում: Լորդերի պալատը ներկայացնում էր բարձր արիստոկրատիան՝ ներառյալ անգլիական եկեղեցու եպիսկոպոսատը: Համայնքների պալատը, ինչպես այն ժամանակ ընդունված էր, իրենից ներկայացնում էր երկրի մնացած ողջ բնակչությունը, չնայած, որ դրա 450 անդամները, ըստ էության, էլիտար խումբ էր՝ գյուղական ազնվայրեր, հայտնի վաճառականներ և իրավաբաններ: Պառլամենտն, ըստ ավանդության համատեղում էր և՛ դատական, և՛ օրենսդրական գործառույթները՝ ձևավորելով պառլամենտի Բարձրագույն դատարանը:

¹² St'u **Brown R.** Modernization. The Transformation of American Life. 1600-1865. N. Y., 1976, p. 24.

Յակով առաջինի կառավարման օրոք պառլամենտի գործունեության մեջ նոր սկիզբ դրվեց օրենսդրական գերիշխանությանը, դատական իշխանությունը էլ ավելի միտվեց դեպի իր ավանդական կրողներին՝ դատարաններին, որոնք գործում էին ընդհանուր իրավունքի հիման վրա: Ողջ այս համակարգը բավականին ավանդական էր. այս կամ այն մարմինների իրավասությունների շրջանակը հստակեցված չէր, նրանք հիմնվում էին միմյանց վրա: Ինչպես դատական տեսության, այնպես էլ գործունեության մեջ, ընդհանուր իրավունքը ենթադրում էր, նախ և առաջ, համապատասխան նախադեպերի, դրանց մեկնաբանությունների օգտագործումը: Նախադեպն ու ավանդույթները սահմանում էին իշխանությունների գործունեության բնութագիրը՝ բոլոր մակարդակներում ու ոլորտներում՝ օրենսդիր, գործադիր և դատական:

Միանգամայն այլ պատկեր էր ներկայացնում Անգլիայի պետական համակարգը 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին: Օրենսդիր և գործադիր իշխանությունների գործառույթները, այժմ ավելի հստակ էին տարանջատված՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով, փոփոխվեց նաև այս խնդրի ընկալումը: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ շնորհիվ իրավունքի ընդհանուր համակարգի, անգլիացիները կարողացան առավելագույնս պահպանել հաջորդականությունը, մշակված սխեման համադրել ձևավորված ավանդույթների հետ: Անգլիական հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական-իրավական և գաղափարա-տեսական արդիականացման արագացումը չի կարելի ընկալել առանց հաշվի առնելու 17-րդ դարի անգլիական երկու հեղափոխությունների՝ «մեծ ապստամբության» և «փառավոր հեղափոխության» փորձը:

Զգձգված քաղաքական ճգնաժամը, որն ի վերջո ավարտվեց հեղափոխությամբ և քաղաքական պատերազմներով, գործադիր և օրենսդիր իշխանությունների՝ թագավորի ու պառլամենտի վրա հատուկ հետք թողեց: Հեղափոխության հասունացումը, հակամարտության սրումը, հատկապես արագ էր ընթանում 1629-թվականից սկսած, երբ Կառլ առաջինն այն ժամանակի միապետների համար ակնհայտորեն գրավիչ հանգամանքների՝ Ֆրանսիայում բացարձակության ուժեղացման ազդեցության ներքո, ցրեց պառլամենտը ու սկսեց առանց պառլամենտի կառավարումը, ինչը շարունակվեց մինչև 1640 թվականը:

Միապետի առաջին հաջողությունը նկատելի դարձավ այն ժամանակ, երբ պառլամենտական նախկին ընդդիմության շարքերը սկսեցին արագորեն նոսրանալ՝

համալրելով միապետի կողմնակիցների շարքերը: Առանց պառլամենտի կառավարման ժամանակաշրջանում սրվեցին տնտեսական, արտաքին և ներքին քաղաքական խնդիրները, որոնք Կառլ առաջինին, ի վերջո, ստիպեցին նոր պառլամենտ հրավիրել: Հեղափոխության զարգացումն ընթանում էր պառլամենտին ու թագավորին հակադրվելու հատուկ ձևով, որը պահպանվեց մինչև 1649 թվականը:

Իրադարձությունները զարգանում էին իշխանության երկու ճյուղերի մշտական սրման ուղղությամբ: Ի վերջո թագավորը, ով մտադրություն ուներ հաղթել պառլամենտին ու ճնշել քաղաքացիական պատերազմը, պարտություն կրեց, գերի ընկավ ու դատապարտվեց: Հատկանշական է, որ թագավորը մահվան դատապարտվեց ոչ թե իրականացվող փոփոխություններին ընդդիմանալու համար, ինչպես որ եղավ հարյուր հիսուն տարի անց Ֆրանսիայում, այլև Անգլիայի օրենքներն ու սովորույթները խախտելու համար (օրենքը վեր է թագավորից), սեփական խոստումները չկատարելու ու իշխանությունը չարաշահելու համար: Բնականաբար, հակասության նման սուր ձևերը, ակամայից նպաստում էին ոչ միայն օրենսդրական ու գործադիր իշխանությունների սահմանափակմանը, այլև անգլիացիների գիտակցության մեջ սերմանում էին անհնարինության, անօրինականության (որը հղի է ամենածանր հետևանքներով, օրենքի խախտումներով, օրենքով սահմանված ավանդույթների, սովորույթների շրջանակներից դուրս գալով) մասին գաղափարներ:

17-րդ դարի կեսի բուռն հեղափոխական իրադարձությունները ոչ միայն արագացրեցին տնտեսական ու սոցիալական փոփոխությունները, այլև էապես հարստացրեցին քաղաքական գիտակցությունը, ընդլայնեցին դրա շրջանակները: Դրա հետ մեկտեղ չափազանցություն չի լինի ասելը, որ 17-րդ դարի առաջին կեսի իրադարձությունները, անասելի ուժով խթանում էին բանական, եթե ոչ օպտիմալ պետական կառուցվածքի գաղափարի մշակումը: Եվրոպական հասարակական միտքն արդեն յուրացրել էր Վերածննդի դարաշրջանի գաղափարական ժառանգությունը՝ անհատի, նրա ներքին աշխարհի, անհատի արժեքի նկատմամբ ընդգծված ուշադրությամբ: Որոշիչ փուլի մեջ էր մտնում Լուսավորության գաղափարական հիմքերի ձևավորումը: Իսկ մյուս կողմից, XVII դարի առաջին կեսը նշանավորվեց զինված հակամարտությունների անասելի արյունահեղությամբ: Եվրոպայում ընթանում էր Երեսնամյա պատերազմը, որը շատերը, որոշակի հիմքերից ելնելով, համարում էին

չհաջողված, վաղ բուրժուական հեղափոխության կողմից պարտության մատնված: Այս պատերազմի արդյունքը դարձավ բազմապլան՝ տնտեսական, քաղաքական, մշակութային ու անգամ բնապահպանական, աղետը, որը պատեց Կենտրոնական Եվրոպային: Հատկանշական է, որ խոսքը գնում էր ոչ այնքան պետությունների միջև ընթացող պատերազմների, որքան բազմաթիվ ներքին երկպառակտությունների մասին: Անգլիան, որը խուսափել էր երեսնամյա պատերազմին մասնակցելուց, նույնպես զերծ չմնաց քաղաքացիական ներքին երկպառակտություններից: Գաղափարատեսական դրույթների և իրականության միջև հակասությունները չափազանց ակնհայտ էին:

Այս ճանապարհին կարևոր փուլ դարձան Թ. Հոբսի աշխատանքները, նախ և առաջ՝ «Լևիաֆանը կամ եկեղեցական ու քաղաքացիական պետության մատերիան, ձևը և իշխանությունը»¹³: «Լևիաֆանը», որը լույս էր տեսել անգլերեն լեզվով 1651 թվականին, ամբողջությամբ համարվում է Նոր ժամանակների առաջին ստեղծագործությունը, որում, բնական իրավունքի հիման վրա ամբողջական ու համակարգային ուսմունք ծավալվեց պետության մասին¹⁴: Թ. Հոբսի, ստեղծագործությունների դերը՝ իշխանությունների բաժանման մասին ուսմունքի համատեքստում քննարկելիս, հարկավոր է ուշադրություն դարձնել երեք խնդրի վրա: Առաջին հերթին՝ մարդու բնույթի ու էության վերաբերյալ խնդրին, երկրորդ՝ պետության դերի վերաբերյալ խնդրին և երրորդ՝ կատարյալ գործող պետության կառուցվածքի իմաստավորմանը:

Դիտարկելով մարդու բնույթը՝ Թ. Հոբսն այն համապատասխանեցնում էր 17-րդ դարի կեսերին հաստատված համակարգին: Հայացքների այս համակարգում հասարակությունը դիտարկվում էր ըստ մեխանիկայի օրենքների, և հետևաբար, նախ և առաջ, մտադրված էր առանձնացնել առաջնային «տարրերն» ու «ուժերը»: «Որպես տարրեր ընդունվում էին հարմարեցված անհատները, իսկ որպես ուժ՝ կամքի դրսևորման այն բոլոր ձևերը, որոնք առկա էին նրանց մոտ: Արդյունքում, այսպես կոչված սոցիալական ֆիզիկայի հետ մեկտեղ, ծնունդ առավ նաև նատուրալիստական պատմականությունը, որի ներքո պատմության իրադարձությունների պատկերը, բացատրվում էր մարդու բնույթով, որը հանգեցնում էր «կրքերի խաղին», բնության

¹³ Թոմաս Հոբսի հայացքների մասին մանրամասն տե՛ս **Елифанова Е.В., Павлисова Т.Е.** Государственно-правовые концепции: история и современность. М., 2012, с. 77-98.

¹⁴ Տե՛ս **Козлихин И.Ю.** История политических и правовых учений. Новое время: от Макиавелии до Канта. СПб., 2002, с. 157-158.

օրենքներին հետևելուն կամ դրանցից հրաժարվելուն...»¹⁵: Դրա հետ մեկտեղ, մարդու բնույթը, Թ. Հոբսի մեկնաբանությամբ, իրենից ներկայացնում է եթե ոչ անգլիացու, ապա հենց XVII դարի և հենց անգլիական հասարակության որոշակի հատվածի ներկայացուցչի դիմանկարը: Մեր առջև այն անհատն է, ով արդեն դուրս է եկել ավանդական հասարակությունից ու գտնվում է ոչ թե պարզապես «Ժամանակակից» հասարակության, այլև դրա վաղ կապիտալիստական տարբերակի ճանապարհին: Նման անհատը, հնարավոր է որ աշխույժ է, սակայն անկասկած ծայրահեղ շահախնդիր և ագրեսիվ է, եսասեր, ազատված է իրեն պահող բոլոր այն սկզբերից, որոնք հատուկ են ավանդական հասարակությանը՝ սովորույթներին, ավանդույթներին, կրոնական արգելքին: Բնությունից բոլոր մարդիկ հավասար են¹⁶, սակայն «... մենք մարդու էության մեջ գտնում ենք պատերազմի երեք հիմնական պատճառ, առաջին՝ մրցակցությունը, երկրորդ՝ անվստահությունը և երրորդ՝ փառքի ծարավը»:

Առաջին պատճառը մարդկանց ստիպում է հարձակվել միմյանց վրա՝ շահույթ ստանալու նպատակով, երկրորդը՝ սեփական անվտանգությունից ելնելով, երրորդը՝ պատվից դրդված»¹⁷: Նման մեկնաբանությունն այնքան էլ չի տարբերվում պուրիտանյան մեկնաբանությունից, որն իր արմատներով գնում է դեպի Հին Կտակարանը: Նորը այստեղ համարվում է համընդհանուր նախնական հավասարության մասին պնդումները: Դրա հետ մեկտեղ բնության հենց նման մեկնաբանությունն է, որ մարդուն թույլ է տալիս կատարել հաջորդ քայլը՝ պետության տեսության մշակման, պետությունը որպես ինստիտուտ իմաստավորելու գործում: Հավասարությունն առաջացնում է համընդհանուր անվստահություն, փոխադարձ անվստահությունը հանգեցնում է պատերազմի, «բոլորի պատերազմը բոլորի դեմ», «բոլորի անդադար պատերազմը բոլորի դեմ»¹⁸: Սակայն նման դրույթը ցանկացած արգասաբեր գործունեություն դարձնում է անհնարին: «Նման իրավիճակում տեղ չկա աշխատասիրության համար, քանի որ ոչ ոքի համար երաշխավորված չեն սեփական աշխատանքի արդյունքները, ինչի պատճառով էլ չկա հողագործություն, նավագնացություն, ծովային առևտուր, հարմար շինություններ, չկան գիտելիքներ երկրի մակերևույթի, ժամանակի

¹⁵ Տե՛ս **Берр. М. А.** Великая английская революция в портретах ее деятелей. М., 1991, с. 27

¹⁶ Տե՛ս **Гоббс Т.** Левиафан. Сочинения; В 2 т.. Т. 2., М., Мысль, 1991. с. 93.

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 95:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 95, 162:

հաշվարկման, արհեստի, գրականության մասին, չկա հասարակություն, իսկ որ ամենակարևորն է, առկա է բռնի մահվան մասին մշտական վախ և վտանգ, իսկ մարդու կյանքն էլ միայնակ է, աղքատ, խավար, հիմար ու կարճաժամկետ»¹⁹: Այն ելքը, որին մղում են «այն կրքերը, որոնք մարդկանց դարձնում են խաղաղամետ», հանդիսանում է փոխադարձ համաձայնագրի, պայմանագրի կնքումը, որի հիման վրա ձևավորվում է պետությունը: «Արդարությունն ու սեփականությունը սկսվում են պետության հիմունքներից»²⁰: Նման պայմանագիր կնքելով մարդիկ գիտակցաբար հրաժարվում են իրենց իրավունքների մի մասից և հոգուտ պետության, ինչը հնարավոր է դարձնում փոխադարձ գոյությունն ու զարգացումը: Հարկավոր է ուշադրություն դարձնել ոչ միայն պայմանագրային տեսությանը, որը դարձել է Նոր ժամանակների քաղաքական-իրավական հայեցակարգերի հիմքը, այլև պետության մեկ այլ մեկնաբանությանը: Պետությունը դիտարկվում է ոչ միայն որպես անխուսափելի չարիք, որը պայմանավորված է մարդու մեղսավոր բնությով, այլև որպես պոզիտիվ բարիք, որն անհրաժեշտ է հասարակության կյանքի բոլոր կողմերի զարգացման համար:

Նման կերպ ստեղծված պետությունը Թ. Հոբսին պատկերվում էր բիբլիական հրեշի, միաժամանակ հզոր և ճկուն Լևիաֆանի տեսքով, «.. այն հզոր Լևիաֆանի, կամ ավելի ստույգ, այն մահկանացու Աստծու, ում մենք՝ անմահ Աստծո գերիշխանության ներքո, պարտավոր ենք սեփական խաղաղությամբ ու սեփական պաշտպանությամբ»²¹: Քաղաքացիների խաղաղությունն ու բարգավաճումը, նախ և առաջ, երաշխավորվում էր պետության հզորությամբ, «համաձայնությունը առանց գրի, միայն բառով, որոնք ի վիճակի չեն երաշխավորել մարդու անվտանգությունը»²²: Իմաստավորելով անգլիական հեղափոխության, քաղաքացիական պատերազմի ու հանրապետության առաջին տարիների փորձը, որում հստակորեն պատկերվում էր պահապանի ուրվագիծը, Թ. Հոբսը, ուշադրությամբ դիտարկում էր այն բոլոր փաստարկները, որոնք ուղղված էին նման հզոր իշխանության դեմ ու մեկը մյուսի հետևից նշում էր դրանք: Համաձայնագիրը, որը կնքված էր պետության հաստատման նպատակով, ըստ Հոբսի պնդման, հանգեցնում է նրան, որ յուրաքանչյուր մարդ պետք է ընդունի «ինչպես

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 96:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 110:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 133:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 129:

սեփական գործողություններն ու դատողությունները, այնպես էլ այն մարդու կամ մարդկանց խմբի գործողություններն ու դատողությունները, ում մեծամասնությունը տալիս է բոլորին ներկայացնելու իրավունքը, անկախ այն հանգամանքից, թե նա իրենց կողմ քվեարկել, թե դեմ»²³: Ենթակաները չեն կարող փոխել կառավարման ձևը: Գերագույն իշխանությունը չի կարող գործը միայն ինքնավարության միջոցով: Ոչ ոք չի կարող ընդդիմանալ մեծամասնության կողմից հայտարարված ինքնիշխանության հաստատմանը: Ենթակաները չեն կարող դատապարտել ինքնակալի գործունեությունը, նա անդատապարտելի է ենթակաների կողմից²⁴:

Անգլիային տիրած աղետներից մեկի պատճառը Թ. Հոբսը համարում էր այն տարաձայնությունները, որոնք առաջացել էին թագավորի և լորդերի ու համայնքների պալատների միջև իշխանությունների բաժանման արդյունքում: Իրավունքը, որը ձևավորում է գերագույն իշխանության բնույթը, նա համարում էր անբաժանելի՝ հիմնվելով ինքն իր մեջ տարանջատված թագավորության մասին աստվածաշնչյան օրինակի վրա²⁵: Մի կողմից իշխանությունների բաժանման ժխտումը միանգամայն տրամաբանական էր պետության այն կոնցեպցիայի համար, որը ձևակերպված էր Հոբսի կողմից: Ինքը, այդ կոնցեպցիան դեռևս չէր հեռացրել պետության ու հասարակության օրգանական ընկալումից: «Մահկանացու աստված»՝ հզոր և համընդգրկուն Լևիաֆանը, ով իր մեջ է կլանում անհատին, ենթարկում նրան իրեն, այս կերպարում շատ բան կար պետության նախկին ընկալման վերաբերյալ: Նոր էին, թերևս, պետության հզորությունը, համընդգրկունությունը, դրա ամենաթափանց ուժը: Հզոր հրեշի բաղկացուցիչ մասերի տարանջատումը, որը միաժամանակ վախ ու հիացմունք է առաջացնում, խնդրի նման ընկալման դեպքում դրանց հակադրությունը, գրեթե անհնարին էր դառնում:

Մյուս կողմից, պետական իշխանության մասշտաբները պահանջում էին դրա առանձին ծառայողների միջև գործառույթների տարանջատում: Թ. Հոբսը խոսում է նաև իշխանության այն ծառայողների մասին, ովքեր իրականացնում են կամ ողջ պետության, կամ դրա՝ իրենց հատկացված մասի կառավարումը, այն ծառայողների, ովքեր զբաղվում են կառավարման հատուկ խնդիրներով (օրինակ գանձապետարանով կամ զինված ուժերով), սովորեցնելու իշխանության գերիշխանության նկատմամբ

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 134:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 134-143;

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 141:

պարտավորությունները, նրանց արդարն ու անարդարը սովորեցնելու իրավասություն ունեցող, արդարադատություն իրականացնող ծառայողների, դատական որոշումներն ի կատար ածող, ինքնակալի ակտերը մշակող, անկարգությունները ճնշող և այլ ծառայողների մասին²⁶: Այսպես, օրինակ, մանրամասն նկարագրելով պետական այն ծառայողների շրջանակը, ում հանձնարարված է արդարադատության իրականացումը, Թ. Հոբսը չի մոռանում, նախ և առաջ, խոսել այն մասին, որ «դատավորի իրենց աթոռում նրանք ներկայացնում են միապետին»²⁷: Այն ծառայողները, ովքեր իրագործում են համապատասխան որոշումները, նույնպես միապետի կողմից օժտված են իրավասություններով, «քանի որ ցանկացած գործողություն, որ նրանք կատարում են նման իրավասությունների հիման վրա, հանդիսանում է պետության ակտ, իսկ նրանց գործառույթներն էլ՝ համապատասխանում են մարդկային մարմնի ձեռքերի գործառույթներին»²⁸:

Հետևաբար, հիմքեր կան կարծելու, որ իշխանությունների գործառութային բաժանման պլանում, Թ. Հոբսը, օգտագործելով միասնական օրգանիզմի մարմինների մեխանիկական կերպարը, փորձում էր ձևակերպել առավել բարդ խնդիր: Հստակորեն տարանջատելով իշխանության առանձին ճյուղերը՝ նա ձգտում էր գտնել այն կոնկրետ շրջանակները, այն հարթակը, որոնց վրա այդ ճյուղերը կփոխգործակցեն միմյանց հետ:

Նման միասնական հարթակի մարմնավորումը Թ. Հոբսի համար դարձավ հրեշ-պետության իշխանությունը, որը ճնշում է միապետի իշխանությունը, որում շատ հեշտ բացահայտվում էր հենց միապետը: Իշխանությունների ճյուղերի բաժանման որևէ փոխադարձ զսպողականության մասին խոսք լինել չէր կարող: Ինքը՝ բաժանումը, կարող էր գոյություն ունենալ միայն Լևիաֆանի շրջանակներում, միայն դրա առանձին օրգանների տեսքով, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է ամբողջական օրգանիզմի գոյության համար, իսկ դրանից դուրս՝ անիմաստ է:

Թ. Հոբսի հայեցակարգի բնույթը հասկանալը բավականին դժվար է առանց պատմական կոնկրետ այն փորձի ուսումնասիրության, որին այն ժամանակ նա տիրապետում էր: Թ. Հոբսի տեսական բոլոր դրույթների վրա ազդեցություն է ունեցել ոչ միայն Անգլիայում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմը և այն փոխադարձ

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 186-191

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 188

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 190

կոտորածները, որոնք առկա էին Եվրոպայում XVII դարի առաջին կեսին, այլ նաև եվրոպական ժամանակակից հասարակության քաղաքական կազմակերպման սկզբունքները: Ավանդական կառուցվածքները, որոնք հիմնված են միապետի ու եկեղեցու նահապետական իշխանության վրա, նշանակալիորեն կորցրեցին իրենց նշանակությունը, թուլացան: Պահպանելով կազմակերպական որոշ ձևեր, դրանք կորցնում էին գոյության և գործունեության ներքին տրամաբանությունը: Այս պատճառով էլ ձևավորված նոր պատճառները բավականին հաճախ իմաստավորվում էին նախկին, սովորական ու հասկանալի տերմիններում: Մարդու փոխհարաբերությունները պետության հետ, պետական իշխանության կազմակերպման սկզբունքները կերպարանավորվեցին միապետի իշխանության մեջ: Սակայն, ինքը այդ նույն իշխանությունը, պետք է որ անասելի ուժ ունենար ավանդական միապետերի համար:

Ավանդական կառուցվածքների հետագա քայքայումը պետական-իրավական ու գաղափարատեսական ոլորտներում, իշխանությունների բաժանման կոնցեպցիայի արդի տեսակի կայացումը կապված են այն իրադարձությունների հետ, որոնք ծավալվել էին Անգլիայում 17-րդ դարի վերջին քառորդում: Ստյուարտների վերականգնումն արագացրեց ավանդական ձևերի անկումը, որոնց վերականգնումը անընդհատ փոփոխվող պայմաններում դատապարտված էր անհաջողության: Վերջին տարիներին ծավալվող վերականգնողական (ռեստավրացիայի) պայքարը միայն արագացրեց անգլիական հասարակության քաղաքական կառուցվածքի արդիականացման տեմպերը: Լույս տեսան հիմնարար օրենսդրական ակտեր, որոնք կազմում էին բրիտանական սահմանադրական կառուցվածքի հիմքը, ընդ որում այդ ակտերն ի հայտ են եկել լարված քաղաքական պայքարի արդյունքում: Այս սուր պայքարի ընթացքում սկսեցին ձևավորվել հետագա կուսակցական համակարգի հիմնական տարրերը՝ թորիների և վիգերի կուսակցությունները՝ դեռևս պառլամենտի մակարդակով: «Փառավոր հեղափոխությանը» նախորդած վերջին տարիներին թագավորի և պառլամենտի՝ գործադիր և օրենսդիր իշխանությունների հակադրությունները նոր ուժ ստացան: Սակայն առավել մեծ նշանակություն, ինչպես պատկերվում է, ունեցավ հենց «փառավոր հեղափոխությունը»: Ի տարբերություն «մեծ ապստամբության»՝ 17-րդ դարի կեսերի հեղափոխության, «փառավոր հեղափոխությունը» չընդգրկեց բնակչության լայն

շերտերին՝ առավել ևս ցածր դասերին:

Հատուկ հավաքված հիմնադիր պառլամենտը²⁹ ձգտում էր խուսափել ամեն ինչից, որը կարող էր հիշեցնել «մեծ ապստամբությունը», հեղափոխությունը: Այսպես, օրինակ, նրան ակնհայտորեն հուզում էին Վիլիելմ Օրանսկու որոշ հեղափոխական հակումները: 1689 թվականի հոկտեմբերին ընդունված «Իրավունքների մասին բիլլը» (օրենքը) իր 13-րդ հոդվածում, հստակորեն սահմանեց պառլամենտի իշխանության սահմանադրական երաշխիքները: Հոգուտ պառլամենտի սահմանափակվեցին թագավորի իրավասություններն օրենսդրական, ֆինանսական, ռազմական և դատական ոլորտներում:

Հստակորեն ամրագրվեցին պառլամենտի սահմանադրական երաշխիքները՝ պառլամենտի պատգամավորների ընտրության ու քննարկումների ազատությունը: Փաստացի սահմանվեցին սահմանադրական միապետության իրավական հիմքերը: Սակայն, իշխանությունների բաժանման հայեցակարգի ձևավորման համար նշանակություն ունեին ոչ միայն կոնկրետ իրավական ակտերը, այլև «փառավոր հեղափոխության» կոնցեպցիան: Ե՛վ «փառավոր հեղափոխությունը», և՛ դրա արդյունքում հաստատված ռեժիմը, փոխզիջում էին ներկայացնում մեծ թափ հավաքող բուրժուազիայի և արդեն որոշակիորեն բուրժուականացված արքունիքի միջև: Սա մի փոխզիջում էր, որը ձեռք էր բերվել քաղաքական առումով բարենպաստ հիմքի վրա: Սոցիալ-տնտեսական առումով նման փոխզիջումը նշանակում էր, որ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման շուրջ նախկինում հակամարտող ուժերը, կանգնեցին գրեթե միևնույն հարթակի վրա: Կարելի է ասել, որ այդ ժամանակ որոշված ռեժիմն իրենից ներկայացնում էր փոխզիջում հզորացող բուրժուազիայի և արդեն բավականաչափ բուրժուականացված հասարակության միջև:

Բնականաբար պահպանվեցին նաև տարաձայնությունները, որոնք ըստ էության միանգամայն նշանակալի էին: Այս տարաձայնությունները, սակայն, կարող էին այլընտրանքային բնույթ կրել միայն ընդհանուր սոցիալ-տնտեսական և քաղաքական կոնսենսուսի շրջանակներում: Այս կոնսենսուսը, որը հիմնարար համաձայնություն էր հասարակության զարգացման գլխավոր խնդիրների շուրջ, այդ ժամանակից ի վեր դարձավ անգլո-սաքսոնյան քաղաքական մշակույթի նշանակալի հատկանիշներից

²⁹ Մանրամասն տե՛ս Գутнова Е.В. Возникновение английского парламента. М., 1960.

մեկը:

Նման փոխգիշումը կարևորագույն նախադրյալ հանդիսացավ Ջ. Լոկի կողմից ձևավորված հայեցակարգի համար³⁰: Նրա հիմնական քաղաքական ստեղծագործությունը՝ «Երկու տրակտատ քաղաքացիական կառավարման մասին», հիմնականում նախապատրաստվեց 1679-1681 թվականներին՝ հենց թագի ու վիգերի միջև հարաբերությունները սրվելու պահին, ինչի արդյունքում Ջ. Լոկը հայտնվեց Հոլանդիայում, որտեղ էլ բարեկամություն հաստատեց Վիլհելմ Օրանսկու հետ: «Երկու տրակտատ քաղաքացիական կառավարման մասին» աշխատությունը լույս տեսավ 1690 թվականին, երբ հեղինակը «փառավոր հեղափոխությունից հետո» վերադարձավ Անգլիա:

Նախ և առաջ Լոկը հրաժարվեց Հոբսից եկող միապետության նկատմամբ ավանդական վերաբերմունքից: Նա ուղղակիորեն ու հաստատականորեն ժխտեց այն. «... բացարձակ միապետությունը, որին շատերը համարում են կառավարման միակ ձևն աշխարհում, իրականում անհամատեղելի է քաղաքացիական հասարակության հետ, և, հետևաբար, չի կարող լինել քաղաքացիական կառավարման ձև»³¹: Լոկը միջնադարյան միապետությունը ժամանակակից ուղի փոխադրելու հաստատական կողմնակիցն էր և չէր վախենում հրաժարվել իրեն սպառած ավանդույթներից³²:

Մարդու էության վերաբերյալ Լոկի մոտեցումները շատ բաներում տարբերվում էին Հոբսի մեկնաբանություններից, իսկ երբեմն ուղիղ հակադարձում միմյանց: Թ. Հոբսի համար միակ իրավիճակը բոլորի պատերազմն էր բոլորի դեմ, որը սպառնում էր վերածվել բռնության ու կամայականության թագավորության: Անհատապաշտության և կրթերի դրսևորումների արդյունք դարձավ Լեյաֆանի պետության շրջանակներում անձի իրավունքների եթե ոչ ժխտումը, ապա զգալի սահմանափակումը: Ըստ Լոկի, հասարակության բնական վիճակը կրում է համեմատաբար կանոնակարգված բնույթ: Այն կարգավորվում է բնական իրավունքի նորմերով: Հատուկ ուշադրություն է հարկավոր դարձնել Ջ. Լոկի կողմից արված մարդու բնական ազատության մեկնաբանությանը. «Մարդու բնական ազատությունը կայանում է նրանում, որ նա ազատ է երկրի

³⁰ Ջ. Լոկի և նրա հայացքների մասին մանրամասն տե՛ս Կոզլիխ Ի.Յու. История политических и правовых учений. Курс лекции. М., 2015, с. 184-201.

³¹ Տե՛ս Լոք Ժ. Сочинения: В. 3 т. Т. 3. М: Мысль. 1988. с. 312

³² Տե՛ս Կոզլիխ Ի.Յու. История политических и правовых учений. М., 2015, с. 185-186.

երեսին իրենից վեր կանգնած ցանկացած իշխանությունից, չի ենթարկվում մեկ այլ մարդու իշխանությանը, այլ ղեկավարվում է միայն բնության օրենքներով: Մարդու ազատությունը հասարակությունում կայանում է նրանում, որ նա չի ենթարկվում որևէ այլ օրենսդրական իշխանության, բացի նրանից, որը, ըստ համաձայնության, սահմանված է պետությունում, չի ենթարկվում որևէ մեկի կամքին ու սահմանափակված չէ որևէ օրենքով, բացառությամբ նրանց, որոնք համապատասխան օրենսդրական իշխանությամբ կսահմանվեն՝ վերջինիս ընձեռված վստահությանը համապատասխան»³³:

Լոկի կողմից պատկերված մարդու կերպարը ամբողջությամբ հեռանում է ավանդական հասարակությունից ու բոլոր այն սահմանափակումներից ու ինստիտուտներից, որոնք պարտադրվում են ավանդական հասարակության՝ դասային, կրոնական և այլ շերտերի կողմից: Նման մարդը տեսական առումով կատարյալ նյութ էր ռացիոնալ կառուցված պետաիրավական մեխանիզմի համար: Կարելի է ասել, որ մարդկային ողջ բնույթը ուղղակիորեն ու վստահաբար հանգեցվում էր միասնական ընդհանուր ուղղորդիչին. «... մարդկանց պետության մեջ միավորելու ու նրանց կառավարության իշխանության ներքո հանձնելու մեծ և գլխավոր նպատակը հանդիսանում է նրանց սեփականության պահպանումը»³⁴: «Տրակտատ պետական կառավարման մասին» աշխատանքում Լոկը ձևակերպել է անձի երեք հիմնական բնածին իրավունքները, որոնք անհատները մեկը մյուսի հետևից ճանաչում են «բնական վիճակում» և, որոնք հետագայում պետք է երաշխավորվեն պետության կողմից: Դրանք են՝ կյանքի իրավունքը, ազատության իրավունքը և սեփականության իրավունքը: Լոկի եռակի իրավական այս բանաձևը՝ ազատություն, կյանք, սեփականություն, մտավ մեծ թվով վաղ բուրժուական հայեցակարգերի մեջ ու դարձավ այն «բջիջը», որի հիման վրա զարգացավ «մարդու և քաղաքացու իրավունքների» ավելի ուշ և տարբերակված հասկացությունը³⁵:

Սեփականության իրավունքի նկատմամբ «բնական իրավունքի» մասին տվյալները, որոնք Լոկի մոտ առաջին պլանում էին գտնվում, հայտնի իմաստով պարզեցնում էր մարդկանց միջև հարաբերությունների մեկնաբանությունը՝

³³ Տե՛ս Локк Дж. Соч. Т. 3, с. 274.

³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 334:

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 155-156:

հանգեցնելով դրանք ապրանքնաշրջանառության մասնակիցների հարաբերություններին: Ազատությունը դառնում էր զուտ հարաբերություն անձանց միջև, փոխադարձ կամքի հարաբերություններ, որոնց դրսևորումը դարձան հարաբերությունները շուկայում: «Եռակի իրավական բանաձևը» բավականին պարզ էր, սակայն հենց դա հիմք հանդիսացավ փոխզիջման համար այն իրական շրջանակների, կոորդինատների միջև, որոնցում, ըստ Ջ. Լոկի կառուցվում էր քաղաքական համակարգը:

Պնդելով այն միտքը, որ մասնավոր սեփականության ճանաչման շրջանակներում խոսք կարող է գնալ սեփականություն ձեռք բերելու, այն պահելու ու բազմապատկելու, մասնավոր սեփականության հետ կապված իրավունքների լայն շրջանակի համար մղվով պայքարի մասին, որն ի դեպ կարող է միանգամայն սուր բնույթ կրել: Հաճախ, սեփականության համար մղվող պայքարը կարող է սկսվել սեփականության իրավունքների ուղղակի խախտումից, ինչպես, որ արդեն եղել էր, օրինակ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ բնակիչներն ինքնակամ զավթեցին հասարակական հողերը, պետական սեփականությունը, որպեսզի հենց իրենք դառնան հողատեր-սեփականատեր: Այսպես էր Եվրոպայի գյուղացիների դեպքում, ովքեր պատրաստ էին բաժանել ինչպես արքունիքը, այնպես էլ համայնքային հողերը: Մասնավոր սեփականության սրբության ընկալումը, որպես հիմնարար, համակարգաձևավորող սկզբունք, չէր ժխտում այս համակարգի զարգացման այլընտրանքային տարբերակների նշանակալի տարածումը:

Պնդելով այն, որ մարդկանց պետության մեջ համախմբելու հիմնական նպատակ է հանդիսանում նրանց սեփականության պահպանումը, Լոկը նշում էր, որ «բնական վիճակում» լինելը դա չի ապահովում: Որպես այդ խնդրի իրականացման կարևորագույն պայմաններ նա առաջ էր քաշում «բնական վիճակում» բացակայող իշխանության երեք ճյուղերի գոյությունը:

«Առաջինը, բացակայում է որոշված, հստակ, ճանաչված օրենքը, որը ընդհանուր համաձայնությամբ թույլատրված կլինեք որպես արդարության և անարդարության նորմ և կհանդիսանար ընդհանուր չափանիշ, որի օգնությամբ կլուծվեին նրանց միջև եղած բոլոր վեճերը... :

Երկրորդը՝ բնական վիճակի մեջ բացակայում է բանիմաց և անկողմնակալ դատարանը, որն օժտված կլինեք բոլոր դժվարությունները ընդունված օրենքին

համապատասխան լուծելու իշխանական լիազորություններով:

Երրորդ՝ բնական վիճակի մեջ հաճախ է բացակայում այն ուժը, որը կկարողանար ի կատար ածել արդար դատավճիռը»³⁶:

Մեփականության պահպանումն, ըստ Լոկի պնդման, մարդկանց դրդում է հրաժարվել պատժի անհատականացման իրավունքից, որն ունի յուրաքանչյուրը, և դրանք հանձնել այն մարդկանց ձեռքը, ովքեր օրենքով ունեն դրա իրավասությունը: Նման համաձայնագիրն ընդունվում էր որպես առաջնային աղբյուր ինչպես օրենսդրական, այնպես էլ գործադիր իշխանության համար³⁷:

Դիտարկելով իշխանությունների հարաբերակցությունը՝ Ջ. Լոկն անվիճելիորեն առաջնությունը տալիս էր օրենսդրական իշխանությանը՝ այն ճանաչելով որպես «ոչ միայն պետության գերագույն իշխանություն, այնպես էլ սրբություն այն մարդկանց ձեռքերում, ում հանրությունն այն վստահել է»³⁸: Այլ մոտեցումը պարզապես անհնարին էր մարդու՝ պետական ու քաղաքական այն գործչի համար, ով մասնակցում է թագավորական իշխանության բացարձակ ձգտումներին:

Դրա հետ մեկտեղ Լոկը հաշվի էր առնում նաև այն, որ ներկայացուցչական իշխանության հաստատությունները, օրենսդրական մարմինները, ինքնին դառնում են սուր քաղաքական պայքարների թատերաբեմ: Հենց այս պատճառով է նա մանրամասն և մանրակրկիտ կերպով տեսականացնում օրենսդրական իշխանության գործունեության սկզբունքները, դրա իրավասության շրջանակաները: Ճիշտ է, որպես այս իշխանության սահմաններ հանդես են գալիս «հրապարակված ու սահմանված օրենքները, որոնք չպետք է փոխվեն յուրաքանչյուր առանձին դեպքում», ժողովրդի բարեկեցությունը և նրա համաձայնությունը: Օրենսդրական մարմինը չի կարող և իրավունք էլ չունի փոխանցել ժողովրդի կողմից իրեն վստահված այդ իրավունքը³⁹:

Օրենքի գերակայության պայմաններում գործադիր իշխանության գոյությունը Լոկի մոտ բացատրվում է օրենքների կատարմամբ ու դրանց կատարման նկատմամբ վերահսկողությամբ: Գործադիր իշխանության գոյության պարտադիր պայման է հանդիսանում դրա առանձնացումը օրենսդրական իշխանությունից: Տեղական

³⁶ Локк Дж. Соч. Т. 3, с. 335

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 336:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 339:

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 346:

ինքնակառավարման համեմատաբար զարգացած համակարգը, որը գոյություն ուներ Անգլիայում, արտահայտվում էր գործադիր իշխանությունը ներքին հարցերով զբաղվող գործադիր իշխանության ու «դաշնային» իշխանության բաժանելու մասին դրույթում: Վերջինիս իրավասության շրջանակներում է գտնվում պատերազմի ու խաղաղության իրավունքը, միջազգային համաձայնագրերի ստորագրումը, տվյալ պետության սահմաններից դուրս գտնվող առանձին անձանց, միությունների հետ գործերի վարումը⁴⁰: Հիմնելով նման ստորաբաժանում՝ Ջ. Լոկն ասես իր մեջ հավասարակշռում է գործադիր իշխանության առանձին մասերը՝ դրանք դարձնելով միաժամանակ արդյունավետ ու ապահով, արդյունավետ՝ արտաքին քաղաքական գործերում, միևնույն ժամանակ անընդունակ՝ սեփական արտաքին հզորությունը ներքին խնդիրների լուծման համար օգտագործելու, իշխանության մյուս ճյուղերին ենթարկելու համար:

Իշխանության տարբեր ճյուղերի փոխադարձ հավասարակշռումը հանդիսանում է Ջ. Լոկի ողջ հայեցակարգի առանցքային դրույթներից մեկը: Գործադիր իշխանության չափից դուրս ուժեղացման մտահոգությունները միանգամայն հասկանալի են. սակայն ծագում է հետևյալ հարցը, ինչու՞ երեք ճյուղ:

Առաջին հերթին, դատական իշխանությունը անգլիական իրավական համակարգում բավականչափ ինքնուրույնություն է ունեցել: Համարձակորեն հեռանալով բացարձակ ավանդույթներից՝ Լոկը պատշաճ չէր համարում թողնել այն ճյուղը, որն այդքան կարևոր դարձավ Ստյուարտների բացարձակացված ձգտումների հետ պայքարում:

Լոկի փաստարկման համակարգը շատ բաներում հանգեցնում էր իշխանության նվազագույն երեք ճյուղերի անհրաժեշտությանը, որոնք փոխադարձորեն հավասարակշռում են միմյանց: Լոկյան փաստարկումը, ի տարբերություն Հոբսի փաստարկման, առավել շատ է ազատված կրոնական մոտիվներից: Շատ բաներում սա բացատրվում է նրանով, որ կրոնական հակամարտության նախկին սրությունը նվազել է, սակայն ամբողջությամբ չի անհետացել: Գլխավորը կայանում է նրանում, որ Անգլիայի հասարակական մտքում Լոկի տրակտատների ի հայտ գալու պահին ավելի մեծ հետևանքներ էր ունենում «նյուտոնյան հեղափոխությունը», որը շատ բաներում սահմանում էր անգլիական Լուսավորության ձևն ու մեթոդը: Լոկի կողմից

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 348:

նկարագրված համակարգը, որի մեջ էին մտնում օրենսդրական, դատական և գործադիր իշխանությունները, որոշակիորեն հիշեցնում էր եթե ոչ դինամիկ, ապա ստատիկ հավասարակշռության համակարգ:

Տվյալ դեպքում XVII դարի վերջին քառորդի Անգլիայի քաղաքական իրականությունը սխեման լրացրեց իրական բովանդակությամբ՝ անասելի բարենպաստ պայմաններ ստեղծելով հայեցակարգի ներդրման համար: Իշխանություններից և ոչ մեկը, պատկերավոր ասած, չէր կարող գերիշխել մյուսի նկատմամբ, քանի որ պարտված կողմը միշտ կարող էր դաշնակից գտնել ի դեմս համակարգի երրորդ բաղկացուցիչ կողմի, որն իր հերթին պետք է օգնության գար թույլ կողմին՝ հաղթանակող կողմի ստորադասության ներքո չհայտնվելու համար: Դրա հետ մեկտեղ հիմնական սոցիալ-տնտեսական կոնսենսուսը, որն արտահայտված է հիմնական «եռադեմ բանաձևում», հստակորեն նշում էր այն շրջանակները, որոնք գործընթացի մասնակիցներից և ոչ մեկը չէր հանդգնում անցնել: Հակառակ դեպքում, նա կարող էր մասնակցից վերափոխվել աութսայդերի (օտարականի), ով դուրս է մնացել համակարգի սահմաններից, որի նկատմամբ կարող էին անգամ չկիրառվել դրա գործունեության կանոնները:

17-րդ դարի վերջին իշխանությունների բաժանման հայեցակարգը, որը հիմնված է մարդու էության, հասարակության ու պետության միանգամայն նոր մեկնաբանության վրա, արդեն ձեռք էր բերում իր հիմնական հատկանիշները: Բավականին խորը արմատավորվել էր խելամիտ պետական կառուցվածք ստեղծելու գաղափարը: Սկզբում՝ պուրիտանական ուսմունքի, իսկ հետո՝ բնական գիտությունների այդ ժամանակվա ձեռքբերումների հիման վրա տեղի էր ունենում երկակի գործընթաց՝ խելամիտ պետական կառուցվածքի հայեցակարգի ձևավորումը 17-րդ դարի հարուստ և ողբերգական փորձի հիման վրա: Իշխանությունների բաժանման բնույթով ռացիոնալիստական կոնցեպցիան, որը ծնվել է արդիականացման կապիտալիստական հայեցակարգի ալիքի հիման վրա, այդ ժամանակ կրում էր չափազանց բանական, սխեմատիկ բնույթ՝ հիմնվելով երկրի փորձի վրա: Հայեցակարգի հարստացումը, որը շատ բաներում դրան հաղորդում էր համընդհանուր բնույթ, դարձավ հաջորդ դարի գործը:

1.2 Իշխանությունների բաժանման հայեցակարգի զարգացումը

Իշխանությունների բաժանման հայեցակարգի մշակումը 18-րդ դարում ստացավ նոր հատկանիշներ, որոնք հարստացրեցին ու խորացրեցին այն: 17-րդ դարում այս հայեցակարգի վերաբերյալ աշխատանքը կատարվում էր հիմնականում Անգլիայում, իսկ սկսած 18-րդ դարից այն սկսեց ծավալվել նաև այլ երկրներում: Լուսավորության գաղափարախոսության զարգացման նոր փուլը, որը կապված էր ֆրանսիական լուսավորության հետ, հանգեցրեց յուրօրինակ «գաղափարատեսական տարածության» ձևավորմանը, գաղափարների որոշակի համակարգի երկարատև գերիշխանությանը: Ձևավորվեց յուրօրինակ «ինտերնացիոնալ», որը կազմված էր հարուստ և կրթված շերտերից, որի պատկանելության հատկանիշ էր հանդիսանում որոշակի հայացքների ու անգամ միևնույն լեզվի ուսումնասիրությունը՝ ընդհանուր, մակերեսային ձևով:

Մեկ այլ նոր հանգամանք, որը պետաիրավական հայեցակարգին տալիս էր շատ ավելի մեծ դրամատիկություն, լարվածություն, դարձավ մասշտաբային, սոցիալ-տնտեսական կոնֆլիկտի զգացողությունը, որը սկսվեց 1776 թվականին ու շարունակվեց մինչև 1815 թվականը: Սա հզորագույն, սոցիալ-տնտեսական ցնցումների, հեղաշրջումների ու պատերազմների ժամանակաշրջան է, որը ստացավ «ժողովրդավարական հեղափոխությունների դարաշրջան» անվանումը: Անմիջական այն սահմանագիծը, որից սկսվեց մեծ ցնցումների այս դարաշրջանը, դարձավ Յոթնամյա պատերազմը, որը գրեթե համաշխարհային մասշտաբի հզորագույն հակամարտություն էր: Դրա գլխավոր մասնակիցների համար այն խթան հանդիսացավ ներքին հզորագույն հակամարտությունների՝ Բրիտանական կայսրությունում հյուսիսամերիկյան գաղութների կողմից անկախության համար մղվող պատերազմի, Ֆրանսիայում հեղափոխական ճգնաժամի համար: Անխուսափելի հակամարտության այս զգացողությունը, գաղափարատեսական որոնումները հատկապես սրեցին դրանց արդիականություն ու նոր ուղղություն հաղորդեցին:

Իշխանությունների բաժանման հայեցակարգի հիմքերը, որոնք դրվել էին անգլիական Լուսավորության գործիչների կողմից, 17-րդ դարում ընկալվեցին ու զարգացան նրանց ֆրանսիացի հետևորդների կողմից: Դրա հետ մեկտեղ հարկավոր է նշել ֆրանսիական Լուսավորության որոշակի առանձնահատկություններ: Զբաղվելով

ոչ միայն 18-րդ դարի Ֆրանսիական մեծ հեղափոխության գաղափարա-տեսական, մտավոր պատրաստվածությամբ, այլև «ժողովրդավարական հեղափոխությունների ողջ դարաշրջանով», ֆրանսիական լուսավորիչները միաժամանակ պետք է լուծեին երկու խնդիր: Ապագա պետական կառուցվածքի հիմքերի մշակման հետ մեկտեղ՝ դրա ռացիոնալ կառուցվածքի «գծագիրների» ստեղծմամբ, ստեղծագործական խնդրի լուծմամբ նրանք պետք է խախտեին բացարձակ կառուցվածքով ստեղծված ավատական, պետական կառուցվածքի գաղափարական կառուցվածքները: Եթե հաշվի առնենք, որ ավատական կարգի հիմքերը Ֆրանսիայում շատ ավելի ամուր էին, քան Անգլիայում, իսկ փոխզիջման հնարավորությունները շատ ավելի քիչ, ապա պարզ է դառնում ֆրանսիական Լուսավորության մեծ արմատականության անխուսափելիությունը:

Իշխանությունների բաժանման հայեցակարգի վրա ազդեցություն գործած խոշորագույն կերպարը դարձավ Շ.Լ.Մոնտեսքյոն⁴¹: Նրա «Օրենքների ոգու» մասին աշխատությունը դիտարկելիս, որը լույս է տեսել 1748 թվականին, հարկավոր է հաշվի առնել երկու սկզբունքային հանգամանք: Առաջին հերթին, Մոնտեսքյոյի քաղաքա-իրավական ուսմունքի հիմքերը XVIII դարի դեիստների և մատերիալիստների հայացքների հանրագումարն է, նա վստահաբար ժխտում էր աշխարհի աստվածաբանական պատկերը, սեփական հայեցակարգին ձգտում էր տալ նյութական հիմնավորում: Իսկ երկրորդն այն է, որ իր հայեցակարգում Մոնտեսքյոն լայնորեն հիմնվում էր անգլիական փորձի վրա՝ կատարելագործելով դրա առանձին դրույթները: «Օրենքների ոգու մասին» տրակտատի հիմնական գաղափարը դարձավ օրենքների՝ «բառի բուն իմաստով», «իրերի դրությունից բխող անհրաժեշտ հարաբերությունների» բացահայտման մասին միտքը⁴²: «Այս օրենքները» պետք է բնորոշ լինեն տվյալ ժողովրդի առանձնահատկություններին և միայն շատ հազվադեպ դեպքերում կարողանան պիտանի լինել ուրիշ ազգերի կողմից դրանց կիրառության համար:

Հարկավոր է, որպեսզի օրենքները համապատասխանեն կառավարության բնույթին ու սկզբունքներին. արդյո՞ք դրանք ունեն քաղաքական օրենքների խնդիրը լուծելու նպատակ, թե՞ պարզապես պաշտպանում են այն ամենի գոյությունը, ինչը

⁴¹ Տե՛ս **Нерсесянц В.С.** История политических и правовых учений. М., 2014, с. 314-322; Տե՛ս **Казлихин И.Ю.** История политических и правовых учений. М., 2015, с. 202-224.

⁴² Տե՛ս **Монтескье III.** Избранные произведения. М., 1955, с.163

կազմում է քաղաքացիական օրենքների խնդիրը⁴³:

Երբեմն Մոնտեսքյոյին մեկնաբանում են որպես աշխարհագրական դետերմինիզմի հիմնադիր, ով այս կամ այն երկրի քաղաքական ու պետական կառուցվածքի առանձնահատկությունները դուրս է բերում դրա կլիմայի, չափերի և այլ առանձնահատկություններից: Իրականում «Օրենքների ոգու մասին» տրակտատի հեղինակի մոտեցումը այս խնդրի նկատմամբ շատ ավելի խորն էր:

Սոցիալական աշխարհի օրինաչափությունները երկրի, պատմական յուրաքանչյուր հասարակության ընդհանուր ոգուն համապատասխան իրենց արտահայտությունը ստացան Մոնտեսքյոյի աշխատություններում: Ազգի ոգին հանդես է գալիս որպես ֆիզիկական ու բարոյական պատճառների բարդ փոխհարաբերության արդյունք, որոնք ազդում են հասարակության վրա ու սահմանում նրա զարգացումը: Հասարակության, պետության և իրավունքի խնդիրը դիտարկելիս նրա մոտ պատմականության սկզբունքն աստիճանաբար առաջատար է դառնում⁴⁴: Մոնտեսքյոյի կողմից ցուցադրված մոտեցման լայնությունն ու խորությունը նրան դարձրեցին ժամանակակից սոցիոլոգիայի հիմնադիրներից մեկը⁴⁵:

«Օրենքների ոգու մասին» աշխատությունում ընթերցողին ցնցում է տարածական ու ժամանակային անսովոր տատանումը, վերլուծության կամ օրինակների համար ներկայացված նյութերի ծավալը: Շ.Լ. Մոնտեսքյոն, այս իմաստով հետևում է օրենսդիրների ավանդույթներին, նա գործում է Հին Հունաստանի ու Հռոմի կյանքի, այն ժամանակ նորագույն համարվող Չինաստանի ու Հյուսիսային Ամերիկայի օրինակներով, Ֆրանսիայի պատմությամբ և այլ օրինակներով: Այսքան լայն մոտեցումը, ցանկացած ոլորտից՝ պատմության, տնտեսագիտության, իրավունքի տվյալներ ներգրավելու ունակությունը հեղինակի կատարած եզրահանգումներին հաղորդում էին համընդհանուր բնույթ: Սակայն, պարադոքսը, մեր կարծիքով կայանում է նրանում, որ այս եզրահանգումները նախ և առաջ վերաբերում էին հենց Ֆրանսիային: Մոնտեսքյոյի վերջնական նպատակը ոչ միայն ռացիոնալ պետական կառուցվածքն էր, այլ նաև քաղաքական ազատության ձեռքբերումը: Խնդիրը, որը լուծում էր Մոնտեսքյոն, իր մեջ ընդգրկում էր ևս մեկ պայման. պետական համակարգը պետք է ոչ միայն ապահովեր

⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 168:

⁴⁴ Տե՛ս **Козлихин И.Ю.** նշվ. աշխ., էջ 211-212.

⁴⁵ Տե՛ս **Арон Р.** Этапы развития социологической мысли/ Пер. с. франц. М. 1993, с. 33

քաղաքական ազատությունը, այլ նաև կայուն լինել տարբեր ցնցումների նկատմամբ: Ինքը՝ Մոնտեսքյոն, պատրաստակամորեն վերլուծության էր ենթարկում տարբեր պետությունների ու ժողովուրդների վերելքների ու անկումների պատճառները, դիտարկում պետությունների քայքայման հիմնական պատճառներից մեկը, և հետևաբար քաղաքացիական պառակտությունները, իսկ հետո՝ նաև անխուսափելի բռնատիրությունը՝ կառավարման գոյություն ունեցող բռնապետության մեջ:

Ապագա պետության մոդելի մշակումը Լուսավորության դարաշրջանի հիմնական քաղաքական-իրավական ուսմունքներից մեկն է: Մոնտեսքյոյի մոտ այս թեման մարմնավորվել է ազատ պետության նախագծում, որը հիմնված է իշխանությունների բաժանման սկզբունքի վրա: Իշխանությունների բաժանման տեսության նպատակը, նրա մեկնաբանությամբ, հանդիսանում է քաղաքացիների պաշտպանվածությունը իշխանությունների չարաշահումներից ու կամայականություններից, նրանց քաղաքական ազատության պաշտպանությունը, ինչպես նաև, իրավունքի՝ որպես քաղաքացիների ու կառավարության միջև հարաբերությունների կարգավորիչ դարձնելու հանգամանքը:

Հանդես գալով ազատության ու ժողովրդավարության նույնականացման դեմ՝⁴⁶ Մոնտեսքյոն քննադատում էր քաղաքական ազատության ցանկացած դրսևորում, որը չէր բխում իրավունքից:

Այստեղ վճռող է «Օրենքների ոգու մասին» տրակտատի 11-րդ գրքի 6-րդ գլուխը, որը նվիրված է Անգլիայի պետական կառուցվածքին: Այս գլուխն այնպիսի մեծ ռեզոնանս ուներ, որ անգլիացի շատ մասնագետներ իրենց երկրի ինստիտուտները դիտարկում էին Մոնտեսքյոյի գրածների հիման վրա: Բանն ամենևին նրանում չէր, թե ինչ էր իրենցի ներկայացնում 18-րդ դարի անգլիական սահմանադրությունը, այլ դրա վերաբերյալ Մոնտեսքյոյի գաղափարներն էին: Անգլիայի մեջ մի կողմից նա տեսավ մի պետություն, որը ձգտում է իրական քաղաքական ազատության, իսկ մյուս կողմից՝ քաղաքական ներկայացուցչության փաստը և գաղափարը⁴⁷:

Մտածողն ընդհանրացնում է. «Յուրաքանչյուր պետության մեջ առկա է իշխանության երեք տեսակ. օրենսդրական իշխանություն, գործադիր իշխանություն,

⁴⁶ Տե՛ս **Монтескье III**. նշվ. աշխ., էջ 293-294:

⁴⁷ Տե՛ս **Арон Р.** նշված աշխ., էջ 46:

որը զբաղվում է միջազգային իրավունքի հարցերով, ինչպես նաև գործադիր մյուս իշխանությունը, որը զբաղվում է քաղաքացիական իրավունքի հարցերով:

Առաջին իշխանության ուժով թագավորը կամ հաստատությունը, ստեղծում է ժամանակավոր կամ հիմնական օրենքներ, և ուղղում կամ փոխում է գոյություն ունեցող օրենքները: Երկրորդի հիման վրա, նա պատերազմ է հայտարարում կամ կնքում է խաղաղություն, ուղարկում և ընդունում է դեսպանների, ապահովում է անվտանգությունը, կանխարգելում է ներխուժումները: Երրորդ իշխանության դեպքում նա դատապարտում է հանցագործությունները ու լուծում է մասնավոր անձանց վեճերը: Վերջին իշխանությունը կարելի է անվանել դատական, իսկ երկրորդը՝ պարզապես պետության գործադիր իշխանություն»⁴⁸:

Մեկ անձի կամ մեկ հաստատության մեջ օրենսդիր և գործադիր իշխանությունների միավորումը սպառնում է ինչպես բռնապետական օրենքների առաջացմամբ, այնպես էլ դրանց բռնապետական կիրառմամբ: Մոնտեսքյոյի հասկացած հոգեկան հանգստությունն արտահայտող ազատությունը, որը հիմնված է անվտանգության վրա և որի դեպքում ոչ մի քաղաքացի մյուսից չի վախենում, չի լինի նաև այն դեպքում, եթե դատական իշխանությունը առանձնացված չէ գործադիրից: Եթե դատական իշխանությունը միացած է օրենսդիրին, ապա դատավորը ստանում է օրենսդիր մարմնի լիազորություններ և քաղաքացիները հայտնվում են կամայական իշխանության ներքո: Դատական իշխանության գործադիրին միանալը վտանգավոր է նրանով, որ դատավորը կարող է դառնալ կեղեքիչ: Բոլոր իշխանությունների միավորումը մեկ անձի կամ մեկ հաստատության մեջ, անկախ, թե ում կողմից է այն ձևավորվել, հանգեցնում է ամենավատ արդյունքի: Շ. Մոնտեսքյոն ժամանակակից եվրոպական պետություններից շատերում «կառավարման չափավոր պատկերի» գոյությունը բացատրում է նրանով, որ այնտեղ թագավորներն ունեին օրենսդրական և գործադիր իշխանություն, բայց երրորդ իշխանությունը նրանք թողնում էին իրենց հպատակներին⁴⁹:

Հատուկ ուշադրության են արժանի իշխանության ճյուղերի կոնկրետ հատկանիշների բնութագրումը: Այսպես, օրինակ, դատական իշխանությունը Մոնտեսքյոն

⁴⁸ Տե՛ս **Монтескье III**. նշված աշխ., էջ 290:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 291:

առաջարկում էր հանձնել ոչ թե մշտապես գործող մարմին, այլ այն անձանց, ովքեր ընտրվում են ժողովրդի միջից՝ միայն անհրաժեշտ ժամանակահատվածով դատարան ձևավորելու համար: Այսպիսով, դատական իշխանությունը չէր կարող կապվել ոչ զբաղեցրած դիրքի և ոչ էլ մասնագիտության հետ: Դատական իշխանությունն այդ կերպ չէր անձնավորվում: «Մարդիկ սկսում են վախենալ ոչ թե դատավորից, այլ դատարանից»: Դատական իշխանության գործունեության մեջ գլխավորը պետք է դառնա օրենքի անմիջական կատարումը. «... եթե դատարանի կազմը չի կարող անփոխարինելի լինել, ապա դրա վճիռներում պետք է իշխեն հաստատակամությունը, այնպես, որ դրանք միշտ լինեն օրենքի տառի ճշգրիտ կիրառում»⁵⁰:

Օրենսդրական իշխանությունը Մոնտեսքյոն, նախ և առաջ, պատկերացնում էր ներկայացուցչական մարմնի տեսքով, որն ընտրվում էր միանգամայն որոշակի հիմքի վրա: Մոնտեսքյոն չէր առաջարկում ընտրել օրենսդիր ժողովի անդամներին ողջ երկրի բնակչությունից: Նա կարծում էր, որ յուրաքանչյուր խոշոր բնակավայրի բնակիչները պետք է դրանում ընտրեին իրենց ներկայացուցիչ: Հենց այս ընտրվող ներկայացուցիչներն էլ ընդունակ են առավելագույն արդյունավետությամբ քննարկել գործերը և ներկայացնել ժողովրդի մեծամասնության կամքը: Սակայն, գլխավորը կայանում է այն պնդման մեջ, որ ներկայացուցչական ժողովը «պետք է ընտրել... օրենքներ ստեղծելու համար կամ հետևելու արդեն իսկ ստեղծված օրենքների պահպանմանը...»⁵¹:

Հատկանշական է, որ օրենսդրական իշխանությունը Մոնտեսքյոն տեսնում էր երկպալատ մարմնում, որը կազմված էր «ազնվականների ժողովից» և «ժողովրդի ներկայացուցիչների ժողովից»⁵²: Մի կողմից օրենսդիր իշխանության երկու պալատների ստեղծումը փոխադարձորեն հավասարակշռում էին մեկը մյուսին՝ թույլ չտալով դրանց գնալ դեպի բռնատիրությունը: Մյուս կողմից, ազնվականության ներկայացուցիչներից բաղկացած վերին պալատ ստեղծելու մասին առաջարկը Մոնտեսքյոն ներկայացնում էր ոչ միայն որպես գիտնական-տեսաբան, այլև որպես քաղաքական ռեալիստ, ով աշխատում էր սեփական երկրի քաղաքական վերակառուցման նախագծի շուրջ: Ընդ որում, նա հանդես էր գալիս ոչ թե որպես անպատասխանատու ուտոպիստ-

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 292:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, էջ 293:

⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 294:

արմատական, այլև ձգտում էր հաշվի առնել իրականում առկա և որոշակի ազդեցություն ունեցող բոլոր դասերի ու սոցիալական խմբերի շահերը՝ խուսափելով ցնցումներից ու ներքին խռովություններից:

Շ. Մոնտեսքյոն գտնում էր, որ օրենսդրական ժողովը չպետք է մշտապես գործեր, քանի որ դա կարող էր ոչ միայն դառնալ խոչընդոտ նրա կազմի կրկնակի ընտրվելու և գործելու, կազմի թարմացման և փոփոխության համար, այլ նաև կթուլացներ ժողովրդի հետաքրքրությունը նրա գործունեության հանդեպ: Միաժամանակ այն պետք է իրավունք ունենա սեփական հայեցողությամբ հավաքվել և արձակվել: Շ. Մոնտեսքյոն նախատեսում էր օրենսդիր և գործադիր իշխանությունների հարաբերությունների բավականին խիստ կանոնակարգում:

Գործադիր իշխանության իրավունքը դադարեցնելու օրենսդրական իշխանության լիազորությունները դիտվում էր որպես բռնակալության հնարավոր սպառնալիք, այն ժամանակ, երբ օրենսդրական իշխանությունը չպետք է դադարեցներ գործադիր լիազորությունները, քանի որ «գործադիր իշխանությունն իր բնույթով սահմանափակ է, ապա այն կրկին սահմանափակելու անհրաժեշտություն չկա»⁵³: Դրա հետ մեկտեղ հստակորեն նշվել էին այնպիսի ոլորտներ, որոնց օրենսդրական իշխանությունը չպետք է և իրավունք չունի բաց թողնել իր ձեռքերից: Դրանք են՝ ֆինանսները, հարկերի գանձումը, բյուջեի հաստատումը:

Առանձնացվեցին օրենսդիր և գործադիր իշխանությունների բաժանման համակարգի համար կարևոր սկզբունքային դրույթներ՝ պարբերական հսկողություն սահմանելով ֆինանսների ու զինված ուժերի վերահսկողության նկատմամբ: Դրա հետ մեկտեղ, վարչարարության գործունեության նկատմամբ ֆինանսական վերահսկողությունը դառնում էր առավել առաջադեմ, ճկուն և հզոր միջոց օրենսդրական իշխանության ձեռքերում: Սա մեկ անգամ ևս հաստատում է Մոնտեսքյոյի կողմից առաջ քաշված ծրագրի հասունությունն ու խորությունը:

Գործադիր իշխանությունը ներկայանում էր որպես միապետություն, քանի որ կառավարման այս կողմը պահանջում է գործողությունների առավելագույն արագություն, կենտրոնացում, այն ժամանակ, երբ օրենսդրական իշխանությունն

⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 296:

իրականացվում է շատերի կողմից:⁵⁴ Եթե հաշվի առնենք, որ 1789-1815թթ. ընկած ժամանակահատվածում, Ֆրանսիան, ի վերջո, հանդես էր գալիս որպես երկու պալատ ունեցող օրենսդիր ժողովով սահմանադրական միապետություն, ապա զարմանում ենք միայն 18-րդ դարի կեսերին ձևավորված կոնցեպցիայի խորության վրա:

Մոնտեսքյոյի կողմից առաջարկված պետական կառուցվածքը հիմնված էր իշխանությունների ոչ երկիմաստ և հստակ բաժանման վրա, սակայն դրանց փոխազդեցության սկզբունքները գնահատվում են տարբեր կերպ: Այսպես, օրինակ, կարծիք է արտահայտվում, որ իրավունքի գերակայության սկզբունքը հաշվի առնելու հետ մեկտեղ, դրա սահմանադրական նախագծում հիմքեր չկան խոսելու իշխանությունների հավասարակշռության մասին, քանի որ օրենսդրական իշխանությունը գերիշխող դեր է խաղում՝ ստեղծելով այնպիսի օրենքներ, որոնք արտահայտում են ընդհանուրի կարծիքը: Իշխանության մյուս երկու ճյուղերը միայն իրականացնում ու կատարում են օրենքները, այսինքն դրանց գործունեությունը կրում է ենթաօրենսդրական բնույթ: Եթե Մոնտեսքյոյի նախագծում չկա հստակ արտահայտված դրույթ իշխանությունների հավասարակշռության մասին, ապա քաղաքական ուժերի հավասարակշռությունը նրա կողմից իրապես բացահայտված փաստ էր՝ 18-րդ դարի կեսերի ֆրանսիական կյանքի օրինակով, «երբ պայքար էր ընթանում, թագավորի, ազնվականության և բուրժուազիայի միջև: Իշխանությունների տարանջատման տեսության մեջ սոցիալական ուժերի հավասարակշռման որոնումներն արտահայտում են նրա քաղաքական-իրավական կոնցեպցիայի փոխզիջումայնությունն ու չափավորությունը⁵⁵:

Մյուս կողմից կարծիք է արտահայտվում, որ «Մոնտեսքյոյի հիմնական գաղափարն է ոչ թե իշխանությունների տարանջատումը՝ այդ տերմինի իրավաբանական իմաստով, այլ այն, ինչը կարելի է անվանել սոցիալական ուժերի հավասարակշռություն, որպես քաղաքական ազատության պայման»⁵⁶: Դրա հետ մեկտեղ ենթադրվում է, որ անգլիական սահմանադրության իր ուսումնասիրության մեջ նա իր առաջ նպատակ էր դնում բացահայտել նման միապետության բնույթին համապատասխանող դասերի ու շերտերի սոցիալական տարբերակումն ու բաժանումը, այսինքն դրա իրական

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 295:

⁵⁵ Տե՛ս **Козлихин И.Ю.** նշված աշխ., էջ 113-114:

⁵⁶ Տե՛ս **Арон Р.** նշված աշխ., էջ 48:

սոցիալական հիմքը: Դրանով հանդերձ նախադրյալներ կստեղծվեին ռեժիմի իրական զարգացման համար: «Ինչ վերաբերում է հենց սահմանադրությանը, ապա Մոնտեսքյոն իսկապես մանրամասն ցույց է տալիս, թե ինչ իրավունքներից է օգտվում իշխանության այս կամ այն ձևը, և թե ինչպես պետք է փոխազդեն տարբեր իշխանությունները: Սակայն, սահմանադրական այս ձևը ոչ այլ ինչ է, քան ազատ պետության, ազատ հասարակության ինքնադրսևորում...որտեղ և ոչ մի իշխանություն չի կարող սահմանափակվել, քանի որ այն կգսպեն այլ իշխանությունները»⁵⁷:

Մեր կարծիքով, համաձայնվելով այս պնդումների հետ, կարելի է հստակ ասել, որ իշխանությունների տարանջատման սկզբունքը, լինելով կայուն սկզբունք, լրացվել էր նրանով, ինչը կարելի է համոզված անվանել իշխանությունների համագործակցության սկզբունք՝ նրանց տարանջատման և օրենքի գերիշխանության պայմաններում: Այդպիսի սկզբունք դարձավ նրանց **փոխադարձ զսպվածությունը**:

Կարևոր է հաշվի առնել նաև մեկ հանգամանք՝ Մոնտեսքյոն, իր տրակտատը Ֆրանսիայի կարիքների համար ստեղծելով հիմնվել էր Անգլիայի փորձի վրա, սակայն ընթերցողների վրա թողել էր համընդհանուր տպավորություն: Ինքը, Մոնտեսքյոն, ի տարբերություն ֆրանսիական ու անգլիական Լուսավորության մյուս գործիչների, ամենաքիչն էր հակված իր եզրակացությունները կառուցել կոնկրետ մարդու բնույթի հավերժության մասին առաջարկների վրա, քանի որ տրակտատը, որը հիմնված էր կոնկրետ պատմական, տնտեսական ու իրավական նյութի վրա, ուղղակի ժխտում էր նման մոտեցումը:

Շ.Լ. Մոնտեսքյոյի տեսությունը ընդունվեց ոչ միանշանակ: Նրա յուրօրինակ հակառակորդը, ընդդիմադիրը դարձավ Ժան Ժակ Ռուսոն, ով վաղուց ու արդարացիորեն մեկնաբանվում էր, որպես մանր բուրժուազիայի արմատական գաղափարախոս և ժողովրդական գաղափարների պաշտպան⁵⁸, ընդ որում դրանց ծայրահեղ ձևով: Նրա «Մարդկանց միջև անհավասարության ծագման ու հիմքերի մասին դատողությունները» (1754) և «Հասարակական պայմանագրի մասին կամ քաղաքական իրավունքի սկզբունքները» (1762) աշխատություններում խոսվում էր ցնցումներ կանխատեսող ֆրանսիական հասարակության տրամադրության

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

⁵⁸ Տե՛ս **Нерсесянц В.С.** История политических и правовых учений. М., 2014, с. 323-324.

փոփոխությունների, կարևորագույն գաղափարական-քաղաքական շարժումների մասին: Մոնտեսքյոյի կշռադատված, մտածված և հիմնավորված, ռեալիստական հայացքների հետ մեկտեղ, ընթացք ստացան աբստրակտ, շատ բաներում սխեմատիկ, սակայն ավելի արմատական հայացքները:

Իր վաղ շրջանի ստեղծագործություններում, որոնք նրան գրական հռչակ բերեցին, Ռուսոն ազնվորեն գաղափարականացնում էր անցյալը՝ ժխտելով գիտությունների ու արվեստի գոյության ու զարգացման անհրաժեշտությունը: Մարդու թերությունը հասկանալու համար Ռուսոն անդրադառնում էր նախնադարյան պատմությանը՝ փորձելով հստակ պատկերացում ձեռք բերել այն բնական վիճակի մասին, որում գտնվում էր մարդը՝ մինչ պատմության սկիզբը:

«Բնական վիճակի» մասին միտքը նոր չէր 17-18-րդ դարերի պետաիրավական մտքում: Սովորաբար այս տերմինով, հատկապես անգլիացիների մոտ, նկարագրվում էր կոնկրետ անհատը, ով հեղինակի ժամանակակիցն էր: Ռուսոյի մոտ նոր դարձավ անցյալի դիտարկումների ծավալումը, ինչը 17-րդ և 18-րդ դարերի համար անսովոր բնույթ էր կրում: Ռուսոյի համար «բնական մարդը», նախ և առաջ, մեկուսացված մարդն է, ով ապրում է հասարակությունից դուրս: Այս իրավիճակում մարդիկ միմյանց կարիքը չունին, նրանց հարկավոր չէր նաև ցանկացած տեսակի ճանաչողություն: Բնական վիճակից դուրս գալու հանգամանքը, ըստ Ռուսոյի, նշանավորվել է մարդկանց միջև նոր տեսակի ֆիզիկական ու բնական անհավասարության առաջացմամբ, ինչը համարվում է պայմանական կամ քաղաքական: Անհավասարության ծագման առաջին փուլը դարձավ սեփականության առաջացումը⁵⁹: Սեփականության առաջացումը մարդկանց կյանքում հանգեցրեց խոշորագույն փոփոխությունների. աճեց բնական անհավասարության նշանակությունը, ծագեց անհավասարության նոր ձև՝ հարուստների ու աղքատների բաժանումը, հասարակությունում առաջացան առանձնակի խոռվություններ, մարդիկ դարձան չար, ագահ և փառասեր, տարաձայնությունները վերածվեցին բախումների, որոնք ավարտվում էին սպանություններով: Հարուստների չարակամ դավադրությունները հանգեցրեցին համաշխարհային դատարանների, դատական կանոնադրությունների իշխանության ձևավորմանը, որը պետք է ապահովեր

⁵⁹ St u Ручко Ж. Ж. Трактаты. М., Наука, 1969, с. 72.

ընդհանուր համաձայնություն⁶⁰: Պետության ծագման մասին իր տեսությունում Ռուսոն պետության ձևավորումը պայմանավորեց մասնավոր սեփականության առաջացմամբ: Սակայն, Ռուսոյի կողմից ներկայացված պետության ծագման մասին պատկերը շատ բաներում կրում էր արհեստական բնույթ, քանի որ դրա հիմքում ընկած էր «բնական մարդու», «բնական վիճակի» մասին նույն կոնցեպցիան, որը ընդհանուր քիչ բան ուներ վաղ մարդկային հասարակության պատմության հետ: Սակայն, հենց այս պատկերացումները առավել մեծ ազդեցություն գործեցին այն ժամանակվա հասարակության պատկերացումների ձևավորման վրա՝ կրելով համընդհանուր բնույթ: «Դեպի կուսական անտառներ փախուստի» մասին հուզական-նյարդային դատողությունները չէին պահանջում ո՛չ լուրջ մտավոր բեռ, ո՛չ մեծ մտավոր ջանքեր, ինչպես որ պահանջվում էր Մոնտեսքյոյի տրակտատներն ընթերցելիս, նրա հայեցակարգերն իմաստավորելիս:

Ռուսոն այնպիսի հասարակական դաշինքի կողմնակից էր, որը պետք է ողջ ուժով պաշտպանի մարդու անձն ու գույքը, իրավունքներն ու ազատությունները: Աշխատությունը սկսում է հետևյալ խոսքերով. «Մարդը ծնվում է ազատ, սակայն նա ամենուր կապանքների մեջ է»: Այդ կապանքները փշրելու համար պետք է փշրել բռնակալությունն ու ստեղծել հասարակական դաշինքի վրա հենված ժողովրդավարական պետական կարգ, որի պայմաններում մարդը կմնա ազատ:

Աշխատությունը բաղկացած է չորս գրքից: Երրորդ գրքում Ռուսոն անդրադառնում է կառավարման տարբեր ձևերին, որում գրում է. «Ցանկացած ազատ գործողություն առաջ է գալիս երկու պատճառով, որոնք համատեղ կատարում են այն: Այդ պատճառներից մեկը բարոյական է, այսինքն՝ կամքը, որը որոշում է գործողությունը, մյուսը՝ ֆիզիկական, այսինքն՝ ուժը, որն այն կատարում է: Երբ ես պատրաստվում եմ շարժվել ինչ-որ առարկայի ուղղությամբ, ապա, առաջին հերթին պետք է, որպեսզի ուզենամ գնալ, իսկ երկրորդ հերթին, որպեսզի ոտքերս ինձ շարժեն այդ ուղղությամբ: Թող անդամալույծը ցանկանա վազել, իսկ շարժուն մարդը չցանկանա, երկուսն էլ կմնան տեղում: Քաղաքական օրգանիզմը տիրապետում է նույն շարժիչ ուժերին, որոնց մեջ կարելի է տարբերակել նաև ուժը և կամքը: Վերջինս կրում է օրենսդիր իշխանություն, իսկ առաջինը գործադիր իշխանություն անունը: Ոչինիչ չի արվում կամ

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 84:

չպետք է արվի առանց նրանց համագործակցության»⁶¹:

Ռուսոյի առաջարկած նոր հասարակական պայմանագիրը պետք է կնքեն ոչ թե առանձին անձինք, այլ՝ նրանց կոլեկտիվը, մարդկանց ամբողջությունը: Այդ ամբողջությունը կունենա իր «Եսը», իր կամքն ու կյանքը: Այդ հանրային, իրավաբանական անձը միավորում է բոլոր նրանց, ովքեր ներառվում են քաղաքացիական հասարակության մեջ⁶²:

Իրականում Ռուսոն լրիվ չէր բացառում մասնավոր սեփականությունը, այլ՝ հանդես էր գալիս դրա ծայրահեղությունների դեմ: Հասարակության մեջ, նրա հարցադրմամբ, ոչ մի քաղաքացի չպետք է այնքան մեծ հարստության տեր դառնա, որ կարողանա ուրիշի գնել, և ոչ ոք չպետք է լինի այնքան աղքատ, որ իրեն վաճառի: Նա համոզված էր, որ անցումը բնական վիճակից քաղաքացիական վիճակի պետք է կատարվի բանականության, արդարության, իրավունքի հիման վրա:

Ռուսոյի վարդապետությունն ուղղված էր ֆեոդալական կարգերի դեմ և արդարացնում էր այդ կարգերի բռնի, հեղափոխական խորտակումը և նոր կարգերի հաստատումը:

Նա համարում էր, որ քաղաքացիական վիճակում անձը, անհատը, մի կողմից՝ մասնավոր է, ունի իր մասնավոր շահը, մյուս կողմից՝ նա քաղաքացի է՝ ընդհանուր, հանրային շահի կրողը:

Միանգամայն բնական է Ռուսոյի պնդումն այն մասին, որ ազատությունից հրաժարվելը հավասարազոր է մարդկային արժանապատվությունից զրկվելուն, սակայն այդ պնդման հետ միանգամայն անհամատեղելի է նրա դրույթն այն մասին, թե՝ «միապետը կաշկանդմված չէ իր օրենքներով»: Միապետի համար պարտադիր չէ նույնիսկ հասարակական պայմանագիրը⁶³:

Ռուսոն չէր ընդունում նաև իշխանությունների տարանջատման սկզբունքը, քանի որ այն չի համապատասխանում իր՝ ազատության, արդարության և հավասարության իդեալներին:

Աշխատության գլխավոր քաղաքական տրակտատը նվիրված էր պետության

⁶¹Տե՛ս **Ժան-Ճակ Ռուսո**, հասարակական դաշինքի մասին, ֆրանս. թարգ. Ա.Բլբուլյան, Երևան, 2000, շ. 137-138:

⁶²Տե՛ս **Жан-Жак Руссо**, Об общественном договоре, или принципы политического права, Трактаты, Москва, 1969, с.161-162

⁶³Տե՛ս **Ж.Ж.Руссо**, Об общественном договоре, или принципы политического права, Трактаты, М., 1969, с.2 .

կազմակերպման մասին նրա իդեալին համապատասխանող հարցի հետազոտմանը: Ամենասկզբից նա ուղղակիորեն հայտարարում է. «համաձայնվենք, որ ուժը չի ստեղծում իրավունք, և որ մարդիկ պարտավոր են ենթարկվել միայն օրինական իշխանություններին»⁶⁴: Նա համարձակորեն ժխտում էր բնական ազնվականության և, հետևաբար, բնական ստրկության գոյությունը: Ռուսոյի ապացույցների ամբողջ համակարգն ուղղված էր այն պնդմանը, որ «մարդկանց միջև ցանկացած օրինական իշխանության հիմք կարող են լինել միայն համաձայնությունները»⁶⁵:

Հասարակական պայմանագրի մասին դատողությունների բնական հետևությունն է դառնում ժողովրդական գերիշխանության մասին ուսմունքը, որը հանդիսանում է ընդհանուրի կամքն իրականացնող: Ռուսոն գտնում էր, որ միայն ընդհանուրի կամքը կարող է ղեկավարել պետության ուժերին⁶⁶: Ընդհանուրի կամքը, ընդհանուր շահը շատ բարձր են կանգնած ոչ միայն մասնավոր կամքից և մասնավոր շահից, այլև «բոլորի կամքը» և շահերը միավորվելուց: Գերիշխանության կարևորագույն հատկանիշներ էին հռչակվել նրա անբաժանությունը և չօտարացումը:

Ռուսոյի կոնցեպցիան, որպես ցանկացած իշխանության հիմք, պաշտպանում էր ժողովրդական գերիշխանության սկզբունքը՝ դրանով իսկ ստեղծելով գաղափարային բազա իրենց բնույթով առավել ժողովրդավարական, քաղաքական-իրավական գաղափարների համար: Սակայն, ներկայացուցչական կառավարումը ժխտող Ռուսոյի պետական նախագիծը պահանջում էր ժողովրդի անընդհատ ներկայությունը պետության կառավարման գործերում: Այսպիսի համակարգի ստեղծման և արդյունավետ գործելու հնարավորությունները այն ժամանակ այնքան էլ շատ չէին, հատկապես եթե խոսքը գնում էր քիչ թե շատ խոշոր երկրների մասին: Նշենք, որ բոլոր ժամանակներում բնակչության մեծամասնությունը չի ցանկանում և չի կարող անընդհատ մասնակցել պետության կառավարմանը: Բացառություն են կազմում հասարակության ոչ սովորական վիճակները (հեղափոխությունները կամ պատերազմները):

Ռուսոն համամիտ էր Մոնտեսքյոյի «Օրենքների ոգին» (1778) գրքում տեղ գտած

⁶⁴Տե՛ս **Рycco. Ж-Ж.** Трактаты / Ж-Ж. Рycco. - М., Наука, 1969, с. 93 – 155:

⁶⁵Տե՛ս նույն տեղում, էջ 160-161:

⁶⁶Տե՛ս **Рycco. Ж-Ж.** Трактаты / Ж-Ж. Рycco. - М., Наука, 1969, с. 93 - 167:

գաղափարների հետ և ցանկություն չի ունեցել վերափոխել այն, այլ սահմանել է «քաղաքական իրավունքի սկզբունքները»:

Նա համոզված էր, որ հասարակությունը, պետությունը, օրենքները զարգանում են մարդկության համար կործանարար ուղղությամբ, քանի որ քաղաքակրթության զարգացումն ուժեղացնում է մարդու կողմից մարդու ստրկացումը և շահագործումը, մարդուն օտարում է բնությունից ու բնականից, նրան դարձնում արհեստական, անբնական պահանջմունքների գերի: Քաղաքակրթության հակասական զարգացման, ինչպես նաև սոցիալական չարիքների առաջացման սկզբնաղբյուրը նա համարում էր մասնավոր սեփականությունը:

Հասարակության պատմության մեջ տարբերակելով երկու շրջան՝ բնական և քաղաքացիական, Ռուսոն կարծում էր, թե բնական վիճակում մարդիկ ապրում էին «ազատ, առողջ ու երջանիկ»: Մարդկանց վիճակն արմատապես փոխվում է «քաղաքացիական հասարակության» մեջ, որի տնտեսական հիմքը մասնավոր սեփականությունն էր: Այդ հասարակության մեջ անհետանում է սոցիալական հավասարությունը, երևան են գալիս ստրկությունն ու աղքատությունը: Գույքային անհավասարության խորացումը հանգեցնում է այն բանին, որ առաջ են գալիս սարսափելի խառնակչություններ, առաջանում է ունևորների փոքրաթիվ մի խավ, որը ճնշում և շահագործում է չունևորների մեծաթիվ խավին: Որպես արդյունք՝ «հասարակությունը կատաղի պատերազմական վիճակում հայտնվեց, մարդկային ցեղը խրվեց արատների մեջ և, հուսալքված՝ չէր կարող նահանջել ու հրաժարվել չարաբաստիկ ձեռքբերումներից»⁶⁷:

«Առաջինը,- նշում է Ռուսոն,- ով ցանկապատեց հողատարածքն ու ասաց «սա ի՛մն է», - և գտավ միամիտ մարդկանց, ովքեր հավատացին, քաղաքացիական հասարակության ճշմարիտ հիմնադիրը դարձավ: Քանի-քանի հանցագործություններից, պատերազմներից ու սպանություններից, քանի փորձություններից ու սարսափներից կփրկեր մարդկային ցեղը նա, ով դուրս կբաշեր ցցափայտերը, փոսերը հողով լցնելով՝ կգոռար իր մերձավորներին. «Մի լսեք այդ խաբեբային, դուք կկործանվեք, եթե

⁶⁷ См. и История политических и правовых учений, под редакцией В.Нерсисянца, Москва, "Норма", 2003, с. 268:

մոռանաք, որ հողի բարիքները պատկանում են բոլորին, իսկ հողը ոչ ոքինը չէ»⁶⁸:

Պետության առաջացումը Ռուսոն դիտում էր որպես հասարակական դաշինքի արդյունք: Թեև այդ դաշինքը կնքվել է ժողովրդի և իշխողների միջև, այնուհանդերձ, իշխողները ժամանակի ընթացքում չարաշահել են իրենց իրավունքները և պետությունը դարձրել ժողովրդին ստրկացնելու գործիք:

Հանդես գալով ժողովրդի շահերի պաշտպանությամբ՝ Ռուսոն «Հասարակական դաշինք» աշխատության մեջ առաջադրում է հետևյալ գաղափարները. ժողովուրդն ինքնիշխան է, նրա իշխանությունն անօտարելի ու անբաժանելի է, օրենսդիր իշխանությունը պատկանում է ժողովրդին և կարող է պատկանել միայն նրան:

Հեղափոխական բնույթ ունեւ Ռուսոյի այն միտքը, համաձայն որի՝ սուվերենը՝ ժողովուրդը, իրավունք ունի սահմանափակելու, փոխելու կամ վերացնելու գործադիր իշխանությունը, եթե վերջինս չի կատարում իր պարտականությունները: Պետության կատարելագործման մեջ Ռուսոն կարևոր տեղ էր հատկացնում քաղաքական ու բարոյական առաքինություններով օժտված մարդկանց դաստիարակությանը:

Այսպիսով, հայացքների նման էական տարբերությունն առկա է Մոնտեսքյոյի և Ռուսոյի քաղաքաիրավական կոնցեպցիաները համեմատելիս և վկայում է ոչ միայն լարված գաղափարային պայքարի, այլ նաև 18-րդ դարի հարուստ ինտելեկտուալ կյանքի մասին, որը նախորդում էր ֆրանսիական Մեծ հեղափոխությանը: Միաժամանակ, պետական կառուցվածքի վերաբերյալ նույն հարցերի մեկնաբանման այսպիսի հակադիր կարծիքների առկայությունը վկայում էր սոցիալական հակասությունների աճի մասին: Լուսավորության գաղափարակիրների կողմից առաջարկված այս կամ այն ուղու համապատասխանության մասին հարցի պատասխանը կարող էր տալ կոնկրետ պետական (քաղաքական) պրակտիկան, առաջարկված պլանները իրականացնելու փորձը:

18-րդ դարի քաղաքական-իրավական հայեցակարգերի տեսական զարգացման ինքնատիպ արդյունք դարձան Հյուսիսային Ամերիկայում գաղութների անկախության համար մղվող պատերազմները և Միացյալ Նահանգների ստեղծման հետ կապված իրադարձությունները, որոնք դարձան «ժողովրդավարական հեղափոխությունների դարաշրջանի» սկզիբը՝ ասես իրենցով պսակելով «Բանականության դարը»: Ամերիկյան

⁶⁸ См. у Жан-Жак Руссо, О причинах неравенства, Москва, 1967, с. 68:

հեղափոխությունը, որը ստացավ անկախության համար մղվող պայքարի ձև, ծավալվում էր Լուսավորության կարգախոսների ներքո: Սրանում էր կայանում դրա արմատական տարբերությունը 16-17-րդ դարերի վաղ բուրժուական հեղափոխություններից, որոնք կրում էին կրոնական երանգներ:

Այս իրադարձությունների ընթացքում 1787 թվականին ընդունվել էր ԱՄՆ Սահմանադրությունը: Տվյալ փաստաթղթի վավերացման համար պայքարի հետ էր կապված «Ֆեդերալիստի» առաջացումը, որն իրենից ներկայացնում էր հոդվածների շարք՝ տպագրված 1787 թվականի հոկտեմբերից 1788 թվականի մայիս ամիսներին: Հոդվածների հեղինակներն էին Ա. Համիլթոնը, Ջ. Մեդիսոնը, ինչպես նաև հայտնի քաղաքական գործիչ և իրավաբան Զ. Ջեյր: Նրանք վառ անհատականություններ էին, հայտնի քաղաքական գործիչներ, ովքեր հետք էին թողել Միացյալ Նահանգների պատմության մեջ, ինչպես մինչև Ֆիլադելֆիայի համագումարը, այնպես էլ դրանից հետո: Շատ ուսումնասիրողներ «Ֆեդերալիստը» համարում են Միացյալ Նահանգների ողջ պատմության առավել յուրօրինակ քաղաքական-իրավական փաստաթուղթը⁶⁹:

Իշխանությունների տարանջատման հայեցակարգի մշակման հարցում այս հրապարակումների տեղը և դերը հասկանալու համար անհրաժեշտ է մի քանի նախնական նկատողություններ անել: Առաջինը, անկախության համար պայքարի ընթացքում նահանգներում ընդունվել էին սահմանադրություններ, որոնք ավելի ժողովրդավարական էին այն ակտերից, որոնք մինչ այդ կարգավորում էին առանձին գաղութների ներքին կյանքը: Ընդլայնվեց ընտրողների շրջանակը, մի շարք նահանգներում ստեղծվեցին մեկպալատանի օրենսդրական ժողովներ, որոնք ունեին լուրջ լիազորություններ:

Երկրորդ. անկախության համար պայքարող ժամանակներից ամերիկացիները լուրջ անվստահություն ունեին ուժեղ կենտրոնական իշխանության հանդեպ: Այս իշխանությունը նույնականացվում էր բրիտանական թագի և տեղում դրա ներկայացուցիչների հետ: Պատահական չէ, որ նահանգների նոր սահմանադրությունները գործադիր իշխանության հաշվին ընդլայնում էին օրենսդրական հաստատությունների առաջնահերթությունների ոլորտը:

⁶⁹ St' u **Tubbs J.W.** Common Law Mind: Medieval and Early Modern Conceptions (Johns Hopkins U. Press 2002) p. 171-172.

Երրորդ. չնայած հեղափոխությանը և քաղաքական կյանքի ընդհանուր ժողովրդավարացմանը՝ նահանգներում դեռ պահպանվում էին գաղութային դարաշրջանի շատ մնացորդներ: Քաղաքականությունը, նախկինի պես, շարունակում էր մնալ «ջենթլմենների գործը», քաղաքական նախկին էլիտաները, որոնց ազդեցության արմատները գնում էին դեպի գաղութային ժամանակաշրջանը, պահպանում էին իրենց ազդեցությունը:

Վերջապես, պետք է ուշադրություն դարձնել այն գաղափարական-քաղաքական իրավիճակի, այն տեսական մթնոլորտի վրա, որի ներքո ստեղծվել էր «Ֆեդերալիստը»: Ա. Համիլթոնը, Ջ. Մեդիսոնը և Ջ. Ջեյը ստիպված էին բանավիճել հակառակորդների հետ, որոնք նույնպես կողմ էին գաղափարատեսական ժառանգությանը, հատկապես Շ. Մոնտեսքյուն, երբ խոսքը գնում էր իշխանությունների տարանջատման մասին: Այսպիսի գաղափարային ընդհանրությունը պահանջում էր ֆրանսիական դասականի ժառանգության ստեղծագործական կիրառում՝ իր տեսակետը ապացուցելու համար:

Գոյություն ունեին նաև հիմնարար այլ պատճառներ, որոնք սահմանում էին «Ֆեդերալիստի» փաստարկների ընդհանուր երանգն ու ուղղությունը: Վաղուց արդեն ընդհանուր էր դարձել դրույթն այն մասին, որ անկախության համար մղվող պատերազմների ու իշխանությունների հեղափոխությունների արդյունքում երկրում հաստատվել էր բուրժուական բլոկ, որը հիմնված էր տվյալ սոցիալական խմբերի միջև փոխզիջումների վրա: Սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունների հիման վրա երկրում բացակայում էր քաղաքային պլեբեյի, մանր արհեստավորների, գյուղական բանվոր դասակարգի շերտերը, ովքեր, իրենց հերթին, կարող էին զանգվածային հիմք ստեղծել նման շարժումների համար: Միացյալ Նահանգների բնակչության ինը տասներորդը կազմում էին տարբեր տեսակի հողատերերը: Նրանց համար առավել արդիական խնդիրը հանդիսանում էր սեփականության պահպանումը (ինչպես նաև դրան տիրապետելու ցանկությունը), դրա կրկնապատկումն ու օգտագործումը:

Հիմնարար այն պատճառների թվին, որոնք վերջին հաշվով սահմանում էին սահմանադրական համագումարում պայքարի ելքը և սահմանադրության վավերացման համար մղվող պայքարը, ինչպես նաև վերաբերմունքը «Ֆեդերալիստի» նկատմամբ, կարելի է դասել սոցիալ-տնտեսական և քաղաքական կոնսենսուսի գոյությունը՝

իշխանության եկած սոցիալական ուժերի բլոկում: Խոսքը գնում էր իշխանության գլխին գտնվող ողջ խմբի կողմից արժեքների որոշակի համակարգի ընդունման մասին: Նման արժեքներին են դասվում մասնավոր սեփականության սրբությունը, պառլամենտական կառույցը՝ երկրի համեմատաբար լայն քաղաքական ազատության և տարածքային ամբողջականության առկայության պայմաններում: Քաղաքական այն գործիչներն ու խմբերը, որոնք ընդունում էին այդ ամբողջ համակարգը, իրավունք ստացան մասնակցել քաղաքական գործընթացին: Նրանք, ովքեր, գոնե մեկ չափորոշիչով, դուրս էին մնում կոորդինատների համակարգից, զրկվում էին նման իրավունքից: Այս համակարգի հիմնական տարրերը այնքան ակնհայտ էին, որ կոնսենսուսը նրանց նկատմամբ կրում էր յուրօրինակ ոչ պաշտոնական բնույթ: Հենց այս պատճառով է, որ Միացյալ Նահանգների սահմանադրության մեջ սեփականության, նրա վրա հիմնված կառուցվածքի մասին որևէ խոսք չկա: Այս խնդիրը սահմանադրություն ստեղծողներին այնքան ակնհայտ էր թվում, որ դրա մասին խոսելու անհրաժեշտություն պարզապես չկար: Նույնքան ակնհայտ էր նաև պառլամենտական կառուցվածքի մասին խնդիրը: Խնդիրը կայանում էր իշխանությունների համադրման մասին, որպեսզի հենց սկզբից պետական մեխանիզմին առաջադրվեն լավագույն չափորոշիչները:

Այսպիսով, «Ֆեդերալիստի» հեղինակներն իրենց առջև դնում էին ոչ թե իդեալական, այսինքն ուստպիական, այլ տվյալ սոցիալական և տնտեսական իրականությանը բոլոր առումներով համապատասխանող պետական կառուցվածքի ստեղծման նպատակներ:

Ա. Համիլթոնի, Ջ. Մեդիսոնի և Ջ. Ջեյի նման փորձառու քաղաքական գործիչների համար դժվար չէր ժխտել փաստարկներն այն մասին, որ իրենց կողմից առաջարկված սահմանադրության նախագիծը շեղվում է Շ. Մոնտեսքյոյի կոնցեպցիայից: Նրանք նշում էին, որ բրիտանական պետական կառուցվածքը «Մոնտեսքյոյի համար նույնն էր, ինչ Հոմերոսը՝ էպիկական պոեզիան մեկնաբանող քննադատների համար»⁷⁰:

Միաժամանակ Բրիտանիայի պետական կառուցվածքի վրա անգամ սահուն հայացք գցելիս երևում էր, որ օրենսդրական, գործադիր և դատական իշխանությունները ամբողջովին տարանջատված և ինքնավար չէին: Շ. Մոնտեսքյոն «բոլորովին նկատի

⁷⁰ См. у Федералист. Политическое эссе А. Гамильтона, Дж. Мэдисона и Дж. Джея. Перевод с англ. - М., 1993, 113, с. 324-325:

չունենալ, որ իշխանության այդ երեք ճյուղերը չպետք է մասնակի գործողություն կամ հսկողություն ունենան միմյանց գործունեության նկատմամբ»⁷¹: Դիտարկելով առանձին նահանգների սահմանադրությունները՝ Ջ. Մեդիսոնը կարողացավ ցույց տալ, որ օրենսդիր և գործադիր իշխանությունները «իրականում տարանջատված և ինքնուրույն չեն»⁷², բայց դա հանդիսանում է ոչ այնքան սկզբունքների խախտման արդյունք, որքան արտակարգ հանգամանքների հետևանք: Այդ իսկ պատճառով նահանգների սահմանադրություններում իշխանությունների տարանջատման սկզբունքը մնում էր զուտ թղթի վրա: Ուշագրավ էր նաև այն փաստը, որ «Ֆեդերալիստի» հեղինակների փաստարկման աղբյուրներից մեկը դարձավ ինչպես առանձին նահանգների, այնպես էլ տեղական ինքնակառավարման ղեկավարման կոնկրետ փորձը:

«Ֆեդերալիստի» 48-րդ համարում Մոնտեսքյոյի տեսական նախագծի իրականացումը հետագա զարգացում ստացավ: Ջ. Մեդիսոնը գրում էր. «միթե՞ իշխանության երեք ճյուղերը միմյանց հետ կապված են նրա համար, որպեսզի յուրաքանչյուրը հսկողություն սահմանի մյուս երկուսի վրա, իսկ գործնականում չկարողանա պահպանել առանձին լինելու այն աստիճանը, որը, Մոնտեսքյոյի աքսիոմի համաձայն, անհրաժեշտ է ազատ կառավարման համար»⁷³:

Սկզբունքայնորեն կարևոր է ոչ թե իդեալական պլանը ամբողջությամբ իրականացնելու մասին պնդումը, այլ պահպանել «Մոնտեսքյոյի աքսիոմի» ոգին, ոչ թե տառը:

ԱՄՆ-ի «հիմնադիր հայրերի» համար առավել կարևոր էր դեռ կենտրոնական դիրք չգրադեցնող իշխանության ճյուղերի կողմից իրականացվող միտքը փոխադարձ սահմանադրական հսկողության մասին: Ինչպես մենք արդեն նշել ենք, այս միտքը ներկա էր Մոնտեսքյոյի մոտ, բայց այն չի ստացել բավականին զարգացում: Ֆրանսիացի տեսաբանի համար կարևոր էր իր կողմից հաստատված սկզբունքի մաքրությունը, թեկուզև նա շատ լավ տեսնում էր, որ նույն Անգլիայում այդ սկզբունքը ոչ լիարժեք է պահպանվում: Այդ իսկ պատճառով «Մոնտեսքյոյի աքսիոմը» որոշ չափով անշարժ է: Փոխադարձ սահմանադրական հսկողության գաղափարը այդ սխեմային տալիս էր անհրաժեշտ դինամիկա, ճկունություն, իրականությանը հարմարվելու

⁷¹ Տե՛ս նույն տեղում, էջ 330:

⁷² Տե՛ս նույն տեղում, էջ 330:

⁷³ Տե՛ս նույն տեղում, էջ 331:

հնարավորություն:

Գործնականում յուրաքանչյուր գերատեսչության կողմից ուրիշների լիազորությունների ոլորտ ներխուժման անհնարին լինելը Ջ. Մեդիսոնի տեսակետով կարևոր, դեռ չլուծված հարց էր: Իշխանության յուրաքանչյուր ճյուղի համար նախատեսված սահմանադրական սահմանները իր ընկալմամբ բավական չէին: Դրանք «... մագաղաթյա պատնեշներ են, որոնք շարված են իշխանության զավթողական ոգու դեմ: Անվտանգության հենց այս միջոցների վրա էին հույս դրել ամերիկյան սահմանադրությունների մեծ մասի կազմողները: Սակայն, փորձը մեզ ցույց է տալիս, որ այս միջոցների ազդեցությունը շատ են գերազնահատել, և կառավարության առավել թույլ անդամներին ուժեղներից պաշտպանելու համար պահանջվում է ավելի հզոր արգելքների մեխանիզմ»⁷⁴: Սահմանադրության մեջ ներառված հայտարարությունները բավական չեն իշխանության այս կամ այն ճյուղը իրեն հատկացված սահմաններում պահելու համար⁷⁵: Ժողովրդի կարծիքին դիմելով իշխանության ճյուղերի միջև եղած ընդհարումը լուծելու հնարավորությունը քիչ արդյունավետություն ունեցող միջոց է, քանի որ այս պարագայում «դատավոր են լինելու մարդկային կրքերը, ոչ թե բանականությունը: Սակայն կառավարության գործողությունները պետք է հսկի և կարգավորի ժողովրդի բանականությունը, իսկ կրքերը պետք է հսկվեն և կարգավորվեն կառավարության կողմից»⁷⁶:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա հիմնված աշխատունակ համակարգի ձևավորման համար ամենակարևորը դարձավ «Ֆեդերալիստի» 51-րդ համարը, որը լույս տեսավ 1788 թ. փետրվարին: Իշխանության ճյուղերի փոխադարձ հսկողության գաղափարը ստացավ իր հետագա զարգացումը և վերախմաստավորումը. «լրացնենք բացը՝ ստեղծելով կառավարման այնպիսի ներքին կառուցվածք, որ նրան կազմող մասերը դառնան յուրաքանչյուրին իր տեղում պահելու միջոց»⁷⁷: Խոսքը փաստորեն գնում էր ինքնակառավարվող համակարգի ստեղծման մասին: Նման համակարգ ստեղծելու ժամանակ կարևորագույն հարց է միշտ դառնում ստորակարգության խնդիրը, քանի որ միայն կառուցողական համակարգն է ընդունակ

⁷⁴ St' u Федералист. Политическое эссе **А. Гамильтона, Дж. Мэдисона и Дж. Джея**. Перевод с англ. - М., 1993., 113, с. 332:

⁷⁵ St' u նույն տեղում, էջ 341:

⁷⁶ St' u նույն տեղում, էջ 341:

⁷⁷ St' u նույն տեղում, էջ 341:

ինքնակառավարման, նաև այն թե ինչպիսի ուժեր են շարժի գցելու համակարգը, այսինքն նպաստելու նրա ինքնակառավարմանը:

«Իշխանության առանձին և ինքնուրույն ճյուղերի ինստիտուտի տակ ամուր հիմք դնելու համար, ինչը կարևոր պայման է հանդիսանում ազատության պահպանման համար, պահանջվում է, որ յուրաքանչյուր իշխանություն ունենա սեփական կամք և, հետևաբար, կառուցվի այնպիսի հիմքի վրա, երբ այն ներկայացնող պաշտոնատար անձինք քիչ առնչություն և լիազորություն ունենան իշխանության այլ ճյուղերում պաշտոնատար անձանց նշանակման հարցում: Տվյալ սկզբունքի խստագույն պահպանման պայմաններում անհրաժեշտ է, որպեսզի օրենսդիր, գործադիր և դատական մարմիններում բարձր պաշտոնների նշանակումները սկիզբ առնեն իշխանության սկզբնաղբյուրից՝ ժողովրդից, և միմյանց հետ առնչություն չունենան»⁷⁸:

Տվյալ դեպքում խոսքը նախ և առաջ գնում էր այն մասին, որպեսզի խստորեն տարանջատվեն ոչ միայն իշխանության ճյուղերը, այլ նաև նրանց ձևավորման եղանակները, այսինքն՝ փոխվի ընտրական համակարգը՝ ենթարկվելով իշխանությունների տարանջատման սկզբունքին: Իշխանության համապատասխան ճյուղերի ղեկավարներին անհրաժեշտ սահմանադրական միջոցներով օժտելը զուգընթաց էր «ուրիշների կողմից ներխուժմանը դիմադրելու անձնական պատճառներին... Փառասիրությանը պետք է հակադրվի փառասիրությունը»⁷⁹: «Ֆեդերալիստի» հեղինակները չէին պլանավորում իդեալական համակարգ, նրանք թերահավատորեն էին մոտենում մարդու բնույթին: Բայց հենց այդ բնույթը, իրենց կարծիքով, նպաստում էր աշխատունակ համակարգի ստեղծմանը: «Հակառակ և մրցակցող շահերի այս խաղին կարելի է հետևել մարդկային փոխհարաբերությունների ամբողջ համակարգով՝ ինչպես մասնավոր, այնպես էլ՝ հասարակական»⁸⁰:

Կառուցվում էր բավականին հետաքրքիր համակարգ: Նրա հեղինակները, մարդու բնույթը մեկնաբանելով բողոքականության ավանդույթի ոգով, անօգուտ էին համարում այդ բնույթը փոխելու ցանկացած փորձը: Սակայն իրենց կողմից նախագծված համակարգը նպաստում էր Շ. Մոնտեսքյոյի գաղափարների իրականացմանը.

⁷⁸ Տե՛ս Федералист. Политическое эссе **А. Гамильтона, Дж. Мэдисона и Дж. Джея**. Перевод с англ. - М., 1993., 113, с. 346:

⁷⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 347:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում:

իշխանությունների բաժանման հիման վրա հասնել քաղաքական ազատության : Նյուտոնյան ոգով նկարագրված դինամիկական հավասարակշռության վիճակում գտնվող այս համակարգը ավելի ուշ ստացավ «գապումների և հակակշիռների համակարգ» անվանումը:

Այդ համակարգը «Ֆեդերալիստի» հեղինակների միակ նվաճումը չէր: Նրանք բոլորը այդ ժամանակ ուժեղ կենտրոնական իշխանության կողմնակիցներ էին, և համակրում էին գործադիր իշխանությանը: Նրանք՝ հատկապես Ա. Համիլթոնը, ուժեղ գործադիր իշխանության մեջ էին տեսնում Միացյալ Նահանգները հզոր և ծաղկուն երկիր դարձնող սեփական տնտեսական և քաղաքական ծրագրերի իրականացումը: Նրանց կարծիքով, երկրի ներքին հանգստությանը և կայուն զարգացմանը ամենալուրջ վնասը կարող էր հասցնել օրենսդրական մարմնի բռնակալությունը, որը հակված է ներքին խռովությունների և ավելի հեշտ է տրվում ներքնից եկող տրամադրություններին: Միացյալ Նահանգների սահմանադրության լավագույն մեկնաբան հանդիսացող «Ֆեդերալիստի» հեղինակները ելքը տեսնում էին օրենսդրական մարմնի երկրորդ պալատի ստեղծման մեջ: «Այս տեսակետից ելնելով՝ սենատը, որպես այդ օրենսդրական ասամբլեայի երկրորդ ճյուղ, կառավարության նկատմամբ «փրկարար» հսկողություն կիրականացնի: Նրա առկայության պարագայում ժողովրդի անվտանգությունը դառնում է երկու անգամ ավելի ապահով, քանի որ բռնատիրման կամ դավաճանության ցանկացած մտադրությունը կպահանջի երկու ինքնավար պալատների փոխհամաձայնությունը, այն դեպքում, երբ այլ պարագաներում բավական կլինեին մեկի փառասիրության կամ վաճառվողության առկայությունը»⁸¹: Սենատը պետք է դառնա ներքնի պալատին հակակշիռ, բայց ոչ այնքանով, որ նրան դարձնի բոլորովին անուժ: «Ֆեդերալիստի» հեղինակների կարծիքով նրա անդամների իշխանությունը առանց դրա էլ բավական էր երկրի բարօրությունն ապահովելու համար: Այդ իմաստով երկպալատ համակարգը գապումների և հակակշիռների այլընտրանքային տարբերակ էր:

Վերջապես, «Ֆեդերալիստի» մեջ հատուկ տեղ էր զբաղեցնում Ա. Համիլթոնի ներկայացրած Գերագույն Դատարանի խնդիրը: Այստեղ նա համաձայն չէր իր

⁸¹ См. у Федералист. Политическое эссе **А. Гамильтона, Дж. Мэдисона и Дж. Джея**. Перевод с англ. - М., 1993., 113, с. 410:

կոլեգաների՝ Ջ. Ջեյի և Ջ. Մեդիսոնի հետ: Վերջինս դեռ 1788 թ. քննադատելով Վիրջինիայի Սահմանադրության ջեֆերսոնյան նախագիծը՝ շարունակում էր պայքարել վերստուգիչ խորհրդի ստեղծման համար, որը, որպես գործադիր և դատական իշխանություններին համատեղ հսկող մարմին, ներկայացված օրենսդրական նախագծերի նկատմամբ պետք է ունենար լայն, թեկուզև ոչ բացարձակ վետոյի իրավունք⁸²: Համիլթոնը գտնում էր, որ դատական իշխանությունը, լինելով երեքից ամենաթույլը, «իր լիազորությունների տեսանկյունից առավել քիչ վտանգավոր է սահմանադրությամբ որոշած քաղաքական իրավունքների համար»⁸³: Բացի այդ, դատական իշխանությունը անընդհատ գտնվում է իրեն հավասար իշխանությունների կողմից ենթարկվելու, իր վրա ազդելու վտանգի տակ: Այդ իսկ պատճառով դատական իշխանությունն իր դիրքերն ամրապնդող հատուկ միջոցների կարիք ունի: Համիլթոնի կարծիքով, դատական համակարգը կարող է գոյություն ունենալ միայն առանձին, այն չի կարող լինել օրենսդրական իշխանության ենթաձյուղ⁸⁴:

Դատական իշխանության թուլությունը պահանջում է, որ իրեն առանձնահատուկ խնամքով վերաբերվեն: Դատական իշխանության ամրապնդման կարևորագույն միջոց է հանդիսանում դատավորների անկախությունը և անփոխարինելիությունը: Դատավորների անկախության մեջ Համիլթոնը տեսնում էր ինչպես սահմանադրության, այնպես էլ առանձին քաղաքացիների պաշտպանված լինելը: «Տեսնելով, որ անօրինական գործողությունները իրագործելու ճանապարհին դատարանների մեղմ գործելակերպի պատճառով հանդիպում են դժվարություններ, օրենսդիրները անարդարության նույն պատճառաբանությամբ ստիպված կլինեն սահմանափակել նրանց փորձերը»⁸⁵: Անգամ օրենքների ծավալուն ժողովածուի մանրակրկիտ ուսումնասիրության անհրաժեշտությունը նա դնում է դատավորների անփոխարինելիության օգտին խոսող փաստարկների շարքում, քանի որ «ուղղում կատարելով մարդու սովորական սխալականության վրա»՝ դժվար կլինի գտնել միաժամանակ ազնիվ և իրազեկ թեկնածու համապատասխան պաշտոնի համար:

⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 89-90:

⁸³ Տե՛ս նույն տեղում, էջ 503:

⁸⁴ Տե՛ս *Федералист. Политическое эссе А. Гамильтона, Дж. Мэдисона и Дж. Джея*. Перевод с англ. - М., 1993., 113, с. 520:

⁸⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 508:

Իսկ եթե այնուամենայնիվ նման մարդ գտնվի և, ունենալով պաշտոն, չկատարի իրեն վարքաբեկող արարքներ, ապա նրանից բաժանվելու ոչ մի կարիք չկա⁸⁶:

Այսպիսով, 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին ձևակերպված տեսական սկզբունքների կիրառությունը իրական քաղաքական գործընթացների նկատմամբ հանգեցրեց իշխանությունների տարանջատման տեսության էական հարստացման, մշակվեց զսպումների ու հակակշիռների մեխանիզմի կիրառման գաղափարը, նորովի իմաստավորվեցին երկպալատ օրենսդիր մարմնի և դատական իշխանության դերերը և գործունեության սկզբունքները:

Ամեն դեպքում, հարկավոր է ընդունել, որ անգամ նման պայմաններում Միացյալ Նահանգների Սահմանադրությունը շարունակում էր մնալ թղթի վրա: Երկար տարիներ պահանջվեցին, որպեսզի, օրինակ, Գերագույն դատարանը իր տեղը գտներ երկրի քաղաքական-իրավական համակարգում: Հենց այս պայքարի ընթացքում է, որ ձևավորվում է «կենդանի սահմանադրությունը»՝ գրված սահմանադրության նորմերի ու կանոնների մեկնաբանությունը, որը մեկ միասնության մեջ է միավորված երկրի քաղաքական կյանքը կանոնակարգող չգրված օրենքների ու կանոնների հետ: Կարևոր է այն հանգամանքը, որ 18-րդ դարի վերջի սահմանադրական փաստաթղթերը նպաստում էին նրան, որ քաղաքական պայքարն ընթանում էր սահմանադրական գործընթացի շրջանակներում՝ միաժամանակ հարստացնելով այդ շրջանակներն ու դրա զարգացման հունն ավելի խորը դարձնելով:

Իշխանությունների բաժանման հայեցակարգը համեմատաբար ավարտուն տեսք ստացավ 19-րդ դարի կեսերին: Նա հարստացվել էր կոնկրետ դրույթներով, որոնք հիմնված էին տարբեր երկրներում կոնկրետ պետական համակարգերի գործունեության և կուտակված պատմական փորձի վրա:

«Ժողովրդավարական հեղափոխությունների դարաշրջանը», որն ավարտվեց Վիեննայի կոնգրեսով, չէր կարող նշանակալի փոփոխություններ մտցնել առկա քաղաքական-իրավական հայեցակարգերի մեջ: Նախ և առաջ հարկավոր է նշել, որ փոփոխվեց մտավոր զարգացման ընդհանուր մթնոլորտը: Կուտակվեց հսկայական փորձ: Ի՞նչ արժեք ունեին, օրինակ, Ֆրանսիայի բոլոր հեղափոխությունները: Ինքը՝

⁸⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 509:

Ֆրանսիան, երկու սերունդների կյանքի ժամանակ՝ 1789-1815 թթ.-ն ընկած ժամանակահատվածում, կարողացավ տեսնել այդ ժամանակ առկա կառավարման բոլոր հնարավոր ձևերը: Սակայն, ակնհայտ էր նաև մեծ հուսահատություն, որն ինչ-որ չափով սահմանակցում էր նաև ցինիզմին: Սահմանադրական միապետության ճանապարհին, որը Փարիզ բերեցին հաղթողները, ստիպված եղան հանդիպել և՛ Նապոլեոնի հետ, ով արյամբ էր հեղեղել ողջ Եվրոպան և արյունից ազատել ողջ Ֆրանսիան, և՛ Գ. Բաբեֆի հետ, ով քարոզում էր արդար հասարակական կառուցվածքի ստեղծումը՝ հեղափոխական դիկտատուրայի և մասնավոր սեփականության վերացման միջոցով: Այդ պատճառով էլ Ֆրանսիայի համար, որին 19-րդ դարի ընթացքում վիճարկված էր դառնալ կայուն Հանրապետություն, տեսական անկումները պետաիրավական ոլորտում պահպանում էին արդիականությունը:

Այս փնտրտուքներում մեծ նշանակություն ուներ հատկապես անգլիական փորձը: Դա հատկապես լավ տեսանելի էր Բ. Կոնստանի օրինակի վրա, ով համարվում է 19-րդ դարի ֆրանսիական ազատականության հիմնադիրներից և սահմանադրական իրավունքի առաջադեմ համակարգողներից մեկը⁸⁷, ով ուրիշներից ավելի լավ կարողացավ ամփոփել և զարգացնել նախորդ հեղինակների գաղափարները:

«Նա ձգտում էր պարզել ոչ թե ինչ-որ նոր և չուսումնասիրված ձևերը, այլ ապահովել նվազագույն պայմաններ չափավորության և փոխադարձ ճանաչման ոգով զսպվող հասարակական ուժերի ամուր հարաբերակցության համար: Միաժամանակ նա մտածում էր, որ ամուր հասարակական կարգի համար ամենաճիշտ հիմք է հանդիսանում ազատությունը»: 1815 թ. հրատարակված «Քաղաքականության սկզբունքներում» նա փորձեց ազատության սկզբունքը կցել Ժան-Ժակ Ռուսոյի գաղափարներին, որոնք համարվում էին ֆրանսիական հեղափոխության հիմնական ուսմունքներից մեկը: Ազգային ինքնավարության սկզբունքը նա դիտում էր որպես պետության օրինական հիմք, որից դուրս կարող է լինել միայն ուժի, և, հետևաբար, անօրինականության վրա հիմնված իշխանությունը: Բ. Կոնստանը լիովին համաձայնվել էր Ռուսոյի հետ:

Սակայն նա գտնում էր, որ Ռուսոյի գաղափարները շտկումների կարիք ունեն. անհրաժեշտ էր ընդունել, որ անձնական իրավունքներն անձեռնմխելի են մնում

⁸⁷ Մանրամասն տե՛ս **Нерсесянц В.С.** История политических и правовых учений. М., 2014, с. 558-563.

գերագույն իշխանության համար՝ անկախ նրա կառուցվածքից: Իրավունքների նկատմամբ ոտնձգությունը ցանկացած իշխանությանը դարձնում է «ապօրինի»: Այդ իրավունքների թվին Բ. Կոնստանը դասում էր սեփականության իրավունքը, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը և այլ իրավունքներ, որոնք, ըստ նրա, կազմում էին «Ժամանակակից» ազատության բովանդակությունը: Հանուն ազատության և անձի իրավունքների՝ նա փորձում էր առարկել անսահմանափակ ժողովրդական ինքնուրույնության դեմ:

Բ. Կոնստանը պաշտպանում էր անձնական ազատության անձեռնմխելիության տեսակետը և իրավական պետության կառուցվածքի մասին իր դրույթներում նա այդ ապահովումը փնտրում էր ներկայացուցչական հաստատություններում, իշխանությունների բաժանման մեջ, հասարակական կարծիքի զարգացման մեջ:

Ինչպես և Մոնտեսքյոն, այդ իրավունքներն ապահովելու երաշխիքը նա տեսնում էր իշխանությունների տարանջատման մեջ: Սակայն, ի տարբերություն իր նախորդի, նա հաշվում էր ոչ թե երեք, այլ հինգ իշխանության ճյուղեր: Նա օրենսդրական իշխանությունը բաժանում էր երկու ճյուղի, որոնցից մեկը մարմնավորում էր մշտականություն և կիրառվում էր ժառանգական պալատում, իսկ հասարակական կարծիքը հաշվի առնող իշխանությունը ներկայացված էր ընտրող պալատում: Ի լրումն Շ. Մոնտեսքյոյի մոտ եղած դատական և գործադիր իշխանություններին՝ Կոնստանը մտցնում էր նաև պետության ղեկավարի իշխանությունը, որը կանգնած էր իշխանության բոլոր ճյուղերից վեր և անհրաժեշտության դեպքում նրանց բոլորին բերում էր համաձայնության: Կոնստանի մոտ պետության ղեկավարը հանդիսանում էր միապետը, իսկ դեմոկրատական հանրապետությունում այն կարող էր լինել հանրապետության նախագահը, որն ընտրվում է անմիջապես ժողովրդի կողմից:

Բ. Կոնստանը տարբերակում էր ոչ թե իշխանության տեսակները, այլ այն կրողներին և, հետևաբար, նրա սխեման Ջ. Լոքի և Շ. Մոնտեսքյոյի համեմատությամբ չի համարվում սկզբունքային քայլ դեպի առաջ⁸⁸: Դա չէր կարող համարվել Շ. Մոնտեսքյոյի կոնցեպցիայի հաջող զարգացում, բայց այս կիրառական տեսության նշանակությունը կայանում էր սահմանադրական պետությունում միապետության տեղը որոշելու մեջ: Կոնստանը միապետական իշխանությունը դիտում էր չեզոք դիրքերում, որը

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 559-560:

կհանդիսանար բոլոր մնացած իշխանությունների համերաշխության երաշխավորը:

Թագավորական իշխանության չեզոք դիրքի մասին պատկերացումը Կոնստանին մոտ սերտորեն կապված է նախարարների պատասխանատվության մասին ուսմունքի հետ: Նախարարների պատասխանատվության հարցում Կոնստանը անգլիական սահմանադրությունը կարողացավ Մոնտեսքյոյից եթե ոչ ավելի լավ, ապա ավելի խորը հասկանալ: 18-րդ դարի առաջին կեսին Անգլիայում այս սկզբունքը դեռևս ըստ պատշաճին չէր զարգացել: Անգլիական համակարգի առավելությունը Բ. Կոնստանը տեսնում էր պառլամենտական պատասխանատվության սկզբունքում, որի դեպքում նախարարներն անմիջական կախվածության մեջ էին գտնվում օրենսդիր ժողովից: Անգլիական համակարգի կարևորագույն առաջնահերթությունը նա տեսնում էր նրանում, որ նախարարները դուրս էին մնում ներկայացուցչության միջավայրից: Բ. Կոնստանն, այս իմաստով, հանդես էր գալիս, որպես պառլամենտարիզմի սկզբունքի պաշտպան:

Որպես հնգօղանի համակարգի լրացում հանդես է գալիս իշխանության ևս մեկ տեսակ՝ «մունիցիպալ» իշխանությունը, որին նա տալիս էր հատուկ նշանակություն, պնդելով, որ կենտրոնական իշխանությունը չպետք է խառնվի տեղական ինքնակառավարման գործերի մեջ: Ապակենտրոնացման գաղափարը դարձավ Բ. Կոնստանի ազատական հայեցակարգի շարժուն մաս, ընդ որում այդ գաղափարը մինչ օրս չի կորցրել իր արդիականությունը:

Քանի որ անհատն ունի սեփական սոցիալական ու տնտեսական շահերի մասին հոգ տանելու իրավունք, ապա միությանը, քաղաքին, դեպարտամենտին անհրաժեշտ է ընձեռել ինքնուրույնություն՝ տեղի բյուջեի, կարգ պաշտպանելու հարցերում⁸⁹: Երկու պալատների համակարգին, սահմանափակ ընտրական իրավունքին, տեղական ինքնակառավարմանը, անհատական իրավունքների ուսմունքին հավատարիմ լինելու հանգամանքը թույլ է տալիս Բ. Կոնստանի մասին խոսել որպես անգլիական քաղաքական համակարգի հավատարիմ հետևորդ: Բրիտանական սահմանադրական միապետության մեջ նա տեսնում էր այն հիմքերը, որոնք 19-րդ դարի առաջին կեսին եվրոպացիները դեռևս նոր պետք է ընկալեին:

Ֆրանսիական հասարակական մտքի մեկ այլ ներկայացուցիչ Ա. Թոքվիլը փորձում

⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 561:

էր Միացյալ Նահանգների օրինակով իմաստավորել քաղաքական համակարգի էվոլյուցիան: Նրա՝ «Ժողովրդավարությունը Ամերիկայում» երկհատորանի աշխատությունը լույս է տեսել 1835-1840թթ. ընթացքում՝ Միացյալ Նահանգներ կատարած այցի ընթացքում: Վերջինս այնտեղ նպատակ ուներ ուսումնասիրել բանտային գործը: Այս հանգամանքը Թոքվիլին անմիջապես դասեց առաջին մեծության տեսաբանների շարքին՝ դարձնելով նրան «ազատական ժողովրդավարության» հիմնադիրը:

Միացյալ Նահանգների նկատմամբ Թոքվիլի հետաքրքրությունը կրում էր հասկանալի բնույթ: Ֆրանսիայում առկա միապետական ռեժիմը քաղաքական ճգնաժամ էր ապրում, սրվել էին սոցիալ-տնտեսական հակասությունները, դասային պայքարը: Այս պայմաններում հասկանալի է հետաքրքրությունը այն երկրի նկատմամբ, որտեղ գերիշխող դասը կարողացավ հանրապետությունը հարմարեցնել սեփական շահերի պաշտպանությանը՝ դարձնելով այն հասարակական-քաղաքական կառուցվածքի գոյության կայուն ձև:

Թոքվիլի աշխատանքի գլխավոր առանձնահատկություններից մեկը հանդիսանում է այն հարցի պատասխանը, թե ինչն է հանդիսանում Միացյալ Նահանգների կայունության գրավականը:

«Մենք ապրում ենք դեմոկրատական մեծ հեղափոխության դարաշրջանում,- գրում էր Թոքվիլը,- բոլորը նկատում են այն, սակայն բոլորը չեն, որ այն գնահատում են պատշաճ ձևով»⁹⁰: Այս հեղափոխության բնույթը հանդիսանում է միջին դասի անխուսափելի ձևավորումը: Աշխարհում գոյություն ունի միայն մեկ երկիր, որտեղ նման հեղափոխություն արդեն եղել է, ու այդ երկիրն օգտվում է դրա արդյունքներից՝ առանց ճանաչելու հեղափոխական հեղաշրջումը: «Ինձ թվում է, որ մենք, անկասկած, ամերիկացիների նման կարող ենք հասնել մարդկանց գոյության ամբողջական հավասարությանը»⁹¹: Հարկ է նշել, որ Թոքվիլի համար կարևոր են համարվում ոչ այնքան Միացյալ Նահանգներում տեղի ունեցող իրական գործընթացները, որքան այն համընդհանուր եզրակացությունները, որոնք նա կարող է անել դրանց հիման վրա:

⁹⁰ **Токвиль А.** Демократия в Америке /Пер. с франц. М., 1992, с. 27.

⁹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 34:

Ա. Թոքվիլը չէր փորձում վերանայել Շ. Մոնտեսքյոյի առաջարկած իշխանությունների տարանջատման համակարգը: Նրան, նախ և առաջ, հետաքրքրում է, թե ի՞նչ կա այդ սխեմայի մեջ և ինչպե՞ս է նա աշխատում գործնականում: Հենց այդ պատճառով Միացյալ Նահանգների քաղաքական համակարգի վերլուծությունը նա սկսում է տեղական մակարդակի վրա ինքնակառավարման ուսումնասիրումից, Նոր Անգլիայի տեղական ինքնակառավարումից⁹²: Տեղական մակարդակով գործող կազմակերպությունը նրան ներկայանում է որպես ուժ, որը ներքաշում է քաղաքական կյանքի մեջ ամենացածր աստիճանի վրա կանգնած հասարակության շերտերին, դաստիարակում է նրանց և համապատասխան կերպով ուղղում նրանց ակտիվությունը:

Այս մակարդակի վրա քաղաքացին ընտելանում է ակտիվության այնպիսի ձևերին, առանց որոնց «ազատությունը կարող է առաջընթաց ապրել միայն հեղափոխությունների ճանապարհով»: Տեղական ինքնակառավարման կյանքի և գործունեության մեջ մշտական մասնակցությունը քաղաքացուն ոչ միայն նրա անմիջական կյանքին վերաբերվող հարցերի լուծմանը մասնակցելու զգացողություն է տալիս, այլ նաև նրան համոզում է քաղաքական համախմբման օգտակարությունը:

Նկարագրելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը՝ Ա. Թոքվիլը ձևակերպեց կայուն քաղաքական համակարգի հիմնական ռազմավարական սկզբունքները, որոնք ժողովրդավարության պայմաններում ընդունակ են պաշտպանել տվյալ հասարակարգը: Սահմանադրական ուսմունքները կենդանի բովանդակությամբ լցնող այսպիսի սկզբունքներից մեկը Ա. Թոքվիլի համար դառնում է հասարակական և քաղաքական կազմակերպությունների, կամավոր ասոցիացիաների ճյուղավորված ցանցի գոյությունը, որոնք գործում են տեղական մակարդակով երկրի սահմանադրական համակարգում և քաղաքացիներին ներքաշում են հասարակության կյանքին ամենօրյա մասնակցությանը: Առանց այսպիսի ամենօրյա մասնակցության ժողովրդավարական համակարգը մեռած է: Բնորոշ է, որ Ա. Թոքվիլը նման կազմակերպություններին է դասում ոչ այնքան կուսակցությունները, որքան քաղաքական միությունները և կամավոր ասոցիացիաները⁹³: Նրանք, Ա. Թոքվիլի

⁹² Տե՛ս **Токвиль А.** Демократия в Америке/Пер. с франц. - М., 1992., 103, с. 64-80:

⁹³ Տե՛ս **Токвиль А.** Демократия в Америке/Пер. с франц. - М., 1992., 109, с. 144-147:

կարծիքով, ոչ միայն համայնքների մակարդակով իրական բովանդակությամբ են լցնում կյանքը, այլ նաև իրենցից ավելի կարևոր բան են ներկայացնում:

Միացյալ Նահանգներում գոյություն ունեցող ազատության սպառնալիքներից առավել մեծը Ա. Թոքվիլը համարում էր «մեծամասնության բռնապետությունը», որը ընդունակ էր ոչ միայն ճնշել քաղաքական ազատությունը, այլ նաև պարտադրել իր հայացքները: Քաղաքական միությունների և կամավոր ասոցիացիաների ստեղծման մեջ Ա. Թոքվիլը տեսնում էր երաշխիք նման երևույթների հետ պայքարի գործում⁹⁴: Ամերիկայում փոքրամասնություն կազմող միության անդամները, նախ և առաջ, ուզում են իմանալ իրենց քանակությունը, քանի որ նրանց առաջնային նպատակը մեծամասնության ազդեցությունը թուլացնելն է: Երկրորդ նպատակը, որը նրանք դնում են իրենց առջև, դա բացահայտելն է այն բոլոր հնարավորությունները, որոնք կարող են օգտագործվել մեծամասնությանը ճնշելու համար, քանի որ նրանց վերջնական նպատակը, որի իրականացման վրա նրանք հստակ հույս ունեն, մեծամասնությանը ներքաշելն է իրենց կողմ և դրանով իսկ հայտնվելը իշխանության կազմում⁹⁵:

Այսպիսի համակարգը սահմանադրության հիման վրա առաջացող քաղաքական կազմակերպության ներսում ստեղծում է իր տեսակի «քաղաքացիական կառավարում»: Արդյունքում «անձնական ազատությունը չի ճնշվում, ... նույն ժամանակում ապրող մարդիկ գնում են դեպի մի նպատակ, բայց պարտավոր չեն ընտրել նույն ուղին: Ամերիկյան քաղաքական կազմակերպություններում ոչ ոք չի զոհաբերում իր կամքը և բանականությունը, հակառակը, յուրաքանչյուրի կամքը և բանականությունը նպաստում են ընդհանուր գործում հաջողությանը հասնելուն»⁹⁶:

Դրա հետ մեկտեղ, չի կարելի չնշել, որ Թոքվիլի աշխատությունը ոչ մի դեպքում չի կարելի դիտարկել որպես 19-րդ դարի 30-ական թվականների Միացյալ Նահանգներում առկա իրականության նկարագրություն: Հաճախ ամերիկյան պատմաբաններն իրենց աշխատանքները նվիրում էին Թոքվիլի գրքի ուղղակի մեկնաբանությանը⁹⁷:

Աշխատությունն իրենից ներկայացնում է յուրօրինակ տեսական շարադրություն՝ հարաբերական հավասարության պայմաններում կայուն հանրապետություն ստեղծելու

⁹⁴ Տե՛ս նույն տեղում:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 157:

⁹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 159:

⁹⁷ Տե՛ս, օրինակ՝ **Pessen E. Riches**, *Class and Power before the Civil War*. Lexington (Mass); Toronto,

համար, որտեղ չկան ո՛չ աղքատներ, և ո՛չ էլ հարուստներ: Հենց այս դրույթներն են, որ Թոքվիլի աշխատությունը շատ բաներում դարձնում են տեսական շարադրություն:

Այսպիսով, Բ. Կոնստանը և Ա. Թոքվիլը, դիտարկելով առանձին երկրի կոնկրետ առանձնահատկությունները, փորձում էին միաժամանակ պահպանել 18-րդ դարի գիտելիքների բազմակողմանիության հաջորդականությունը: Իշխանությունների տարանջատման կոնցեպցիայի մեջ մտցվել էին շտկումներ՝ հաշվի առնելով կուտակված փորձը, կյանքի մեջ ներգրավվելու առկա գործնական արդյունքները:

Այսպիսով, իշխանությունների տարանջատման հայեցակարգի ձևավորման գործընթացը դիտարկելիս կարելի է առանձնացնել երեք փուլ: Առաջինը՝ այնպիսի ֆոնի, իրավիճակի առաջացում, որում հնարավոր դարձավ հայեցակարգի դասավորությունը, նրան կազմող տարրերի ընդհանուր ձևավորումը: Երկրորդը՝ սեփական կոնցեպցիայի ստեղծումը, նրա առանձին մասերի ձևակերպումը և նրանց միասին համախմբելն էր, և երրորդ՝ առաջնային ճշգրտումների կատարումը՝ հաշվի առնելով կուտակված պրակտիկ փորձը:

Դիտարկվող հայեցակարգը, ծնունդ առնելով որպես բացարձակ միապետության և համապարփակ կենտրոնացման գաղափարաքաղաքական ժխտում, տրամաբանորեն և փաստացի տանում էր դեպի սահմանադրական միապետության ժխտում և որպես պետական կառավարման միակ ժողովրդավարական ձև՝ հանրապետական կարգի հռչակում: Միաժամանակ իշխանությունների բաժանման գաղափարը դարձավ հասարակության տարբեր սոցիալական շերտերի շահերի, կարիքների և կողմնորոշման տեսական ձևակերպում, իսկ նրա գործնական իրականացումը ճանապարհ բացեց նրանց տնտեսական, սոցիալ – քաղաքական և հոգևոր ինքնաիրականացման համար:

Հայեցակարգը դարձավ քաղաքացիական հասարակության հաստատման և քաղաքական ձևակերպման, պետության կախվածությունից նրա ազատվելու, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման միջոցներից մեկը:

ԳԼՈՒԽ 2

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

2.1 Իշխանությունների բաժանման տեսության բազմազանությունը

Իշխանությունների բաժանման տեսությունը (հայեցակարգը) նշանակալի տեղ է զբաղեցնում ժամանակակից իրավագիտության մեջ: Տվյալ հայեցակարգի դրույթների պարզաբանմանն ու բացահայտմանն է նվիրված բազմաթիվ գիտական աշխատություններ: Գրեթե գոյություն չունեն այնպիսի դասագրքեր ու ուսումնական ձեռնարկներ, որոնցում առանձին գլուխներ կամ բաժիններ նվիրված չլինեն տվյալ տեսության քննարկմանը⁹⁸:

Իշխանությունների բաժանման տեսության բովանդակության, զարգացման հիմնական ուղղությունների, պետաիրավական համակարգում դրա տեղի ու դերի վերլուծությանն են նվիրված բազմաթիվ մենագրություններ, գիտական աշխատանքներ ու հոդվածներ⁹⁹: Դրանցում ոչ միայն բացահայտվում են տվյալ հայեցակարգի ելակետային դրույթները, դրա աղբյուրները, այլ նաև ներկայացվում են դրանց միանգամայն հակասական բնույթը ու էությամբ միմյանց նմանվող մեկնաբանությունները:

Վերջինը, հատկապես նկատվում է այն ժամանակ, երբ հասարակության զարգացման արդի փուլում, իշխանությունների բաժանման տեսության հետ գործ ունեցող հեղինակները, իրենց դատողություններում ու քննարկումներում, որպես ելակետ վերցնում են դրա աղբյուրները կամ ուսմունքները: Այսպես, իրենց դատողություններում որպես ելակետ ընդունելով Ջ. Լոկի ուսմունքն այն մասին, որ «սահմանադրական պետությունում, որը հիմնվում է սեփական հենքի վրա ու գործում է սեփական բնույթին համապատասխան, կարող է լինել միայն մեկ գերագույն իշխանություն, իսկ ավելի ստույգ՝ օրենսդրականը, որին մյուս բոլորը ենթարկվում են ու

⁹⁸ Տե՛ս, օրինակ՝ **Рассказов Л.П.** Теория государства и права. Углубленный курс. М., 2015, с. 63-68; Актуальные проблемы теории государства и права. М., 2014, с. 384-386 և այլն:

⁹⁹ Տե՛ս Constitutional Law/**Eds. E. Wade, A. Bradley, L.** 1978. Constitutional Law of Canada / **Ed. P. Hogg.** Toronto, 1985; **Gwyn W.** The Indeterminacy of the Separation of Powers and the Federal Courts// The George Washington Law Review. 1989, N 3; Buffington M. Separation of Powers and the Independent Governmental Entity After *Mistrella v. United States*// Louisiana Law Review. 1989. vol. 50.

պետք է ենթարկվեն»¹⁰⁰, հեղինակները անխուսափելիորեն գալիս են օրենսդրական իշխանության ծայրահեղ չափազանցման, իսկ երբեմն էլ՝ այն բացարձակ դարձնելու մասին եզրահանգումների:

Իսկ ահա հիմնվելով Մոնտեսքյոյի կողմից ձևակերպված «չափավոր կառավարման» վերաբերյալ հիմնական դրույթների վրա, իշխանությունների բաժանման տեսության արդի հետազոտողներն ու ուսումնասիրողները սեփական դատողությունների տրամաբանության հիման վրա անխուսափելիորեն հանգում են փոքր-ինչ այլ եզրահանգման, իսկ ավելի ստույգ՝ չժխտելով օրենսդիր իշխանության գերիշխող դերն ու նշանակությունը պետական իշխանության մյուս բոլոր ճյուղերի ու մարմինների համակարգում, նրանք հակվում են այն մտքին, որ վերջինն, ամեն դեպքում, չպետք է դարձնել բացարձակ ու դիտարկել որպես վերապետական ձևավորում:

«Զե՞ որ հայտնի է այն հանգամանքը, որ դեռևս Ջ. Մեդիսոնը և շատ այլ «վաղ» հեղինակներ ԱՄՆ-ի օրինակի վրա բավականին վստահաբար ապացուցեցին, որ «միննույն գերատեսչությանը պատկանող իրավասությունները չպետք է ուղղակի կամ անուղղակի իրականացվեն երկուսի կողմից» և որ «Ժառանգական գործադիր իշխանության համընդգրկուն առաջնահերթությունն իրենից մեծ վտանգ է ներկայացնում ժողովրդի ազատության ու անկախության համար: Օրենսդիրների կողմից ամբողջ իշխանության ուզուրպացիան հանգեցնում է նույնպիսի բռնատիրության, ինչպիսին որ գործադիր իշխանությամբ կառավարման բռնազավթումն է»¹⁰¹:

Իշխանությունների բաժանման տեսության վերաբերյալ արդի փուլում նույնպես առկա են տարբեր ընկալումներ և մեկնաբանություններ: Սակայն, դրանցից առավել կարևորները հանդիսանում են հետևյալները, առաջինը ժամանակակից պետաիրավական տեսության մեջ ու պրակտիկայում իշխանությունների բաժանման հայեցակարգի տեղի ու դերի մասին տարբեր կարծիքներն են: Երկրորդը՝ իշխանությունների բաժանման ընդհանուր տեսության և դրա կիրառման «ազգային» փորձի խնդիրների համադրության տարբեր մեկնաբանություններն են: Երրորդը՝ այն հարցերի բազմատեսակ ընկալումն ու ոչ միանման մեկնաբանություններն են, որոնք վերաբերում են մի կողմից օրենսդիր և գործադիր իշխանությունների օպտիմալ

¹⁰⁰ Տե՛ս **Локк Дж.**, Сочинения; В. 3 т. Т. 3, М. 1988, с. 349.

¹⁰¹ Տե՛ս **Madison J.** The Federalist Paper № 51.

հարաբերակցությանը, իսկ մյուս կողմից՝ դիտարկվող տրիադայում դատական մարմինների տեղին ու դերին: Առանց մանրամասնություններին տրվելու՝ հակիրճ մեկնաբանենք դրանցից յուրաքանչյուրը:

Նախ և առաջ ներկայացնենք իշխանությունների բաժանման տեսության ու դրա կիրառման փորձի վերաբերյալ առկա տարբեր հայացքները: Այս խնդրում, ինչպես և մյուսների դեպքում, հստակ պատկերացում չկա տվյալ տեսության գաղափարական, սոցիալ-տնտեսական կարևորության, ինչպես նաև գործնական նշանակության մասին: Կարծիքների ու դատողությունների շրջանակը միանգամայն բազմազան է. իշխանությունների բաժանման տեսության ամբողջական ընկալումից մինչև դրա ամբողջական բացառումը:

Ընդ որում, երբ խոսքը գնում է իշխանությունների բաժանման տեսությունն անվերապահորեն ընդունելու մասին, ապա ամենևին էլ նկատի չեն ունենում միայն այսպես կոչված, «երիտասարդ ուսմունքները», որոնք ձևավորվել են ՄՄՀՄ և Արևմտյան Եվրոպայի «սոցիալիստական» մյուս երկրների ավերակների վրա¹⁰²: Տվյալ դեպքում, դրանք հաշվի չեն առնվում, քանի որ կուրորեն կրկնօրինակում են «քաղաքակիրթ երկրների» գրեթե ցանկացած փորձ: Նկատի ունենք ներկայումս գոյություն ունեցող, արդյունաբերական առումով բարձր զարգացվածությամբ արևմտյան երկրները. ԱՄՆ, Կանադա, Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա և այլն:

Սրանում համոզվելու համար բավական է անդրադառնալ այս երկրների ու հատկապես ԱՄՆ-ի առանձին նահանգների սահմանադրությունների տեքստին: Դրանց գերակշիռ մեծամասնությունը ոչ միայն ընդհանուր ձևով հրապարակում, այլ նաև մանրակրկտորեն ամրագրում է իշխանությունների բաժանման սկզբունքը: Այսպես, Մասաչուսեթս նահանգի սահմանադրության մեջ (հոդվ. 30), հատկապես ընդգծվում է, որ այս նահանգի պետական մեխանիզմում «օրենսդիր մարմինները երբեք չպետք է կատարեն գործադիր իշխանության գործառույթները: Այս նահանգի իշխանությունը, վերջին հաշվով, կարող է լինել միայն իրավունքի և ոչ թե մարդկանց իշխանությունը»¹⁰³:

Քոնեքթիկուտ նահանգի Սահմանադրության 2-րդ հոդվածում նույնպես ամրագրված է այս սկզբունքը, որի համաձայն իշխանությունը նահանգում պետք է

¹⁰² Տե՛ս **Ковачев Д.А.** Принцип разделения властей в конституциях государств Восточной Европы // Конституционные реформы в государствах Содружества / Под. ред. **Ю. А. Тихомирова**, М. 1993, с. 119-126.

¹⁰³ Տե՛ս The Constitution of Commonwealth of Massachusetts. Boston, 1992, p. 6.

բաժանվի երեք տարբեր գերատեսչությունների միջև¹⁰⁴:

Նույնն է իրավիճակը նաև իշխանության բաժանման տեսությունը չընդունելու պարագայում: Դրա հանդեպ բացասական վերաբերմունքն արտահայտվում է ոչ միայն մի շարք այնպիսի հեղինակների աշխատանքներում, որոնց «երիտասարդ ժողովրդավարության» երկրների մամուլն անվանում է կոմունիզմի և ամբողջատիրության (տոտալիտարիզմի) կողմնակիցներ, այլ նաև այլ՝ ազատական-բուրժուական տեսանկյունից միանգամայն հարգարժան հեղինակների գիտական աշխատանքներում:

Վերլուծության ենթարկելով իշխանությունների բաժանման տեսության հիմնական դրույթները արդի իրականության նկատմամբ դրանց կիրառության տեսանկյունից՝ մի շարք գիտնական-սահմանադրագետներ գալիս են այն եզրակացության, որ իրական կյանքում տվյալ տեսությունը հաճախ մնում է զուտ որպես «ձևական տեսություն»: Ինչ վերաբերում է դրա կիրառության պրակտիկային, ապա այն կրում է, եթե ոչ բացասական, ապա՝ հակասական բնույթ:

Ելնելով այն հանգամանքից, որ իշխանության բոլոր երեք ճյուղերը սերտորեն կապված են միմյանց հետ ու սահմանադրական պլանում ձգտում են ղեկավարել մեկը մյուսին, գրում է Ե. Գրեսմանը, ապա դժվար է ենթադրել, որ «պետության ազատ ու արդյունավետ կառավարման համար միանգամայն անհրաժեշտ իշխանությունների բաժանման մակարդակ պետք է գտնվի ու համապատասխան ձևով պահպանվի երկար ժամանակի ընթացքում»¹⁰⁵:

Այս ամենի հիման վրա, շարունակում է հեղինակը, այն հարցադրումը, որի համաձայն, օրինակ, ԱՄՆ-ում օրենսդրական գործառնությունները կարող են իրականացվել միայն կոնգրեսի կողմից՝ երկպալատ հիմքի վրա, գործադիր իշխանության գործառնությունները պետք է իրականացվեն բացառապես նախագահի, կամ նրա լիազորության տակ գտնվող մարմինների կողմից, իսկ դատական գործառնությունները, համաձայն Սահմանադրության 3-րդ հոդվածի, միայն դատարանների ու դատավորների կողմից, «մտավոր առումով անազնիվ, իսկ պատմականորեն սխալ»¹⁰⁶ կղիտվի, եթե

¹⁰⁴ Տե՛ս State of Connecticut. Register and Manual 1993, Hartford, 1993, p. 31.

¹⁰⁵ Տե՛ս **Gressman E.** Separation of Powers; The Third Circuit Dimention// **Seton Hall** Law Review, 1989 , N 3, p. 492.

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 494:

հղում կատարենք Մոնտեսքյոյի ու Մեդիսոնի աշխատանքներին:

Այսպիսի գնահատականի պատճառներից մեկը կայանում է նրանում, որ նման մոտեցման դեպքում իշխանության երեք ճյուղերից յուրաքանչյուրի կողմից իրականացվող գործառնությունների ողջ բազմազանությունից, գիտակցաբար կամ անգիտակցաբար, բացառվում են նման կամ խառը գործառնությունները¹⁰⁷: Իսկ սա հակասում է իշխանությունների բաժանման տեսության գործնական կիրառությանը իրականությունում: Բացի այդ, իշխանությունների բաժանման նման «մաքուր» կամ «ծայրահեղական» տեսության առաջացումը, չի պաշտպանվում պետաիրավական կառուցողականության փորձով, իրական կյանքով:

Այս կապակցությամբ Արևմուտքի քաղաքական և իրավաբանական գրականության մեջ երբեմն կարծիք է արտահայտվում, որ «իշխանությունների բաժանման «ֆորմալիստական» մոտեցումը «քայքայիչ» ազդեցություն ունի պետական մեխանիզմի գործունեության օբյեկտիվ ուսումնասիրության և տարբեր իշխանությունների օպտիմալ փոխազդեցության խնդիրների լուծման տեսանկյունից¹⁰⁸: Այն թույլ չի տալիս «ճշգրիտ նկարագրել ժամանակակից դաշնային կառավարությանը, ինչպես նաև օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերությունների բնույթը¹⁰⁹:

Արևմտյան գրականության և պետաիրավական կառուցվածքի գործունեության մեջ միայն իշխանությունների բաժանման ընդհանուր տեսությունը չէ, որ գոյություն ունի: Ոչ պակաս հստակորեն դրանք արտահայտվում են նաև այլ հարաբերություններում, մասնավորապես իշխանությունների բաժանման ընդհանուր տեսության ու դրա կիրառման «ազգային» փորձի համադրման խնդիրները լուծելիս:

Արևմտյան ակադեմիական շրջանակներում տվյալ հարցի վերաբերյալ միանշանակ պատասխան չկա, կարծիքների շրջանակը միանգամայն լայն ու տարաբնույթ է: Իշխանությունների բաժանման ընդհանուր տեսության գոյության փաստի ընդունման հետ մեկտեղ առկա է նաև «երբեք չվերջացող և միշտ

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղում **Sudlein F.** Constitutionalism After the New Deal// Harvard Law Review. 1987. Vol. 101, p. 421-457.

¹⁰⁹ Տե՛ս **Gressman E.** նշված աշխ., էջ 497:

իշխանությունների բաժանման վերաբերյալ տարաձայնությունների հանգեցնող»¹¹⁰ կարծիքը: Գիտական գրականության մեջ գոյություն ունի նաև կարծիք, որ գոյություն ունի իշխանությունների բաժանման ոչ թե ընդհանուր տեսություն, այլ պարզապես սկզբունք: Իր գործնական մարմնավորման մեջ, այն, ամերիկացի գիտնական Բ. Ջիզանի կարծիքով, ուղղված է նրան, որ լուծի ներքին հակասական խնդիրը՝ կապված պետաիրավական այնպիսի կառուցվածք ստեղծելու հետ, որը, մի կողմից «բավականաչափ իշխանական կլիներ սեփական առաքելությունը կատարելու համար, իսկ մյուս կողմից այնքան ամենագոր չէր լինի հասարակությանն ու առանձին մարդկանց ճնշելու համար: Չէ՞ որ հայտնի է, որ անսահմանափակ իշխանությունը, անկախ այն հանգամանքից, թե որ մարմնի ձեռքերում է կենտրոնացած՝ թագավորի թե պառլամենտի, միշտ պարունակում է անսահմանափակ բռնատիրության վերածվելու ռիսկը»¹¹¹:

Իշխանությունների բաժանումը, որպես սահմանադրական սկզբունք, և ոչ թե ընդհանուր տեսություն դիտարկելու հանգամանքին են հարում նաև այլ հեղինակներ: Իշխանությունների բաժանման վերաբերյալ բավականին կայուն կարծիք է համարվում, առաջին հերթին այն, որ իշխանությունների բաժանումը ոչ թե անշարժ է, այլև դինամիկ գործընթաց: Երկրորդ հերթին, այն, որ սա ոչ թե ընդհանուր տեսություն է, այլև սկզբունք, որը կապված է «իշխանության կայուն վերաբաշխման ու դրա տարբեր ճյուղերի միջև հաշվեկշռի փոփոխության հետ»¹¹²:

Իշխանությունների բաժանման տեսության աստիճանի ու բնույթի մասին արտահայտված դատողությունների հետ մեկտեղ արևմտյան գրականության մեջ առկա են նաև այլ կարծիքներ: Օրինակ, հիմնավորվում է այն տեսակետը, որ գիտական տեսության մեջ և պրակտիկայում, պետականագետներն ու իրավագետները, գործ են ունենում ոչ թե իշխանությունների բաժանման ընդհանուր տեսության, այլ՝ «պետական իշխանությունը համատեղ օգտագործող տարբեր ինստիտուտների»¹¹³ մեկը մյուսից տարանջատման հետ:

¹¹⁰ Տե՛ս **Gressman E.** նշված աշխ., էջ 491:

¹¹¹ Տե՛ս **Siegan B.** Separation of Powers and other Divisions of Authority under the Constitution // Suffolk University Law Review, 1989, N. 1, p. 17.

¹¹² Տե՛ս **Hendel S.** Separation of Powers Revisited in Light of “Watergate” // The Western Political Quarterly, 1974, N. 4, p. 575; **Janda K. Berry J., Goldmam J., Huff E.** The Challenge of Democracy. Government in America. Boston, 1990, p. 49-51.

¹¹³ Տե՛ս **Neustadt R.** Presidential Power. The Politics of Leadership. N.Y., 1980, p. 33.

Կարծիք է արտահայտվում, որ քանի որ յուրաքանչյուր անկախ պետությունում, անկախ կառավարման ձևից, իշխանությունը, վերջին հաշվով պատկանում է ժողովրդին, արմատավորվում է ժողովրդի մեջ ու գոյություն ունի ժողովրդի համար, ապա տվյալ դեպքում տրամաբանական է խոսել ոչ թե իշխանությունների, այլ՝ պետական տարբեր մարմինների գործառույթների բաժանման մասին¹¹⁴:

Հետաքրքրություն է ներկայացնում այն, որ տարբեր երկրներում ու քաղաքական իրավիճակներում իշխանությունը ժողովրդին պատկանելու վերաբերյալ առկա ելակետային վարկածի հիման վրա կատարվում են միանգամայն հակասական եզրահանգումներ:

Ինչ վերաբերում է արևմտյան երկրներին, ապա դրանցում ժողովրդի համընդհանուր և միասնական իշխանության վերաբերյալ նմանտիպ վարկածի հիման վրա եզրակացություն էր կատարվում իշխանությունների, իսկ երբեմն էլ նաև գործառույթների ձևական-իրավաբանական և փաստացի բաժանման մասին: Նույն եզրակացությունը ամրագրվում է ընթացիկ օրենսդրական ու սահմանադրական ակտերում:

Այսպես, ԱՄՆ-ի Սահմանադրությունում, որտեղ ամրագրված է իշխանության պատկանելը ժողովրդին, մինևույն ժամանակ սահմանվում է դրա փաստացի բաշխումը իշխանության տարբեր ճյուղերի միջև: Սահմանադրության 1-ին հոդվածն ամրագրում է, որ սահմանադրության մեջ ամրագրված «օրենսդրական իշխանության լիազորությունները պատկանում են Միացյալ Նահանգների Կոնգրեսին, որը բաղկացած է Սենատից և Ներկայացուցիչների պալատից»: 2-րդ հոդվածը (բաժին 1) նշում է, որ «գործադիր իշխանությունն իրականացվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի կողմից: Վերջինս իր պաշտոնում մնում է չորս տարի շարունակ...»: Իսկ համաձայն 3-րդ հոդվածի (բաժին 1)՝ «Միացյալ Նահանգների դատական իշխանությունն իրականացվում է Գերագույն դատարանի ու այն դատարանների կողմից, որոնք ժամանակ առ ժամանակ կհաստատվեն Կոնգրեսի կողմից»:

Այժմ, որպես մեջբերում կարելի է նշել, որ չնայած ամբողջականությանն ու ձևակերպվածության աստիճանի վերաբերյալ գոյություն ունեցող կարծիքների լայն շրջանակին, այնուամենայնիվ, իշխանությունների տարանջատման տեսությունը

¹¹⁴ St' u Das Politische System Osterreichs// / Hrsg. Fisher Heinz. S. p. 271-313.

գոյություն ունի, չնայած, որ այն այնքան էլ «ավարտուն» չէ:

Սկսած Ջ. Լոկից ու Շ. Մոնտեսքյոյից, որոնց անվան հետ են կապում տվյալ տեսության ակտիվ մշակումը, և վերջացրած տվյալ ոլորտի մասնագետ մեր ժամանակակիցներով, մշակված են կոնկրետ, համընդհանուր դրույթներ, որոնք կազմում են դիտարկվող տեսության հիմքը: Ստեղծվեցին իշխանությունների բաժանման կոնցեպցիայի հիմքն ու կադապարը, որոնք կարելի է դիտարկել որպես «ընդհանուր» դրա բոլոր տարատեսակների ու տարբերակների համար՝ անկախ այն հանգամանքից, թե որ երկրում, քաղաքական ինչպիսի ռեժիմում է այն ընկալվում ու մեկնաբանվում:

Իշխանությունների բաժանման տեսության հիմքը կազմող ընդհանուր և բավականին կայուն դրույթների մեջ կարելի է առանձնացնել հետևյալները.

Ժողովրդավարական համարվող յուրաքանչյուր երկրում, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները, ոչ միայն սերտորեն կապված են միմյանց հետ միասնական պետական մեխանիզմով, այլ նաև համեմատաբար անկախ են միմյանցից¹¹⁵:

Օրենսդիր, գործադիր ու դատական գործառույթներ իրականացնող պետական բարձրագույն մարմինների միջև գոյություն ունի իշխանությունների որոշակի հաշվեկշիռ, գործում է զսպումների ու հակակշիռների համակարգը:

Բոլոր երեք իշխանությունները, որպես կանոն, գործում են կայուն իրավական հիմքի վրա: Քանի որ օրենքները, ինչպես այդ առթիվ գրում էր Ջ. Լոկը, «ունեն կայուն ուժ ու կարիք ունեն իրագործման կամ դրա նկատմամբ վերահսկողության, ապա անհրաժեշտ է, որպեսզի մշտապես գոյություն ունենա այնպիսի իշխանություն», - որը կհետևի դրանց իրականացմանը¹¹⁶:

Սակայն, ամենևին էլ բոլոր ժամանակակից պետություններում չէ, որ նման իրավական հիմք գոյություն ունի: Պատահական չէ, որ ամերիկացի որոշ հեղինակներ մատնացույց են անում այն, որ ԱՄՆ Գերագույն դատարանը, անկախ իր կողմից քննվող գործերի բազմազանությունից ու ստեղծված նախադեպերից, «այդպես է չկարողացավ ավելի քան երկու հարյուրամյակի ընթացքում ստեղծել օրենսդրության պատմություն,

¹¹⁵ Տե՛ս **Монтескье III**. նշված աշխ., էջ 308-314:

¹¹⁶ Տե՛ս **Локк Дж.** Соч. Т. 3, с. 347.

որն անմիջապես կվերաբերվի իշխանությունների բաժանմանը»¹¹⁷:

Իշխանությունների բաժանման տեսության ընդհանուր կանխադրույթների մեջ անհրաժեշտ է առանձնացնել նաև օրենսդիր իշխանության գերակայությունը: Այն պահպանվում է միշտ՝ անկախ մյուս իշխանությունների հարաբերական ինքնուրույնությունից և գործունեության սահմաններից: «Այն, ինչ օրենքը կարող է ստեղծել ուրիշների համար, - պարզաբանում է Ջ. Լոկը, անհրաժեշտաբար պետք է դրանցից բարձր լինեն: Իսկ քանի որ օրենսդիր իշխանությունը իրավունք ունի օրենքներ ստեղծել հասարակության բոլոր հատվածների ու բոլոր անդամների համար՝ նրանց համար՝ սահմանելով նրանց վարքագծի կանոններ, ապա օրենսդիր իշխանությունն անհրաժեշտության դեպքում պետք է նաև գերագույն համարվի, իսկ մյուս բոլոր իշխանություններն էլ՝ բխեն դրանից ու ենթարկվեն դրան»¹¹⁸:

Իշխանությունների բաժանման տեսությունը գործնականում իրականացնելու հիմնական ու վերջնական նպատակն այն է, որպեսզի թույլ չտրվի մեկ անձի կամ անձանց խմբի կողմից պետական իշխանության բռնազավթումը և ապահովվի պետական մեխանիզմի և ողջ հասարակության ամբողջականությունը: Չնայած իշխանությունների բաժանման տեսության ընկալման որոշ տարբերություններին, շատ հեղինակներ միակարծիք են այն հարցում, որ եթե մեկ անձի կամ մարմնի ձեռքում կենտրոնացվի ողջ իշխանությունը, ապա ազատությունը նման պայմաններում չի կարող երկար գոյատևել: Իհարկե «մենք դեռևս կարող ենք քվեարկել չորս տարին մեկ անգամ: Սակայն այդ ընտրությունները, անխուսափելիորեն կվերածվեն ձևական հարցման, որտեղ քվեաթերթիկում գրանցված միակ պատասխանը կլինի «այո»¹¹⁹:

Իսկ ինչպե՞ս են իշխանությունների բաժանման տեսության հիմքը կազմող նշված և այլ դրույթները կիրառվում գործնականում: Ինչպիսի՞ գործոններ են ազդում տվյալ գործընթացի վրա: Ինչո՞վ է պայմանավորված իշխանությունների բաժանման տեսության կիրառման ազգային առանձնահատկությունը այս կամ այն երկրում: Այս և նմանատիպ այլ հարցերի համար միանշանակ պատասխան արևմտյան գրականության մեջ չկա: Սակայն, եթե փորձենք ընդհանրացնել տարաբնույթ կարծիքները և կարճ

¹¹⁷ Տե՛ս **Elliott E.** Holmes and Evolution; Legal Process as Artificial Intelligence // Journal of Legal Studies. 1984, N. 13, p. 113; **Elliott E.** Why Our Separation of Powers Jurisprudence is so Abysmal ??? The George Washington Review. 1989, N. 3, p. 507.

¹¹⁸ Տե՛ս **Локк Дж.** Соч. Т. 3, с. 350

¹¹⁹ Տե՛ս **Filzgerald G.** Congress and the Separation of Powers. N. Y., 1986, p 91

պատասխանենք այս հարցին, ապա պատասխանը մոտավորապես կինչի այսպես. ազգային առանձնահատկությունը, այնպես ինչպես իշխանությունների բաժանման տեսության վրա ներգործություն ունեցող այլ գործոններ, այս կամ այն երկրում պայմանավորվում է տվյալ երկրի զարգացման առանձնահատկություններով, դրա պետական մեխանիզմի, տնտեսության ու հասարակության զարգացման բնույթով ու մակարդակով:

Ակհայտ է, որ նման օբյեկտիվ գործոնների առկայության հետ մեկտեղ ոչ պակաս կարևոր դեր են խաղում նաև սուբյեկտիվ գործոնները (մասնավորապես իշխանությունների բաժանման տեսությունը ընդունելու կամ ժխտելու հանգամանքը): Առանց դրա պարզապես անհնարին կլինի խոսել այս կամ այն երկրում տվյալ տեսության կիրառության մասին: Սա ակնհայտ է, ինչպես այն, որ կախված իշխանությունների բաժանման տեսության ընկալման ձևից, առաջնային և հետին պլան մղվող դրույթների ձևից, պայմանավորվում է նաև դրա կիրառման բնույթն ու առանձնահատկությունները¹²⁰:

Եթե ավելի հիմնավոր պատասխանենք առաջադրված հարցերին, ապա պատասխանը ստիպված կլինենք փնտրել այս կամ այն առանձին երկրում գոյություն ունեցող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների առանձնահատկությունների մեջ¹²¹, իսկ երբեմն էլ նաև՝ միջազգային միջավայրի առանձնահատկություններում: Օրինակ, վստահաբար կարելի է ասել, որ եթե չլինեին ներկայիս զարգացած կապիտալիստական երկրները, (որոնք ներգործություն են ունենում «վերափոխված» Ռուսաստանի և նախկին միութենական երկրների վրա), զինված չլինեին իշխանությունների բաժանման տեսության սկզբունքով, ապա այն դժվար թե նույն պատրաստակամությամբ կարողանար «այս նոր ծնվող ժողովրդավարություններում» ընկալվել նոր, հատկապես արևմտամետ քաղաքական էլիտաների կողմից: Չպետք է մոռանալ, որ իշխանությունների բաժանման տեսությունը ոչ այնքան «ձևական-իրավաբանական», որքան քաղաքական ու գաղափարական տեսություն է:

Այս կամ այն երկրում սույն հայեցակարգի իրականացման գործընթացի առանձնահատկությունները շատ դեպքերում կախված են այնպիսի կոնկրետ

¹²⁰ Տե՛ս **Ladd Ev.** The Ameican Polity. The People and Their Government. N.Y., 1989, p 108-127.

¹²¹ Տե՛ս **Nippon A.** Charted Servey of Japan 1992/93. Tokyo, 1992, p. 19-22.

գործոններից, ինչպիսիք են.

1. Պետության կառավարման ձևը: Նախագահական հանրապետությունը, ինչպիսին օրինակ Ամերիկայի Միացյալ Նահանգներն է, շատ ավելի է ձգտում իշխանությունների բաժանմանը, քան Բելգիայի, Մեծ Բրիտանիայի, Շվեդիայի կամ ցանկացած այլ սահմանադրական միապետություն:

2. Պետական կառուցվածքի ձևը: Դաշնային հանրապետությունում, ի տարբերություն ունիտարի, շեշտադրվում է իշխանությունների ոչ միայն հորիզոնական (պետության կենտրոնական մարմինների միջև), այլև ուղղահայաց (Դաշնության կենտրոնի ու սուբյեկտների միջև) բաժանումը:

3. Քաղաքական ռեժիմը: Արդի ժողովրդավարական քաղաքական ռեժիմները, որպես կանոն, հայտարարում ու հետևում են իշխանությունների բաժանման տեսությանը (նվազագույնը տեսական մակարդակով), այն դեպքում, երբ ամբողջատիրական ու ավտորիտար ռեժիմները, անգամ այն դեպքում, երբ հայտարարում են իշխանությունների բաժանման տեսությանը հետևելու մասին, իրականում պահպանում են միայն իշխանական գործառույթների բաժանումը:

4. Գոյություն ունեցող պատմական, ազգային ու քաղաքական ավանդույթները, ինչպես նաև այս կամ այն երկրում ձևավորված քաղաքական փորձը:

Նշվածների հետ մեկտեղ, գոյություն ունեն նաև այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններ, որոնք ազդում են տարբեր երկրներում իշխանությունների բաժանման տեսությունն իրագործելու գործընթացի նկատմամբ: Դրանք միանգամայն բազմազան են և բազմաթիվ, դրանցից յուրաքանչյուրի առավելությունների ու թերությունների մասին առկա են վեճեր:

Անվերջանալի վեճերը արևմտյան ակադեմիական ու քաղաքական շրջանակներում ընթանում են օրենսդիր և գործադիր իշխանությունների օպտիմալ հարաբերակցության խնդիրների, ինչպես նաև դատական մարմինների տրիադայի շուրջ:

Իշխանությունների բաժանման համակարգում դատական մարմինների նշանակության վերաբերյալ մի շարք դեպքերում կարծիք է արտահայտվում, որ շեշտը պետք է դրվի այն հանգամանքի վրա, որ իշխանությունների բաժանման համակարգում դատարանը պետք է հանդես գա որպես դրանց ձևավորված հավասարակշռության

յուրօրինակ երաշխիք: Երբեմն նման դատողությունները ուղեկցվում են դժգոհություններով այն մասին, որ «վերջին տարիներին, իշխանությունների բաժանմանը շատ ավելի մեծ ուշադրություն են դարձնում միայն այն դեպքում, երբ իրավիճակը կապված է լինում իշխանության մյուս երկու ճյուղերի հետ ու գրեթե ոչ մի ուշադրություն չեն դարձնում, երբ խոսքը գնում է հենց դատական իշխանության մասին»¹²²: Սակայն, դրանով գործի բնույթը չի փոխվում:

Մյուս դեպքերում, դատարանը, իշխանությունների բաժանման համակարգում դիտարկվում է, որպես յուրօրինակ դատավոր, որպես ինստիտուտ, որը միջնորդի կարգավիճակով է հանդես գալիս օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև: Դրա հետ մեկտեղ, երբեմն մատնացույց է արվում նաև այն հանգամանքը, որ դատարանը չի կարողանում լուծել տվյալ խնդիրը: Սա, առանձին հեղինակների կարծիքով, տեղի է ունենում հատկապես այն ժամանակ, երբ մոռացվում է «իշխանությունների բաժանման գլխավոր նպատակը՝ հանրությանը և առանձին քաղաքացիներին ազատել իշխանության տարբեր մարմինների անշնորհակալ ու բռնատիրական օգտագործումից»¹²³:

Եվ վերջապես, դատարանը նեկայանում է որպես ինստիտուտ, որը կոչված է իշխանության տարբեր ճյուղերի միջև ընթացող պայքարի ընթացքում իր որոշումներով որոշակի ազդեցությունն ունենալ և «անընդհատ բարդացող համակարգը հարմարեցնել իշխանությունների բաժանման սահմանադրական պահանջներին»:

Իշխանություններից յուրաքանչյուրն, ընդ որում, պետք է ունենա սեփական, յուրօրինակ գործառնությունները»¹²⁴:

Դատարանի խնդիրների մեջ են մտնում, ոչ միայն կոնկրետ դեպքերի քննումը, որոնք վերաբերում են իշխանությունների բաժանմանը, այլ նաև, ընդհանրապես իշխանությունների բաժանման տեսությանը վերաբերող խնդիրները: Դատարանի վրա, մասնավորապես դրվում է «դեպի իշխանության մեկ այլ՝ սահմանադրական ճյուղի թափանցման աստիճանը, ինչպես նաև այն պահանջի սահմանումը, թե որքանով է այդ միջամտությունը խոչընդոտում պետական իշխանությունն իրականացնող մարմինների

¹²² Տե՛ս **Siegan B.** նշված աշխ., էջ 2:

¹²³ Տե՛ս **Shoenbrod D.** How the Reagan Administration Trivialized Separation of Powers // The George Washington Law Review. 1989. N. 3, p. 46i

¹²⁴ Տե՛ս **Strauss K.** Format and Functional Approaches to Separation of Powers Questions- A. Foolish Inconsistency ?//Comll Law Review, 1987. Vol. 72, p. 488

համատեղ գործունեությանը»¹²⁵:

Նշվածներից բացի, գոյություն ունեն նաև պետական իշխանությունների համակարգում դատական իշխանության զբաղեցրած տեղի ու դերի մասին այլ մեկնաբանություններ ու մոտեցումներ ևս: Ամեն ինչից զատ, դրանք վկայում են քննարկվող խնդրի կարևորության և միևնույն ժամանակ՝ բարդության մասին:

Այդ մասին են վկայում նաև օրենսդիր ու գործադիր մարմինների հարաբերակցության շուրջ ընթացող վեճերը: Խնդիրը, որպես կանոն, դրվում է երկու հարթությունում՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների օպտիմալ համադրության և օրենսդիր իշխանության դելեգացման սահմանում:

Օրենսդիր և գործադիր իշխանությունների հարաբերակցության օպտիմալության մասին խնդիրները դիտարկելիս, տարբեր երկրների ուսումնասիրողների, ներառյալ ամերիկացիների համար, ընդհանուր ելակետային դրույթ է հանդիսանում հետևյալը. կոնգրեսն (պառլամենտ, Ազգային ժողով) ընդունում է օրենքները, իսկ նախագահը (կառավարություն, կաբինետ) դրանք կյանքի է կոչում¹²⁶: Իշխանությունների բաժանման հայեցակարգի այս աքսիոմը երբեմն ամրագրվում է ընթացիկ օրենքներում, իսկ ավելի հաճախ՝ սահմանադրության մեջ:

Օրենսդիր և գործադիր իշխանությունների «հարաբերակցությունը» ժամանակակից պետությունների համար ծայրահեղություն է համարվում: Այն, բնականաբար, լուրջ գիտնական-սահմանադրագետների կողմից չի քննադատվում ու չի դատապարտվում:

Մինչդեռ քննարկման ենթակա են այն դեպքերը, երբ բոլոր ճյուղերն ունեն իրական և ոչ թե ձևական իշխանություն: Հենց այդպիսի և ոչ թե ծայրահեղ իրավիճակների նկատմամբ են արտահայտվում մտքեր, որոնք վերաբերում են օրենսդիր և գործադիր իշխանությունների լիազորությունների օպտիմալ բաշխման չափանիշներին, դրանց միջև հաշվեկշռի ստեղծմանը, դրանց արդյունավետությանն ու ակտիվությանը:

Իշխանությունների հաշվեկշռը, ինչպես ցույց է տալիս տարբեր երկրներում դրա ապահովման փորձը, կարող է ամենևին էլ կայուն չլինել: Մի շարք օբյեկտիվ գործոնների ազդեցության ներքո այն պարբերաբար խախտվում է հոգուտ գործադիր

¹²⁵ Տե՛ս **Barron G., Dienes C.** Constitutional Law. St. Paul (Minn), 1991, p. 135

¹²⁶ Տե՛ս **Filzgerald G.** Congress and the Separation of Powers. N. Y., 1986, p 89

կամ օրենսդիր իշխանության: Իշխանություններից յուրաքանչյուրը ձգտում է իշխանությունների բաժանման հայեցակարգն օգտագործել սեփական շահերից ելնելով¹²⁷:

Այսպես, օրինակ ԱՄՆ-ում, համաձայն ամերիկյան աղբյուրների, XIX դարում, սա ինչ որ չափով կարողանում էր կատարել օրենսդիր իշխանությունը՝ ի դեմս կոնգրեսի: Կյանքի էր կոչվում, Ջ. Մեդիսոնի և Ա. Համիլթոնի կողմից կրկնված Ջ. Լոկի հայտնի վարկածն այն մասին, որ հանրապետական կառավարման դեպքում օրենսդիր իշխանությունը, անհրաժեշտության դեպքում, պետք է գերիշխի գործադիրի նկատմամբ¹²⁸:

Ողջ XIX դարի ընթացքում ԱՄՆ պետական իշխանության համակարգում, գերակայությունը պատկանում էր կոնգրեսին: Նախագահի դերը ևս միանգամայն բարձր էր, սակայն ենթարկվում էր կոնգրեսի կամքին¹²⁹: Է. Ջեքսոնի և Ա. Լինքոլնի վարչակարգը, այս առումով, «բացառություն է հանդիսանում տվյալ կանոնից»¹³⁰:

Հետագա տարիներին իշխանությունների ճյուղերի հարաբերակցության հետ կապված իրավիճակը նշանակալիորեն փոխվեց: Մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության ներքո, ինչպես նշում են ամերիկյան քաղաքական համակարգի ուսումնասիրողները, ԱՄՆ պետական կառուցվածքի անհավասարությունը սկսեց օրենսդիր իշխանությունից աստիճանաբար անցնել գործադիր իշխանությանը: Հենց կյանքում ու հանրության գիտակցության մեջ դիտարկվում էր ամերիկյան քաղաքական համակարգը բացառապես «նախագահի ինստիտուտի անհատականացման տեսանկյունից» դիտարկելու միտումը¹³¹:

Այս տենդենցի զարգացմանը նպաստող գործոնների թվում, առաջին հերթին նշվում է արտաքին և ներքին քաղաքականության ձևավորման ու կոնֆլիկտների լուծման մեջ նախագահի ինստիտուտի նախաձեռնության ու ակտիվության ուժեղացումը: Վերլուծության են ենթարկվում մի շարք այլ՝ հիմնական ու լրացուցիչ

¹²⁷ Տե՛ս **Shoenbrod D.** նշվ. աշխ., էջ 461:

¹²⁸ Տե՛ս **Локк Дж.** Соч. Т. 3, с. 349-350.

¹²⁹ Տե՛ս **The American Presidency; Historical and Contemporary Perspectives / Eds. H. Bailey, G. Shafritz.** Chicago, 1988

¹³⁰ Տե՛ս **Curry G., Riley R., Batistifoni R.** Constitutional Government. The American Experience. N. Y., 1989, p. 147

¹³¹ Տե՛ս **Curry G., Riley R., Batistifoni R.,** Constitutional Government. The American Experience. N. Y., 1989, p. 147 -148.

գործոններ¹³²:

Սակայն, դրանցից շատերը հաճախ կասկածի տակ են դրվում¹³³: Առաջ է քաշվում պատասխան տենդենցը, որը կայանում է նրանում, որ իշխանության մի ճյուղն ուժեղացնող, իսկ մյուսը թուլացնող միտում, երկար ժամանակ է գոյություն չունի: Ընդամենը տեղի է ունենում օրենդիր և գործադիր իշխանությունների հաշվեկշռի պարբերական խանգարում¹³⁴: Այն, որպես կանոն, բացատրվում է ժամանակ առ ժամանակ ծագող ու այս կամ այն իշխանության համար ճգնաժամային հանդիսացող իրավիճակներով, ինչպես նաև պետությունների ղեկավարների, նախագահ-վարչապետների սուբյեկտիվ որակներով:

Բացի այդ, օրենսդիր և գործադիր իշխանությունների հաշվեկշռի խանգարումը որոշ գիտնականներ դիտարկում են օրենսդրության դեկլագաման պրակտիկայում: Նրանց տեսանկյունից, տվյալ գործընթացը «երոզիայի է ենթարկում ու վերջին հաշվով քայքայում է իշխանությունների բաժանման սկզբունքը»¹³⁵: ԱՄՆ-ի ու մի շարք այլ երկրների վերաբերյալ ճշմարիտ է այն, որ «իշխանությունների բաժանման» քայքայման գործընթացը կանխարգելվում է բարձրագույն դատական ատյանների կողմից¹³⁶: Սակայն, սա չի փոխում գործի բնույթը:

Խոսելով, օրենսդրության դեկլագաման նկատմամբ որոշ հեղինակների բացասական վերաբերմունքի մասին, հարկավոր է ընդգծել, որ այս հարցի վերաբերյալ առկա են նաև այլ կարծիքներ: Օրենսդրական գործառույթների դեկլագաման ամբողջական ժխտման հետ մեկտեղ, գիտական մի շարք հրապարակումներում, բազմաթիվ փաստարկներ են բերվում ի օգուտ այդ հանգամանքն ընդունելուն: Որպես տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի վրա դեկլագաման գործընթացի դրական ազդեցության օրինակ նշվում է, մասնավորապես, 1930-ական թթ.-ին՝ Մեծ դեպրեսիայի շրջանում «նախագահ Ֆ. Ռուզվելտի գլխավորությամբ կոնգրեսից դեպի գործադիր իշխանություն՝ օրենսդրական իշխանության լիազորությունների զիջման

¹³² Տե՛ս **Rockman B.** The Leadership Question; The Presidency and the American System. N. Y., 1984; **Edwards G.** Presidential Influence in Congress. San Francisco, 1990.

¹³³ Տե՛ս **Pule Ch., Pious R.** The President, Congress and the Constitution. N.Y., 1984, p. 18-52.

¹³⁴ Տե՛ս **Schlesinger A.** The Imperial Presidency. Boston, 1973; Fisher L. The Politics of Shared Power; Congress and the Executive. Washington, 1981.

¹³⁵ Տե՛ս **Handel S.** նշված աշխ., էջ 579:

¹³⁶ Տե՛ս **Weeks P.** Douglas. Legislative Power Versus Delegated Legislative Power // Georgetown Law Journal, 1937. January, p. 314.

ամերիկյան փորձ: Նմանատիպ փորձեր եղան 1970-ական թթ.-ին (Ռ. Նիքսոնի նախագահություն), իսկ մասամբ էլ 1980-ական թթ.-ին (Ռ. Ռեյգանի նախագահություն)¹³⁷:

Գոյություն ունի նաև երրորդ՝ «միջանկյալ» կարծիքը իշխանությունների բաժանման տեսությունն ընդունելու և չընդունելու վերաբերյալ: ՉԺխտելով դեկզագման գործընթացի կարևորությունը՝ տվյալ մոտեցման կողմնակիցները հարկ են համարում «իշխանությունների բաժանման» նշված գործընթացի նկատմամբ հսկողությունը թողնել դատական կամ գործող այլ մարմնի ներքո:

Գործադիր իշխանության լիազորությունները, ըստ ամերիկյան հեղինակների, կարող է ընդլայնվել հիմնականում երկու պատճառով. առաջինը՝ «կոնգրեսի վրա նախագահի հաջող ճնշման», և երկրորդ՝ «կոնգրեսի կողմից սեփական օրենսդիր գործառույթները կամավոր ձևով գործադիր իշխանությանը զիջելու» շնորհիվ: Երբ կոնգրեսը «գալիս է այն եզրահանգման, որ այս կամ այն խնդիրների լուծման նպատակով կառավարությանը մեծ իրավասություններ պետք է տրամադրվեն, ապա Նախագահը, բավականին հաճախ, ստանում է դրանք»¹³⁸:

Սակայն դա արվում է հենց կոնգրեսի կամ դատական մարմինների վերահսկողության ներքո: Բացի այդ, օրենսդրական նման առավելությունների փոխանցումը կրում է ժամանակավոր ու միանգամայն սահմանափակ բնույթ՝ այդպիսով չխախտելով օրենսդիր և գործադիր իշխանությունների հաշվեկշիռը¹³⁹: Նշվածներից բացի, արևմտյան գրականության մեջ իշխանությունների տարբեր ճյուղերի միջև հաշվեկշիռը պահպանելու վերաբերյալ գոյություն ունեն նաև մի շարք այլ տեսակետեր ու մոտեցումներ: Այն միանգամայն հասկանալի ու բնական է, եթե հաշվի առնենք իշխանությունների բաժանման տեսության բարդությունը, բազմապեկտությունը, հակասական լինելու հանգամանքը, իսկ դրա հետ մեկտեղ՝ նաև տեսական ու քաղաքական կարևորությունը:

¹³⁷ Տե՛ս **Handel S.** նշված աշխ., էջ 459-463, 579,

¹³⁸ Տե՛ս **Londa K., Berry J., Goldman J., Huff E.**, նշված աշխ., էջ 259-260:

¹³⁹ Տե՛ս **Fitzgerald G.** նշված աշխ., էջ 44-51:

2.2 Իշխանությունների բաժանման արտասահմանյան փորձի իրավահամեմատական վերլուծություն

Արդի հասարակության համապարփակ արդիականացման գործընթացում կարևորագույն ուղղություններից է հանդիսանում պետական իշխանության գործառնության արդյունավետ համակարգի ձևավորումը:

Այս առումով, գտնում ենք, որ անհրաժեշտ է համակողմանի վերլուծել և իմաստավորել իշխանությունների բաժանման հայեցակարգի կենսագործման արտասահմանյան փորձը:

Նախ և առաջ անհրաժեշտ է նշել քաղաքական համակարգերի ձևավորման ու գործունեության արտասահմանյան փորձի վերլուծությանն ուղղված մոտեցումները, որոնք հիմնված են իշխանությունների բաժանման սկզբունքի վրա՝ նկատի ունենալով դրա կիրառման հնարավորությունն ազգային պայմաններում: Դա, մի կողմից, կարող է դառնալ ինքնատիպ ուղեցույց, որը թույլ կտա ճիշտ ուղղություն ընտրել՝ հաշվի առնելով դրա օգտագործման արտասահմանյան փորձը, իսկ մյուս կողմից՝ չանցնել այն սահմանը, որից սկսվում է դրա անհարկի կրկնօրինակումը:

Նախ և առաջ անհրաժեշտ է խնդրին մոտենալ պատմական տեսանկյունից, այսինքն՝ տեսնել և հասկանալ թե ինչպես է տեղի ունեցել իշխանությունների բաժանման վրա հիմնված քաղաքական կարգի ձևավորումը, ինչպես է ընթացել դրա հետագա զարգացումը և կատարելագործումը: Այլ խոսքերով, զարգացած քաղաքական և իրավական համակարգերի մոդելների վերլուծությանը հարկավոր է մոտենալ որպես պատմական զարգացման արդյունքի:

Այնուհետև, այդ ոլորտում ձևավորված արտասահմանյան փորձը հարկավոր է դիտարկել որպես զարգացող, այլ ոչ թե ավարտված գործընթաց, բացահայտել դրա հետագա զարգացման նշմարվող միտումները:

Քաղաքական կարգի ձևավորման, գործողության գործընթացում և հենց մոդելում կարևոր է առանձնացնել այն ընդհանուր և հատուկ դրույթները, որոնց վրա հիմնված է իշխանությունների բաժանման տեսությունը այս կամ այն երկրում: Դա թույլ կտա սահմանել օրինաչափությունները և դրա հետ մեկտեղ նման համակարգի առանձնահատկությունները: Արտասահմանյան փորձի օգտագործման ընթացքում ուշադրության առարկա պետք է դառնան հենց օրինաչափությունները:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող քաղաքական և իրավական բարեփոխումների ընթացքում իշխանությունների բաժանման վրա հիմնված քաղաքական համակարգի կազմակերպման արտասահմանյան փորձի օգտագործման նպատակից ելնելով առաջարկում ենք առանձնացնել խնդրի հիմնական, բազային հարցերը: Դրանց թվին են դասվում հետևյալները.

1) իշխանությունների բաժանման տեսության առաջացման և գործնական իրականացման պատճառները, նպատակները և նախադրյալները,

2) քաղաքական մեխանիզմի կախվածությունը հասարակական կարգի բնույթից և իշխանությունից,

3) իշխանությունների բաժանման համակարգի մեխանիզմը և ձևավորման գործընթացը,

4) մոդելները, որոնք հիմնված են իշխանությունների բաժանման սկզբունքի վրա՝ ընդհանուր և հատուկ,

5) իշխանությունների բաժանման համակարգի կիրառման արդյունավետության աստիճանը և դրա սահմանները:

Այս հիմնական չափանիշներով կատարված վերլուծությունը թույլ կտա, մեր կարծիքով, մոտենալ հետևյալ հարցի պատասխանին. Հայաստանի Հանրապետության պայմաններում կարելի՞ է արդյոք և ինչպե՞ս օգտագործել իշխանությունների բաժանման վրա հիմնված քաղաքական համակարգի կազմակերպման ու գործունեության արտասահմանյան փորձը:

Համաշխարհային փորձը, նախ և առաջ վկայում է այն մասին, որ պետության քաղաքական մեխանիզմի ձևավորման ժամանակ իշխանությունների բաժանման գաղափարին դիմելը սահմանվում էր այն պատմական պայմաններով ու հանգամանքներով, որոնցում տեղի էր ունեցել կամ տեղի է ունենում տվյալ երկրի կամ երկրների խմբի զարգացումը: Այս կամ այն ժամանակաշրջանում տվյալ տեսությանը դիմած սոցիալական ուժերի կողմից հետապնդվող նպատակների առանձնահատկությունները նույնպես բացատրվում են պատմական հանգամանքներով:

Իշխանությունների բաժանման տեսության առաջացումը և դրա իրականացման սկիզբը հանդիսացավ ավատական կարգը բուրժուականով փոխարինելու գործընթացը՝

ավատական ազնվականության դեմ նոր, տնտեսապես արդեն կայացած բուրժուական դասակարգի պայքարի արդյունքը: Այն, մի կողմից, իրենից ներկայացնում էր միապետի իշխանության սահմանափակման միջոց, իսկ մյուս կողմից՝ ավատական ազնվականության իշխանական լիազորությունների սահմանափակումը հոգուտ բուրժուազիայի:

Հայեցակարգը իրենից ներկայացնում էր շահերի ու պահանջների տեսական ձևակերպում, ծնվող հասարակության սոցիալական շերտերի կողմնորոշում, իսկ դրա գործնական իրացումը ճանապարհ էր բացում դրանց տնտեսական, սոցիալ-քաղաքական և հոգևոր ինքնաիրացման համար: Դրանով հանդերձ իշխանությունների բաժանման տեսությունը հանդիսացավ քաղաքացիական հասարակության հաստատման ու քաղաքական ձևակերպման, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովման միջոցներից մեկը:

Այնպիսի պայմաններում, երբ բուրժուազիան դեռևս չէր տիրապետում ուժերի ճնշող մեծամասնությանը, որպեսզի ի գործու լինե՞ր ավատական ազնվականությանը լիարժեք հեռացնել իշխանությունից, իշխանությունների բաժանման տեսությունը հանդես եկավ նրանց միջև որպես փոխհամաձայնության հիմք, որը թույլ էր տալիս խաղաղ միջոցներով, եվոլյուցիոն եղանակով լուծել քաղաքական համակարգի արդիականացման խնդիրը, որն առաջացել էր հասարակական զարգացման մեջ ընթացող խորը սոցիալ-տնտեսական փոփոխությունների արդյունքում:

Մի խոսքով, իշխանությունների բաժանման տեսությունը և դրա կյանքի կոչելը իրենցով արտացոլում էին հասարակության ազատման գործընթացը ավատական պետությունում կախվածության ուղիներից: Արդյունքում դրվեցին բուրժուական ժողովրդավարության հիմքերը¹⁴⁰:

Հետագայում, ելնելով իշխանության համակարգում բուրժուազիայի ամրապնդման աստիճանից և քաղաքականության մեջ ժողովրդական զանգվածների էլ ավելի լայն շերտերի ներգրավումից, այս մեխանիզմը սկսեց օգտագործվել որպես հասարակության հետագա ժողովրդականացման միջոց: Տվյալ միտումն իր արտահայտությունը գտավ ներկայացուցչական մարմնի՝ պառլամենտի դերի աճի և լիազորությունների ընդլայնման մեջ՝ հատկապես 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Ընդ որում դա

¹⁴⁰ См. у **Рассказов Л.П.** Теория государства и права. Углубленный курс. М., 2015, с. 69-70:

բնութագրական էր միայն եվրոպական աշխարհամասի երկրներին, որտեղ ժողովրդական շարժումների ավանդույթներն ու մասշտաբները եղել և մնում են ավելի խորը, քան, օրինակ, ԱՄՆ-ում: Իշխանությունների բաժանման փոխզիջումային բնույթը սկսեց ավելի շատ ընկալվել ժամանակակից հասարակության բոլոր շերտերին իրենց շահերը արտահայտելու և պաշտպանելու հնարավորությունը ապահովելու, համագգային փոխհամաձայնության հասնելու իմաստով:

Դրա հետ մեկտեղ, ելնելով քաղաքական գործընթացներում լայն ժողովրդական զանգվածներին ներգրավելու և բուրժուազիայի համար պետական մեխանիզմի նկատմամբ վերահսկողությունը կորցնելու սպառնալիքի աճման աստիճանից, ի հայտ եկավ պառլամենտի գործառույթների ու դերի սահմանափակման և գործադիր իշխանության ուժեղացման հանդիպակաց միտումը: Այդ մասին են վկայում նաև ԱՄՆ-ի, Անգլիայի, ԳՖՀ-ի, Բայց ավելի հստակ տեսքով՝ Ֆրանսիայի փորձը (1958թ. Սահմանադրության ընդունումը):

Ժամանակակից քաղաքական հայեցակարգի ձևավորման վրա էական ազդեցություն է գործում այն փաստը, որ արևմտյան երկրների քաղաքական ռեժիմները ձեռք են բերել զգալի չափով ամրություն և կայունություն: Այդ իսկ պատճառով իշխանությունների բաժանման տեսության մեջ այսօր ավելի շատ շեշտը դրվում է իշխանության տարբեր ճյուղերի գործառույթների սահմանազատման վրա:

Բարձր տեխնոլոգիաների հասարակության դարում տեխնոլոգիական մոտեցման նշանակությունը ուժեղանում է նաև քաղաքականության մեջ: Հասարակությունը դառնում է էլ ավելի բարդ, որը պահանջում է կառավարման բարձր մակարդակ: Աճում է կազմակերպությունների, տարբեր կառույցների ու տարրերի փոխկապակցվածության, և հետևաբար, տվյալ կառույցները կառավարող մարմինների դերը: Այդ առումով էական նշանակություն ունի նաև էլ ավելի բարդացող սոցիալական կառուցվածքը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իշխանությունների բաժանման տեսության գործնական կիրառման մեջ զգալիորեն ընդլայնվել են նպատակային դրույթները և դրանց միայն բուրժուազիայի շահերի արտահայտմանը վերագրելը անթույլատրելի կլինեք:

Այժմ փորձենք համառոտ ներկայացնել, թե ինչպիսի կոնկրետ եզրահանգումների կարելի է գալ՝ վերլուծելով իշխանությունների բաժանման սկզբունքների վրա հիմնված

քաղաքական համակարգերի ձևավորման ու գործունեության արտասահմանյան փորձը:

Պետական շինարարության պրակտիկայում իշխանությունների բաժանման սկզբունքի հաստատման կարևորագույն պայման և նախադրյալ է հանդիսանում քաղաքացիական հասարակության և իրավական պետության ձևավորումը¹⁴¹: Այնտեղ, որտեղ չկա անհատի ազատությունը, բացակայում է իրավունքի գերակայությունը, չի կարող լինել իշխանությունների իրական բաժանում որպես պետական կառուցվածքի ժողովրդավարական սկզբունք:

Պետական իշխանության համակարգում իշխանությունների բաժանումը համապատասխանում է հասարակության բարդ և տարատեսակ, կարելի է ասել, պլյուրալիստական կառուցվածքին: Իշխանությունների բաժանման վրա հիմնված քաղաքական համակարգի հաստատման և գործունեության մեջ մեծ դեր է խաղում հասարակությունում գերիշխող քաղաքացիների արժեքների և կողմնորոշումների համակարգը: Եթե այն բացակայում է, ապա, առաջինը, անխուսափելի են սուր սոցիալական կոնֆլիկտները և, երկրորդ՝ կասկածի տակ է դրվում քաղաքական իշխանության լեգիտիմության ողջ համակարգը:

Որպես կանոն, նման իրավիճակը բնութագրական է իշխանությունների բաժանման համակարգի վրա հիմնված քաղաքական կարգի կայացման ժամանակաշրջանի համար: Խնդիրը պարզանում է, երբ խոսքը գնում է հասարակության մասին, որը ձևավորվել է բավականին մաքուր սոցիալական հողի վրա, չճանրաբեռնված անցյալի նշանակալի բեռով, սոցիալ-քաղաքական հարաբերություններով, սոցիալական խմբերով ու շերտերով, ավանդույթների և գաղափարական կարծրատիպերի զանգվածով, ինչպես, օրինակ, ԱՄՆ հասարակությունը:

Այդ գործընթացը ավելի դժվար է ընթացել եվրոպական երկրներում, որոնց պատմությունը, այդ թվում և քաղաքական պատմությունը, հարյուրամյակներ է հաշվարկվում: Հավանաբար, նույնքան բարդ այն կընթանա նաև Հայաստանի Հանրապետությունում:

¹⁴¹ Մանրամասն տե՛ս **Марченко М.Н.** Правовое государство и гражданское общество (теоретико-правовое исследование). М., 2015.

Անվիճելի փաստ է, որ պետական շինարարության պրակտիկայում իշխանությունների բաժանման սկզբունքի հաստատման գործընթացի բնույթի, ինչպես նաև դրանց կոնկրետ մոդելի վրա նշանակալի ազդեցություն են գործում հասարակությունում գոյություն ունեցող քաղաքական ավանդույթները: Գործոնների շարքին կարելի է դասել նաև իրավական և քաղաքական մշակույթի այն տիպը, որը գերիշխող է հանդիսանում:

Արտասահմանյան փորձը վկայում է, որ իշխանությունների բաժանման սկզբունքի իրացման համար անհրաժեշտ է հստակություն պետության, նրա քաղաքական կարգի և իրավական համակարգի բնույթի վերաբերյալ հարցերում: Եթե այդ հարցը լուծված չէ, եթե պայքարը շարունակվում է, ապա չի կարող ավարտվել նաև իշխանությունների բաժանման գործընթացը, քանի որ իշխանությունների բաժանման սկզբունքի հաստատման համար անհրաժեշտ է իշխանության սոցիալական միասնությունը (սոցիալական լեգիտիմությունը): Դրա բոլոր ճյուղերը պետք է սերտ փոխկապակցված լինեն միմյանց միջև, փոխլրացնեն միմյանց: Հակառակ դեպքում անհասանելի են դառնում այն նպատակները, որոնք էլ հենց հետապնդում են իշխանությունների բաժանման սկզբունքի օգտագործումը:

Պետական շինարարության պրակտիկայում, իշխանությունների բաժանման սկզբունքի մշակումն ու օգտագործումը իրականացվում էին փուլերով, ինչը բխում էր հենց հասարակության զարգացման էտապներից: Բուրժուական պետության գոյության վաղ շրջաններում դրանք լայնորեն կիրառվում էին միապետության վրա բուրժուազիայի հարձակման ժամանակաշրջաններում և սահմանափակվում կամ էլ ընդհանրապես մի կողմ էին նետվում, երբ իրավիճակը արմատապես փոխվում էր: Իշխանությունների բաժանման համակարգի օգտագործումը ժամանակակից շրջանում սահմանափակվում է իրենց իրավունքների ու ազատությունների ընդլայնման համար ժողովրդական զանգվածների պայքարի սրման ժամանակաշրջաններում: Այստեղ կարող է դասական օրինակ ծառայել 18-19-րդ դդ. պետական շինարարության պատմությունը Ֆրանսիայում: Սկզբունքորեն այդ օրինաչափությունը բնութագրական է նաև այլ երկրների համար:

Իշխանությունների բաժանման տեսությունը քաղաքական պրակտիկայում իր մարմնավորման մեջ անցել է մի շարք փուլեր, որոնք կարելի է, մեր կարծիքով, կապել

բուրժուական կոնստիտուցիոնալիզմի պատմության փուլերին:

Առաջին փուլը ընդգրկում է 18-19-րդ դարերը, որը քաղաքացիական հասարակության, բուրժուական իրավունքների ու ազատությունների հաստատման ժամանակաշրջանն է: Հենց այս փուլում ամենից վառ կերպով արտահայտվեց այս տեսության կոմպրոմիսային բնույթը՝ ֆեոդալական ազնվականության և բուրժուազիայի միջև իշխանության վերաբաժանման իմաստով: Ընդունվեցին առաջին բուրժուական սահմանադրությունները, իսկ քաղաքական իշխանության կառուցվածքի ամենատարածված ձևը սկսեց հանդես գալ սահմանադրական միապետությունը:

Երկրորդ փուլը սկսվում է 20-րդ դարի սկիզբից և տևում, մոտավորապես, մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Մի շարք եվրոպական երկրներում ընդունվում են նոր սահմանադրություններ, որոնք արտացոլում էին իշխանական շրջաններում մոնոպոլիստական բուրժուազիայի հաստատման գործընթացը և ներառում իրենց մեջ նորմեր, ինչպես նաև փոփոխություններ, որոնք ձևավորվել էին պետությունների քաղաքական համակարգերում պրոլետարական զանգվածների պայքարի ազդեցության ներքո: Տեղի է ունենում միապետական ռեժիմների տապալում խոշորագույն եվրոպական տերություններում (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա) և հաստատվում է հանրապետական կարգը, որն էլ ավելի հետևողականորեն իշխանությունների բաժանման սկզբունքը մտցնում է քաղաքական պրակտիկայի մեջ: Դա իշխանության ներկայացուցչական մարմինների իրավունքների ու ազդեցության ընդլայնման, պառլամենտարիզմի զարգացման ժամանակաշրջանն էր:

Վերջապես, երրորդ փուլը՝ հետպատերազմյան ժամանակաշրջանն է: Կապիտալիզմի ներխուժումը պետական-մենաշնորհային զարգացման փուլի մեջ, ժողովրդավարական շարժումների մասշտաբների ընդլայնումը և դրա հետ մեկտեղ՝ եվրոպական երկրների մեծամասնության տնտեսական հզորության աճը պայմանավորեցին հասարակական կյանքի բոլոր ոլորտների մեջ պետության միջամտության ընդլայնման փաստի, պետական մարմինների խնդիրների ու գործառույթների բարդացման օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը¹⁴²:

Պետական կառավարման համակարգերում և պրակտիկայում իշխանությունների

¹⁴² См. История буржуазного конституционализма. XVII-XVIII вв. М. 1983; История буржуазного конституционализма. XIX в. М. 1986.

բաժանման սկզբունքի հաստատումը երբեք և ոչ մի տեղ հարթ չի ընթացել, այլ միշտ գտնվել է իշխանության և հասարակության, ինչպես նաև իշխանության տարբեր ճյուղերի միջև սուր հակամարտություններում:

Բնութագրական է նաև այն փաստը, որ օրենքի վրա անառարկելի հիմնվելու դեպքում, որպես օրինականացման և իշխանությունների բաժանման սկզբունքի վրա հիմնված համակարգի գործունեության ապահովման միջոց պրակտիկայում լայնորեն օգտագործվել է և շարունակում է օգտագործվել սահմանադրական և ընդհանրապես իշխանության տարբեր ճյուղերի իրավական դաշտի շրջանակներից դուրս գալը (Անգլիա, ԱՄՆ): Այս դեպքում որպես քաղաքական պրակտիկայի հիմնավորում հանդես են գալիս «ավանդական իրավունքը», «նախադեպերը (պրեցեդենտները)», որոնք ձևավորում են, այսպես կոչված, «կենդանի սահմանադրությունը»: Այդպիսի կարգով հաճախ կիրառվող նորմերը հետագայում ձևակերպվում են այս կամ այն օրենսդրական ակտերում: Դրանցից շատերը, սակայն, այդպես էլ մնում են օրենքի շրջանակներից դուրս և գործում են սովորութային իրավունքի կամ փոխադարձ համաձայնության վրա:

Սոցիալական հեղափոխությունների դերը կայանում է նրանում, որ դրանք միայն արագացնում և ամրապնդում են իշխանությունների բաժանման սկզբունքի հաստատումը պետական շինարարության մեջ, բայց չեն կարող հանդիսանալ դրանց պահպանման և արդյունավետ իրագործման երաշխավոր: Դրանից հետո գործողության մեջ են մտնում արդեն այլ գործոններ:

Այսպիսով առանձնանում են իշխանությունների բաժանման համակարգի կայացման երկու ուղիներ՝ ամերիկյան և արևմտաեվրոպական (որն, իր հերթին, բաժանվում է անգլոսաքսոնականի և մայրցամաքայինի): «ԱՄՆ փորձի իմաստն ու նշանակությունը կայանում է նրանում, որ այն ինչը ստեղծվել է տեսության մեջ և պրակտիկայում, գործով ապացուցված է երկու դարերի ընթացքում պետական կառավարման քաղաքական մշակույթի ու տեխնոլոգիաների մոդելը, որը հիմնված է իշխանությունների բաժանման սկզբունքով գործող պետության նկատմամբ հասարակության գերակայությամբ:

Իսկ արևմտաեվրոպական փորձի իմաստն ու նշանակությունը կայանում է նրանում, որ պատմականորեն աճող սահմանափակումների և իշխանությունների բաժանման միջոցով դրվել են հասարակության նկատմամբ պետական

վերահսկողության որոշակի սահմաններ, մնացած վերահսկողությունը ենթարկվում է օրենքին, այլ ոչ թե իշխանության կամայականությանը¹⁴³:

Ինչպես որ երբեք չի եղել միասնական ու ամբողջական իշխանությունների բաժանման հայեցակարգը, ճիշտ նույնպես էլ չկա և չի կարող լինել իշխանությունների բաժանման սկզբունքի վրա հիմնված միասնական և կատարյալ պետական կարգի կազմակերպման համընդհանուր մոդել: Յուրաքանչյուր երկիր իր ինքնատիպությունն է մտցնում այդ գործընթացի մեջ՝ ձևավորելով, ըստ էության, իրավական և քաղաքական կառուցվածքի իր մոդելը, որն առանձնանում է մեծ կամ փոքր չափի ինքնատիպությամբ:

Ընդունված է առանձնացնել երկու դասական մոդելներ, «վեսթմինսթերյանը» (անգլիական) և «կոնսենսուսայինը» (ամերիկյան): Բայց իրականության մեջ երկրների գերակշիռ մեծամասնությունը ունեն այնպիսի պետական կառուցվածք, որոնք գտնվում են այդ մոդելների միջև: Այդ պատճառով էլ լիովին թույլատրելի է նաև այլ, քաղաքական ռեժիմների ավելի մասնատված դասակարգում: Դրա հիմքում ընկած է գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև հարաբերությունների կառուցվածքը:

Առկա են ռեժիմներ, որոնք դրսևորվում են այդ երկու իշխանությունների տարբերակմամբ, և ռեժիմներ, որոնք բնութագրվում են դրանց միախառնմամբ: Առաջին դեպքում նշված տարբերությունը կարող է ընդունել հստակ բաժանման ձև: Այդ դեպքում ակներև է նախագահական կառավարման համակարգը: Իսկ եթե բաժանումը հանդիսանում է ճկուն կամ էլ իշխանության երկու ճյուղերը համագործակցում են, ապա մենք գործ ունենք պառլամենտական համակարգի հետ: Միախառնված տիպի համակարգերում հավասարակշռությունը կարող է հակվել օրենսդրական իշխանություն կրող մարմնի օգտին (ասամբլեայի ռեժիմ) կամ էլ գործադիր իշխանությունը կրող մարմնի օգտին (ավտորիտար ռեժիմ):

Երկրի պատմության տարբեր ժամանակաշրջաններում հստակ նկատվում են իշխանության տարբեր ճյուղերի գործառույթների և արտոնությունների փոփոխությանը, վերաբաշխմանը, իրենց իրավասությունները միմյանց փոխանցելուն ուղղված միտում (գործադիր իշխանության իրավասությունների ընդլայնումը, գործադիրի նկատմամբ օրենսդիր իշխանության վերահսկողության ուժեղացումը,

¹⁴³ St 'u Универсальное и национальное в концепции разделения властей // Вести МГУ, сер. 12. Социально-политическое исследование. 1993, N 3, с. 18

դատական իշխանության գործառույթների ընդլայնումը): Այսպիսով, քաղաքական կառուցվածքի ցանկացած մոդել, որը կառուցված է իշխանությունների բաժանման սկզբունքի վրա, ներկայացնում է իրենից զարգացող մեխանիզմ, որում տեղի ունեցող փոփոխությունները արտացոլում են հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունները: Համակարգի այդպիսի կառուցվածքն ամրապնդում է դրա կայունությունը, իսկ վերջինիս միջոցով՝ հասարակության կայունությունը:

Օրինաչափություն է հանդիսանում իշխանության տարբեր ճյուղերի միջև մշտական հակամարտությունը, պայքարը:

Այդ իսկ պատճառով իշխանությունների բաժանման մեխանիզմում կարևոր գործոններից մեկը հանդիսանում է իշխանության ճյուղերի միջև անխուսափելի կոնֆլիկտների լուծման միջոցը: Դրա ընտրությունը, ամենից առաջ, սահմանվում է օրինականության աստիճանից, ինչպես նաև պայմանավորված է հասարակությունում գերիշխող ավանդույթներով, արժեքային դրույթների ու կողմնորոշումների միասնականությամբ, կոնֆլիկտի սրությամբ և խորությամբ:

Իշխանությունների բաժանման սկզբունքի վրա հիմնված համակարգի ինչպես ձևավորման, այնպես էլ և գործելու ու հատկապես փոփոխվող հասարակական պայմաններին դրա հարմարվողականության մեջ նշանակալի դեր են խաղում քաղաքական կուսակցությունները: Ավելի ճշգրիտ՝ գերիշխող կուսակցական քաղաքական համակարգը: Հենց կուսակցությունների միջոցով է հասարակությունը ընդունակ մեծ կամ փոքր ազդեցություն գործել իշխանության տարբեր ճյուղերի վրա, սատարել, վերահսկել կամ էլ սահմանափակել դրանք: Այդ իսկ պատճառով կուսակցական համակարգը հարկավոր է դիտարկել ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում որպես իշխանությունների բաժանման մեխանիզմի բաղկացուցիչ մաս:

Իշխանությունների բաժանումը ինքնուրույն չի կարող հանդիսանալ ժողովրդավարական քաղաքական ռեժիմի հաստատման ու գոյության միակ միջոցը և երաշխավորը: Այն չի կարելի համարել կատարյալ և բացարձակ: Արդյունավետությունը և, հետևաբար, իշխանությունների բաժանման սկզբունքի վրա հիմնված համակարգի արժեքն ունի իր սահմանները և կախված է բազում գործոններից:

Ֆրանսիայի, Գերմանիայի կամ Իտալիայի սահմանադրական զարգացման փորձերը վկայում են այն մասին, որ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, և ելնելով քաղաքական ուժերի հարաբերակցությունից, նմանատիպ համակարգը կարող է վերացվել: Այդ իսկ պատճառով ողջ էությունը կայանում է այն միջոցների ու չափանիշների մեջ, որոնց օգնությամբ տեղի է ունենում իշխանական գործառույթների իրական բաժանում և որոնք ճշմարիտ պատկերացում են տալիս տվյալ հասարակությունում իր պատմական, մշակութային և քաղաքական ձևում պետական իշխանության էության և բովանդակության մասին:

Այսպիսով, հիմք ընդունելով իշխանությունների բաժանման հայեցակարգային մոտեցումների արտասահմանյան փորձի ուսումնասիրության արդյունքները, կարելի է ուրվագծել կոնցեպցիայի զարգացման հետևյալ միտումները.

1. առավել հստակեցվում են իշխանության ճյուղերի գործառնական լիազորությունները, դրանք ներդաշնակվում են իշխանության տվյալ ճյուղի գործառույթներին ու ամրապնդվում են այդ լիազորությունների ինքնուրույն տնօրինման երաշխիքները,

2. ամրապնդվում են պետաիշխանական գործառույթների ներհամակարգային տարանջատման և հավասարակշռման միտումները (գործադիր և դատական իշխանությունների համակարգում),

3. հստակեցվում և ուժեղացվում են հակակշռող ու զսպող լիազորությունները,

4. ամրապնդվում են ներսահմանադրական կայունության երաշխիքները,

5. իշխանությունների գործակցությունն առավել մեծ չափով է հիմնվում համագործակցության սկզբունքի և դինամիկ հավասարակշռություն ապահովող լուծումների վրա,

6. ամրապնդվում է մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների բացահայտման, գնահատման և վերականգնման իրավական համակարգը,

7. ակնհայտ է իշխանության թևերի նորմատիվ-իրավական գործունեության ոլորտում իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա գործակցության ակտիվացումը:

Նշված ընդհանուր միտումների կողքին մեծապես կարևորվում են նաև իշխանության ճյուղերի ինստիտուտների զարգացման, դրան գործառնական դերի

հատակեցման և անհրաժեշտ ու բավարար լիազորություններով օժտելու հարցերը:

Հաշվի առնելով անցումային հասարակարգերում կայուն իշխանության բացառիկ կարևոր դերը՝ կարելի է ընդունել, որ նշված ընդհանուր միտումները արդիական են նաև մեր երկրի սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային մոտեցումների առումով, և նոր լուծումները հետագայում նույնպես կարող են որոնվել այս համատեքստում:

Ժողովրդավարական զարգացման ուղի ընտրած ցանկացած երկրում առավել վտանգավոր է, երբ իշխանությունների տարանջատված ճյուղերը դիտարկվում են ոչ թե որպես իրենց գործառնական լիազորություններն անկախաբար իրականացնող իշխանություն կրող ինստիտուտներ, այլ որպես «գործիքներ» իշխանության «իրական» կրողի ձեռքում, որպիսին, որպես կանոն, ներկայացնում է պետության գլուխը:

Տարածված է նաև այն թյուրըմբռնումը, թե իրական իշխանությունն իրականացնում է գործադիր բուրգը, իսկ պետական մյուս մարմիններն անհրաժեշտ են որպես միջոց գործադիր իշխանության համար: Անշուշտ, մարդկային հասարակության մեջ նման մոդելներ նույնպես գոյություն են ունեցել և ունեն: Սակայն իրավունքի տեսությունը նման քաղաքական ռեժիմները վաղուց բնութագրել է որպես ոչ իրավական: Որքան էլ ժողովրդավարացման ցանկությունը մեծ լինի, միևնույն է, այնտեղ, ուր երաշխավորված չէ իշխանությունների իրական տարանջատում, դրանց լիազորությունների իրականացման անկախության երաշխավորում և հակակշիռների ու զսպումների օգնությամբ հավասարակշռում, անխուսափելի են անձնիշխանության տարաբնույթ դրսևորումները՝ իրենց բացասական լուրջ հետևանքներով¹⁴⁴:

2.3 Իշխանությունների բաժանման սկզբունքը ժամանակակից իրավագիտությունում

Խորհրդային տարիներին, իշխանությունների բաժանմանը նվիրված բոլոր աշխատանքները, հայտնի պատճառներով կրում էին զուտ գաղափարական-կուսակցական բնույթ¹⁴⁵: Պաշտոնական գաղափարախոսությունը ժխտում էր

¹⁴⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, նշված աշխ. էջ 96:

¹⁴⁵ Տե՛ս, օրինակ՝ **Барнашов А. М.** Теория разделения властей; становление, развитие и применение. Томск, 1988, **Мишин А.А.** Принцип разделения властей в конституционном механизме США, М., 1984, **Абашмадзе В.В.** Учение о разделении государственной власти и его практика. Тбилиси, 1972.

իշխանությունների բաժանման ուսմունքն ու պրակտիկան՝ ընդգծելով օրենսդրական գործունեության ու օրենքների կատարման գործառույթների միավորման անհրաժեշտությունը մեկ մարմնի՝ խորհուրդների շրջանակներում:

Սահմանադրությունների զարգացման արդի փուլում մեծ տարբերություն է նկատվում իշխանությունների բաժանման տեսության հասկացության մեջ: Գոյություն ունեն մեծ թվով կարծիքներ, որոնք էապես տարբերվում են, կամ անգամ՝ բացառում են մեկը մյուսին: Օրինակ, չեն դադարում վեճերը իշխանությունների բաժանման հայեցակարգի տեղի ու դերի մասին՝ տեսության մեջ ու գործնականում: Մեկը կարծում է, որ հարկավոր է խստորեն հետևել Մոնտեսքյոյի գաղափարին, մյուսը մատնացույց է անում իշխանությունների բաժանման սույն տեսության կողմնորոշիչ բնույթը, երրորդն էլ՝ ընդհանրապես բացառում է այն: Գոյություն ունեն իշխանությունների բաժանման ընդհանուր տեսության և կոնկրետ պետությունում այն կիրառելու փորձի մասին տարբեր մեկնաբանություններ:

Վ.Վ. Իվանովը գրում է. «Տվյալ սկզբունքը (իշխանությունների բաժանման) չի հանդիսանում որևէ մտածողի կամ որևէ դարաշրջանի քաղաքական մտքի որևէ ուղղության աշխատանքի արդյունքը, պետության ու իրավունքի տեսության ու քաղաքաիրավական ուսմունքների զարգացման պատմության ընթացքում կարելի է հանդիպել պետական իշխանության բաժանման քաղաքական տարբեր հայեցակարգերի ու իրավական տարբեր սկզբունքների: Իշխանությունների բաժանման միասնական տեսության անհրաժեշտության հարցում կասկածներ չկան նաև ներկայումս՝ նշված սկզբունքի սահմանադրական ամրագրման դարաշրջանում»¹⁴⁶:

Իշխանությունների բաժանման տեսության «հստակ», «դասական» համընդհանուր ճանաչում ունեցող բաժանում ու տրամաբանորեն ավարտուն տարբերակ երբեք չի եղել, - ասվում է «Իշխանությունների բաժանում» կոլեկտիվ աշխատանքում: Եթե իշխանությունների բաժանման դասական տեսություն համարենք (ինչպես դա ոչ այնքան հիմնավորված ձևով անում են շատ հեղինակներ), հենց Մոնտեսքյոյի տեսությունը, ապա չպետք է մոռանալ, որ նրա տեսությունը երբեք և ոչ մի տեղ չի իրականացվում այն ձևով, ինչպես որ ինքն էր պատկերացնում: Այն միշտ մեկնաբանվել

¹⁴⁶ См. у **Иванов В. В.** Принцип разделения властей в Конституции США 1787 г. и Конституции Франции 1791 г.и. сравнительно-правовой анализ// Государство и право. 2000, N 12, с. 80.

է բավականին ազատորեն՝ հաշվի առնելով կոնկրետ երկրի քաղաքական, պատմական և այլ առանձնահատկությունները»¹⁴⁷: Միևնույն ժամանակ, իհարկե, ակնհայտ է, որ իշխանությունների բաժանման սկզբունքը պետք է սահմանափակ ձևով կապված լինի այն երկրի կոնկրետ պատմական, քաղաքական, գաղափարական, մշակութային և այլ առանձնահատկությունների հետ, որտեղ, որ այն իրագործվում է, և ամենին էլ ոչ այն պատճառով, որ հարկավոր է նկատի ունենալ այդ առանձնահատկությունները, այլև այն, որ «մաքուր», «դասական», «համարժեք» ձևով այն երբեք գոյություն չի ունեցել և դժվար թե կարողանա գոյություն ունենալ¹⁴⁸:

Պրոֆեսոր Լ.Մ. Էնտինը գրում է, որ «մաքուր տեսքով իշխանությունների բաժանման սկզբունքը գործնականում ծայրահեղ հազվադեպ է հանդիպում»¹⁴⁹: Նույն տեսակետն է պնդում նաև Ի.Ա. Պոլյանսկին. «փորձը ցույց է տալիս, որ գոյություն չունի իշխանությունների բաժանման տեսականորեն անթերի ու տրամաբանորեն հետևողական կառուցվածք»¹⁵⁰:

Ամեն դեպքում, չնայած տարաձայնություններին ու վեճերին, սկսած Ջ. Լոկից ու Շ. Մոնտեսքյոյից, ում անունների հետ են կապում իշխանությունների բաժանման տեսության առաջացումը ու վերջացրած ժամանակակից գիտնականներով, մշակվել են կոնկրետ, համընդհանուր դրույթներ, որոնք կազմում են տվյալ տեսության հիմքը: Ստեղծվել են իշխանությունների բաժանման տեսության հիմքն ու կաղապարը, որոնք կարելի է դիտարկել որպես հիմք՝ ցանկացած պետությունում իշխանությունների բաժանման սկզբունքն իրականացնելու համար՝ անկախ դրա բոլոր ձևերի ու տարատեսակների միջև առկա որոշակի տարբերությունների:

Իշխանությունների բաժանման հիմքը կազմող նման ընդհանուր ու ամրագրված դրույթների մեջ կարելի է առանձնացնել հետևյալները.

Առաջին հերթին, իշխանության օրենսդիր, գործադիր ու դատական ճյուղերը, սերտորեն փոխգործակցում են միմյանց հետ, սակայն, միևնույն ժամանակ ունեն նաև հարաբերական ինքնուրույնություն: Օրենսդիր, գործադիր ու դատական գործառույթներ իրականացնող պետական իշխանության բարձրագույն մարմինների միջև գոյություն

¹⁴⁷ Տե՛ս Разделение властей/ Отв. ред. **М.Н. Марченко**. М., 2004, с. 338.

¹⁴⁸ Տե՛ս Разделение властей/ Отв. ред. **М.Н. Марченко**. М., 2004, с. 342.

¹⁴⁹ Տե՛ս **Энтин Л.М.** Разделение властей. Опыт современных государств, М. 1998, с. 35.

¹⁵⁰ Տե՛ս **Полянский И.А.** Правовая природа исполнительной власти //Правоведение, 1999, N 4, с. 21.

ունի հաշվեկշիռ, առկա է զսպողականության ու հակակշիռների համակարգ: Իշխանության բոլոր երեք ճյուղերը գործում են կայուն հիմքի վրա:

Երկրորդ, իշխանությունների բաժանման կարևոր կանխադրույթը հանդիսանում է օրենսդիր իշխանության գերակայությունը: Այն միշտ պահպանվում է՝ անկախ իշխանության մյուս ճյուղերի հարաբերական ինքնուրույնության:

Երրորդ հերթին, գործնականում իշխանությունների բաժանման գլխավոր նպատակը հանդիսանում է մեկ անձի կամ անձանց խմբի կողմից պետական իշխանության ուզուրպացիայի դադարեցումը և պետական մեխանիզմի ու ողջ հասարակության ամբողջականության պահպանումը:

Կ.Վ. Վեոյախինան, առանձնացնում է նաև իշխանությունների բաժանման հետևյալ նպատակները. ա) յուրաքանչյուր ճյուղ նախատեսված է պետության որոշակի գործառույթներն իրականացնելու համար ու չպետք է փոխի, փոխարինի մյուս ոլորտներին, բ) զսպումների ու հակակշիռների համակարգի ձևավորումն ու գործունեությունը՝ իշխանության մի ճյուղը մյուսին վերահսկելու նպատակով, գ) իշխանության՝ մեկ մարմնի ձեռքում կենտրոնացվածության անթույլատրելիությունը, այլ կերպ ասած՝ միասնական համակարգի դիկտատուրայի սահմանումը¹⁵¹:

Պրոֆեսոր Ռ.Դ. Զորկինն առանձնանցնում է նաև իշխանությունների բաժանման սկզբունքի բովանդակությանը վերաբերող մի քանի պարտադիր պահանջներ. «Տվյալ սկզբունքը, այս կամ այն պետությունում իրականացվում է տարբեր կերպ: Սակայն, իրենց ողջ բազմազանության հետ մեկտեղ, իշխանությունների բաժանում առկա է միայն այն վայրերում, որտեղ օրենքն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, գործադիր իշխանությունը հիմնականում զբաղվում է օրենքների կատարմամբ ու սահմանափակվում է ենթաօրենսդրական նորմաստեղծ գործունեությամբ, ենթակա է պետության ղեկավարին կամ պառլամենտին, իշխանության օրենսդիր ու գործադիր ճյուղերի միջև ապահովված է իրավասությունների հաշվեկշիռը, դատական իշխանությունն անկախ է ու իր իրավասության շրջանակում՝ ինքնուրույն, նախատեսված են իշխանության բոլոր ճյուղերի փոխադարձ զսպման իրավական

¹⁵¹ См. у **Ведяхина К.В.** Разделение властей как принцип российского права // Право и политика. 2002, N 5, с. 16.

միջոցներ»¹⁵²:

Ինչպես նշված էր վերևում, իշխանությունների բաժանման սկզբունքի մարմնավորումն, այս կամ այն պետությունում, ունի որոշակի առանձնահատկություններ. «Իշխանությունների բաժանման գաղափարի գործնական իրականացումն առանձին երկրում ձեռք է բերում յուրօրինակ ձև», - նշում է Ն.Ի. Բլաժիչը¹⁵³: Սա պայմանավորված է մի շարք գործոններով: Նման գործոններ են հանդիսանում նաև տվյալ երկրի քաղաքական զարգացման առանձնահատկությունները, տնտեսության բնույթը, հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները: Այս ամենն էական ազդեցություն է ունենում գործնականում իշխանությունների բաժանման սկզբունքի մարմնավորման համար: Լ.Լազարևը գրում է. «Իշխանությունների բաժանման սկզբունքի աղճատման պատճառները տարբեր են ու կապված են պետության սոցիալ-քաղաքական զարգացման հակասությունների, տվյալ ոլորտում իրավական ավանդույթների բացակայության, իշխանությունների բաժանման ուսմունքի ոչ բավարար մշակվածությամբ, որը կիրառելի կլինեի երկրի կոնկրետ պայմանների նկատմամբ, դիտարկվող սկզբունքի իրականացման ոչ հետևողական քաղաքական կամքի դրսևորմամբ, իշխանական էլիտաների իրավական մշակույթի վնասվածությամբ և այլ գործոններով»¹⁵⁴:

Այս պատճառով էլ դժվար թե նպատակահարմար լինի որևէ «շաբլոն ստեղծել», որին պետք է համապատասխանի իշխանությունների բաժանման սկզբունքը բոլոր պետություններում: Միշտ հարկավոր է հաշվի առնել պետության առանձնահատկությունները և իշխանությունների բաժանումն իրականացնել այդ առանձնահատկություններին համապատասխան, սակայն այդ ամենի հետ մեկտեղ չպետք է աղավաղել տվյալ սկզբունքի հիմնական դերն ու նշանակությունը: Վ.Ի. Ռադչենկոն իրավացիորեն նշում է. «Հարկավոր է նշել, որ իրավական պետության տեսության, այդ թվում ժամանակակից արևմտյան հայեցակարգերի ուսումնասիրության սկզբունքը, չպետք է նշանակի համապատասխան ուսմունքների մեխանիկորեն փոխանցումը

¹⁵² Տե՛ս **Зорькин В.** Реализация конституционного принципа разделения властей в практике Конституционного Суда России//Конституционный Сызд как гарант разделения властей. М., 2004, с.17

¹⁵³ Տե՛ս **Блажич Н.И.** Модели разделения властей в правовом государстве; автореф. дисс. ... канд. юрид. наук. М., 2004, с. 6.

¹⁵⁴ Տե՛ս **Лазарев Л.** Конституционный Суд России в ситеме сдержек и противовесов // Конституционный Суд как гаант разделения властей. М., 2004, с. 31.

ռուսական իրականություն...: Իրավական պետության արևմտյան մոդելներին կուրորեն հետևելը, առանց հաշվի առնելու Ռուսաստանի կոնկրետ պատմական առանձնահատկությունները, կարող է հանգեցնել ոչ թե իրավակարգի առաջընթացին, այլև դուրս մղել արդեն անցած սահմաններից»¹⁵⁵: «Իշխանությունների բաժանման համընդհանուր մոդել, որն ընդհանուր կլինի բոլոր պետությունների համար՝ անկախ նրանց կառավարման համակարգի, գոյություն չունի»¹⁵⁶:

Սակայն, օբյեկտիվ գործոնների հետ մեկտեղ առկա են նաև սուբյեկտիվները, որոնցից են, օրինակ, բարձրագույն պաշտոնատար անձանց կողմից իշխանությունների բաժանման տեսության ընկալումը, տեսության այս կամ այն դրույթներն ի վնաս մյուսների առաջին պլան մղելու հանգամանքները և այլն:

Մ.Ն. Մարչենկոն գրում է. «Եթե ավելի հանգամանալի պատասխանենք առաջադրված խնդիրներին, ապա պատասխանը հարկավոր է փնտրել օբյեկտիվ և սուբյեկտիվ այն գործոնների առանձնահատկություններում, որոնք առկա են այս կամ այն առանձին վերցրած երկրներում, իսկ երբեմն էլ՝ միջազգային շրջապատի առանձնահատկություններում: Օրինակ որոշակի վստահությամբ կարելի է ասել, որ եթե կառավարող էլիտաներն իրենց զինապահոցում չունենային ժամանակակից արդյունաբերական առումով բարձր զարգացվածության երկրները, որոնք «հետոեֆորմային» Ռուսաստանի ու մյուս միութենական երկրների վրա մեծ ազդեցություն են գործում, ապա դժվար թե իշխանությունների բաժանման սկզբունքը նման պատրաստակամությամբ ընդունվեր նոր, հիմնականում արևմտամետ քաղաքական էլիտաների կողմից այս նոր «ծնվող դեմոկրատիաներում»: Չպետք է մոռանալ, որ իշխանությունների բաժանման տեսությունը ոչ այնքան «պաշտոնական-իրավաբանական», որքան քաղաքական ու գաղափարական տեսություն է»¹⁵⁷:

Տվյալ հայեցակարգի իրականացման աստիճանն ու հատկանշական առանձնահատկությունները, այս կամ այն երկրում, շատ բաներում կախված է այնպիսի կոնկրետ գործոններից, ինչպիսիք են.

- 1) պետության կառավարման ձևը,

¹⁵⁵ Տե՛ս **Радченко В.И.** Президент Российской Федерации в системе разделения властей; дисс. канд. юрид. наук. Саратов, 1995, с. 15.

¹⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ. 19:

¹⁵⁷ Տե՛ս **Марченко М.Н.** Теория государства и права. М., 2015, с. 379-380.

2) պետական կառույցի ձևը,

3) քաղաքական ռեժիմը,

4) գոյություն ունեցող պատմական, ազգային և քաղաքական ավանդույթները, ինչպես նաև ձևավորված քաղաքական պրակտիկան:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, իշխանությունների բաժանման միասնական տեսություն գոյություն չունի ու դժվար թե կարելի է ակնկալել, որ կարող է միասնական տեսակետ լինել:

Այժմ, հարկավոր է պարզաբանել, թե գործնականում ինչպես պետք է իրականացնել իշխանությունների բաժանումը:

Սույն ենթագլխում, կառավարման տարբեր ձևերը, դիտարկված են իշխանությունների բաժանման (կամ դրա բացակայության) սկզբունքի իրագործման պրիզմայի միջոցով: Ցույց է տրված, թե կառավարման որ ձևերում է, որ իշխանությունների բաժանումն իրականացվում է ամբողջությամբ, երբ է իրականացվում որոշակի աղավաղումներով, և որ դեպքում է բացակայում:

Իշխանությունների բաժանման սկզբունքը դիտարկելով կառավարման այս կամ այն ձևերում, այն պարբերաբար կհամադրենք Մոնտեսքյոյի ուսմունքի հետ, ով հանդիսանում է իշխանությունների բաժանման տեսության հիմնական ներկայացուցիչը: Դրա հետ մեկտեղ հարկավոր է նկատի ունենալ, որ Մոնտեսքյոն իր աշխատանքները գրել է 19-րդ դարի իրողություններում: Ներկայիս պետության գործառույթները, դրանց առջև կանգնած խնդիրները, հասարակական հարաբերությունները, քաղաքական ու տնտեսական իրողությունները, խնդիրներն ու մարտահրավերները տարբերվում են 19-րդ դարի նույն երևույթներից, իսկ սա Մոնտեսքյոյի գաղափարների մի մասը դարձնում է ոչ արդիական: Սակայն, նրա հիմնական քաղաքական-իրավական գաղափարները շարունակում են մինչ օրս մնալ արդիական և նախկինի պես արտահայտվում են ժողովրդավարական շատ երկրների սահմանադրական օրենսդրություններում:

Այժմ, հիմնվելով կառավարման ավանդական գիտական դասակարգումների վրա, հարկավոր է պարզել, թե ինչպես է իշխանությունների բաժանման սկզբունքը իրագործվում կառավարման այս կամ այն ձևում:

Կառավարման ձև ասելով հասկանում ենք պետության ձևի այն տարրը, որը

բացահայտում է բարձրագույն պետական իշխանության կազմակերպումը, պետական իշխանության մարմինների միջև փոխհարաբերությունների սկզբունքները, ինչպես նաև դրանց ձևավորման կարգը:

Գիտական գրականության մեջ ավանդաբար ներկայացվում է կառավարման ձևերի հետևյալ դասակարգումը. միապետություն, որը լինում է բացարձակ ու սահմանադրական (սահմանափակ): Վերջինն, իր հերթին, բաժանվում է դուալիստականի ու պառլամենտականի: Եվ հանրապետություն, որը լինում է նախագահական, կիսանախագահական, (խառը, խորհրդարանական-նախագահական) և պառլամենտական:

Մասնագիտական գրականության մեջ առկա են նաև այլ դասակարգումներ, սակայն վերը նշված դասակարգման համակարգը հանդիսանում է առավել տարածվածը, այդ իսկ պատճառով մենք կհետևենք դրան:

Բացարձակ միապետությունը բնութագրվում է պետության ղեկավարի անսահմանափակ իշխանությամբ: Միապետը հանդիսանում է իշխանության աղբյուր, և միայն նա է սահմանում դրա սահմանները նորմատիվ իրավական ակտերում, որոնք, որպես կանոն, ընդունվում են նրա անունից: Բացարձակ միապետություններում առկա է սահմանադրություն:

Միապետը լայն իրավասություններ ունի օրենսդիր, գործադիր և դատական ոլորտներում: Բացարձակ միապետություններում, ընտրական մարմինները, որպես կանոն բացակայում են: Գոյություն ունեն դրանց նմանակները՝ միապետին կից կոլեգիալ խորհրդատվական մարմինների տեսքով (օրինակ՝ Դիվանը Սաուդյան Արաբիայում կամ Խորհրդատվական խորհուրդը Կատարում): Դրանց կազմում միապետը հրավիրում է մահմեդական միության հեղինակավոր անձանց: Եթե որևէ հարցի քննարկման ժամանակ ձևավորվում է այդ միության խորհրդատվական մարմնի միաձայն կարծիքը, ապա միապետը պետք է ենթարկվի նրան ու կայացնի համապատասխան որոշում: Սա շատ գիտնականների հիմք է տալիս այսպիսի երկրներն անվանել ոչ թե բացարձակ միապետություններ, այլև կիսաբացարձակներ:

Բոլոր գործադիր մարմինները ուղղակիորեն վերահսկվում են միապետի կողմից ու քաղաքական պատասխանատվություն են կրում բացառապես նրա առջև: Անկախ դատական համակարգ նույնպես գոյություն չունի:

Այսպիսով ոչ մի կասկած չկա, որ բացարձակ միապետություններում իշխանությունների բաժանումը կամ դրա նմանը ամբողջությամբ բացակայում է: Ներկայումս բացարձակ միապետություններ են համարվում Սաուդյան Արաբիա, Կատարը, Օմանը, Բրունեյը, Բահրեյնը և այլն:

Դուլիստական միապետությունը, ինչպես հուշում է անվանումը, բնութագրվում է միապետի և պառլամենտի իշխանության բաժանումով: Սա սահմանադրական (սահմանափակ) միապետության պատմականորեն առաջին տարատեսակն է: Այստեղ արդեն առկա է իշխանությունների բաժանում:

Դուլիստական միապետություններում, բացահայտորեն գերիշխում է միապետի իշխանությունը: Նա իրավունք ունի լուծարել պառլամենտը, մերժել վերջինիս կողմից ընդունված օրենքները¹⁵⁸, հանդիսանում է զինված ուժերի գլխավոր հրամանատարը, իրավունք ունի հրապարակել ծայրահեղ դեկրետներ և երկրում ներդնել ծայրահեղ դրույթներ: Չնայած, որ միապետի ընդունած իրավական ակտերն օրենքներ չեն հանդիսանում, միևնույն ժամանակ չեն կրում ենթաօրենսդրական բնույթ:

Պետության ղեկավարի իշխանությունը սահմանափակված է միայն օրենսդրական ոլորտում, որտեղ առաջատար տեղ է զբաղեցնում պառլամենտը: Նա ընդունում է օրենքներ, այդ թվում՝ օրենքը բյուջեի մասին: Վերահսկիչ գործառույթներ, որոնք հատուկ են պետությունների մեծ մասի պառլամենտներին, դուլիստական միապետության օրենսդիր մարմինը, որպես կանոն, չունի:

Գործադիր իշխանությունն, ամբողջությամբ կենտրոնացված է միապետի ու նրա կողմից ձևավորվող կառավարության ձեռքերում (երբեմն ամրագրվում է, որ գործադիր իշխանությունը պատկանում է միապետին, օրինակ, ինչպես, որ Սաուդյան Արաբիայում է): Կառավարությունը պատասխանատվություն է կրում պետության ղեկավարի առջև, չնայած, որ սովորաբար դրույթ է ամրագրվում այն մասին, որ կառավարությունը պատասխանատու է նաև պառլամենտի առաջ: Ճիշտ է նման դրույթները, գրեթե միշտ ձևական բնույթ են կրում, քանի որ կառավարության հետ կոնֆլիկտի մեջ մտնելով՝ պառլամենտի անդամներն այդպիսով հակասության մեջ են մտնում միապետի հետ,

¹⁵⁸ Որպես կանոն, միապետի վետոն կրում է բացարձակ բնույթ, սակայն որոշ երկրներում թույլ է տրվում դրա հաղթահարելու հնարավորությունը, օրինակ՝ Քուվեյթում:

ինչը սովորաբար հանգեցնում է պառլամենտի լուծմանը¹⁵⁹:

Պառլամենտական միապետության դեպքում իշխանությունների բաժանումն առկա է, չնայած, որ դա նկատելի է որոշակի թերություններով, որոշակի սահմանափակումներով: Հիմնականում, կառավարման նման ձևին հատուկ բոլոր թերությունները կայանում են զսպումների ու հակակշիռների ոչ բավարար զարգացած համակարգի մեջ: Ամեն դեպքում, անկախ դրանից, հենց դուալիստական միապետությունն է, որ առավելագույնս համապատասխանում է Շառլ Լուի Մոնտեսքյոյի քաղաքական-իրավական գաղափարներին:

Ներկայումս, դուալիստական միապետություններ գոյություն ունեն Հորդանանում, Մարոկկոյում, Քուվեյթում:

Պառլամենտական միապետությունը ամենատարածված միապետության ձևերից է: Կառավարման այս ձևն առավել տարածված է եվրոպական մայրցամաքում:

Միապետը հանդիսանում է պետության ղեկավարը, ճանաչվում է, որպես իշխանության աղբյուր, սակայն նա, որպես կանոն, չունի պետության կառավարման իրական իրավասություններ: Նրա իշխանությունը հանդիսանում է ձևական, կրում է զուտ ներկայացուցչական բնույթ: Միապետը ստորագրում է օրենքները (կամ համաձայնվում է դրանց հետ բանավոր ձևով), օրենքի նկատմամբ վետոյի իրավունք նա չունի (Ճապոնիա) կամ կարող է ունենալ, սակայն, որպես կանոն, չի օգտվում դրանից: Երբեմն միապետն ունի թագավորական արտոնություններին համապատասխան հրամանագրեր հրապարակելու իրավունք: Սակայն, նա դա անում է կառավարության կամ դրա անդամներից մեկի հրամանով: Կառավարության նկատմամբ իշխանական որևէ իրավասություն միապետը չունի, նա չի կարող փոփոխել դրա կազմը: Միապետը կառավարությանը նշանակում է իր հրամանով, սակայն դա կրում է զուտ ձևական բնույթ:

Պառլամենտական միապետություններում իշխանությունների բաժանման սկզբունքը, չնայած խիստ աղավաղումներով, սակայն գործում է: Չէ՞ որ կառավարման պառլամենտական ձևի դեպքում, այդ թվում նաև հանրապետություններում, գործադիր իշխանությունն ամբողջությամբ պատասխանատու է օրենսդիր իշխանության առջև: Կառավարությունը պառլամենտական միապետություններում ձևավորվում է

¹⁵⁹ Տե՛ս **Чиркин В.Е.** Законодательная власть. М. 2008, с. 129.

պառլամենտի կողմից, իսկ իշխանության ղեկին գտնվելու համար, այն պետք է վայելի պառլամենտի վստահությունը: Ավելին, կոլեգիալ գործադիր մարմնի անդամները միաժամանակ հանդիսանում են պառլամենտի անդամները, ինչը հակասում է Շ. Մոնտեսքյոյի ուսմունքին, ով գրում էր, որ գործադիր իշխանությունը կործանվում է, երբ օրենսդիր իշխանությունը սկսում է մասնակցություն ունենալ գործադիր իշխանության գործառույթներին:

Կառավարման հանրապետական ձևը հանդիսանում է առավել տարածվածը:

Կառավարման հանրապետական բոլոր ձևերից, նախագահական հանրապետությունն առավելագույնն է համապատասխանում այն գաղափարներին, որոնց հարում էր Մոնտեսքյոն:

Նախագահական հանրապետությունում նախագահը հանդիսանում է պետության ղեկավարն ու ղեկավարում է գործադիր իշխանությունը: Բավականին հաճախ նախագահական հանրապետությունների սահմանադրություններում ամրագրվում է այն հանգամանքը, որ գործադիր իշխանությունը պատկանում է բացառապես նախագահին, իսկ նախարարները պարզապես օգնում են նրան: Սակայն, մի շարք դեպքերում, նախագահական հանրապետությունների սահմանադրությունները ամրագրում են նաև, որ գործադիր իշխանությունը նախագահի կողմից իրականացվում է նախարարների հետ միասին (օրինակ, 1996 թվականի Բոլիվիայի սահմանադրություն, հոդվ. 88): Երբեմն, նախագահները ստեղծում են նախագահի կաբինետ (խորհրդակցական մարմին, որը կոլեգիալ որոշումներ չի ընդունում, դրանք ընդունում է նախագահը, օրինակ Բրազիլիայում, Մեքսիկայում, ԱՄՆ-ում): Նախարարները նշանակվում են նախագահի կողմից, չնայած, որ մի շարք երկրներում դա պահանջում է պառլամենտի պալատներից որևէ մեկի հաստատումը:

Մի շարք նախագահական հանրապետություններում նախագահը գուրկ է օրենսդրական նախաձեռնության իրավունքից (բացի ամենամյա բյուջեն ներկայացնելուց), սակայն ունի հարաբերական վետոյի իրավունք, որը կարող է հաղթահարվել պառլամենտում ձայների որակյալ մեծամասնությամբ:

Նախագահը բոլոր հարցերի վերաբերյալ հրապարակում է ենթաօրենսդրական ակտեր:

Գրեթե միշտ, նախագահական հանրապետությունում նախագահն ընտրվում է

պառլամենտից անկախ (ուղիղ կամ անուղղակի քվեարկությամբ):

Եթե գոյություն ունի գործադիր իշխանության կոլեգիալ մարմին, ինչը հազվադեպ է լինում նախագահական հանրապետություններում, ապա այն, որպես կանոն, ձևավորվում է ոչ կառավարական ուղով: Նման մարմինը նախագահական հանրապետություններում կրում է կոլեգիալ որոշումներ, սակայն միայն այն հարցերով, որոնց քննարկումը հանձնարարում է նախագահը (Եգիպտոս, Սիրիա և այլն)¹⁶⁰: Նախագահական հանրապետությունը բնութագրվում է իշխանությունների բաժանման սկզբունքի առավելագույն հստակությամբ:

Միևնույն ժամանակ, նախագահական հանրապետությունում գոյություն ունի «զսպումների ու հակակշիռների» արդյունավետ համակարգ, որի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ պառլամենտը, որպես կանոն, չի կարող կառավարությանը (նախարարներին) արձակել: Իսկ ահա նախագահը, իր հերթին, չի կարող բաց թողնել պառլամենտը (դրա պալատներից մեկը), ինչը պառլամենտին թույլ է տալիս առանց կաշկանդվելու վերահսկել գործադիր իշխանության գործունեությունը:

Գործադիր իշխանության առանձին պաշտոնատար անձանց պաշտոնանկ անելու անհնարինությունն ապահովում է դրա կայունությունն ու անկախությունը պառլամենտից, ինչն ամբողջությամբ համապատասխանում է Մոնտեսքյոյի գաղափարին՝ օրենսդրական իշխանությունից գործադիր իշխանության հարաբերական անկախության մասին: Միևնույն ժամանակ, սեփական պարտավորությունները արդյունավետ կատարելու համար նախագահին անհրաժեշտ է պառլամենտի օժանդակությունը: Սա, հատկապես նկատելի է ԱՄՆ-ում, որտեղ նախագահի լիազորություններն ընդլայնվում են «Սենատի համաձայնությամբ ու խորհրդով»:

Նախագահական հանրապետությունն առավելապես տարածված է Լատինական Ամերիկայի երկրներում, ԱՄՆ-ում, ինչպես նաև Եգիպտոսում:

Պառլամենտական-նախագահական (կիսանախագահական, խառը) հանրապետությունը բնութագրվում է նրանով, որ նախագահը, հանդիսանալով պետության ղեկավարը, որպես կանոն, չի հանդիսանում գործադիր իշխանության ղեկավարը, չնայած, որ նշանակալի դեր է խաղում գործադիր ոլորտում: Սակայն, երբեմն,

¹⁶⁰ St' u **Черкасов А. И.** Глава государства и правительство в странах современного мира; конституционно-правовое регулирование и практика. М., 2006, с. 24.

սահմանադրությունները սահմանում են երկգլուխ գործադիր իշխանություն, որը պատկանում է երկրի ղեկավարին (նախագահին) ու կառավարությանը՝ վերջինիս ինքնուրույնության որոշակի մասնաբաժնով (Ֆինլանդիա, Ֆրանսիա)¹⁶¹:

Լ.Մ. Էնտինը նույնպես նշում է գործադիր իշխանության երկակի բնույթը՝ կառավարման խառը ձև ունեցող երկրներում. «Կառավարման խառը ձև ունեցող երկրներում հակակշիռների համակարգը նույնպես յուրահատուկ է: Օրինակ, գործադիր իշխանությունն այնտեղ կրում է երկակի բնույթ: Այն բաժանված է հանրապետության նախագահի ու կառավարության միջև»¹⁶²:

Ռուսաստանի Դաշնությունում գործադիր իշխանության երկակիության մասին գրում է Դ.Ա.Ավդեևը. «...իշխանական իրավասությունները, որոնք մի կողմից իրականացվում են նախագահի, և մյուս կողմից՝ կառավարության կողմից, միասին ձևավորում են գործադիր իշխանության երկակի բնույթը»¹⁶³:

Պառլամենտական-նախագահական հանրապետություններում պարտադիր գոյություն ունի գործադիր իշխանության կոլեգիալ մարմին:

«Պետության ղեկավարի դերը, որպես գործադիր իշխանության ղեկավար, կարող է լինել անմիջական ու չամրագրվել հիմնական օրենքում: Վերջին ժամանակներում, մի շարք երկրներում (հիմնականում կառավարման խառը ձևերով) միտում է նկատվում պետության ղեկավարին պաշտոնապես գործադիր իշխանությունից առանձնացնելու, նրա արբիտրաժային գործառույթները շեշտադրելու ուղղությամբ»,- գրում է Ա.Ի. Չերկասովը¹⁶⁴: Խոսելով նախագահի իրավարար գործառույթների մասին՝ գրում է. «Ընդհանրապես, եթե կառավարման նախագահական ու պառլամենտական ձևերը օրենսդիր ու գործադիր իշխանությունների փոխազդեցության պլանում հիմնականում հանդես են գալիս որպես «ինքնականոնակարգվող համակարգեր,- ապա խառը ձևերը ենթադրում են արտաքին արբիտրի (դատավորի) առկայություն, ով կանգնած է այդ իշխանությունների գլխին, ապահովում է նրանց նորմալ փոխազդեցությունն ու

¹⁶¹ Տե՛ս **Чиркни В.Е.** նշված աշխ., էջ 128:

¹⁶² Տե՛ս **Чиркни В.Е.** նշված աշխ., էջ 128:

¹⁶³ Տե՛ս **Энтин Л. М.** Разделение властей. Опыт современных государств. М., 1995, с. 36

¹⁶⁴ Տե՛ս **Авдеев Д. А.** Принцип разделения властей как способ организации власти// Разделение властей в современной России; проблемы и перспективы. Материалы Всероссийской научно-практической конференции 21-22 октября 2008 года/ Под. ред. М. С. Матейковича. Тюмень, 2008, с. 120

նպաստում է նրանց միջև հակասությունների լուծմանը»¹⁶⁵:

Գոյություն ունի պառլամենտական-նախագահական կառավարման մի քանի ձև: Գլխավոր տարբերությունը կայանում է կառավարության ձևավորման կարգի և պետության ղեկավարի իրավասությունների ծավալի միջև:

Կառավարությունը պառլամենտական-նախագահական հանրապետությունում միշտ ձևավորվում է պառլամենտի մասնակցությամբ: Այդ մասնակցությունը, սակայն, կարող է լինել քիչ կամ շատ նշանակալի:

Կառավարության ձևավորման ոչ պառլամենտական ձևի դեպքում պառլամենտը նախագահին միայն համաձայնություն է տալիս կառավարության ղեկավարին նշանակելու համար:

Կառավարման պառլամենտական ձևի դեպքում կառավարությունը, գերակայորեն, ձևավորվում է այն կուսակցությունների անդամներից, որը պառլամենտական ընտրությունների ժամանակ հավաքում է ձայների բացարձակ մեծամասնությունը: Կառավարության ձևավորման այս կարգը պառլամենտական-նախագահական հանրապետությունը նմանեցնում է պառլամենտական հանրապետության հետ: Հիմնական տարբերությունը կայանում է միայն նրանում, որ նախագահը, որպես կանոն, ընտրվում է համաժողովրդական քվեարկության ժամանակ, ու ունի փոքր-ինչ ավելի իրավասություններ, քան նախագահը պառլամենտական հանրապետությունում:

«Կիսանախագահական հանրապետությունների թիվն ունի աճման միտում. գրում է Վ.Ե. Չիրկինը: Հատուկ պայմաններում են գտնվում անցումային շրջանի պետությունները, դրանցում ձևավորվում է յուրօրինակ նախագահական իշխանություն... Նախագահական իշխանությունն ընդունում է յուրօրինակ բնույթ, այն ավելի է «նշմարվում» որպես պետական իշխանության հատուկ ձև, արբիտրաժային դիրք է զբաղեցնում դրա մյուս ճյուղերի նկատմամբ»: Կառավարման խառը ձև ունեցող հանրապետությունը երբեմն անվանում են իշխանությունների բաժանման դիրքային-գերիշխող մոդել¹⁶⁶:

Պառլամենտական հանրապետությունը բնութագրվում է նրանով, որ պառլամենտի կողմից ձևավորվող կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում

¹⁶⁵ Տե՛ս **Черкасов А.И.** նշված աշխ., էջ 5:

¹⁶⁶ Տե՛ս **Чиркин В.Е.** նշված աշխ., էջ 129-130:

պառլամենտի առաջ, որն ամբողջությամբ վերահսկում է նրա գործունեությունը: Պաշտոնապես կառավարության բոլոր անդամներին նշանակում է նախագահը, սակայն դա անում է ոչ թե սեփական հայեցողությամբ, այլ՝ հիմք ընդունելով պառլամենտում (դրա պալատներից մեկում) մեծամասնություն կազմող կուսակցությունների կառավարություն ձևավորելու մասին որոշումը:

Նախագահը բոլոր ակտերը ստորագրում է կառավարության հրամանով: Նախագահի կողմից առաջարկվող կառավարության կազմը պետք է վստահության քվե ստանա պառլամենտում և միայն դրանից հետո նախագահն իրավասու է նշանակել կառավարության անդամներին: Նոր կառավարության ձևավորման ժամանակ պառլամենտի կողմից կառավարության հանդեպ ցուցաբերած անվստահության քվեն հանգեցնում է կամ վերջինիս լուծարմանը, կամ՝ պառլամենտի լուծարմանը և արտահերթ պառլամենտական ընտրությունների անցկացմանը:

Նախագահը հանդիսանում է պետության ղեկավարը, չնայած, որ նրա իրավասությունները, ինչպես պառլամենտական միապետության դեպքում, կրում են հիմնականում ներկայացուցչական, ձևական բնույթ և իրականացվում են կառավարության նախաձեռնությամբ կամ համաձայնությամբ: Նախագահը ընդունում է իրավական ակտեր, որոնք, սակայն, օրինական ուժ են ստանում բանավոր (Հնդկաստան) կամ գրավոր (Բուլղարիա) հաստատվելուց հետո: Պառլամենտի կողմից ընդունվող օրենքները ստորագրվում են նախագահի կողմից, սակայն պետք է ստորագրվեն նաև կառավարության ղեկավարի կամ պատասխանատու նախարարի կողմից:

Գործադիր իշխանությունը պառլամենտական հանրապետությունում ղեկավարվում է այն կառավարության կողմից, որը քաղաքական պատասխանատվություն է կրում պառլամենտի առաջ, ինչը հակասում է Շ. Մոնտեսքյոյի գաղափարներին՝ գործադիր իշխանության հարաբերական անկախության մասին: Ճիշտ է. Վ.Ե. Չիրկինն, այս առումով նշում է, որ «Կառավարության պատասխանատվությունն ու քաղաքական գծի նկատմամբ կառավարության կամ պետության ղեկավարի կողմից իրականացվող վերահսկողությունը չի բացառում կառավարության գործունեությունը նրա համար որոշակի ոլորտում և նրա իրավասությունների շրջանակում: Այս սահմաններում, կառավարությունը, գործադիր իշխանության մյուս մարմինները, պաշտոնատար

անձինք գործում են ինքնուրույն՝ ընտրելով գործունեության համապատասխան ձևերն ու մեթոդները» (օրենքի սահմաններում): Այս իմաստով գործադիր իշխանությունն անկախ է օրենսդրականից»¹⁶⁷:

«Կառավարման պառլամենտական ձև ունեցող երկրներում առկա է իշխանության տարբեր ճյուղերի փոխադարձ կապ ու փոխադարձ կախվածություն,- գրում է Ե.Ե Պոկոշենկովան,- ինչը նրանց միջև պատնեշներն ավելի քիչ հստակ է դարձնում»¹⁶⁸: Կառավարման պառլամենտական ձև ունեցող երկրների նկատմամբ երբեմն օգտագործվում է «իշխանությունների սիմֆոնիա» տերմինը, որի համաձայն իշխանությունների բաժանումը չպետք է շատ խիստ լինի¹⁶⁹:

Հիմնականում կառավարման պառլամենտական ձև ունեցող շատ պետությունների սահմանադրություններ, պետության ղեկավարին ընդգրկում են կառավարման ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդրական ճյուղերի մեջ: Նման դրույթների կարելի է հանդիպել Ավստրալիայի, Կանադայի, Հնդկաստանի, Յամայկայի, Իռլանդիայի, Դանիայի, Իսլանդիայի սահմանադրություններում:

«Անկախ իշխանությունների բաժանման համակարգում պետության ղեկավարի զբաղեցրած տեղից ու դերից, նրա իրական սահմանադրական իրավասությունների վերլուծությունը վկայում է նախ և առաջ գործադիր իշխանությունում պետության ղեկավարի մասնակցության մասին: Հարկ է նշել, որ հենց իշխանությունների բաժանման հայեցակարգի տրամաբանությունը թելադրում է գործադիր իշխանության համակարգում պետության ղեկավարին ընդգրկելու անհրաժեշտությունը (եթե ոչ դե յուրե, ապա դե ֆակտո),- եզրակացնում է Ա.Ի. Չերկասովը»¹⁷⁰:

Սակայն, պետության ղեկավարը, որը դուրս է գտնվում իշխանությունների բաժանման համակարգից, տեսականորեն որոշակի աղավաղում է մտցնում իշխանությունների բաժանման սկզբունքում: Ընդ որում, շատ հետազոտողներ այն չեն դիտում իշխանությունների բաժանման սկզբունքի խախտում: Այս կապակցությամբ Վ.Ե. Չիրկինը գրում է. «Մեր օրերում շատ երկրների պրակտիկան վկայում է, որ իշխանությունների բաժանման հայեցակարգը, որն հանդիսանում է

¹⁶⁷ Տե՛ս **Чиркин В.Е.** Президентская власть // Государство и право, 1997, N 5 с. 23.

¹⁶⁸ Տե՛ս **Покошенкова Е. Е.** Разделение властей как принцип механизма осуществления государственной власти в Российской Федерации; автореф. дис.... канд. наук, М. 2003, с. 11.

¹⁶⁹ Տե՛ս **Чиркин В. Е.** Контрольная власть. М., 2008, с. 63-64.

¹⁷⁰ Տե՛ս **Черкасов А.И.** նշված աշխ., էջ 26-27:

ժողովրդավարության մեկնարկ, ունի, նախ և առաջ, կողմնորոշող բնույթ և ոչ մի տեղ, գոնե արդի պայմաններում, չի իրականացվում ու, ըստ էության, «մաքուր» ձևով չի էլ կարող իրականացվել»¹⁷¹: Այսինքն, համաձայն գիտնականի կարծիքի, սարսափելի ոչինչ չկա նրանում, որ պետության ղեկավարը միաժամանակ մտնում է իշխանության ինչպես գործադիր, այնպես էլ օրենդրական ճյուղի մեջ, կամ էլ գտնվում է իշխանությունների բաժանման համակարգից դուրս: Կարևորն այն է, որպեսզի բացառվի պետական իշխանության ուզուրպացիայի հնարավորությունը և մարդու իրավունքների զանգվածային խախտումները, այսինքն այն՝ ինչը չպետք է թույլ տա իշխանությունների բաժանման սկզբունքը: «Նախագահական իշխանության բնույթը,- գրում է Ա.Վ. Վասիլևը,- չի կարելի «խստորեն» կապել իշխանությունների բաժանման տրիադայի տարրերից մեկի հետ՝ հատկապես կառավարման որոշակի ձևերի պարագայում»¹⁷²:

Չի կարելի չնշել սոցիալիստական երկրներում կառավարման ձևի մասին: Դրանց իրավական ուսմունքը չի ընդունում իշխանությունների բաժանման սկզբունքը: Սոցիալիստական երկրներում բոլոր մարմինները բաժանվում են՝ պետական իշխանության մարմինների (հիմնադիր կամ ներկայացուցչական մարմիններ, դրանց մշտապես գործող մարմիններ, ինչպես նաև պետության ղեկավարը), պետական կառավարման մարմինների (կոլեգիալ գործադիր- հրահանգիչ մարմիններ, նախարարություններ, գերատեսչություններ), ինչպես նաև իրավապաշպան մարմիններ (դատարաններ, դատախազություն):

Սոցիալիստական որոշ երկրներում պետության ղեկավարի դերը կատարում են պետական իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմինների գործող կոլեգիալ մարմինները (պրեզիդիումներ): Պրեզիդիումի կազմի մեջ են մտնում ղեկավարը, նրա փոխարինողը, ինչպես նաև անդամները: Երբեմն նախատեսվում է քարտուղարի պաշտոնը:

Այսպիսով, անկախ իշխանությունների բաժանման սկզբունքից հրաժարվելուց, սոցիալիստական երկրներում միանգամայն հստակորեն առանձնացվում են ներկայացուցչական, գործադիր-կարգադրիչ և դատական մարմինները:

Ինչպես արդեն նշվեց, աշխարհի պետությունների մեծ մասը, սահմանադրական

¹⁷¹ Տե՛ս **Чиркин В. Е.**, նշված աշխ., էջ. 30-31:

¹⁷² Տե՛ս **Васильев А.В.** Разделение властей: теоретические аспекты и современная практика //Право и государство; теория и практика. 2006, N 7, с. 5.

մակարդակով ամրագրել են այն դրույթը, որ պետական իշխանությունը բաժանվում է երեք ճյուղի՝ օրենսդրական, դատական և գործադիր: Սակայն, բավականին հաճախ, հանդիպում են նաև բացառություններ: Երբեմն, գոյություն ունեն պետական իշխանության նաև այլ ճյուղեր, որոնց թիվը, ըստ անվանումների միագումարի, տարբեր սահմանադրություններում հասնում է վեցի, գիտական գրականությունում՝ ավելի¹⁷³: «...Պետական իշխանությունների հիմնական համակարգում գոյություն ունեն նաև այնպիսի «իշխանություններ», որոնք չեն դասվում ոչ օրենսդրական, ոչ գործադիր և ոչ էլ դատական իշխանությունների շարքին: Դրանք բնութագրվում են ոչ միայն իրենց յուրահատկությամբ, այլ նաև ինքնուրույնությամբ, պետական իշխանության մյուս մարմիններին չենթարկվելու հատկությամբ», - գրում է Վ.Ե. Չիրկինը¹⁷⁴:

Այսպես, Թայվանի սահմանադրությունը, որն ընդունվել է 1947 թվականին, նախատեսում է իշխանության վեց ճյուղ: Դրանք են՝ հիմնադիր՝ ի դեմս ազգային ժողովի, օրենսդիր՝ ի դեմս օրենսդրական պալատի, գործադիր՝ ի դեմս, մի կողմից նախագահի ու փոխնախագահի, իսկ մյուս կողմից՝ գործադիր պալատի, դատական՝ ի դեմս արդարադատության պալատի, որը վերահսկվում է վերահսկիչ պալատի կողմից¹⁷⁵: Սակայն, չի կարելի միանշանակ ասել, որ նշված բոլոր մարմինները ձևավորում են իշխանության ինքնուրույն ճյուղեր:

Որոշ երկրներում, սահմանադրական մակարդակով ամրագրված է պետական իշխանության այնպիսի ճյուղ, ինչպիսին է ընտրական իշխանությունը (Նիկարագուա, Կոլումբիա): Իր իրավական արտահայտությունն այն գտել է բոլոր մակարդակների ընտրություններում ու հանրաքվեներում քաղաքացիների պարտադիր քվեարկության կանոնի սահմանման մեջ: Ընտրություններին չներկայանալու համար նախատեսված է պատասխանատվություն:

Իշխանության ընտրական ճյուղը իր կազմակերպական արտահայտությունը ստանում է հատուկ մարմինների՝ ընտրական դատարանների (օրինակ Բրազիլիայում), ընտրական ռեգիստրների և ընտրական հանձնաժողովների ստեղծման մեջ:

1999 թվականի Վենեսուելայի Սահմանադրությունում ամրագրված է քաղաքացիական իշխանությունը: Այն իրականացվում է բարոյականության հարցերով

¹⁷³ Տե՛ս **Чиркин В. Е.** Президентская власть //Государство и право, 1997, N 5 с. 15-23.

¹⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 16:

¹⁷⁵ Տե՛ս **Чиркин В. Е.** Законодательная власть, М. 2008, с. 126.

խորհրդի կողմից, որի մեջ մտնում է մարդու իրավունքների պաշտպանը, գլխավոր դատախազը և գլխավոր վերահսկիչը: Քաղաքացիական իշխանության մարմիններ են հանդիսանում նաև ժողովրդի պաշտպանության, գլխավոր վերահսկիչի ու դատախազության հաստատությունները:

1976 թվականի Կուբայի հիմնական օրենքն ամրագրում է իշխանության հիմնադիր ճյուղը: Շատ պետություններ ունեն նաև հիմնադիր իշխանություն, չնայած, որ դա ամրագրված չէ նրանց սահմանադրություններում: «... Որոշ երկրներում հիմքեր կան, որպես իշխանության գլխավոր ճյուղ հիմնադիր իշխանությունն ամրագրելու համար», - գրում է Ստրաշունը¹⁷⁶: Որպես օրինակ, բերվում են Բուլղարիայի մեծ ազգային ժողովը, Լեհաստանի ազգային ժողովը, ինչպես նաև ֆակուլտատիվ մամինները՝ Կոնգրեսը Ֆրանսիայում, Կոնվենտը ԱՄՆ-ում: «Հարկավոր է, սակայն, ընդունել, որ այս պարագայում բացակայում է իշխանությունների հավասարակշռումը»¹⁷⁷: Կարծիք կա, որ հազիվ թե կարելի է հիմնադիր իշխանությունը պետական համարել: Սա հանրային իշխանության մեկ այլ տեսակ է:

Այն պետություններում, որոնց սահմանադրություններն ամրագրում են իշխանության ընդամենը երեք ճյուղ, կարելի է առանձնացնել այնպիսի մարմիններ, որոնք չի կարելի դասել այդ ճյուղերից և ոչ մեկին: Համաձայն Վ. Ե. Չիրկինի կարծիքի՝ իշխանությանների դասական եռյակի առանձնացումը չի արտացոլում իշխանությունների բաժանման մոդելի գոյություն ունեցող ողջ բազմազանությունը¹⁷⁸: Նա կարծում է, որ փաստացի առանձնացվում է իշխանության վերահսկիչ ճյուղը¹⁷⁹: «Դրա հետ մեկտեղ, պետական կառավարման նոր ոլորտները պայմանավորում են պետական իշխանության ապակենտրոնացումը, հանգեցնում նոր մարմինների ու պետական կառավարման միջոցների, իսկ հետևաբար նաև՝ պետական իշխանության նոր ճյուղերի ձևավորման հնարավորությանը, - գրում է նա «Վերահսկիչ իշխանություն»¹⁸⁰ աշխատանքում:

Տ.Ն. Ռադկոն պետական իշխանության դասական ճյուղերին ավելացնում է

¹⁷⁶ St' u Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть /Рук. авт. колл и отв. ред. **Страшун Б. А.**, с. 306

¹⁷⁷ St' u Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть /Рук. авт. колл и отв. ред. **Страшун Б. А.**, с. 307

¹⁷⁸ St' u **Чиркин В. Е.** Конституционное право; Россия и зарубежный опыт, М. 1998, с. 246.

¹⁷⁹ St' u Сравнительное конституционное право; Учебн. пособие/Отв. ред. **В. Е. Чиркин**, М. 2002, с. 243.

¹⁸⁰ St' u **Чиркин В. Е.** Контрольная власть. М., 2008, с. 57.

իշխանության նախագահական ու վերահսկողական ճյուղը¹⁸¹:

Երբեմն սահմանադրական մակարդակով ամրագրվում են այնպիսի պետական մարմիններ, որոնք չի կարելի դասել իշխանության ավանդական ճյուղերից և ոչ մեկում: Այսպես, Կոլումբիայի 1991 թվականի Սահմանադրության 116-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանության երեք ճյուղերի հետ մեկտեղ, պետական գործառույթների իրականացման համար գոյություն ունեն այլ «անկախ մարմիններ»: Սա, օրինակ դատախազությունն է, կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հսկիչ պալատները, գլխավոր վերահսկիչները (վերջին երկուսը տարածված են Լատինական Ամրիկայի երկրներում): Բոլոր այս մարմինները երբեմն ունենում են կարևոր իշխանական իրավասություններ: Ընդ որում, հատկապես ընդգծվում է վերջիններիս անկախ կարգավիճակը:

¹⁸¹ Տե՛ս **Радько Т. Н.** Теория государства и права. М., 2005, с. 140-153.

ԳԼՈՒԽ 3

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1 Պետական միասնական իշխանությունը և իշխանությունների բաժանման սկզբունքը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի իրավաքաղաքական մեխանիզմում ընթացող խորը բարեփոխումների ժամանակաշրջանում իշխանությունների բաժանման տեսությանը դիմելը, անկասկած, արդարացված է: Ավելի քան 70 տարի գերիշխած խորհրդային քաղաքական համակարգը, որը կառուցված էր մեկ (կոմունիստական) կուսակցության շուրջ, նրա կողմից անցկացվող շարժումը և ուղղորդումը, ցույց տվեց իր գործունեությունն արտակարգ պայմաններում, երբ պահանջվում էր խիստ վարչական մեթոդների կիրառությունը: Սակայն ազատ շուկայական տնտեսության պայմաններում, հասարակական զարգացման ժողովրդավարական փուլում, և հատկապես հերթական արդիականացում անցկացնելու անհրաժեշտության առջև այն անարդյունավետ դուրս եկավ:

Այն ժամանակ, երբ հասարակության հետագա առաջընթացն ուղղակի կախվածության մեջ ընկավ ազատության, անկախության, տնտեսական ինքնուրույնության, քաղաքացիների ու տնտեսավարող սուբյեկտների նախաձեռնողականության և ակտիվության աստիճանից, վարչահրամայական համակարգը ի վիճակի չէր վերակառուցվել (վերափոխվել) և ապահովել անհրաժեշտ սոցիալ քաղաքական պայմանները հասարակական արդիականացումն իրականացնելու համար:

Իշխանությունների բաժանման սկզբունքի վրա հիմնված պետաիրավական համակարգի գործունեության համաշխարհային փորձն ապացուցեց իր նշանակալի մեծ ճկունությունը և հարմարվողական ներուժը: Չնայած, որ այդ համակարգը չունի բացարձակ կայունություն, ենթակա է բազմաթիվ գործոնների ազդեցությանը, այդուհանդերձ, այն առանց փոփոխությունների վերականգնվել է անգամ այն դեպքերում, երբ ժամանակավոր հաղթանակում էին ավտորիտար ռեժիմները:

Իշխանությունների բաժանման սկզբունքով կառուցված պետական իշխանության կազմակերպումը կարող է նախադրյալներ ստեղծել և դառնալ մեր հասարակության առջև ծառացած խնդիրների լուծման պայմաններից մեկը. հասարակական ու տնտեսական կյանքի ժողովրդավարացում, իրավունքի գերակայության հաստատում, սոցիալ - տնտեսական կյանքում արմատական վերափոխումների անցկացում:

Կարևոր հանգամանք է նաև այն, որ իշխանությունների բաժանումը իրականանալի և գործուն է միայն բաց տիպի քաղաքական գործընթացի պայմաններում, իսկ դա հենց այն է, ինչը հանդիսանում է պետաիրավական բարեփոխման նպատակներից մեկը և որը պետք է նպաստի բոլոր մակարդակներում պետական ծառայողների առաջխաղացման և հերթափոխի ավելի գործուն մեխանիզմի ձևավորմանը, նրանց հասարակության վերահսկողության տակ դնելուն, և հետևաբար, ավելի արդյունավետ և հասարակության շահերին ու պահանջմունքներին համապատասխանող պետական ապարատ ստեղծելուն: Այսինքն, իշխանությունների բաժանման սկզբունքը այլ միջոցառումների հետ միասին հանդիսանում է արհեստավարժ ու հրապարակային իշխանության հաստատման միջոց: Ահա թե ինչու, իրավաբանների ու քաղաքական գործիչների մեծամասնությունը իշխանությունների բաժանման սկզբունքի օգտագործման նպատակահարմարությունը տեսնում են իրավաքաղաքական բարեփոխումներ անցկացնելու մեջ:

Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է (ՀՀ Սահմանադրության 1-ին հոդված):

Այսպիսով, հենց առաջին հոդվածում ամրագրված է պետական իշխանության միասնական և ամբողջական բնույթը, ինչպես նաև բովանդակային առումով՝ նրա ժողովրդավար, իրավունքով սահմանափակվածության և սոցիալական ուղղվածության էությունը:

Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է: Պետության ինքնիշխանությունը (սուվերենությունը) պետական իշխանության գերակայությունն է և անկախությունը երկրի ներսում և այլ պետությունների հետ ունեցած հարաբերություններում: Որպես պետական իշխանության կարևորագույն հատկություն ինքնիշխանությունը նաև պետության հատկությունն է: Պետության ինքնիշխանության հիմքում ընկած է ժողովրդի ինքնիշխանությունը, քանի որ ժողովրդի

կամաարտահայտությամբ է ծնվում պետական իշխանությունը: Պետության ինքնիշխանությունը ցանկացած պետության անօտարելի հատկությունն է անկախ նրա տարածքի չափերից, բնակչության թվից, կառավարման և կառուցվածքի ձևերից: Այն պետության միջազգային իրավասությունների պարտադիր պայմանն է:

Պետական իշխանության գերակայությունը իշխանության այնպիսի վիճակն է, որի դեպքում տվյալ պետության տարածքում չկա և չի կարող լինել նրանից վեր կամ նրա հետ մրցակցող որևէ այլ իշխանություն: Պետական իշխանության գերակայությունը այն վերածում է միակ քաղաքական իշխանության՝ դրանով իսկ բացառելով ինքնիշխան պետական իշխանության կողքին որևէ այլ քաղաքական իշխանության գոյություն:

Իշխանության գերակայությունը նշանակում է, որ միայն պետական իշխանության ակտերն են ներազդում տվյալ երկրի քաղաքացիների և կազմակերպությունների վրա, պետական իշխանությունն օժտված է ցանկացած հասարակական իշխանության դրսևորումները անվավեր ճանաչելու առանձնաշնորհով, պետական իշխանությունն օժտված է ազդեցության հատուկ միջոցներով, որ չի կարող ունենալ որևէ հասարակական ուժ: Պետական իշխանության գերակայությունը դրսևորվում է նաև նրանում, որ այն սահմանում է իրավական հարաբերությունների ողջ կարգը, ընդհանուր իրավակարգը, պետական մարմինների, հասարակական միավորումների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների իրավունակությունը, իրավունքներն ու պարտականությունները: Սակայն իշխանության գերակայությունը չի նշանակում նրա անսահմանափակ լինելը: Սահմանադրական պետության մեջ իշխանությունը միշտ սահմանափակված է իրավունքով: Ինչպես ցանկացած այլ իշխանություն սահմանադրական պետության մեջ ինքնիշխանությունը հիմնվում է իրավունքի վրա և սահմանափակված է իրավունքով: Իշխանության գերակայությունը ենթադրում է ինքնիշխանության անբաժանելիություն և անօտարելիություն:

Պետական իշխանության համակարգի միասնությունը պետության ամբողջականության պարտադիր պայմանն է: Պետական իշխանության միասնության իրավաբանական արտահայտությունը կայանում է նրանում, որ բարձրագույն պետական իշխանությունը կազմող մարմինների համակարգի իրավասության համակցությունն ընդգրկում է այն բոլոր լիազորությունները, որոնք անհրաժեշտ են պետությանն իրականացնելու իր խնդիրներն ու գործառնությունները: Պետական

իշխանության միասնությունը ի հայտ է գալիս նրանում, որ իրականացման բոլոր մակարդակներում այն ունի միևնույն էությունը, գործունեության ձևերն ու մեթոդները, ընդ որում, պետական իշխանության բոլոր մարմինների միջև պետք է լինի կապ, լիազորությունների բաշխում (իշխանությունների բաժանում), կարգապահություն, ենթակարգություն, փոխապայմանավորվածություն: Պետական իշխանության համակարգի տարբեր օղակները չեն կարող իրավունքի միևնույն սուբյեկտին վերագրել վարքագծի իրար հակասող կանոններ: Պետական իշխանության միասնության սկզբունքն արտահայտվում է միասնական իրավական քաղաքականության, հատկապես օրինաստեղծ քաղաքականության մեջ, պետական կարգավորման և կառավարման, պետական գործունեության մեխանիզմի համակարգման մեջ: Պետական իշխանության մարմինների համակարգի միասնությունը ենթադրում է նաև նրանց ենթակարգությունը, կենտրոնացվածությունը:

Պետության անկախությունը պետության ինքնուրույնությունն է այլ պետությունների հետ ունեցած հարաբերություններում: Եթե ներպետական հարաբերություններում պետությունն օժտված է իր տարածքում գտնվող բոլոր անձանց և միավորումների նկատմամբ բացառիկ իրավասությամբ, ապա ի հակադրություն դրա, միջազգային հարաբերություններին բնորոշ է այն, որ պետությունից վեր չկան կանգնած իշխանություններ, որոնք օժտված են նրան վարքագծի կանոններ թելադրելու իրավասությամբ: Միջազգային հարաբերություններում պետությունները փոխադարձաբար անկախ են: Միջազգային իրավունքի հիմքում ընկած է նրա հիմնական նորմերում արտահայտված՝ պետությունների միմյանց ինքնիշխանությունը հարգելու պահանջը: Այդպիսի հիմնական նորմ սկզբունքներ են նաև պետությունների ինքնիշխան հավասարությունը, միջազգային հարաբերություններում ուժի կամ ուժի սպառնալիք չկիրառելը, պետության ներքին իրավասության մեջ մտնող հարցերին չմիջամտելը, միջազգային վեճերի խաղաղ լուծումը, միջպետական համագործակցությունը: Պետություններն իրականացնում են իրենց արտաքին գործառույթները այլ պետություններից և միջազգային իրավունքի սուբյեկտներից անկախ, ազատորեն և ինքնուրույն միջազգային իրավական կարգավորման հիման վրա ստեղծված հարաբերությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն արտահայտվում է նրա բա-

ցառիկ իրավունքներում (առանձնաշնորհներում): Որպես ինքնիշխան պետություն Հայաստանի Հանրապետությունն ունի իր տարածքը, որի սահմաններում կազմակերպվում և գործառում է պետական իշխանությունը և ապահովում է պետության տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը, ստեղծում է զինված ուժերը, ընդունում և փոփոխում է Սահմանադրությունը և օրենքները, ապահովում դրանց գերակայությունն իր տարածքում, սահմանում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների համակարգը, ապահովում է տնտեսական տարածքի միասնությունը, ամրապնդում միասնական շուկայի իրավական հիմքերը, մշակում և իրականացնում է պետական քաղաքականությունը տնտեսական, սոցիալական, բնապահպանական և մշակութային բնագավառներում, իրականացնում է ֆինանսական, վարկային, հարկային, մաքսային կարգավորում, դրամական էմիսիա, գնագոյացման քաղաքականություն: Միջազգային հարաբերությունների բնագավառում՝ մշակում և իրականացնում է արտաքին քաղաքականությունը, կազմակերպում երկրի պաշտպանությունն ու անվտանգությունը, կնքում է միջազգային պայմանագրեր, լուծում պատերազմի և խաղաղության հարցերը, սահմանում է քաղաքացիության հիմքերը, ամրապնդում և պաշտպանում է մարդու և քաղաքացու իրավունքները, քաղաքական ապաստան է տալիս օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, երաշխավորում է ՀՀ սահմաններից դուրս ՀՀ քաղաքացիների պահպանությունը, օրենքով սահմանված կարգով իրականացնում է ներում, համաներում և այլն:

Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական պետություն է: Ժողովրդավարական է այնպիսի պետությունը, որտեղ ողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին և ժողովուրդն ինքն է իրականացնում իրեն պատկանող իշխանությունը իր ինքնիշխան կամքին և արմատական շահերին համապատասխան: ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում նշվում է, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրեն հռչակում է ժողովրդաիշխանության պետություն: «Ժողովրդավարություն» և «ժողովրդաիշխանություն» եզրույթները հոմանիշներ են: Ժողովրդավարությունը ծագում է հունարեն դեմոկրատիա եզրույթից՝ «դեմոս» ժողովուրդ և «կրատոս» իշխանություն: Ժողովրդաիշխանություն հասկացության մեջ մտնող ժողովուրդ և

իշխանություն հասկացությունները կարիք ունեն հատուկ քննարկման: Իրավական տեսանկյունից ժողովուրդը քաղաքացիների համակցությունն է, որոնք միավորվելով տվյալ պետության շրջանակներում կազմում են նրա հիմքը: Իշխանությունն իրենից ներկայացնում է հնարավորություն կառավարել ինչ որ մեկին, կամ որևէ բան ենթարկել սեփական կամքին: Իշխանությունը սոցիալական երևույթ է: Այն ծագում է հասարակության ծագման հետ մեկտեղ և գոյություն ունի ցանկացած հասարակության մեջ, քանի որ վերջինս կարիք ունի կառավարման:

Պետության ծագման հետ միաժամանակ ծագում է պետական իշխանությունը՝ որպես պետության կարևոր հատկանիշներից մեկը: Պետական իշխանությունը հիմնվում է ընդհանուր կամքի վրա և հնարավորություն ունի իրեն ենթարկելու հասարակության բոլոր անդամներին: Պետական իշխանությունը չի համընկնում անմիջականորեն բնակչության հետ և իրականացվում է հատուկ պետական ապարատի միջոցով: Պետական ապարատը պետական մարմինների համակցությունն է, որի միջոցով իրականացվում են պետության գործառույթները: Պետական ապարատը միավորում է պետության բոլոր մարմինները, ինչպես նաև բանակը, հետախուզությունը, հարկադրանք իրականացնող մարմինները:

Ժողովրդի կամաարտահայտման ձևից կախված՝ տարբերում ենք ներկայացուցչական և անմիջական ժողովրդավարություն: Ներկայացուցչական ժողովրդավարությունը՝ իշխանության իրականացումն է ժողովրդի կողմից իր ընտրովի լիազորված ներկայացուցիչների միջոցով, որոնք ընդունում են իրենց կողմից ներկայացվողների (ողջ ժողովրդի կամ տվյալ տարածքում ապրող բնակչության) կամքն արտահայտող որոշումներ: Ներկայացուցչական մարմիններ են նախագահը, խորհրդարանը, տեղական ինքնակառավարման մարմինները: Ժամանակակից աշխարհում ներկայացուցչական ժողովրդավարությունը ժողովրդաիշխանության իրականացման հիմնական ձևն է: Անմիջական ժողովրդավարությունը ժողովրդի կամ բնակչության որոշակի խմբի կողմից անմիջականորեն իշխանության իրականացման ձև է: Անմիջական ժողովրդաիշխանության իրականացման ձևերն են հանրաքվեները և ազատ ընտրությունները:

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ հանրաքվեն (համաժողովրդական քվեարկությունը) ժողովրդի կողմից անմիջականորեն

իշխանության իրականացումն է՝ Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու, օրենքներ ընդունելու, ինչպես նաև պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու եղանակով: Հանրաքվե անցկացվում է ՀՀ ամբողջ տարածքում: Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները փոփոխվում են միայն հանրաքվեով (հոդված 36, մաս 2):

Անմիջական ժողովրդաիշխանության մյուս ձևն ընտրություններն են: Ընտրությունները քաղաքացիների մասնակցությունն է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորմանը գաղտնի քվեարկության միջոցով: Ընտրությունների առավել եական հատկանիշն այն է, որ ընտրողներն իրենց միջավայրից ներկայացուցիչներ են առաջ քաշում ժողովրդաիշխանության իրականացման համար: Ընտրություններն իմաստ ունեն միայն այն դեպքում, եթե ազատ են, հնարավորություն են ընձեռում քաղաքացիներին ընտրելու մի քանի թեկնածուներից մեկին և դրանց արդյունքները չեն կեղծվում: Պարբերաբար անցկացվող ընտրությունները սահմանադրական կարգի և իշխանության օրինակարգության հիմքն են:

Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է¹⁸²: Այս բառակապակցությունն առաջին անգամ արևմտաեվրոպական երկրների (Իտալիա, Ֆրանսիա, ԳՖՀ) սահմանադրություններում հայտնվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Դրան նախորդել է իրավական պետության գաղափարն ու պրակտիկան: Եթե իրավական պետության գաղափարը և պրակտիկան կապված է մարդու և քաղաքացու իրավունքների առաջին սերնդի՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների երևան գալու հետ, ապա սոցիալական պետության տեսությունն ու պրակտիկան կապված է իրավունքների երկրորդ սերնդի՝ սոցիալական և տնտեսական իրավունքների հետ: Ընդ որում, եթե իրավական պետության հիմքում ընկած էր իրավունքի գերակայության, ժողովրդավարության, անձնական ազատության, քաղաքացիական և քաղաքական իրավունքների գաղափարները, ապա սոցիալական պետության հայեցակարգի հիմքում նրա գաղափարախոսների կողմից դրվել են մարդասիրության, սոցիալական արդարության, հասարակության սոցիալական բոլոր խմբերի համերաշխության, սոցիալական հավասարության, սոցիալ-տնտեսական իրա-

¹⁸² Սոցիալական պետության մասին մանրամասն տե՛ս Социальное государство. М., 2013.

վունքների պետական պաշտպանության գաղափարները:

Ըստ ընդունված միջազգային չափանիշների՝ սոցիալական պետությունում առաջնայինը մարդն է, նրա իրավունքներն ու պահանջմունքները: Պետությունը հոգում է իր քաղաքացիների տնտեսական և սոցիալական բարեկեցության ապահովումը: Սոցիալական պետությունը գորավիզ է նվազ եկամուտներ և սոցիալական պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիներին՝ ծերերին, հաշմանդամներին, ծնողագուրկ երեխաներին, բազմազավակ ընտանիքներին: Սոցիալական պետությունում ընտանիքը, մայրությունը, հայրությունը, մանկությունը գտնվում են պետության և հասարակության հովանավորության ներքո: Այդպիսի պետական մեթոդներն են՝ ճկուն հարկային քաղաքականությունը, բյուջեն, սոցիալական ծրագրերի ստեղծումը տնտեսությունը զարգացնելու համար: Պետությունը պետք է պահպանի հավասարակշռությունը ազատ տնտեսության և բաշխման պրոցեսների միջև արդարության ու հավասարության սկզբունքի հիման վրա:

Իրավական պետությունը¹⁸³ պետության կազմակերպման այնպիսի եղանակ է, որի ժամանակ այն ենթարկվում է իրավունքին, իսկ նրա գործունեության գլխավոր նպատակն է հանդիսանում մարդու իրավունքների և ազատությունների ապահովումը: Իշխանությունը օրենքով, իրավունքով սահմանափակելու գաղափարը գալիս է հին աշխարհից: Դեռևս Պլատոնն էր գրում. «Ես տեսնում եմ մոտավորապես կործանումը այն պետության, որտեղ օրենքը ուժ չունի և գտնվում է ինչ որ մեկի իշխանության ներքո»: Նոր ժամանակներում այդ գաղափարները զարգացվեցին Ջոն Լոկի, Շառլ Լուի Մոնտեսքյոյի, Ժան Ժակ Ռուսոյի կողմից, իսկ դրա փիլիսոփայական հիմնավորումը տրված է Կանտի աշխատություններում: Իրավական պետության կարևոր առանձնահատկությունը, նրա հիմնական սկզբունքը, պետության և նրա մարմինների կապվածությունն է իրավունքով: Իրավական պետությունը քաղաքական իշխանության այնպիսի կազմակերպություն է, որն անհատների և նրանց միավորումների հետ իր փոխհարաբերությունները կառուցում է իրավունքի նորմերի հիման վրա: Ավանդաբար առանձնացվում են իրավական պետության մի շարք իրավական հատկանիշներ կամ սկզբունքներ: Դրանք են.

¹⁸³ См. у **Соколов А.Н.** Правовое государство: от идеи до материализации. М., 1998; Նույնի *Идея правового государства в Германии и механизм ее реализации*: Дис. ...док. юрид. наук. Харьков, 1992; **Раянов Ф.М.** Правовое государство и современный мир. М., 2012 և այլն:

1. Իրավունքի և օրենքի միասնությունը: Իրավական պետության մեջ մարդկանց ազատության արտահայտման, կազմակերպման և պաշտպանության բարձրագույն ձևն օրենքն է: Օրենքներում սահմանվում են համապարտադիր վարքագծի կանոններ, որոնց միջոցով կարգավորվում են հասարակական հարաբերությունները:

Իրավական պետությունում օրենքները պետք է իրավական լինեն: Օրենքն իրավական է այն ժամանակ, երբ հանդես է գալիս որպես բոլորի և յուրաքանչյուրի ազատության չափ, արդարության մարմնավորում, ծառայում է մարդու, հասարակության և պետության շահերին: Ծավալուն օրենսդրության առկայությունը դեռ չի նշանակում, որ ստեղծվել է իրավական պետություն: Կարևորն օրենքների որակն է: Իհարկե, այս հատկանիշը հայտնի չափով ունի սուբյեկտիվ բնույթ:

2. Սահմանադրության և օրենքների գերակայությունը, դրանց անմիջական գործողությունը: Իրավական պետության մեջ կարևորագույն հասարակական հարաբերությունները կարգավորվում են օրենքով: Դրանք այլ իրավական ակտերի համեմատությամբ օժտված են գերակայությամբ, այսինքն՝ ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ: Պետական մարմինների կողմից ընդունված բոլոր այլ նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեն օրենքին: Օրենքներին հակասելու դեպքում դրանք պետք է վերացվեն կամ փոփոխվեն: Օրենքների մեջ առավել բարձր ուժով է օժտված պետության հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը, որը կարգավորում է առավել կարևոր հասարակական հարաբերությունները: Սահմանադրությանը պետք է համապատասխանեն օրենքները և ենթաօրենսդրական իրավական ակտերը: Սահմանադրությունը կարգավորում է պետական և հասարակական կարգի հիմունքները: Սահմանադրությանը համապատասխան պետք է ընթանա պետության, նրա մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունները: Իրավական պետությունը՝ դա սահմանադրական պետությունն է: Պետք է նկատի ունենալ, որ Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն, այսինքն՝ պարտադիր չէ դրանց իրականացման համար առանձին օրենք կամ այլ իրավական ակտ ընդունվի:

3. Միջազգային իրավական նորմերի առաջնությունը ներպետական իրավունքի նկատմամբ: Այս սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում, որի համաձայն՝ միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց

կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի քաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

4. Անձի իրավունքների իրական լինելը, նրա ազատ զարգացման ապահովումը: Իրավական պետության մեջ անձն ունի ազատության որոշակի ոլորտ, որի սահմաններից այն կողմ պետության միջամտությունն անթույլատրելի է: Իրավական պետության մեջ անձի ազատությունը դրսևորվում է հետևյալ ձևակերպմամբ. «Թույլատրելի է այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով»: Այս դրույթը վերաբերում է քաղաքացիներին և կազմակերպություններին: Ընդհակառակը, պետական մարմինները կարող են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով: Իրավական պետության մեջ մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնության սկզբունքը բխում է Սահմանադրության այն դրույթից, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են (ՀՀ Սահմանադրություն, 3-րդ հոդված): Սահմանադրությամբ և օրենքներով ոչ միայն ձևականորեն հռչակվում են, այլև դրանք ապահովվում են իրական երաշխիքներով: Օրենսդրությամբ նախատեսված են համապատասխան մեխանիզմներ այդ իրավունքների իրականացման համար: Պետության քաղաքականությունն ուղղված է այդ իրավունքների իրականացման համար տնտեսական, սոցիալական, իրավական և այլ պայմանների ստեղծմանը: Իրավունքների և ազատությունների խախտման դեպքում նախատեսված է դրանց դատական, վարչական և այլ պաշտպանության միջոցներ:

5. Իրավական պետության մեջ պետական իշխանության կազմակերպման և գործունեության սկզբունքը իշխանությունների բաժանումն է: Այս սկզբունքի էությունն այն է, որ միասնական պետական իշխանությունը բաժանվում է միմյանցից հարաբերականորեն ինքնուրույն և անկախ իշխանության երեք ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական: Այդպիսի բաժանման նպատակը որևէ անձի կամ պետական մարմնի ձեռքում իշխանության չափից մեծ կենտրոնացման բացառումն է: Սահմանադրությամբ ամրապնդվում է իշխանության յուրաքանչյուր ճյուղի կազմավորման կարգը, գործառույթները լիազորությունները: Իշխանության

յուրաքանչյուր ճյուղ պետք է գործի իրեն վերապահված շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման սկզբունքը առաջին անգամ ամրագրվել է Հայաստանի անկախության մասին հռչակագրում. «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը» (9-րդ հոդված):

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների տարանջատման սկզբունքը դարձավ Անկախության հռչակագրի առանցքային սկզբունքներից մեկը: Հռչակագրով պարտավորվելով Հայաստանի Հանրապետությունում ապահովել «օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում»՝ հիմք դրվեց որակապես նոր իրավական համակարգի, որը պետք է դառնար հռչակագրային նպատակների իրականացման երաշխիքը:

Հռչակագրային նորմերը, մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը, իրենց հետագա որոշակիացումը գտան «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքում, որն ընդունվեց Գերագույն խորհրդի կողմից 1991թ. սեպտեմբերի 25-ին (ուժը կորցրել է ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի հիման վրա): Սույն սահմանադրական օրենքով ամրագրվելով ՀՀ սահմանադրական կարգը որպես անկախ ժողովրդավարական պետություն՝ հասարակական հարաբերությունների հիմքում դրվեցին ժողովրդաիշխանության, իշխանությունների տարանջատման, մարդկանց իրավահավասարության, անխտրականության, իրավունքների ու ազատությունների ճանաչման ու ապահովման սկզբունքները: Ամրագրվեց նաև սահմանադրական այն կարևոր սկզբունքը, որ իշխանության մարմինները կարող են իրականացնել միայն օրենքով իրենց վերապահված լիազորություններ: Օրենքի 5-րդ հոդվածում ամրագրվեց, որ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության Նախագահն է, որը գլխավորում է ՀՀ գործադիր իշխանությունը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը երկրի ներսում և միջազգային հարաբերություններում»: Այս սահմանադրական օրենքը գործնականում պետական իշխանության նոր համակարգի ձևավորման հիմքը դրեց և իրավական երաշխիք հանդիսացավ վերափոխելու խորհրդային օրենքներով ձևավորված իշխանության միասնական բուրգը, որի գագաթին Գերագույն խորհուրդն էր, և տարանջատելու օրենսդիր, գործադիր

ու դատական իշխանությունները:

Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանության կազմակերպման կարևոր հիմունքներից է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որը սահմանադրական կարգի կարևորագույն բաղադրիչներից է:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հազվադեպ է օգտագործում «իշխանություն» կամ «պետական իշխանություն» արտահայտությունը: Այն բովանդակող նորմերը վերաբերում են առավելապես իշխանության (կամ պետական իշխանության) բնույթին¹⁸⁴: Այսպես, Սահմանադրությունն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին (հոդվ. 2) կամ պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա (հոդվ. 5):

Իշխանությունների բաժանման սկզբունքն իր արտացոլումն է ստացել նաև դատաիրավական համակարգին նվիրված մի շարք այլ օրենսդրական ակտերում՝ 2006թ. ընդունված Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում, 2007թ. ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքում և այլ իրավական ակտերում: Ընդհանուր առմամբ, իշխանության որևէ ճյուղին պատկանող պետական մարմինների կարգավիճակին նվիրված յուրաքանչյուր օրենսդրական ակտ զուգահեռաբար լուծում է իշխանությունների բաժանման և դրանց հավասարակշռման խնդիրը, ապահովում այդ սկզբունքի գործնական կիրառումը:

Իշխանության տարբեր ճյուղերի բարձրագույն մարմինների փոխհարաբերության խնդիրները մշտապես առանձնացել են իրենց բարդությամբ: Սահմանադրական դրույթները ոչ միշտ են բավարար եղել այդ ոլորտում ծագող սոցիալական հակասությունները հարթելու համար: Պետական իշխանության բարձրագույն մարմինները հավասարապես արտահայտում են ժողովրդի ինքնիշխանությունը և ապահովում վերջինիս միասնականությունը: Իշխանությունների բաժանումը սոսկ լիազորությունների տարանջատում է՝ առանց խաթարելու պետական իշխանության միասնականությունը:

Ընդհանրապես, իշխանությունների բաժանման սկզբունքը իրավաբանական

¹⁸⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պատ. խմբ. Ն.Ա. Այվազյան: Երևան, 2012, էջ 445:

գրականության մեջ դիտարկում են երեք տեսանկյունից՝ գործառութային, կառուցակարգային (ինստիտուցիոնալ) և հասցեական¹⁸⁵:

Պետական իշխանության արդյունավետ իրականացման համար կարևոր նշանակություն ունի իշխանության մարմինների գործառութային բաժանումը՝ օրենսդիր, գործադիր և դատականի (արդարադատության):

Օրենսդիր իշխանության կրողը ժողովրդի կողմից ընտրվող ներկայացուցչական մարմինն է, որը կոչված է որոշելու հասարակության և պետության զարգացման ռազմավարությունը օրենքներ ընդունելու ճանապարհով¹⁸⁶: Օրենսդիր իշխանության սահմանած օրենսդրական իրավական նորմերը որոշում են հասարակության և պետության մեջ մարդու ազատության չափը: Մասնավորապես, օրենսդիրը սահմանում է հասարակության և անհատի ազատության, անվտանգության, սեփականության ապահովման համար անհրաժեշտ և թույլատրելի հարկադրական ուժի կիրառման կանոնները:

Գործադիր իշխանության մարմինների գործառութն օրենքների կենսագործումն է, ընթացիկ կառավարումը: Գործադիր իշխանությունը պետության հարկադիր-կատարողական ուժն է, որն ընդունակ է կիրառել հարկադրանք: Այդ լիազորությունը պետք է լինի իրավագործ, այսինքն՝ օրենքով սահմանված: Դատական իշխանության մարմինները Սահմանադրության և օրենքների հիման վրա իրականացնում են արդարադատություն: Օրենսդիրը, որ սահմանում է հարկադրանքը, չունի այն կիրառելու իրավունք: Իսկ դատական իշխանության պարագայում՝ ինքը չի կիրառում, այլ թույլատրում կամ թելադրում է հարկադրանքի կիրառումը: Այսպիսով, պետական հարկադրանք կիրառողը գործադիր իշխանության մարմինն է, որը չունի ոչ օրենք ընդունելու և ոչ արդարադատություն իրականացնելու լիազորություն, այլ ընդամենը գործում է օրենքների հիման վրա և ի կատարումն օրենքների ու դատարանների որոշումների:

Իշխանությունների բաժանման կառուցակարգային մոտեցումը պահանջում է, որ պետական միասնական իշխանության երեք թևերից յուրաքանչյուրն իրականացվի պե-

¹⁸⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընտ. խմբ. **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**, Երևան, 2010, էջ 84: Նաև՝ Պետության և իրավունքի տեսություն: Գիտ. խմբ. **Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան**, Երևան, 2104, էջ 137:

¹⁸⁶ Մանրամասն տե՛ս **Чиркин В.Е.** Законодательная власть. М. 2008.

տական ապարատի առանձին օղակների, առանձին մարմինների միջոցով, որոնք միայնակից գտնվում են հարաբերականորեն անկախ և ինքնուրույն վիճակում: Դրա նպատակն այն է, որ այդ իշխանությունները չկենտրոնացվեն մեկ անձի կամ մարմնի ձեռքում: Օրենսդիր մարմինն առանձնացված է գործադիրից, օրենքը սահմանողը չի զբաղվում դրա կիրառմամբ, իսկ գործադիրն էլ չի իրականացնում օրենսդիր լիազորություններ, այլ զբաղվում է միայն օրենքների կիրառմամբ: Այստեղից հետևում է, որ գործադիր իշխանության մարմինները չպետք է զբաղվեն նորմաստեղծ գործունեությամբ:

Իշխանությունների կառուցակարգային բաժանումը պահանջում է նաև, որ օրենսդիրը ևս իրավունք չունենա միջամտել գործադիր իշխանության գործունեությանը՝ ընդունելու ակտեր, որոնք Սահմանադրությամբ վերապահված են միայն գործադիր իշխանության իրավասությանը: Օրենսդիրը գործադիրի նկատմամբ ունի միայն վերահսկողության իրավունք՝ Սահմանադրությամբ սահմանված կարգով ու ձևերով: Դատական իշխանության՝ օրենսդրի կամ գործադիրի հետ միացման անթույլատրելիությունն ակնհայտ է: Իշխանությունների բաժանումը կանխում է օրենսդրի անուղղակի ներխուժումն արդարադատության իրականացման ոլորտ, նույնիսկ՝ օրենսդրման ձևով: Այդ պահանջի կենսագործման երաշխիքներ են մի շարք իրավական սկզբունքներ, օրինակ՝ «պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքները չունեն հետադարձ ուժ», «իրավաբանական պատասխանատվությունը վրա է հասնում միայն այն արարքների համար, որոնք ճանաչված են որպես իրավախախտում սանկցիայի կիրառման պահին»: Այդ պատճառով մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Իշխանությունների բաժանման հասցեական առումը՝ որպես իրավական պահանջ, ևս շատ կարևոր է իշխանությունների բաժանման սկզբունքի կենսագործման համար: Ի կատարումն այս պահանջի, օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի կազմում չեն կարող մտնել գործադիր իշխանության և դատական համակարգում պաշտոնավարող անձինք: Պատգամավորը չի կարող զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Համապատասխանաբար, դատավորը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն՝ առևտրային կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Այսպիսով, համաձայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ պետական իշխանությանը միասնական է, բայց դրա գործառույթները՝ հասարակական հարաբերությունների օրենսդրորեն կանոնակարգում, կառավարում և արդարադատություն, իրականացնում են տարբեր մարմիններ՝ Սահմանադրությամբ և օրենքներով օժտվելով համարժեք լիազորությամբ: Իշխանությունների բաժանումը նշանակում է պետական գործառույթների սահմանազատում, որոնց իրագործումը չի կապվում մեկ անձի կամ մարմնի հետ. ընդհակառակն, այդ գործառույթներն իրականացվում են միանգամայն ինքնուրույն մարմինների կողմից, որոնք գործում են օրենքի պատվիրաններին համապատասխան, այլ ոչ թե անձնական հայեցողությամբ կամ՝ կամայականությամբ, և կաշկանդված են անհատների նկատմամբ իրավաբանական պարտավորություններով՝ որպես մարդու և քաղաքացու անօտարելի իրավունքներ:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման մասին խոսելիս անհրաժեշտ է ընդգծել, որ խոսքը չի գնում իշխանության նշված ճյուղերի միջև հակամարտության մասին: Պետությունում հանրային իշխանությունը միշտ միասնական է, քանզի պետական բոլոր մարմինների առջև դրված է միևնույն ընդհանուր խնդիրը՝ պաշտպանել և երաշխավորել մարդու իրավունքները, ապահովել դրանց իրացումը: Ինչ վերաբերում է իշխանությունների ֆիզիկական բաժանմանը, ապա սա ընդհամենը տեխնիկական խնդիր է, որը կոչված է ապահովելու այդ մարմինների գործառութային որոշակիությունը, այսինքն՝ թե պետական իշխանության մարմիններից յուրաքանչյուրը Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված ինչպիսի լիազորություններ ունի: Ավելին, իշխանությունների բաժանումը ոչ միայն նպատակ ունի չկենտրոնացնել պետական ամբողջ մեխանիզմը հանրային իշխանության մեկ մարմնի ձեռքում, այլ հանդիսանում է յուրահատուկ երաշխիք՝ պետությունում ժողովրդավարական ռեժիմի ապահովման համար, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնում վեր հանել այն բոլոր խնդիրները և տարաձայնությունները, որոնք գոյություն

ունեն իշխանության տարբեր ճյուղերի միջև:

1995 թվականի խմբագրմամբ ՀՀ Սահմանադրությունը քննարկվող հիմնախնդրի բացահայտման առումով ուներ մեկ «ուժեղ» (գործադիր իշխանություն) և երկու «թույլ» (օրենսդիր և դատական իշխանությունները) ճյուղեր, որոնք մասամբ հաղթահարվեցին սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Նախ՝ բավարար հստակեցված չէր նախագահական ինստիտուտի տեղը պետական իշխանության համակարգում, երկրորդ՝ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունները՝ բերված բոլոր չափանիշների տեսանկյունից, անհրաժեշտ գործառնական անկախություն ու դինամիկ հավասարակշռված վիճակ չունեին, երրորդ՝ խախտված հավասարակշռության բացահայտման, գնահատման ու վերականգնման կառուցակարգերն անկատար էին:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը պետք է մեկնաբանել որպես պետական իշխանության իրական գործոնների սահմանափակում, հավասարակշռում, դրանց համագործակցություն և փոխկապվածություն: Պատահական չէ, որ երկրների մեծ մասը Սահմանադրությամբ ոչ թե շեշտադրումը կատարում է սկզբունքի, այլ իշխանությունների իրական տարանջատումն ու գործակցությունն ապահովելու և այդ հայեցակարգային մոտեցումը Հիմնական օրենքում ամրագրելու վրա:

Ժողովրդի կամքի արտահայտությունը հանդիսանում է պետական իշխանություն իրականացնող բոլոր մարմինների բնականոն գործունեության հիմքը: Այն առավելապես վերաբերում է օրենսդիր իշխանությանը, քանի որ ներկայացուցչական մարմիններն անմիջականորեն ընտրվում են քաղաքացիների կողմից: Սակայն ժողովրդի կամքի արտահայտությունը համակարգի ձևավորման տեսանկյունից, վճռորոշ նշանակություն ունի նաև գործադիր ու դատական իշխանությունների համար, քանի որ վերջիններս ձևավորվում են ընտրովի ներկայացուցչական մարմինների կամ ընտրովի պետության գլխի կողմից:

Չնայած դրան, այդ պարագայում հիմնախնդիրներ են ծագում գործադիր մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և դատարանների անկախությունն ապահովելու ոլորտներում: Տարաբնույթ չարաշահումներից ու կամայականություններից խուսափելու նկատառումով անհրաժեշտ է գործադիր իշխանության նկատմամբ նախատեսել պետական

վերահսկողության գործուն միջոցներ: Կառավարման խորհրդարանական ձևի պայմաններում դա կառավարության նկատմամբ ուղղակի խորհրդարանական վերահսկողությունն է: Մինչդեռ նախագահական կամ կիսանախագահական կառավարման ձևերի դեպքում վերահսկողությունն իրականացվում է նախագահի կողմից մասնակիորեն նախատեսելով նաև խորհրդարանի կողմից իրականացվող վերահսկողության տարրեր: Ընդ որում, այդ մարմինների կողմից իրականացվող վերահսկողությունը առավելապես կրում է քաղաքական բնույթ, մինչդեռ՝ զուտ իրավական վերահսկողություն իրականացնելու առաքելությունը վերապահված է դատական իշխանությանը:

Դատական իշխանության գործունեության առանձնահատկությունն այնպիսին է, որ դատարանների անկախությունն ու միաժամանակ օրինական ու հիմնավորված գործունեությունն ապահովվում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի, կարգապահական և այլ բնույթի պատասխանատվության համակարգի, ինչպես նաև գործադիր իշխանության մարմինների կողմից դրանց հարկադիր կատարումն ապահովելու միջոցով:

Ինքնին հասկանալի է, որ ժողովուրդն անմիջականորեն չի կարող վերահսկողություն իրականացնել պետական ողջ ապարատի կողմից պետության առջև դրված բոլոր բարդ ու բազմաձյուղ գործառույթների օրինականության ու արդյունավետության չափանիշներով, դա, առաջին հերթին, պահանջում է համապատասխան մասնագիտական գիտելիքների առկայություն, և մարդկային, ֆինանսատնտեսական որոշակի ռեսուրսներ:

3.2 Իշխանությունների բաժանման սկզբունքի կատարելագործման հիմնախնդիրները սահմանադրական բարեփոխումների համատեքստում

Ժամանակակից ազգային պետական շինարարության պրակտիկայի իրական խնդիրն ու դժվարությունը կայանում է հենց նրանում, ինչպես իրականացնել պետական իշխանության համակարգի վերափոխման գործընթացը՝ հաշվի առնելով հայ

հասարակության առջև կանգնած ժամանակակից մարտահրավերների համաշխարհային զարգացման միտումների, խնդիրների պահանջները, առանձնահատկություններն ու ավանդույթները: Ցանկացած մոդելների գործնական իրականացման համար, որոնք կառուցված են արտասահմանյան երկրների փորձի օգտագործմամբ, հարկավոր է դրա համար անհրաժեշտ որոշակի պայմաններ ու նախադրյալներ ստեղծել, քանի որ ամենևին էլ ցանկացած հանգամանք չէ որ երաշխավորում է քաղաքական ինստիտուտների և մեխանիզմների արդյունավետությունն ու ժողովրդավարական լինելը դրանք մեկ երկրից մյուսը տեղափոխելու դեպքում:

Եթե հենվելով Արևմուտքի փորձի վրա վերլուծենք այն պայմաններն ու նախադրյալները, որոնք գոյություն ունեն ժամանակակից Հայաստանում իշխանությունների բաժանման սկզբունքի վրա իշխանությունը կազմակերպելու համար, ապա կկանգնենք բավականին բարդ և հակասական իրավիճակի առջև:

Մեզանում ընթացող սահմանադրական բարեփոխումների համատեքստում առանձնահատուկ կարևորվում է իշխանությունների զսպումների և հակակշիռների սահմանադրական հստակ սահմանումը և դրանց գործառնական, հակակշռող և զսպող լիազորությունների դինամիկ հաշվեկշռի երաշխավորումը: Սահմանադրական հակակշիռը պետական իշխանության ինստիտուտի ոչ գործառնական բնույթի լիազորություն է՝ կոչված դինամիկայում պահպանելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը:

Ինչպես նշված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում. «Համամասնականության և գործառույթների հավասարակշռման սկզբունքների հիման վրա, համակարգային մոտեցմամբ ու միջազգային փորձի հաշվառմամբ պետք է հաղթահարվեն իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իրացման հարցում տեղ գտած բացերն ու թերացումները՝ երաշխավորելով «գործառույթ – ինստիտուտ – լիազորություն» շղթայի ներդաշնակությունը, ինչպես նաև իշխանության թևերի գործառութային, հակակշռող և զսպող լիազորությունների հաշվեկշռվածությունը, լիազորությանը համարժեք հանրային-իրավական պատասխանատվության անխուսափելիությունը: Միաժամանակ, պետք է երաշխավորվի իշխանության բոլոր թևերի գործառութային

անկախությունը: Դրանց միջև փոխհարաբերությունները պետք է կառուցված լինեն հակակշիռների ու զսպումների գործուն համակարգի վրա, իսկ սահմանադրական լիազորությունների հարցում առաջացած վեճերն իրավական լուծման հստակ կառուցակարգեր պետք է ունենան»¹⁸⁷:

Իշխանությունների բաժանման արդյունավետ համակարգի հաստատման սոցիալական հիմք կարող է լինել միայն տնտեսական ու հասարակական կյանքի պլյուրալիզմը, ազատ ապրանք արտադրողների առկայությունը (պատմական հանգամանքներում պայմանավորված աստիճանով), ովքեր ունեն իրենց հատուկ շահերը և ճանաչում են մյուսների իրավունքը նույնպես ունենալ իրենց՝ մյուսներից տարբերվող շահերը և արժեքները՝ պաշտպանելով դրանք բոլոր թույլատրելի միջոցներով, այդ թվում և քաղաքական մակարդակի վրա: Բարեփոխումները, որոնք իրենց նպատակն են հռչակել երկրի ժողովրդավարացումը, նշանավորեցին իրենցով խառը տնտեսության և պլյուրալիստական հասարակության ստեղծմանն ուղղած շարժման սկիզբը: Սակայն դրա հիմքում դրված են միայն առաջին քարերը: Իսկ ընդհանուր առմամբ դրա վերակառուցման գործընթացը դեռևս հեռու է ավարտված լինելուց: Եվ հենց դա էլ երկրի նոր քաղաքական համակարգի ձևավորման դեպքում բարդացնում է իշխանությունների բաժանման առաջավոր սկզբունքներից մեկի հաստատումը: Հայկական ազգային կատարմամբ բարեփոխումների անցկացման շոկային մեթոդների հետևանքները, մեր կարծիքով, նեղացրեցին բավականին լայնաշերտ ինքնուրույն ապրանք արտադրողների և ընդհանուր առմամբ հասարակության միջին շերտի ձևավորման հնարավորությունները: 1990-ական թվականների սկզբին տնտեսական ոլորտում զարգացող միտումները շարունակում են վատթարացնել ժողովրդավարական պլյուրալիստական տնտեսության կայացման հեռանկարները՝ ուժեղացնելով դրա մոնոպոլացումը: Այդպիսի իրավիճակում բարձրանում է պետական շինարարության գործընթացի վրա զուտ սուբյեկտիվ գործոնների առավելագույն ներգործության ռիսկը և պետական կառավարման ձևերի ու մեթոդների հաստատումը, որոնք ամենից առաջ սպասարկում են որոշակի անձանց խմբային (կլանային) շահերը:

¹⁸⁷ Տե՛ս՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014թ.

Իշխանությունների բաժանման համակարգի հաստատման և հաջող գործունեության ևս մեկ նախադրյալ և պայման է հանդիսանում իրավական պետության ձևավորումը: Եվ այստեղ ցավով հարկադրված ենք արձանագրել հասարակության անպատրաստ լինելու փաստը իշխանությունների բաժանման սկզբունքի իրացման խնդրի լուծման համար: Հասարակական կարգի և քաղաքական իշխանության բնույթի անորոշությունը խոչընդոտում է հասարակության կայուն իրավական բազայի ձևավորմանը, զինաթափում է իշխանության դատական ճյուղը և այն դարձնում է քաղաքական կոնյուկտուրայի գերի: Իշխանությունների բաժանման մեխանիզմի հաստատման և արդյունավետ գործելու համար, այսպիսով, բացարձակ անհրաժեշտ է ձևավորել ուժեղ և անկախ դատական իշխանություն, որն ընդունակ կլինի հասարակության մեջ ամրապնդել իրավունքի գերակայությունը:

Սահմանադրական իրավունքի տեսության առանցքային խնդիրն էլ հենց այն է, որպեսզի երաշխավորվի իշխանության ճյուղերի գործառնական հավասարակշռությունը դինամիկայում: Դրա համար սահմանադրական ամեն մի գործառնական լիազորություն պետք է հակակշռված ու զսպված լինի իշխանության այլ ճյուղերի համապատասխան լիազորություններով:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված դրույթների նորմատիվ բովանդակությունն առաջին հերթին ելնում է Հայաստանում պետական իշխանության միասնությունից. դիտարկվող նորմը հաստատագրում է իշխանության տարբեր մարմինների միջև իշխանական լիազորությունների սահմանազատումը, սահմանում է այդ մարմինների ինքնուրույնությունն իրենց լիազորությունների իրականացման գործում և նրանց՝ մեկը մյուսի իրավասության ոլորտ ներխուժելու անթույլատրելիությունը:

Ժամանակակից սահմանադրական իրավունքի շատ տեսաբանների (մասնավորապես՝ գերմանացի պետականագետ Կ. Հեսսեի) կողմից իշխանությունների տարանջատման սկզբունքի հիմնական բնորոշիչները համարվում են մարդկանց համատեղ գործունեության կարգավորումը և կարգապահությունը, իշխանության առանձին ճյուղերի սահմանումը, դրանց իրավազորության որոշումը և սահմանափակումը, ընդհանուր աշխատանքի կարգավորումը, պետական մարմինների իրավազորության հավասարակշռումը և, արդյունքում, սահմանափակ պետական

իշխանության միասնականությունը¹⁸⁸։ Բանն այն է, որ չի բացարձականացվում իշխանությունների տարանջատման պարագան։ Տվյալ սկզբունքը ենթադրում է նաև գործառնական հստակեցված ու անկախաբար իրականացվող իրավասություններով օժտված միասնական իշխանության տարբեր թերի փոխգործակցություն ու հավասարակշռվածություն։ Այդ առումով միջազգային պրակտիկայում փորձ է արվում սահմանադրորեն սահմանել իշխանության սահմանափակումները, ստեղծել իշխանությունների փոխկապվածության, գործողությունների «պարտադրված» համաձայնեցման համակարգ (խորհրդարանի կողմից կառավարության ծրագրի հաստատում, Նախագահի արգելանքի (վետոյի) իրավունքը, խորհրդարանի կողմից Նախագահի արգելանքի հաղթահարման իրավունքը, խորհրդարանն արձակելու Նախագահի իրավունքը, կառավարությանն անվստահություն հայտնելու խորհրդարանի իրավունքը և այլն)։ Իր հերթին, իշխանության հավասարակշռվածության պահպանման կարևորագույն պայման է սահմանադրական ընդդատության եղանակով պետական իշխանությունների սահմանադրական լիազորությունների հաշվեկշռի խախտման բացահայտման, գնահատման ու վերականգնման գործուն համակարգի առկայությունը։ Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ երեք իշխանություններից յուրաքանչյուրը պետք է առնվազն ունենա այնքան լիազորություններ, որ ապահովի նրա էության դրսևորումը։

Առավել վտանգավորն իշխանության երեք ճյուղերից զատ իշխանության նոր ճյուղի, այսպես կոչված, փնտրտուքներն են, որոնք հիմնականում արդյունք են իշխանության գործառնական կամ կառուցակարգային բաժանման շփոթի և կանաչ ճանապարհ են բացում քաղաքական, վարչական և տնտեսական ուժի կենտրոնացման միջոցով կորպորատիվ կառավարման համակարգի համար։ Նման մոտեցումների հիմքը գլխավորապես կառուցակարգային, այլ ոչ թե գործառնական մոտեցումն է իշխանությունների բաժանմանը։

Իշխանությունների բաժանման վրա հիմնված քաղաքական համակարգի արդյունավետ գործունեությունը անհնար է առանց նոր քաղաքական էլիտայի ձևավորման։ Սակայն իրականությունն այնպիսին է, որ վերջին տարիների հասարակական կատակլիզմների ընթացքում բավականին արագ և հիմնովին քանդվեց

¹⁸⁸ Տե՛ս **Xecce K.** Основы Конституционного права ФРГ. М., 1981, էջ 237։

քաղաքական գործիչների կադրերի ընտրության ու առաջխաղացման մեխանիզմը, իսկ դրա փոխարեն մինչև այժմ ոչինչ ստեղծված չէ: Իհարկե, պլյուրալիստական քաղաքական համակարգի համար հարմար չէ քաղաքական առաջխաղացման այն մեխանիզմը, որը խորհրդային երկրում գերիշխել էր մի քանի տասնամյակ: Բայց նորը նույնպես դժվար թե շուտ ձևավորվի: «Դեմոկրատական ալիքի» առաջխաղացողներն իրենց զանգվածում դրսևորեցին բավականին ցածր մասնագիտական որակներ և քաղաքական մշակույթի մակարդակ: Դրա համար էլ մոտակա տարիներին մենք դատապարտված ենք այն բանին, որ իշխանությունների բաժանման համակարգի ձևավորման խնդիրների լուծումը ստիպված ենք կատարել հին էլիտայի ամենաակտիվ մասնակցությամբ: Դրանում են կայանում խնդրի ամենալուրջ հակասություններն ու դժվարությունները:

Իշխանությունների բաժանման սահմանադրական համակարգը պետք է ապահովի իշխանության ճյուղերի հավասարակշռումը: Իշխանության երեք ճյուղերի մարմիններն ինքնուրույն են իրենց իրավասության շրջանակներում և չեն միջամտում այլ մարմինների իրավասությանը: Սակայն դա չի նշանակում, որ այդ մարմինները մեկուսացված են: Ի վերջո, դրանք պետական միասնական իշխանության երեք ճյուղավորումներ են, որոնք սերտորեն համագործակցում են և մեկն առանց մյուսի անիմաստ է: Համաշխարհային փորձը վկայում է, որ հնարավոր է նաև իշխանությունների ներթափանցում: Խնդիրն այս դեպքում լիազորությունների հստակ սահմանազատումն է, որպեսզի այն չհանգեցնի սահմանադրական ճգնաժամի:

Բացի այդ, իշխանությունների փոխհարաբերությունները դրսևորվում են «հակակշիռների և զսպիչների» միջոցով, որոնք թույլ չեն տալիս իշխանությունների ճյուղերից որևէ մեկին դուրս գալ իր իրավասության շրջանակներից և, ընդհակառակը, հնարավորություն են տալիս իշխանության մի ճյուղին՝ պահել մյուսներին իրենց իրավասության շրջանակներում: Դրա իմաստն այն է, որ պետական իշխանության երեք ճյուղերի մարմիններից յուրաքանչյուրն ունի այնպիսի լիազորություններ, որոնք հնարավորություն են տալիս հսկելու և ազդելու միմյանց վրա, համագործակցելու միմյանց հետ պետական կարևորագույն հարցերը վճռելիս:

Այս առումով, էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ հասարակության զանգվածային գիտակցության մեջ ավանդաբար ուժեղ է եղել որպես պաշտպանի,

կայունության, անվտանգության և առաջընթացի երաշխավորի պետության նկատմամբ հավատը և հույսը: Եվ չնայած այն բանին, որ վերջին տարիներին նման վերաբերմունքը պետության նկատմամբ շեշտակի նվազում է, այդուհանդերձ, դրա օգտագործումը իշխանության հեղինակության վերականգնման, նրա ժողովրդավարականացման և արդյունավետության բարձրացման համար հարկավոր է ճանաչել նպատակահարմար և անհրաժեշտ: Դրանով հանդերձ, իհարկե, հարկավոր է նկատի ունենալ, որ հասարակական, քաղաքական զարգացման մեջ պետության դերի վերականգնման գործընթացը չպետք է հետ վերադառնա այն տիպի պետությանը, որն անցյալում գերիշխել է մեր երկրում: Դա պետք է լինի նոր, ժամանակակից պետություն, որը գործում է ժողովրդավարական սկզբունքների հիման վրա և համապատասխանի քաղաքական համակարգերի զարգացման ժամանակակից միտումներին:

Սահմանադրական զարգացումների միջազգային փորձը վկայում է, որ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման ու երաշխավորման կոնկրետ լուծումները մեծապես պայմանավորված են իրավական ու սահմանադրական մշակույթի մակարդակով, պետականաշինության ավանդույթներով, իրավական համակարգում ավանդույթների ու սովորույթների տեղով ու դերով:

«Հայեցակարգային մոտեցումն այն է, որ իշխանությունն իրականացնելիս, ժողովուրդը և պետությունը պետք է սահմանափակված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով: Էականն այն է, թե որքան են այդ սահմանափակման իրավաչափ սահմանները, ինչպես են դրանք իրավական օրենքներով որոշակիություն ստանում՝ իրավական համակարգի ու իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականացման ճանապարհով երաշխավորելով սահմանադրականությունը»¹⁸⁹:

Անկախ բազմաբնույթ դրսևորումներից, իշխանությունների բաժանումն առկա է միայն այնտեղ, ուր.

1) առկա է ժողովրդավարական պետություն և շուկայական տնտեսության (այսինքն՝ ստեղծված են բավարար պայմաններ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ազատ զարգացման համար), հասարակության

¹⁸⁹ Տե՛ս՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014թ., էջ 9:

քաղաքական գիտակցության բարձր մակարդակ,

2) օրենքն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և ընդունվում է օրենսդրի (ներկայացուցչական մարմնի) կողմից,

3) օրենսդիր ու գործադիր իշխանության թևերի միջև ապահովված է լիազորությունների հաշվեկշիռ,

4) դատական մարմիններն անկախ են և իրենց իրավասությունների շրջանակում՝ ինքնուրույն,

5) նախատեսված են իրավական միջոցներ իշխանության բոլոր թևերի փոխադարձ հակակշռման համար:

Իշխանությունների բաժանման և հակակշռման խնդիրն, առաջին հերթին, բնորոշում է երկրում սահմանադրական ժողովրդավարության և պառլամենտարիզմի զարգացման աստիճանը: Ներպառլամենտական հարաբերություններում այդ սկզբունքն ստանում է յուրահատուկ դրսևորում: Խնդիրն այն է, որ լայն իմաստով իշխանությունների հավասարակշռման համար գործառնական որոշակի դեր է վերապահվում նաև խորհրդարանական փոքրամասնությանը: Վերջինս պետք է կարողունակ լինի ու հնարավորություն ունենա քաղաքական մեծամասնությանը պահել սահմանադրական դաշտում՝ հակակշռելով նրա օրինաստեղծ գործունեությանը, հանդես գալ որպես իրավական ակտերի սահմանադրականության հարցը նաև դատական քննության առարկա դարձնող լիիրավ սուբյեկտ: Հակառակ պարագայում գործ կունենանք «դե ֆակտո» միակուսակցական խորհրդարանի հետ՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Միջազգային սահմանադրական զարգացումների փորձը¹⁹⁰ վկայում է, որ նման համակարգերում, անկախ դրանց բարդության աստիճանից, նույնպես գտնվել են արդյունավետ ու հասարակական պրակտիկայի քննությունը բռնած լուծումներ: Սակայն դրա համար ելակետայինն այն է, որ նախ՝ լուծվի գործառույթ-ինստիտուտ-իրավասություն համակարգի ներդաշնակության խնդիրը: Երկրորդ՝ ճշգրտվեն ու ներդաշնակվեն իշխանության յուրաքանչյուր թևի գործառնական, հակակշռող և զսպող լիազորությունների շրջանակներն այն հաշվով, որպեսզի, մի կողմից, ապահովվի իշխանության յուրաքանչյուր թևի հարաբերականորեն անկախ ու լիարժեք

¹⁹⁰ Մանրամասն տե՛ս Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. Отв. ред. профессор В.Е. Чиркин . М., 2014.

գործունեությունը՝ չխաթարելով գործառույթ-ինստիտուտ-իրավասություն համակարգի հավասարակշռությունը, մյուս կողմից՝ անհրաժեշտ ու բավարար հակակշիռների ու զսպումների շնորհիվ պահպանվի այդ ներդաշնակությունը դինամիկայում¹⁹¹:

Հայաստանում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական հիմնախնդիրը պահանջում է առկա վիճակի համակողմանի գնահատում, տեղ գտած թերի, խնդրահարույց ու ոչ կատարյալ լուծումների բացահայտում, դրանց համակարգային վերլուծություն և հաղթահարման կառուցակարգերի **առաջադրում**:

Մեզանում առկա հիմնախնդիրները պայմանավորված են ինչպես կառավարման ձևի առանձնահատկություններով, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ հետևողական իրացմամբ, համակարգային առումով ոչ կատարյալ լուծումներով, այնպես էլ իրավական մշակույթի ցածր մակարդակով, պառլամենտարիզմի ոչ բավարար կայացվածությամբ:

Սահմանադրական մակարդակում «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» եռամիասնական շղթայում դեռևս երաշխավորված չէ անհրաժեշտ ներդաշնակություն: Առանց դրա չի կարող ապահովվել նաև գործառութային, հակակշռող և զսպող լիազորությունների ցանկալի հավասարակշռություն: Վերջինիս բացակայությունը մեծապես վտանգում է կայուն զարգացումը, պետական իշխանության իրականացման ոլորտում հանգեցնում է ստվերային հարաբերությունների և սուբյեկտիվ հայեցողության շրջանակների վտանգավոր ընդլայնման:

Անկախ կառավարման ձևից ու իշխանությունների տարանջատման սկզբունքի ընկալման մակարդակից, ժողովրդավարական կարգերի ու իրավական պետության համար անխուսափելի անհրաժեշտություն է ոչ միայն տարանջատման, այլև իշխանությունների հավասարակշռման պարագան: Ինչպես արդարացիորեն նշում է Լիտվայի սահմանադրական դատարանի նախկին նախագահ Էգիդիյուս Կուրիսը՝ «Իշխանությունների տարանջատումը ենթադրում է դրանց հավասարակշռում, իսկ հավասարակշռությունը, հասկանալի է, չի կարող լինել այնպիսի իշխանությունների միջև,

¹⁹¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ. **Գ.Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**: Երևան, 2010, էջ 89:

որոնք տարբեր կշիռ ունեն»¹⁹²:

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ ներկայումս առավել ընդունելի են համարվում իշխանությունների տարանջատման հետևյալ հիմնական չափանիշները. ա) իշխանության թների հարաբերական անկախությունը, բ) անհրաժեշտ սահմանադրական ինստիտուտների առկայությունը, դրանց լիազորությանների ամբողջականությունն ու համարժեքությունը գործառույթներին, գ) պետական իշխանության հավասարակշռված գործունեության անընդհատության երաշխավորվածությունը, որն իր հերթին ենթադրում է ներսահմանադրական այնպիսի երաշխիքների ամրագրում, որոնց օգնությամբ հնարավոր կլինի բացահայտել, գնահատել ու վերականգնել գործառնական խախտված հավասարակշռությունը: Միայն այս պարագայում է հնարավոր ապահովել դինամիկ ու ներդաշնակ զարգացում, խուսափել քաղաքական ու հասարակական «պայթյունային» լուծումներից¹⁹³:

Իշխանությունների բաժանման և հակակշռման խնդրում, որպես նաև՝ սահմանադրական այդ սկզբունքի իրական գործադրման գնահատման չափանիշ, սկզբունքային նշանակություն ունի դատական իշխանության արդյունավետ կազմակերպման հիմնահարցը, որը պայմանավորված է ոչ միայն այդ բնագավառում ինստիտուցիոնալ խնդիրների հստակեցմամբ, այլև դատական մարմինների կողմից դրանք լուծելու սահմանադրաիրավական անհրաժեշտ և երաշխավորված պայմանների առկայությամբ՝ հաշվի առնելով նաև պետական իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների կողմից դատական համակարգի նկատմամբ օբյեկտիվորեն ունեցած հնարավոր ներազդեցության պոտենցիալ հնարավորությունը ցանկացած պետության պայմաններում:

Պետական իշխանության մյուս ճյուղերից դատական իշխանության տարանջատման և դրա սահմանադրաիրավական փաստագրման անհրաժեշտությունը իշխանությունների տարանջատման սկզբունքը որդեգրած ժամանակակից ժողովրդավարական համակարգերում կազմում է սահմանադրական իրավունքի գիտության առանցքային

¹⁹² Տե՛ս **Эгидиус Куприс**, Доктрина разделения властей в практике Конституционного Суда Литвы. Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 106.

¹⁹³ Տե՛ս **G. Hatutyunyan, A. Mavcic**. The Constitutional review and its development in the modern world (a comparative constitutional analysis). Yerevan Ljubljana, 1999, էջ 382: Տե՛ս նաև՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանությանը, նշված աշխատությունը, էջ 89:

հիմնախնդիրներից մեկը, որի լուծման անհրաժեշտությունը կասկածի տակ չի դրվում ինչպես իրավունքի եվրոպական, այնպես էլ ամերիկյան իրավահամակարգի տեսաբանների կողմից:

Առանձնահատուկ կարևորության խնդիր դիտելով Ազգային ժողովի օրենսդրական գործունեության և վերահսկողական դերի հետագա ամրապնդումը՝ անհրաժեշտ է.

- ✓ ուժեղացնել Ազգային ժողովի դերը պետական իշխանության ու կառավարման մարմինների ձևավորման գործում,

- ✓ ամրապնդել Ազգային ժողովի մարմինների դերն օրենսդրական գործունեության բնագավառում,

- ✓ ընդլայնել Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների **շրջանակները**,

- ✓ ամրապնդել խորհրդարանական փոքրամասնության իրավունքների սահմանադրական երաշխիքները:

Պետք է ներդրվի պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հարցով առաջացած վեճերի իրավական լուծման գործուն և արդյունավետ համակարգ: Ավելին, սահմանադրական մակարդակում պետք է առավելագույնս բացառվեն համակարգային հակամարտությունները, իրավակարգավորման գերագույն խնդիրը պետք է լինի գործառության դինամիկ ներդաշնակության երաշխավորումը:

Անհրաժեշտ է երաշխավորել պետական իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվությունն իրենց լիազորությունների իրականացման հարցում: Սահմանադրական բոլոր ինստիտուտների համար Սահմանադրությամբ, օրենքով պետք է հստակ սահմանվեն գործառույթը, լիազորությունների դաշտը, յուրաքանչյուր տարվա արդյունքներով գործունեության արդյունքների հրապարակային ամփոփման կարգը:

Սահմանադրական մակարդակում պետք է հստակեցնել գործադիր իշխանության կառուցակարգային համակարգը, դրա համակարգային փոխհարաբերությունների շրջանակը Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի հետ: Պետք է հաղթահարվի այն վիճակը, երբ գործադիր գործառույթ իրականացնող շատ մար-

մինների գործունեությունը դուրս է օրենսդիր մարմնի վերահսկողական իրավասության դաշտից:

Պետք է հնարավորինս հաղթահարվի գործադիր իշխանության գործառնությամբ երկատվածությունը: Գործադիր իշխանության գործառնությամբ լիազորություններով պետք է օժտված լինի կառավարությունը՝ Հանրապետության Նախագահին վերապահելով գերագնցապես պետության գլխին բնորոշ հակակշռող և գապող լիազորություններ:

Հանրապետության Նախագահը պետք է լիազորված լինի Սահմանադրության պահպանման շրջանակներում իրականացնել երկրում սահմանադրականության մշտադիտարկում և դրա հաշվառմամբ նպաստել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեության ապահովմանը:

Սահմանադրական մակարդակում պետք է ամրագրվեն ու երաշխավորվեն դատական իշխանության գործառնությամբ, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության անհրաժեշտ և բավարար նախադրյալները, որոնց բացակայությունն անխուսափելիորեն կհանգեցնի բախումային իրավիճակների, և արդյունքում կխախտվի տվյալ համակարգի ժողովրդավարացման (եթե պետությունը զարգացման անցումային փուլում է) կամ ժողովրդավարական հետագա զարգացումների պատմական ընդհանուր օրինաչափությունը¹⁹⁴: Որպես այդպիսիք կարևորվում են.

- դատական իշխանության անկախության և պետական իշխանության մյուս ճյուղերից դրա տարանջատման սահմանադրաիրավական ամրագրումը որպես մարդու իրավունքների պաշտպանության ապահովման կարևորագույն երաշխիք,

- դատավորների, որպես արդարադատություն իրականացնող սուբյեկտների, սահմանադրաիրավական կարգավիճակի ամրագրումը, արտակարգ դատարանների գոյության մերժումը,

- դատական համակարգի կառուցման և գործունեության (արդարադատության

¹⁹⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս **Herman Schwartz**, *Packing the courts. The conservative campaign to rewrite the Constitution*, New York, 1988; **Henry J. Abraham**, *The judicial process*, Oxford University Press, 1993; **John B. Gates, Charles A. Johnson**, *The American Courts, A Critical Assessment*, Washington D.C. 1991; King, *Minimum Standards of Judicial Independence*, 1984; **Russell R. Wheeler and Cynthia Harrison** «Creating the Federal Judicial System, 1994; **M.V. Tushnet**, *Constitutional Law*, New York U.-Press, 1992; **Williams Burnham**, *Introduction to the Law and Legal system of the United States*, St. Poul, Minn., 1999; **Williams J.S.**, *Constitutional Analysis*, St. Paul, 1979:

իրականացման) ընդհանուր սկզբունքների հաստատագրումը:

Իսկ ինչո՞վ է պայմանավորված դատական իշխանության գործունեության պայմանների հատկապես սահմանադրաիրավական ամրագրման անհրաժեշտությունը: Նախ՝ դատական իշխանությունը տարանջատելու և պետական իշխանության ինստիտուցիոնալ համակարգում այդ իշխանության անկախ և անկողմնակալ գործադրման երաշխավորվածությունը տվյալ պետության բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով ապահովելու նպատակով, երկրորդ՝ պետական իշխանության ողջ համակարգի (այդ թվում՝ դատական) ինստիտուցիոնալ գործունեությունը միասնական սահմանադրական օրինականության սկզբունքով կառուցելու անհրաժեշտությամբ, երրորդ՝ պետական իշխանության միասնական համակարգում դատական իշխանության, որպես պետության սոցիալական կարևորագույն գործառույթներ իրականացնող ինստիտուտի, կայուն շարունակականությունը, ինչպես նաև արդարադատության անդադնալիությունն ապահովելու և չորրորդ՝ «զսպումների ու հակակշիռների» համակարգի գործադրման անխախտելիությունը երաշխավորելու նպատակներով¹⁹⁵:

Իշխանությունների բաժանման (տարանջատման) և հավասարակշռման հասկացության սահմանադրաիրավական բովանդակության մեկնաբանմանը ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է իր ՍԴՈ-766 որոշմամբ, նշելով, որ «... պետական իշխանությունը հանդես է գալիս որպես պետականորեն կազմակերպված ժողովրդի հանրային իշխանության ձև, որն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Այդ բաժանումն իրականացվում է իշխանության գործառնական բնույթից ելնելով, որին համապատասխան ձևավորվում են անհրաժեշտ կառուցակարգեր՝ իշխանության մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտվում են համարժեք լիազորություններով և իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

«Իշխանությունների տարանջատում» հասկացությանն անդրադարձել է նաև

¹⁹⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա. Վաղարշյանի: Երևան, 2010, էջ 90:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում: Այսպես, գնահատելով դատարանի անկախությունը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով, Եվրոպական դատարանը նշում է. «... Ինչ վերաբերում է գործադիր և դատական իշխանությունների տարանջատմանը, ապա ոչ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ոչ էլ որևէ այլ դրույթ չի պահանջում պետություններից համապատասխանեցնել իշխանությունների փոխազդեցության թույլատրելի սահմանների հետ կապված որևէ տեսական սահմանադրական հայեցակարգ» (Klein and others v. the Netherlands, Judgment of 06 May 2003, 193): Մեկ այլ գործով Դատարանն արձանագրում է, որ կառավարության և դատական իշխանության միջև իշխանությունների տարանջատման հասկացությունը նախադեպային իրավունքում ձեռք է բերել մեծ կարևորություն» (Stanford v. the United Kingdom, Judgement of 28 May 2002, 78): Փաստորեն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաստատագրել է եվրոպական իրավահամակարգային բազմազանության պայմաններում պետական իշխանության տարանջատման սկզբունքի գործադրման առանձնահատուկ դրսևորումների օրինաչափ լինելը՝ այդ սկզբունքի բուն էության անխախտելիության շրջանակներում¹⁹⁶:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նորմերի և պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ իշխանությունների բաժանման սկզբունքն ուղեկցվում է որոշակի իրավական պահանջներով, որոնք իրենց համակցության մեջ հանգում են հետևյալին.

ա) օրենքները պետք է իրավական լինեն և խստորեն համապատասխանեն Սահմանադրությանը,

բ) գործադիր իշխանությունը հիմնականում պետք է զբաղվի օրենքների կիրառմամբ, դրանց կատարման ապահովմամբ և միայն խիստ սահմանափակ դեպքերում կարող է իրականացնել նորմաստեղծ գործունեություն,

գ) օրենսդիր և գործադիր մարմինների միջև պետք է ապահովվի լիազորությունների հավասարակշռություն, որը կբացառի կամայական որոշումներ կայացնելը, առավել ևս՝ ամբողջ իշխանության կենտրոնացումը նրանցից որևէ մեկի

¹⁹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ. **Գ.Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**: Երևան, 2010, էջ 97-98:

ձեռքում,

դ) գործնականում պետք է ապահովվի անկախ և ինքնավար դատական իշխանության մարմինների համակարգը՝ օժտված լայն վերահսկողական գործառույթներով,

ե) իրավասությանն առնչվող վեճերը կարող են լուծվել բացառապես սահմանադրական ճանապարհով՝ պահպանելով պատշաճ իրավական գործընթացը,

զ) սահմանադրական համակարգը պետք է նախատեսի յուրաքանչյուր իշխանությանը մյուս երկու իշխանությունների կողմից զսպելու իրավական ընթացակարգ, այսինքն՝ բովանդակի այլ իշխանությունների համար փոխադարձ հակակշռելիության լծակներ:

Նշված նախապայմաններն ամբողջությամբ ամրագրված չեն Սահմանադրության մեջ, սակայն դրանք անվերապահորեն բխում են դրանում ամրագրված երեք իշխանությունների միջև փոխհարաբերությունների վերաբերյալ մի շարք առանցքային նշանակություն ունեցող դրույթներից և կազմում են վերջիններիս ներքին տրամաբանությունը:

Վերոնշյալ հարցադրումների լուծման գրավական է համարվում քաղաքական համակարգի և քաղաքացիական հասարակության բնականոն կայացումը, որին հնարավոր կլինի հասնել քաղաքական և հասարակական կազմակերպությունների նպատակաուղղված գործունեությամբ, հրապարակայնությամբ՝ առանց արմատական և ծայրահեղ գործելաձևի:

Ամփոփելով՝ կարող ենք ընդհանրացնել. սահմանադրորեն ամրագրելով, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, մի կողմից երաշխավորվում է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի իրացումը, մյուս կողմից՝ երաշխիք է ստեղծվում Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված ելակետային այն դրույթի իրականացման համար, համաձայն որի՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջական գործող իրավունք:

Պետական իշխանության համակարգում իշխանությունների բաժանման

սկզբունքի հաստատման լավագույն միջոցը կլինե՞ր ոչ թե նախկին քաղաքական կառույցների հիմնովին ավերումը, այլ դրանց հետզհետե, բայց հետևողական եվոյուցիան լուծվող խնդիրների և իրավասությունների վերանայման, ինչպես նաև դրանց գործունեության արդյունավետության անվերապահ բարձրացման հիման վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է ձևակերպել հետևյալ եզրակացությունները և հետևությունները.

1. Հետխորհրդային իրավագիտության մեջ «իշխանությունների բաժանում» բառակապակցությունը դարձավ ամենահայտնի քաղաքական-իրավական հասկացություններից մեկը: Այն ակտիվորեն օգտագործում են բոլոր կարգի քաղաքական գործիչները, ընդ որում դրա մեջ երբեմն դնում են տրամաչափորեն հակադիր բովանդակություն: Համակարծիք են, հավանաբար, միայն մեկ բանում անհրաժեշտ է, ստեղծել պետական ազատ, որն հիմնված կլինի իշխանությունների բաժանման սկզբունքի իրական և արդյունավետ մեխանիզմի հիման վրա: Բազմաթիվ սուր բանավեճերը, որոնք ծավալվել էին իշխանությունների բաժանման հասկացության շուրջը, խթանեցին սույն ատենախոսության հեղինակին փորձել ձևակերպել պատասխանի մեր տարբերակը մի շարք սկզբունքային մոտեցումների վերաբերյալ, որոնք առաջացել են այդ վեճերի ընթացքում ինչպիսի՞ բովանդակություն դնել իշխանությունների բաժանման հայեցակարգի մեջ, իշխանությունների բաժանման սկզբունքների վրա հիմնված պետական կառուցվածքի տարբեր մոդելներում ինչպիսի՞ն է համընդհանուրի և ազգայինի հարաբերակցությունը, ինչո՞վ է սահմանվում այս կամ այն մոդելի արդյունավետությունը, ինչպիսի՞ն է իշխանությունների բաժանման լավագույն տարբերակը ժամանակակից Հայաստանի համար, վերջապես, ինչպիսի՞ն են հասարակության նման ձևի քաղաքական կազմակերպման հեռանկարները:

2. Իշխանությունների բաժանումը, որպես պետական շինարարության սկզբունք, իր ցանկացած ձևում կրում է ժողովրդավարական այն պետության կառուցվածքաձևավորող տարրի գործառնական բեռը, որը հավակնում է լինել իրավական, քանի որ միայն այս սկզբունքն է, որ կարող է երաշխավորել իրավունքի գերակայությունը, պետական իշխանության սահմանափակվածությունը մարդու և քաղաքացու իրավունքներով ու ազատություններով: Այս սկզբունքի հետևողական իրականացումը բացառում է պետական իշխանության յուրացումը պետական որևէ մարմնի կողմից ի վնաս մյուսների, որն իր հերթին բացառում է հակաժողովրդական ռեժիմների առաջացումը: Դրանից ելնելով կարելի է պնդել, որ իշխանությունների

բաժանման սկզբունքն ու դրա իրականացումը չափազանց կարևոր են ժողովրդավարական ռեժիմի պահպանման համար:

3. Շատ իրավաբաններ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ, քաղաքագետներ, առանձնացնում են այն տարբերակը, ըստ որի Լուսավորության գաղափարները, որոնք հանդիսանում են արդի արևմտյան քաղաքակրթության բոլոր փոփոխությունների հիմքը, ըստ էության, սպառել են սեփական պոտենցիալը ու, Արևմուտքի, առավել զարգացած երկրները գտնվում են որակապես նոր քաղաքակրթության շեմին: Եթե ելնենք այն հազմանաքից, որ այս վարկածում առկա է որոշակի ռացիոնալ հիմք, ապա ամբողջությամբ վեր կհանվի իշխանությունների բաժանման մասին մշակվելիք հայեցակարգը: Քաղաքակրթության զարգացման հերթական հոսքը, անկասկած, արդիականացնում է հասարակության սոցիալական կառուցվածքը, ինչն էլ իր հերթին պահանջում է դրա քաղաքական նոր ձևերի, պետական կառավարման այլ մեխանիզմների ու տեխնոլոգիաների բացահայտումը: Այդ իսկ պատճառով, կարծում ենք, որ իշխանությունների բաժանման հայեցակարգի հեռանկարների մասին խնդիրն, ամենևին էլ այնքան միանշանակ չէ, ինչպես որ պնդում են այդ գաղափարի որոշ կողմնակիցներ:

4. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա պետական մարմինների գործունեության կազմակերպման անհրաժեշտության տեսական հիմնավորումը, հող նախապատրաստեց այս սկզբունքի գործնական իրականացման համար: Ձևավորված լինելով բուրժուադեմոկրատական հեղափոխությունների դարաշրջանում՝ իշխանությունների բաժանման սկզբունքը կոչված է եղել հիմնավորել իշխանության նման կառուցվածքը, որպեսզի հենց պետական կառավարման մեխանիզմը բացառի իշխանական իրավասությունների օգտագործումը՝ ի վնաս մարդու և հասարակության: Հենց իշխանությունների բաժանումն է դարձել հիմնական ելակետը՝ պետական իշխանությունը որպես պետական մեխանիզմի կառուցվածքի առանձնահատկություն կազմակերպելու համար:

5. Ինչպես ցույց է տալիս իշխանությունների բաժանման սկզբունքի գործնական իրականացման փորձը, պետական իշխանության մարմինների գործունեության իրավական կանոնակարգման սահմանումը, հանդիսանում է քաղաքացիական հասարակության կայունության և այն կամայականություններից պաշտպանելու

անհրաժեշտ պայման: Պետական իշխանության տարբեր մարմինների իրավասությունների սահմանափակումը, հանդիսանում է իշխանությունների բաժանման սկզբունքի առաջին քայլը, որն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ զսպումների ու հակակշիռների համակարգը պաշտպանում է իշխանական իրավասությունների հաշվեկշիռը: Զսպումների ու հակակշիռների համակարգի սահմանման դեպքում հարկավոր է ելնել նրանից, որ պետական իշխանության մարմինները պետք է օժտված լինեն միմյանց վրա փոխազդելու հնարավորությամբ, սակայն այդ լիազորությունները չպետք է օգտագործվեն՝ մյուսների նկատմամբ առավելություն ստանալու նպատակով: Պակաս կարևոր չէ նաև իրավական հիմքի ստեղծումը՝ միասնական պետական իշխանության բոլոր բաղկացուցիչների համաձայնեցված գործունեության համար:

6. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս գոյություն ունի իշխանությունների բաժանման վրա հիմնված պետական կառուցվածքի տարբեր մոդելների մեծ բազմազանություն, այնքան էլ հեշտ չէ դրանք կառուցել ըստ արդյունավետության: Ձևական-իրավական տեսանկյունից, անգամ միատիպ պետական կառուցվածքի մոդելները տարբեր երկրներում ամեննին էլ միևնույն արդյունավետությամբ չեն գործում: Սա ծանրակշիռ փաստարկ է իշխանությունների բաժանման սկզբունքի համընդհանրության, այն համոզման դեմ, որ այն օպտիմալ հիմք է հանդիսանում ժամանակակից ցանկացած հասարակությունում պետության կազմակերպման համար: Փորձը վկայում է, որ այս սկզբունքն, ինքնաբերաբար, պետական իշխանության մարմինների աշխատանքի կարգավորվածությունն ու արդյունավետությունը չի ապահովում, հասարակության համար բավարար պայմաններ չի ապահովում՝ առաջադեմ զարգացման համար: Միայն սոցիալ-տնտեսական, պատմական ու մշակութային որոշակի համատեքստում կարող են դրսևորվել իշխանությունների բաժանման վրա հիմնված համակարգերի առավելությունները:

7. Այս առումով առաջանում են երկու փոխկապակցված խնդիր. ո՞ր գործոններն են օգնում առավելագույնս բացահայտել իշխանությունների բաժանման պոտենցիալը և ինչու՞ է այս սկզբունքը նման ճանաչում վայելում: Սահմանադրությունների զարգացման համաշխարհային փորձը վկայում է, որ դրանում սահմանված դրույթներն առավել հաջողությամբ իրականացվում են այն երկրներում, որոնք առավելագույնս են

համապատասխանում դեռևս Լուսավորության գաղափարախոսների կողմից ձևակերպված գաղափարներին. բազմամակարդակ տնտեսությամբ պլուրալիստական հասարակություն, որը հիմնված է իրավական նորմերի խիստ պահպանման վրա: Ճիշտ է, սա չափազանց ընդհանուր բնութագիր է, սակայն առավել մանրամասն իշխանությունների բաժանման հայեցակարգի հեղինակները ներկայացնել չէին կարող: Ավելին, նրանք հիմնվում էին սեփական ժամանակների արժեքների վրա, որոնք արդեն վերջիններիս մահից հետո էապես փոխվել են, եթե անգամ չխոսենք 20-րդ և 21-րդ դարի մասին:

8. Ամեն դեպքում, դրանք ճշմարտացիորեն կանխատեսում էին այն պայմանները, որոնք անհրաժեշտ էին իշխանությունների բաժանման սկզբունքի վրա հիմնված պետական կառուցակարգի հաջող գործունեության համար: Հասարակության հենց այս հատկանիշների զարգացման ու կատարելագործման հետ մեկտեղ աճում էին նաև իշխանությունների բաժանման հայեցակարգերի հնարավորությունները: Լուսավորիչներն իրենց գաղափարներում, ի սկզբանե, փորձում էին կառուցել քաղաքական-իրավական մեխանիզմ, որպեսզի «հին կարգի» (ֆեոդալիզմ) կողմնակիցների և ընդդիմադիրների միջև ձևավորեն սոցիալական փոխզիջում, ինչպես նաև դրա քայքայման հետևանքները թուլացնելու ու միաժամանակ՝ նոր տեսակի հասարակության՝ «Բանականության կայսրության», քաղաքական կազմակերպման համընդհանուր տարբերակ գտնելու նպատակով: Պարզվեց, որ կյանքն ավելի բարդ է, քան նրանց տեսական դրույթները:

9. Հանրային իշխանության սահմանափակումը իշխանությունների բաժանման սկզբունքի իրականացման շրջանակներում չի խախտում պետական իշխանության ամբողջականությունը և միասնականությունը, որի ներքո հարկավոր է հասկանալ, առանց բացառության, պետական բոլոր մարմինների, ռազմավարական նպատակների ու ուղղությունների միասնությունը: Այս առումով, հարկ է նշել, որ ժողովրդավարական պետության իշխանության միասնությունը ընդհանուր ոչինչ չունի մենիշխանության հետ:

10. Տարբեր երկրների պետական իշխանության մարմինների գործունեության օրինակները ցույց են տալիս, որ իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը չի կրում բացարձակ և անփոփոխ բնույթ: Պետական իշխանության բոլոր մարմինները,

իրականացնելով սեփական գործառույթները, լրացնում են մեկը մյուսին, համաձայնեցնում են գործողություններն ու կենտրոնացնում ջանքերը: Դրա հետ մեկտեղ, հարկավոր է սահմանել այն իրավասությունները, որոնք վերաբերում են իշխանության այս կամ այն ճյուղի բացառիկ իրավասությանը: Մեր կարծիքով պետական իշխանության ճյուղն իրենից պետք է ներկայացնի պետական իշխանության մարմինների հանրագումար, որն ունի ընդհանուր գործառնական ուղղվածություն և գործունեության մեթոդներ: Այս կամ այն մարմինը կարող է դասվել իշխանության համապատասխան ճյուղին միայն այն դեպքում, երբ այն անկախ է համարվում և կազմակերպական առումով չի ենթարկվում պետական իշխանության մյուս ճյուղերին:

11. Ժամանակակից գիտության մեջ միանշանակ կարծիք չկա պետական իշխանության ճյուղերի հստակ քանակի մասին: Որպես կանոն, առանձնացնում են իշխանության երեք ճյուղեր՝ օրենսդիր, գործադիր, դատական: Դրա հետ մեկտեղ, առանձին արտասահմանյան երկրներում գործող սահմանադրական պրակտիկան և մի շարք գիտական ուսումնասիրություններ թույլ են տալիս խոսել պետական իշխանության այնպիսի մարմինների մասին, որոնք ամբողջությամբ չեն ընդգրկվում նշված երեք ճյուղերից և ոչ մեկում, և միևնույն ժամանակ չեն ձևավորում իշխանության այլ ինքնուրույն ճյուղեր: Այս առումով հարկ է նշել պետական իշխանությունների մարմինների ավելի հստակ հաշվարկման անհրաժեշտությունը՝ դրանց դասակարգման ժամանակ:

12. Ժամանակակից աշխարհում, իշխանությունների բաժանման սկզբունքի իրականացման գործընթացի արդյունքները դրսևորվում են պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունների տարբեր մոդելներում, իսկ այդ մոդելների ուսումնասիրությունը կարևոր է պետական իշխանության սուբյեկտների կառուցվածքային-գործառնական հարաբերակցությունը հասկանալու համար: Ներկայումս, պետությունների մեծ մասի սահմանադրություններում պարունակվում են դրույթներ իշխանությունների բաժանման մասին: Այս դրույթների բաժանման փորձը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ տարբեր պետություններում գոյություն ունեն իշխանությունների բաժանման սեփական առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային զարգացման ուղղություններով, պատմական ավանդույթներով, ազգային

առանձնահատկություններով, ձևավորվող քաղաքական պրակտիկայով և այլ գործոններով: Ժողովրդավարական պետություններում հաստատված իշխանությունների բաժանման համակարգը նշանակում է պետական իշխանության կազմակերպման այնպիսի ձև, որի դեպքում հնարավոր է հասարակական շահերի օպտիմալ կանոնակարգում և իրավական միջոցներով սոցիալական հակասությունների լուծում:

13. ՀՀ Սահմանադրության մշակման ժամանակ կուտակվել էր արտասահմանյան երկրներում իշխանությունների բաժանման սկզբունքի վերաբերյալ նշանակալի փորձ, և բարեփոխումների ընթացքում այդ փորձը ներմուծվեց հայկական սահմանադրական գործընթացներ՝ առանց հաշվի առնելու հետխորհրդային իրականությունը: Ներկայումս, նման փոխառությունների և կառավարման տարբեր ձևերի տարբերի միախառնման արդյունքում նկատվում է սահմանադրական ճգնաժամ, որը խոչընդոտում է պետական իշխանության մարմինների իրավական կարգավիճակի ու դրանց փոխազդեցության ուսումնասիրությանը: Այսպես, անհնարին է Հայաստանի Հանրապետությունում հաստատված կառավարման ձևը միանշանակ բնութագրել որպես տիպիկ նախագահական կամ խառը հանրապետություն: Սա, մասնավորապես, կապված է պետական իշխանության մարմիններում նախագահի զբաղեցրած անորոշ դիրքով: Նախագահի ինստիտուտը դժվար է միանշանակ դասել իշխանության երեք ճյուղերից կոնկրետ որևէ մեկին: Վերջին տարիների փորձը թույլ է տալիս խոսել իշխանության ինքնուրույն՝ նախագահական ճյուղի կայացման մասին, որը գոյություն ունի օրենսդրական, դատական և գործադիր ճյուղերի հետ մեկտեղ: Պետական իշխանության այլ մարմինների հետ նախագահի փոխհարաբերություններում արտահայտվում է պետության ղեկավարի որոշիչ դերը՝ պետական մեխանիզմի գործունեության մեջ: Ավելին, ներկայումս նկատվել է նախագահի գերակայության միտումը՝ կառավարության՝ գործադիր իշխանությունը կրողի հետ վերջինիս հարաբերություններում: Իրավաբանորեն ու փաստացիորեն կառավարությունը ակնհայտորեն զբաղեցնում է պետության ղեկավարին ենթակա դիրք:

14. Իշխանությունների բաժանումը ոչ թե պետական իշխանության մարմինների աշխատանքի պարզ բաժանում է, այլ այն միմյանց սահմանափակող կառուցակարգ է, որը ներառում է կառավարման (լայն իմաստով) իշխանությունների բաժանման ինստիտուցիոնալ և հայեցակարգային ասպեկտները:

Հայեցակարգային առումով օրենքների ընդունումը օրենսդիր իշխանության մենաշնորհն է, իսկ դրանց կոնկրետ իրացումը՝ գործադիր (նեղ իմաստով՝ կառավարման ոլորտում) և դատական (արդարություն իրականացնելիս իշխանությունների գործառույթն է):

Այս առումով իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը ուղղված է պետական իշխանության իրականացման ողջամիտ եղանակների ու մեթոդների կատարելագործմանը:

Պետական իշխանության ողջամտությունը ենթադրում է որոշակի ներդրում ազատության պաշտպանության հարցում, քանի որ այն (պետական իշխանությունը) կոչված է պաշտպանելու ազատությունը կամայական սահմանափակումներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Նորմատիվ-իրավական ակտեր և փաստաթղթեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն: Երևան, 2005:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծ: Երևան, 2015:
3. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Երևան, 2014:
4. Եզրակացություն Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի վերաբերյալ (№ 757/2014 CDL-AD (2014) 027 Վենետիկի հանձնաժողով): Ստրասբուրգ, 2014թ. հոկտեմբերի 13:
5. «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 12.09.2001թ.
6. Հայաստանի անկախության մասին հռչակագիր, ընդունվել է 23.08.1990թ.

2) Մասնագիտական գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Երևան, 2012, 736 էջ:
2. Դանիելյան Գ.Բ., Այվազյան Վ.Ն., Մանասյան Ա.Ա., Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում: Երևան, 2015, 240 էջ:
3. Վլադիմիր Նազարյան, Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան: Երևան, 1992, 127 էջ:
4. Գազիկ Հարությունյան, Սահմանադրական մշակույթ, Երևան, 2005, 84 էջ:
5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ. Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան, Երևան, 2010, 1086 էջ:
6. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան: Երևան, 2014, 692 էջ:
7. Գրիգորյան Սասուն, Գրիգորյան Գեղեցիկ, իրավագիտություն, Երևան, 2014, 637 էջ:
8. Ժան-Ժակ Ռուսո, հասարակական դաշինքի մասին, ֆրանս. թարգ. Ա.Բլբուլյան, Երևան, 2000, 277 էջ:
9. Абашмадзе В. В. Учение о разделении государственной власти и его критика: Тбилиси: Сабиота Сакартбело, 1972. 51 с.

10. Авакьян С. А. Конституционное право России: Учебный курс. 2-е изд., перераб. и доп. В 2 т. Т. 1. М.: Юристъ, 2007. 719 с. Т. 2. 778 с.
11. Актуальные проблемы теории государства и права. М., 2014, 471с.
12. Анишина В.И. Конституционно-правовая доктрина самостоятельности судебной власти в современной России: проблемы теории и практики реализации. - М.: Изд-во «Форгрейфер», 2008. 232 с.
13. Баглай М.В. Конституционное право Российской Федерации: Учебник для юридических факультетов. - 2-е изд., изм. и доп. М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА-ИНФРА), 2000. 776 с.
14. Вебер М. Избранные произведения: Пер. с нем./Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; Предисл П. П. Гайденоко.—М.: Прогресс, 1990, 808 с.
15. Барнашов А.М. Теория разделения властей: становление, развитие и применение. — Томск: Изд-во Том. Ун-та, 1988. 102 с.
16. Гутнова Е.В. Возникновение английского парламента. М., 1960. 580 с.
17. Епифанова Е.В., Павлисова Т.Е. Государственно-правовые концепции: история и современность. М., 2012, 440 с.
18. Арон Р. Этапы развития социологической мысли/ Пер. с. франц. М. 1993, 608 с.
19. Гоббс Т. Левиафан. Сочинения; В 2 т.. Т. 2., М., Мысль, 1991. 731 с.
20. Д. Локк. Избранные философские произведения. Т. 2. М.: Издательство социально-экономической литературы, 1960. 532 с.
21. Локк Дж. Сочинения: В. 3 т. Т. 3. М: Мысль. 1988. 668 с.
22. Козлова Е.И., Кутафин О.Е. Конституционное право России: учеб. 4-е изд., перераб. и доп. - М.: ТК Велби, Изд-во Проспект, 2007. 608 с.
23. Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть / Рук. авт. колл. и отв. ред. Страшун Б.А. - М.: Норма, 2007. 896 с.
24. Конституционное право России: учебник / Под ред. Н.А. Михалёвой. - М.: Эксмо, 2006. 864 с.
25. Козлихин И.Ю. История политических и правовых учений. Новое время: от Макиавелии до Канта. СПб., 2002, 384 с.

26. Марченко М.Н. Теория государства и права, учеб. 2-е изд., перераб. и доп. - М.: Проспект 2015, 640 с.
27. Марченко М.Н. Правовое государство и гражданское общество (теоретико-правовое исследование). М., 2015. 648 с.
28. Руссо Ж. Ж. Трактаты. М., Наука, 1969, 704 с.
29. Мишин А.А. Принцип разделения властей в конституционном механизме США. - М.: Наука, 1984 - 190 с.
30. Козлихин И.Ю. Поляков А.В., Тимошина Е.В. История политических и правовых учений. СПб., 2008.
31. Монтескьё Ш. Избранные произведения. М: Госполитиздат, 1955.
32. Нерсисянц В.С. Политические учения Древней Греции. М., 1979. 262 с.
33. Нерсисянц В.С. Общая теория права и государства. М., 2014, 560 с.
34. Нерсисянц В.С. История политических и правовых учений. М., 2014, 704 с.
35. Проблемы общей теории права и государства: Учебник / Под ред. В.С. Нерсисянца. - М.: Норма-Инфа, 832 с.
36. История политических и правовых учений, под редакцией В.Нерсисянца, Москва, "Норма", 2003, 944 с.
37. Козлихин И.Ю. История политических и правовых учений. Курс лекции. М., 2015, 304 с.
38. Радько Т.Н. Теория государства и права. М.: Академический проект, 2005. - 816 с.
39. Разделение властей / Отв. ред. М. Н. Марченко. М.: Юрайт-издат, МГУ, 2004. 428с.
40. Разделение властей в современной России: проблемы и перспективы. Материалы Всероссийской научно-практической конференции 21-22 октября 2008 года / Под. ред. М. С. Матейковича. Тюмень: Тюменская областная Дума, Тюменский государственный университет, 2008. 244 с.
41. Рассказов Л.П. Теория государства и права. Углубленный курс. М., 2015, 559 с.
42. Раянов Ф.М. Правовое государство и современный мир. М., 2012, 175 с.
43. Соколов А.Н. Правовое государство, М., 1998, 456с.
44. Сомов М.Д. Разделение власти: российской федеральный аспект. М., 1998.-213 с.

45. Сравнительное конституционное право: Учеб. пособие / Отв. ред. В. Е. Чиркин. М.: Международные отношения, 2002.
46. Тосунян Г. А., Викулин А. Ю. Деньги и власть. Теория разделения властей и проблемы банковской системы. 3-е изд., перераб. и доп. - М.: Дело, 2000. 224 с.
47. Чеботарёв Г. Н. Принцип разделения властей в государственном устройстве Российской Федерации. Тюмень: Изд-во Тюменского государственного университета, 1997. 220 с.
48. Токвиль А. Демократия в Америке . Пер. с франц./ Предисл. Гарольда Дж. Ласки. – М.: Прогресс, 1992. – 554 с.
49. Жан-Жак Руссо, Об общественном договоре, или принципы политического права, Тракаты, Москва, 1969, 704 с.
50. Черкасов А.И. Глава государства и правительство в странах современного мира: конституционно-правовое регулирование и практика. - М.: Издательство «Экзамен», 2006. 222 с.
51. Федералист. Политическое эссе А. Гамильтона, Дж. Мэдисона и Дж. Джея. Перевод с англ. - М., 1993. 768 с.
52. Чиркин В.Е. Законодательная власть. - М.: Норма, 2008. 336 с.
53. Ковачев Д.А. Принцип разделения властей в конституциях государств Восточной Европы // Конституционные реформы в государствах Содружества / Под. ред. Ю. А. Тихомирова, М. 1993
54. Чиркин В.Е. Конституционное право: Россия и зарубежный опыт. - М.: Зерцало, 2014, 376с.
55. Чиркин В.Е. Контрольная власть. М.: Юристъ, 2008. 213 с.
56. Шевцов В.С. Разделение властей в Российской Федерации. Часть первая. Разделение властей «по горизонтали». М.: ПолиграфОпт, 2004. 856 с.
57. Эбзеев Б.С. Конституция. Правовое государство. Конституционный Суд, М.; Закон и право, 1997. 349 с.
58. Энтин Л. М. Разделение властей. Опыт современных государств. М.: Юридическая литература, 1995. - 174 с.

59. Берг. М. А. Великая английская революция в портретах ее деятелей. М., Мысль, 1991, 397 с.
60. Rostow W. Politics and the Stages of Growth. Cambridge, 1971, 462 p.
61. Brown R. Modernization. The Transformation of American Life. 1600-1865. N. Y., 1976, 516 p.
62. Tubbs J.W. Common Law Mind: Medieval and Early Modern Conceptions (Johns Hopkins U. Press 2002) 264 p.
63. Hamilton A. The Federalist Paper № 12.
64. Madison J. The Federalist Paper № 48. 52 p.
65. Pessen E. Riches, Class and Power before the Civil War. Lexington (Mass); Toronto, 1973, 518 p.
66. Nippon A. Charted Servey of Japan 1992/93. Tokyo, 1992, 261 p.
67. Pessen E. Lacksonion America. Sosiety, Personality and Politics. Homewood (III). 1978, 442 p.
68. Janda K. Berry J., Goldmam J., Huff E. The Challenge of Democracy. Government in America. Boston, 1990, 461 p.
69. Constitutional Law/Eds. E. Wade, A. Bredley, L. 1978. 962 p.
70. Constitutional Law of Canada / Ed. P. Hogg. Toronto, 1985, 744 p.
71. The Constitution of Commonwealth of Masschusetts. Boston, 1992, 582 p.
72. Gressman E. Separation of Powers; The Third Circuit Dimention// Seton Hall Law Review, 1989 , N 3, p. 491-498.
73. Neustadt R. Presidential Power. The Politics of Leadership. N.Y., 1980, 238 p.
74. Filzgerald G. Congress and the Separation. N. Y., 1986, 492 p.
75. Ladd Ev. The Ameican Polity. The People and Their Government. N.Y., 1989, 574 p.
76. Barron G., Dienes C. Constitutional Law. St. Paul (Minn), 1991, 486 p.
77. Curry G., Riley R., Batitisfoni R. Constitutional Government. The American Experience. N. Y., 1989, 494 p.
78. Hendel S. Separation of Powers Revisited in Light of "Watergate" // The Western Political Quarterly, 1974, N. 4, p. 572-583.
79. Sudlein F. Constitutionalasim After the New Deal// Harvard Law Review. 1987. Vol. 101

80. Strauss K. Format and Functional Approaches to Separation of Powers Questions- A. Foolish Inconsistency ?//Comll Law Review, 1987. Vol. 72
81. Зорькин В. Реализация конституционного принципа разделения властей в практике Конституционного Суда России//Конституционный Суд как гарант разделения властей. М., 2004, 231 с.

3) Գիտական հոդվածներ

1. Авдеев Д. А. Принцип разделения властей как способ организации власти // Разделение властей в современной России: проблемы и перспективы. Материалы Всероссийской научно-практической конференции 21-22 октября 2008 года/Под. ред. М.С. Матейковича. Тюмень, 2008.
2. Безруков А.В. Единство и разделение государственной власти: проблемы сочетания и реализации // Конституционное и муниципальное право. 2009. № 21.
3. Васильев А.В. Разделение властей: теоретические аспекты и современная практика // Право и государство: теория и практика. 2006. № 7.
4. Ведяхина К.В. Разделение властей как принцип российского права // Право и политика. 2002. № 5.
5. Горобец В.Д. Доктрина разделения властей и права человека // Журнал российского права. 1998. № 4/5.
6. Иванов В.В. Принцип разделения властей в Конституции США 1787 г. и Конституции Франции 1791 г.: сравнительно-правовой-анализ. Государство и право. 2000. № 12.
7. Керимов А.Д. Исполнительная власть в системе разделения властей //Гражданин и право. 2001. № 9.
8. Полянский И.А. Правовая природа исполнительной власти //Правоведение, 1999, N 4
9. Лузин В.В. Президентская модель разделения властей (на примере США)//Государство и право. 1999. № 3
10. Малый А.Ф. Государственная власть как правовая категория // Государство и право. 2001. № 3.

11. Роганова Н.А. Концепция разделения властей и идея субсидиарности //Государство и право. 2003. № 3.
12. Суворов В. Разделение властей: проблемы использования зарубежного опыта//Право и жизнь. 1995. № 7. с. 11-17.
13. Сумбатьян Ю.Г. Концепция разделения властей: история и современность // Вестник Московского университета; Сер. 12. Политические науки. 2000. № 2. с. 18-26.
14. Чиркин В.Е. Президентская власть // Государство и право. 1997. № 5, 13-21.
15. Универсальное и национальное в концепции разделения властей // Вести МГУ, сер. 12. Социально-политическое исследование. 1993, N 3
16. Rosenberg N., Birdzell L., Jr. Science, Technology and the Western Miracle //Scientific American. 1990. Vol. 263, N. 5
17. Siegan B. Separation of Powers and other Divisions of Authority under the Constitution // Suffolk University Law Review, 1989, N. 1
18. Das politische System Österreichs/Heinz Fischer (Hrsg.)- Wien: Europaverl., 1974 (3 Auflagen)
19. Elliott E. Holmes and Evolution; Legal Process as Artificial Intelligence // Journal of Legal Studies. 1984, N. 13
20. Elliott E. Why Our Separation of Powers Jurisprudence is so Abysmal ?// The George Washington Review. 1989, N. 3
21. Shoenbrod D. How the Reagan Administration Trivialized Separation of Powers // The George Washington Law Review. 1989. N. 3
22. Weeks P. Douglas. Legislative Power Versus Delegated Legislative Power // Georgetown Law Journal, 1937. January,

4) Ատենախոսություններ և սեղմագրեր

1. Елисеев Б.П. Система органов государственной власти в Российской Федерации: Дисс. ... канд. юрид. наук, М. 1998, 323 с.
2. Ишеков К.А. Конституционный принцип разделения властей в\ субъектах Российской Федерации: дисс. ... канд. юрид. наук. - Саратов, 2004. 202 с.

3. Лещёва Е. С. Принцип разделения властей в системе органов государственной власти субъектов Российской Федерации: дисс. ... канд. юрид. наук. - М., 2009. 241 с.
4. Мандрыка Е.В. Реализация разделения властей в России и в Украине: сравнительно-правовое исследование. СПб., 2006, 189 с.
5. Николаев. А.М. Принцип разделения властей и его реализация в Конституции Российской Федерации. Дисс. ... канд. юрид. наук. М., 2002, 178 с.
6. Новицкая Т. И. Федеральный законодательный процесс в России в условиях разделения властей: автореф. Дисс. канд. юрид. наук. М., 2003. 34 с.
7. Овчинников В.А Конституционный принцип разделения властей в современной России. Дисс. ...канд. юрид. наук. М., 2002, 178 с.
8. Павличенко Н.М Принцип разделения государственной власти в конституционном регулировании Российской Федерации; Дисс. ... канд. юрид. наук, М. 1999, 184 с.
9. Покошенкова Е. Е. Разделение властей как принцип механизма осуществления государственной власти в Российской Федерации; автореф. дис.... канд. наук, М. 2003, 194 с.
10. Блажич Н.И. Модели разделения властей в правовом государстве; автореф. дисс. канд. юрид. наук. М., 2004
11. Радченко В.И. Президент Российской Федерации в системе разделения властей; дисс. канд. юрид. наук. Саратов, 1995, 153 с.
12. Покогиенкова Е.Е. Разделение властей как принцип механизма осуществления государственной власти в Российской Федерации: дисс. ... канд. юрид. наук. - М., 2003.194 с.
13. Соколов В.М. Принцип разделения властей: особенности и проблемы Российской государственно-правовой модели. Дисс. канд. юрид. наук. М., 2011, 176 с.
14. Соловьёв Ю.Б. Реализация конституционного принципа разделения властей в субъектах Российской Федерации (на примере Дальневосточного федерального округа): автореф. дисс.... канд. юрид. наук. М., 2004. 25 с.
15. Суворов В. Н. Конституционный статус Президента Российской Федерации: дисс.... докт. юрид. наук. М., 2000. 500 с.